

ԳԻՐՔ
ՀԱՅԵԼԻ ՎԱՐՈՒՑ
ՈՐ ԱՍԻ ՀԱՐԱ՛ՆՑ ՎԱՐՔ։

Տպագրեցեալ Ի Հայրապետութե Տեառն Նահապետի հայոց
Կաթուղիկոսի։

ՍՏԱՑՎԱԾ Է 1961 Թ.

Ի Թւին քրիստոսի. 1702։
Իսկ ըստ հայոց ՌՃԾԱ։
մայիսի ամսոյ ԻԵ։
Ի Փառս մեծագոյն ԱԾ։



Տոյեւլէ վերոյոյ յաւրամ կան պատմութիւնս հեղ տաղարք և բանք օգտակարք տա է փրկութեան մարդկան.

Ցանկ ըստ այբուբենից.

Վս̅ Ագահութե̅ գլուխ ա
Վս̅ Աղօթից գլուխ բ
Վս̅ Աղքատութե̅ գլուխ գ
Վս̅ Անզգուշութե̅ գլուխ դ
Վս̅ Անիրաւութե̅ գլուխ ե
Վս̅ Անհնազանդութե̅ գլուխ զ
Վս̅ Անմեղութե̅ տղայոց գլուխ է
Վս̅ Անյիշաչարութե̅ գլուխ ը
Վս̅ Անոխակալութե̅ գլուխ թ
Վս̅ Աչաց տեսութե̅ գլուխ ժ
Վս̅ Ապաշխարութե̅ գլուխ ժա
Վս̅ Առաջնորդաց գլուխ ժբ
Վս̅ Ատելութե̅ գլուխ ժգ
Վս̅ Արքայութե̅ երկնից գլուխ ժդ
Վս̅ Բամբասանաց գլուխ ժե
Վս̅ Բարեկամաց գլուխ ժզ
Վս̅ Բարի վարուց գլուխ ժէ
Վս̅ Գիտութե̅ գլուխ ժը
Վս̅ Գողութե̅ գլուխ ժթ
Վս̅ Դատաստանին այ̅ գլուխ ի
Վս̅ Դատաւորաց գլուխ իա
Վս̅ Դարձի մեղաց գլուխ իբ
Վս̅ Դաւաճանութե̅ գլուխ իգ
Վն̅ Երդման գլուխ իդ

իե Վն̄ Զղջման գլուխ
իզ Վն̄ Իմաստութն̄ գլուխ
իէ Վն̄ Լալոյ գլուխ
իը Վն̄ Լռութն̄ գլուխ
իթ վն̄ Լսելոյ զբանն կենաց գլուխ
լ վն̄ Խաղալոյ գլուխ
լա վն̄ Խաչի զօրութն̄ գլուխ
լբ վն̄ Խոնարհութն̄ գլուխ
լգ վն̄ Խոստովանութն̄ գլուխ
լդ վն̄ Խռովութն̄ գլուխ
լե վն̄ Խօսից գլուխ
լզ վն̄ Ծիծաղելոյ գլուխ
լէ վն̄ Կամապաշտութն̄ գլուխ
լը վն̄ Կանանց գլուխ
լթ վն̄ Կուսանաց գլուխ
խ վն̄ Հաղորդութն̄ գլուխ
խա վն̄ Հիւանդութն̄ գլուխ
խբ վն̄ Հիւրասիրութն̄ գլուխ
խգ վն̄ Հոգւոյ գլուխ
խդ վն̄ Հպարտութն̄ գլուխ
խե վն̄ Հրեշտակաց գլուխ
խզ վն̄ Մարդասպանութն̄ գլուխ
խէ վն̄ Մարիամու սրբոյ կուսին գլուխ
խը վն̄ Մարդասիրութն̄ գլուխ
խթ վն̄ Մեծատան գլուխ
ծ վն̄ Յաջողութն̄ գլուխ
ծա վն̄ Նախանձու գլուխ
ծբ վն̄ Շուայտութն̄ և արբեցութն̄ գլուխ
ծգ վն̄ Ողորմութն̄ աղքատաց գլուխ

վն̄

վ̅ն Ողորմութ̅ն ա̅յ գլուխ ծ̅դ
վ̅ն Ողջոյն քեզ մարիամ ասելոյ գլուխ ծ̅ե
վ̅ն Ուխտատեղաց գլուխ ծ̅զ
վ̅ն Ջարչարանացն ք̅ի գլուխ ծ̅է
վ̅ն Պատարագի գլուխ ծ̅ը
վ̅ն Պատկերի ա̅ծածնի գլուխ ծ̅թ
վ̅ն Պատուոյ գլուխ կ̅
վ̅ն Պոռնկութ̅ն գլուխ կ̅ա
վ̅ն Սատանայի խաբէութ̅ն գլուխ կ̅բ
վ̅ն Սիրոյն ա̅յ և ընկերի գլուխ կ̅գ
վ̅ն Սովորութ̅ն գլուխ կ̅դ
վ̅ն Վաշխից գլուխ կ̅ե
վ̅ն Վաճառոտութ̅ն գլուխ կ̅զ
վ̅ն Վհատութ̅ն գլուխ կ̅է
վ̅ն Տեսութ̅ն իմացականին գլուխ կ̅ը
վ̅ն Քահանայագործութ̅ն գլուխ կ̅թ
վ̅ն Քի̅ անուանն գլուխ հ̅



Յաղագս ագահութեան. Ա.

ՏՄԵՐ ՅԻ͞Ս Ք͞Ս ՀՐԱՄԱՅԷ. Ի ՓՐԿԱԿԱՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ. ԹԷ ՈՒՐ գանձք ձեր անդ և սիրտք ձեր եղիցին։ Որ 'ի նկատելս առէ ։ Քան զի ամ͞ն մարդ՝ յոյժ ագահարծաթասէր և անյագ. բազում ինչս և մեծութիւնս ստացեալ՝ ոչ երբէք տայր ողորմութիւն աղքատաց. և ոչ 'ի գործս բաժանէր. կամ զպակասութիւն կարօտելոց լնոյր. դէպ եղև զի յանկարծակի մեռաւ։ Իսկ բարեկամք ն͞ր և ազգականք հրամայեցին զորովայն ն͞ր պատառել. զի տեսցեն թէ զի՞նչ իցէ պատճառն այնպէս յանկարծակի մահուան ն͞ր։ և իբրև պատառեցին զորովայնն՝ և զսիրտն 'ի նմա ոչ գտին. ապա թողեալ զնա գնացին 'ի սնտեակ գանձին. և բացեալ սապաթ մի. և ահա սիրտ մարդոյ գըտին 'ի ձեռն սատանայի. որ 'ի կերպ վիշապի նստէր 'ի վ՟ր նր՟. և 'ի զանազան մասունս պատառէր զնա. և ասէ ցայնոսիկ որք հայէին. այսոսկի և արծաթս է՛ գին սորին. ընդ որ վաճառեաց ինձ բարեկամն ձեր. իրաւամբ իմ սեփհականն է. և զոր ինչ կամիմ արարից ընդ նմա:

Ե Այն ծեր գնաց 'ի քաղաքն վաճառել ըզգործս ձեռաց իւրոց. դէպ եղև զի նըստաւ առաջի դրան ումեմն մեծատան որ մերձ էր 'ի մեռանել. և ահաւասիկ սևակերպ ձիս. և հեծեալս սևազգեստս և ահաւորս. և իւրաքանչիւր 'ի նոցանէ ունէր ձեռին իւրում հրանիւթ գաւազան. և եկեալ 'ի դուռն մեծատանն իջին երիվարացն և ա՟մքն սրընթաց մտին 'ի տունն: Իսկ հիւանդն տեսեալ զն՟ս սկսաւ աղաղակել առ ա՟ծ, տ՟ր օգնեա՛ ինձ. և նոքա՛ ասեն ցնա. այժմ յիշեցեր զա՟ծ. յորժամ 'ի մուտս արեգականն է. վ՟ն էր զնա ոչ խնդրեցեր զա՟մ աւուրս կենաց քոց. զի մինչ դեռ արևծագէր. ահա ոչ գոյ բաժին յուսոյ և ոչ մխիթարութե՟ն:

Զ Այն մեծատուն 'ի գաղատեայ էր յոյժ ագահ. և զինչսն իւր. 'ի վաշխ իտայր հանապազ մարդկան. և 'ի մեռանելն իւրում խնդրէր 'ի կնոջէն իւրմէ զի քսակ մի դիցէ ընդ նմա 'ի գերեզմանի. զոր և նա՛ ո՟մ ո՛չ կարաց արարթագնաբար՝ բայց ո՛չ եղև թագչիւ. զի ոմանք իմացեալ եկին գաղտ 'ի գիշերի

և բացին զգերեզմանն․ և ահա՛ տեսին գ̃
գործս՝ մինն ՚ի վր̃ քսակին․ և միւսն ՚ի վր̃
արտին․ մինն զդրամն ի քսակէն ՚ի դուրս հա
նէր, և միւսն ՚ի սիրտ մեծատանն դնէր իբր
թէ ասելով․ մեք դրամով զսիրտ քո անյագ
լցուցաք։ Եւ նա տեսեալ զայն զարհուրե
ցան․ և հողով ծածկեալ զնա փախեան։
Արդ՝ զի՛ արդ թուի քեզ ո՛վ ընթերցող․ ո՞ր
պիսի տանջանս ընդունի հոգին ՚ի դժոխա
յանքուն որդանցն․ զի թէ ՚ի գերեզմանին
՚ի վր̃ մարմնոյն այսքան զարհուրելի տեսիլս
ցուցեալ եղև։

Այր ոմն որոյ հէն թագաւորաց զդրամն շա Է
տունէր․ և եղև հիւանդանալ նմին․ գը
նաց ՚ի հիւանդանոց․ և ընկալան զնա։ Սա վս̃
ագահութե̃ բազում ժամանակս թագուցա
նէր զինչս իւր և զարծաթն զոր ունէր ժո
ղովեալ․ և զի հիւանդէր մեծաւ պաղատա
նօք աղաչէր զի կորկոտ եփեսցեն նմա․ և յոր
ժամ բերին յայնժամ անկեալ ՚ի մահիճս փո
խանակ փշրանաց հացի՝ զայն հէն արծաթն
նոյր, և մեծաւ ցանկութե̃ դդալով ուտէր,
մինչ զի առժամայն խեղդեցաւ։

Ոմն մեծատուն բազում ինչ ժողովեալ․ Ը
բայց ո՛չ առանց մեղացն և յորժամ եհաս
յետին շունչն․ և մերձակայքն իւր յորդորէ
ին զնա, զի հոգատարցի վս̃ փրկութե̃ հոգւոյ
իւրոյ, իսկ նա ո՛չ ախորժէր զայսպիսի բանս
լսել․ այլ մանաւանդ ՚ի մահիճս սաս և անդ

շրջե

շրջելով աւաղէր և 'ի խորոյ սրտէ լայր և հառաչմամբ կոծէր և ողորմելի ձայնիւ ողբայր ասելով. աւաղ թէ զի՛ արդ բազում աշխատութ͞բ ջանացայ զինչս ստանալ. և ահա այլ մարդիկ զգանձս ժառանգեսցեն և վայելեսցեն. ո՛վ ինչք իմ. ո՛վ մեծութի͞ք իմ. ո՛վ մխիթարութի͞ք սրտի իմոյ. ո՞յր ձեռն անկանիս. ո՞ւմ թողից զքեզ. և զայսպիսի բանս ասելով վճարեաց 'ի կենացն:

Դ Այն մեղաւոր հիւանդացաւ մերձ 'ի մահ. և վ͞ս փրկութ͞ե անձին իւրոյ երկմտէր. և երկնչէր պարհուրելով 'ի խղճէ մտաց. եկն առ նա ո͞մն քահանայ. և ասէ ցնա՛ եթէ զձի քո կամիս տալ ինձ. ես զմեղս քո յօժարութ͞բ առից 'ի վ͞ր իմ. և զայս ասելով ոչ թէ փրկութ͞ե հիւանդին. այլ զի առցէ զձին նորին. և զայս լուեալ հիւանդին հաւանեցաւ և ետ ձեռագիր և ապա մեռաւ: Իսկ քահանայն զգեցաւ զգեստ քահանայական. և ըզ սկսաւ զկարգ ննջեցելոցն կատարել 'ի վ͞ր մեռելոյն. և ահա յայտնապէս առաջի ամնցուն յափշտակեցաւ ընդ առաստաղ տաճարին. և մեծ ծակ արար 'ի նմին. և ոչ ևս երևեցաւ քահանայն. ա՛յս է պտուղ ագահութ͞են ևս սա է հատուցումն նորին:

Ե Ա͞ր ոմն կին 'ի ներքոյ կեղծաւոր ճ͞ծապաշտութ͞ե. պահէր և յերկար աղօթէր. և այնչափ հօկէր, և ո։ խստա տեղիս անդադար շրջէր. յորժամ այնպիսի կերպարանեալ առաքինու ւրհնութե̃ կայր · բազում ինչս 'ի մարդկանէ առ նոյն՝ ևյոլովոսկի զօրհանապազ ժողովէր · և զոր ինչ ա̃ծասէր քրիստոնեայք տային վս̃ ազատելոյ զքրիստոնեայ գերիս, նա զայն 'ի քսակն դնէր · և զոր ինչ տային 'ի պէտս կարօտելոց՝ նա տարեալ զա̃մ իյարկղն իւր պահէր · քան զի կինն այն 'ի մէջ սենեկի իւրում մեծ խոր փորեաց · և եդ անդ կարաս մի մեծ · և զոր ինչ տային նմա̀ նա անդ պահէր · և քար 'ի վր̃ դնէր ։ Աւաղ անիծեալ ագահութն̃ · թէ ոպ̃ կուրացուցանէ զմարդիկս և 'ի խաւար ընկղմի · բայց զի կարճ̃ 'ի կարճոյ ասացից · ևյորժամ կարասն դրամով լցեալ եղև ժամանակ մահուան կնոջն եհաս · և ոպ̃ մեռեալ էր հոգւոյն · մեռեալ եղև մարմնոյն ևս · և թաղեցաւ 'ի դժոխս ։ Զկնի կատարման կարգի թաղմանն քահանայքն հարցանէին ցաղջիկն որ սպասաւ որ էր կնոջն · թէ զինչ առնէր այն չափ դրամն տիկինն քո, զոր տային նմա · և նա պատասխանի ետ · թէ ոչ երբէք տեսի եթէ տուեալ իցէ աղքատաց · և ոչ գիտեմ զդրամն թէ ուր պահէր՝ զայն գիտեմ միայն, զի զոր տային նմա տանէր 'ի սենեակն · և ոչ ևս 'ի դուրս հանէր ։ Զայն լուեալ քահանայիցն զարմացան · և սկսան մեծաւ խուզմամբ որոնել · և զկնի յուզելոյն լուան զձայն դրամին · և թաւալեցուցեալ զվէմն տեսին զմեծ համբար դրամին · և հիացեալ ընդ այն չափ

խորամանկ

խորամանկութի̃նն որին. և գնացեալ ծանուցին զա̃մ որպիսութի̃ն եպիսկոպոսին. Իսկ եպիսկոպոսն ոչ սակաւ 'ի բարկութի̃ շարժեալ՝ հրամայեաց բանալ զգերեզմանն. և զա̃մ դրամն 'ի վե̃ր մեռեալ մարմնոյ փափել ասելով. զոր ինչ ժողովեցեր քեզ եղիցի. և աղքատացն ք̃ի ոչ ինչ պակասեցի. Եւ 'ի մէջ գիշերին ձայնք լսելի եղեն 'ի գերեզմանէն. լալիւն և կոծումն մեծ և 'ի մէջ այլոց ողբոց այլ ևս լսելի պարզաբար եղև. վա՜յ ինձ եղկելոյս. վա՜յ ինձ թշուառականիս. զի ոսկի այս այրէ և տոչորէ զոսկերս իմ. սապիսի ձայնք զերիս տիւս. և զերիւ գիշերս լսելի եղեն. և շրջակայ մարդիկն ոչ կարացին տանել զայն. գնացին առ քահանայս, և հրամանաւ նոցին բացեալ զտապանն. տեսին զոսկին իբրև 'ի մէջ հնոցին հալեալ. և 'ի բերան կնոջն հանդերձ բոցով հրոյն հեղեալ. յայնժամ քահանայքն աղօթս արարեալ առ ա̃ծ թէ որովհետև չարութի̃ն ո̃չ յայտնի եղև մարդկան առ 'ի զգուշութի̃. տանջանքս թեթևասցին 'ի մարմնոյ սորին. և ապա ծածկեալ զգերեզմանն գնացին. և այլ ոչ ևս ձայն կնոջ լսելի լինէր:

Յաղագս աղօթից. գլուխ երկրորդ.

ա Սատանայ 'ի կերպարանս գեղեցիկ երիտասարդի ծառայէր ումեմն զօրականի. զոր իբրև հաճոյ եղև վա̃ գեղեցկութե̃ հասա կին և խօսիցն. Եւ առաւել սկսաւ մտադիւրութ՟բ ծառայել նմա, մինչև զարմանալ յոյժ տ՟ն իւոյ՝ զի յորժամ նստէր 'ի ձի կամ իջանէր 'ի ձիոյն զօրականն հանապազ իսկ և իսկ ժամանեալ նմա պատրաստ երևէր միշտ պատկառանօք խոնարհութ՟բ՝ և խոհեմաբար սպասաւորէր նմա։ Յաւուր միում մինչ դեռ երկոքինն երթային. և մերձ եկին 'ի գետ ինչ մեծ. զօրականն յետս հայեցեալ ետես զմեծ բազմութի՟ն թշնամեայ որք պընդէին զհետ ն՟ր. և ասէ ցծառայն՝ ահա՛ կորեաք. զի թշնամիք իմ ահաւասիկ հասին ինձ՝ և առաջի մեր գետ ան հուն. և չիք տեղի փախստեան զինչ արարից. ասէ ծառայն՝ տէ՛ր մի՛ երկնչիր զի զանցս գետոյս ես քաջ գիտեմ ե՛կ զկնի իմ ասէ տ՟ր՝ ո՛չ ոք կարէ այս գետ անցանել սակայն վ՟ն յուսոյն փախստեան գնաց զհետ ծառային. և անվնաս էանց, ա՛րդ՝ յորժամ միմեանց յանդիման էին սոքա 'ի մէկ կողմն գետոյն. և նոքա 'ի միւս կողմն. և թշնամիքն ն՟ց զարմացեալ ասեն. ո՛վ երբեք լուաւ թէ ընդ այս գետս ոք էանց. ո՛չ այլ ինչ է բայց սատանայ զնա անցոյց. և այնպէս դարձան 'ի տունս իւրեանց։ Յետ այսորիկ կին զօրականին հիւանդացաւ յոյժ մինչ զի ա՟մ դեղք բժշկացն սպառեցան. ասէ դեւն ցտէր իւր. եթէ տիկինն իմ կաթամբ առիւծու օծանեսցի օգուտ գտցէ և առողջասցի. ասէ տէրն՝ ուստի՞ կարիցեմ զնա՛ գըտանել.

տանել ։ պատասխանի՛ ետ դևն ես բերից ․ և գնաց ․ և զկնի ժամու միոյ դարձաւ լի՛ ամանով կաթամբ ․ զոր իբրև օծեալ եղև կինն , առ ժամայն սկսաւ լուանալ ․ և առողջացաւ ․ եհարց զնա՛ տէրն թէ ուստի բերիր այս չափ վաղվաղակի զկաթն ․ պատասխանի ետ ՚ի լերանց արաբիոյ ․ քան զի յորժամ ելի ՚ի քէն գնացի յարաբիայ՝ և ՚ի յայրին ըմբռնեցի զառիւծն՝ և զձագն փախուցի և կթեցի զմայրն ․ և առ քեզ դարձայ ։ Զա՛յս լուեալ տէրն զարմացաւ , և ասէ՛ ցնա ․ ո՞վ ես դու ․ պատասխանի՛ ետ նմա մի՛ տրտմիր վն̃ այդբանի ծառայ քոյ եմ ․ այլ յորժամ ստիպէր յայտնեաց զինքն ասելով ․ ես եմ սատանայ ․ յայնժամ տէրն ևս առաւել զահի հարաւ ․ և ասէ եթէ դու ես ՚ի բնէ սատանայ զի՛ է որ այս չափ մտերմաբար ծառայ ես մարդոյ պատասխանի ես դևն մեծ մխիթարութի ունիմ լինել ընդ որդիս մարդկան ․ և տէրն ասէ ո՛չ համարձակիմ աւելի թոյլ տալ քեզ ծառայել ինձ ։ և դևն ասէ՛ զայս ստուգիւ գիտեա՛ ․ զի եթէ զիս առ քեզ պահեսցես ո՛չ երբէք յինէն , կամ վն̃ իմ չար ինչ կրեսցես ասէ՛ զօրականն ո՛չ իշխեմ բայց զոր ինչ խընդրես վն̃ ծառայութե քո տա՛ց քեզ մինչ ցկէս ընչից իմոց յօժարամիտ կամօք բաշխեցից քեզ ․ քան զի ո՛չ երբէք մարդ մարդոյ այս չափ հաւատարիմ ծառայեաց ․ և օգտակար եղև , ո՞րպ դու ինձ ․ զի քև ՚ի մահուանէ զերծեայ · եւ քեւ կինն իմ զառողջութի̃ ընկալաւ · յայնժամ ասէ դեւն՝ որով հետեւ ընդ քեզ ոչ կարեմ լինել · ոչ 'ի քէն ինչ խնդրեմ վաստակոյ իմոյ · բայց միայն · Ե̄ · ոսկի զորս առեալ · եւ դարձեալ ետ ցտէրն իւր ասելով խնդրեմ 'ի քէն զի սովաւ գնեսցես զանկակ եւ 'ի վ̃ր տանեաց այն աղքատ եւ ան խնամ եկեղեցւոյն կախել հրամայեսցես զի 'ի ձեռն նր̃ թերեւս յաւուր կիրակէից քրիստոնեայք առ 'ի պաշտօն ա̃ծային ժողովեսցին · եւ զայս ասացեալ աներեւոյթ եղեւ 'ի նմանէ · Արդ՝ սատանայ վ̃ն այնորիկ զայս 'ի նմանէ հայցէր զի մարդիկք մինչեւ ցայն ժամանակ քաջ ընդ առաւօտ յեկեղեցին գային, եւ աղօթից պարապէին, սպասելով սրբոյ պատարագին քան զի երկնչէին՝ մի՛ գուցէ անկանիցին 'ի քուն · եւ 'ի պատարագէն զրկեսցին · իսկ այժմ զկնի լսելոյ զանկակին ձայնի · ապա՛ յեկեղեցի գայցեն · եւ աղօթից հեղգասցին ։

բ̄ Երկու աբեղայք 'ի գիշերի միում յանկողինս իւրեանց ընկողմեալք զգիշերային կարգ աղօթիցն կատարէին · յայնժամ եհաս սատանայ եւ յոյժ ժահահոտութբ̃ ելից ըզսենեակն ասելով · ա՛յդպիսի աղօթից · ա՛յսպիսի խնկարկութի̃ վայել է ։

գ̄ Ոմն քարոզատու սրբասէր եւ ա̃ծահաճոյ՝ իշով երթայր այս եւ անդր՝ վ̃ն սերմանելոյ զբանն կենաց · եւ 'ի միում աւուր մտեալ յեկեղեցի մի վ̃ն աղօթից՝ եւ զէշն կապեաց ընդ դուռն եկեղեցւոյ. և մինչև մէկ հայր մեղայ յերկինս կատարեաց. քանիցս անգամ մտօքն զբաղեալ խորհեցաւ զի մի՛ գուցէ ոք գողան այցէ զէշն. և այլ ևս սոյնպիսի խորհուրդ խափանէին զնա՛ աղօթից։ Զայս տեսեալ առժամայն ել յեկեղեցւոջն. և թեթևագին վաճառեաց զէշն, ո՛չ կամելով յայնմ հետէ թէ միտք զբաղեսցին յաղօթս՝ և ցրուեսցին յա̄յ իւրմէ։

Յաղագս Աղօթասիրութեան Գլուխ Երրորդ.

ա̄ Այր աշխարհական ունէր դստերս ո՛չ սակաւ տիօք հասեալ ՚ի հարսնութե̄. և զի աղքատէր ո՛չ ունէր ուստեք խնամարկել զն̄ս խրատու եպիսկոպոսին Կիւրոյ միշտ երթայր յեկեղեցի ա̄ծածնին. և զօգնութի̄ ՚ի նմանէ հայցէր յա̄մ աւուր մինչև ցվերջ հասարակաց աղօթից յեկեղեցւոջն մնայր։ Յաւուր միում եկեալ քաջ ընդ առաւօտս յեկեղեցին. և եգիտ անդ ՚ի գաւթի առաջի դրանն բ̄ կոյր մուրացիկս, զի ո̄պ սովորութիւն է մուրացկանաց, որք ո՛չ կարծելով անդ զոք գոլ. քանզի այրն այն թագնաբար եկեալ էր. և լռութբ̄ կայր. և կոյրքն ընդ միմեանս սկսան խօսիլ թէ ոք ՚ի նոցանէ աւելի ողորմութի̄ ՚ի մարդկանէ առեալ է. մինն ասէ ես. ճ̄ծ. ոսկի ՚ի գտակիս կարեալ ունիմ. և միւսն ասէ ես. գ̄ծ. ոսկի ունիմ, զոր լուեալ այրն վաղվաղակի գնաց առ եպիսկոպոսն և պատ մեաց նմա զա՟մ. և նա հրամայեաց կոչել զն՟ն առաջի իւր. և յանդիմանեաց զն՟ն իբրև զստախօսս և զգողս, որք կ՟ր զպարանէին աղքատալինել. և զայնքան դրամս կարօտելոց վեր առնուն. և ասէ ո՛չ կարէք առանց խղճի մտաց զայն քան դրամս առ ձեզ ունել. և նք՟ խօստացան տալ զդրամս 'ի ձեռն եպիսկոպոսին՝ զի բաշխեսցէ առաւել կարօտելոց. և ետ եպիսկոպոսն միոյն. ի՟ե. կարմիր. և միւսոյն. Ղ. և զմնացեալն ետ առն այն աղքատի. զի զկարիս դստերացն իւրոց լցուսցէ:

Է՟ Կուսակրօն քահանայ ոմն՝ մինչ դեռ յաղօթս կայր, յափշտակեցան միտք ն՟ր և հոգւով վարեցաւ 'ի գետ մի մեծ լայնատարած և յորդահոս անդ նայելով 'ի մարդիկս որք անցանէին՝ ետես զոմանս եղբայրս բեռնակիրս, որք մտանէին 'ի գետն՝ և առժամայն յորդահոս ջրոց կործանէին և հեղձնուին. ոմանք գնացին մինչ յերրորդ մասն գետոյն և կորնչէին. և այլք մինչև ցեզր. ս՟ք ա՟մքն վ՟ս բեռանցն 'ի գետ խեղդէին և չարաչար կորնչէին առանց ուրուք օգնականութե՟: Եւ կրօնաւորն այն տեսեալ զայնպիսի վտանգն՝ յոյժ ցաւէր 'ի վ՟ր ն՟ց. և ահա երևեցան ոմանք առանց 'ի միք բեռին՝ յոյժ միայն աղքատութե՟ տեսանիւր. սոքա մտեալ 'ի գետոյն անվնաս և առանց վտանգի անցին: իսկ հայր վանացն գիտացեալ զայն հոգւով՝ որ զինչ տեսեալ էր կրօնաւորն այն՝ յորժամ եկն առ նա կոչեաց զնա և ասէ. ասա՛ ինձ զի՞նչ տեսեր. և նա պատմեաց նմա կարգաւ զա՟մ։ Ասէ ցնա հայրն՝ ճշմարտապէս այդպէս է զոր տեսեր. քանզի գետն աշխարհս է, այնք զորս գետն եկուլ. են որք խոստովանութ՟ե աւետարանին և կամաւոր աղքատութ՟են ո՛չ հեռանին. իսկ այնոքիկ որք ան վնաս գետն անցանեն. են կրօնաւորք հոգեընկալ. որք ո՛չ ինչ երկրաւոր և մարմնաւորս սիրեն. ո՛չ խնդրեն և ո՛չ ունին, այլ կերակրով և հանդերձիւ բաւականանան. զհետ ք՟ի 'ի խաչին մերկացելոյն երթալով. զբեռն 'ի խաչին վ՟ր. և զլուծ հնազանդութ՟ե թեթև և քաղցր զոր հանապազ համբերեն որ սակս դիւրաւոր երկրաւորացս յերկնայինան փոփոխեն. և ան վնաս տանի յերկինս հասանեն։

ՅԱՂԱԳՍ ՏՆ ՇՇՆՕՒԹԷ. ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ.

ա Այր ոմն վ՟ս չարեաց իւրոց, յ՟յ մեծաւ հիւանդութ՟բ անկեալ դնիւր. և յորժամ հիւանդութ՟ին օր ը՟ օրէ զօրանայր՝ բարեկամք ն՟ր եկեալ առ նա յորդորէին զնա 'ի զղջումն և խոստովանութ՟ե. զոր լուեալ իբրև զշուն կատաղի զայրացաւ ասելով. ո՞չ գիտէք զիս զի եմ մեղաւոր յոյժ. զի՞նչ օգուտ է ինձ ապաշխարութ՟ի. ահա դատապարտեալ եմ։ Յետ այսորիկ եկն առ նա մարդասէր տ՟րն մեր յ՟ս ք՟ս. և ասէ ցնա ես եմ յ̃ս ք̃ս որ վ̃ քո մեռայ՝ ողորմութի̃ն իմ գերազանցէ քան զքոյդ զամենեքումբք յանցանօք. խոստովանեա՛ զմեղս քո. և ես ողորմեցայց քեզ. և նա՛ ոչ կամեցաւ. ապա տ̃րն բարձրացուցեալ զքղամիդն իւր. և եցոյց նմա զա̃մ վէր. իւր ասելով. զայս ա̃մ վ̃ քո յանձն առի. ոչ կամիմ քեզ դատապարտել. եթէ կամիս ապաշխարել։ Իսկ նա՛ ամենևիմբ ոչ կամեցաւ. յայնժամ բազմագութն մարդասէր տ̃ր. առեալ զպատուականարիւնն իւր ՚ի կողէն իւրմէ. և յաջոյ ձեռանէ՛ ձգեաց յերեսս անզղջին ասելով. զայս նշան առաջի մարդկան կրեսցես. փոխանակ զի արհամարհեցեր զողորմութ̃ի և զմարդասիրութիւն իմ.

Ե̃ Այր ումն զա̃մ աւուրս կենաց իւրոյ զագրագործէր և ոչ կամէր ապաշխարել. յոր ժամ խրատ տային նմա, սովորէր պարծելով ասել. թէ ՚ի վերջին կէտ մահուան իմոյ զերիս բանս միայն ասացից և փրկեցայց։ Արդ այրս այս չև և՛ս ծերացեալ մինչ դեռ երիթայր հեծեալ ՚ի ձի ընդ կամուրջ ինչ խախտեալ. և ձին սկսաւ վտանգիլ կամէր զնա յարուցանել և ոչ կարաց. և զի տեսանէր թէ առանց կարծեաց ՚ի ջուր անկանելոցէր՝ ՚ի բաց թողեալ աղաղակեաց սատանայ առ զա̃մ. և այսպէս հանդերձ երիւք բանիւքս այսոքիւք անկեալ ՚ի ջուրն և կորեաւ ։

Յաղագս անխորհրդութեան գլուխ հինգերորդ.

Մեծատուն ումն զտուն իւր եդ ՚ի վարձու

աղքատի ուրուք· և կամելով զնա կողոպտել· եթող զամանս 'ի տան իւրում· զոմանս լի՛ ձիթով· և զոմանս կիսակատարս լցեալս· և յորժամ պայմանեալ ժամանակն լցաւ· զի զտունն դարձուսցէ 'ի մեծատուն· եկն զի տեսցէ զամանս· և տեսեալ թերատս, և զըր պարտէր զաղքատն սակս գողութե· յորժամ եղև կոչեաց 'ի դատաստան· այլ ճար չկայր զերծանելոյ, բայց միայն հատուցանել։ Իսկ ումն որում անունէր ապաւէն տնանկաց· խոտորեցոյց զաղքատն 'ի կողմն առանձին· և ասէ ան մեղեօ, թէ պարտապան պատասխանի՛ ես թէ ան մեղ։ Ապա՛ դարձաւ ընդնմա 'ի դատաստանն· և աղաչէր զի չափեսցեն զամանս զայնոսիկ· և յաւել թէ նոյն չափ դուրս գտանիցի 'ի կիսակատար ամանսն որ չափ 'ի լցեալս աղքատն վճարեսցէ· ապա՛ թէ կիսապատիկ ազատ եղիցի։ Եւ ապա՛ հասու եղեն զի կարասքն թերատքէին· և այսպ̃ աղքատն ազատեցաւ՝ և մեծատունն դատապարտեցաւ։

Յաղագս Ն՟ն հնազանդութե Գլուխ վեցերորդ·

ա Ոմն եղբայր պատուէր առեալ 'ի հօրէ· ո՛չ երբէք ելանել 'ի վանիցն· բայց միայն եթէ հարկ պահանջեսցէ։ Իսկ նա հանապազ այլ և այլ պատճառ գտանելով, հրամանաւ̃ հօրն 'ի քաղաք երթայր· և յայլ տեղիս ուր հաճոյ թուէր նմա։ Յաւուր միում պատա

հեալ

ջեալ գիւահարի և հարկեալ 'ի մարդկանէ աղաչէին զի զդևն հանիցէ. և նա ոչ կարաց հրաժարիլ. եկն առ նա և ընթերցեալ զսկիզբըն յոհաննու աւետարանին, և զայլ աղօթսն կատարել. ասէ հրաման տամ ես քեզ 'ի զօրութին ա̅յ զի հնազանդեալ ելանիցես 'ի մարդոյս: պատասխանի ետ նմա դևն 'ի բերանոյ այսահարին. զի՞նչ դու կամիս հրամայել ինձ 'ի զօրութ̅ի սրբոյ հնազանդութ̅ն. որ ոչ երբէքէիր ճշմարտապէս հնազանդ. և նա զամօթի հարեալ գնաց. աստուստ յայտնի է զի թէ ինքն ճշմարտապէս հնազանդ լինէր առաջնորդին իւրոյ՝ և դևն ստուգապէս հնազանդէր նմա:

Տանուտէրն ոմն ունէր զծառայ հաւատարիմ և պիտանի. զոր կացուցեալ էր 'ի վ̅ր̅ ա̅մ ընչից իւրոց. յաւուր միում 'ի մէջ երկոցունց զրուց եղև յաղագս ան հնազանդութ̅ն ադամայ, և ճաշակման պտղոյն ընդդէմ պատուիրանին ա̅յ. իսկ ծառայն ցասուցեալ ընդ այնպիսի ան հաստատ միտսն ադամայ. ասէ տէր 'ի կողմանէ ա̅յ ոչ ունիմ ասել. այլ թէ դու հրաման ինչ սաստիկ ինձ տայիր ոչ երբէք զնովաւ անցանէի: իսկ տէրն լռեաց, և զկնի աւուրց ինչ յորժամ ծառայն ան զգուշ կայր՝ և ոչ զասացեալսն ընդ դէմ ադամայ յիշէր. ետ ցնա փոքր սափոր ծածկեալ. այլ ոչ փակեալ. ասելով զայս ամանս առ քեզ 'ի պահել յանձն առնեմ. բայց թէ Է̅ բացցես զդա. զա͞մ վարձս քո որ առ ինէ և զխնամսն 'ի յաւիտեան կորուսցես. և զայս բազում անգամ նմա յիշեցուցանէր։ Ի՛սկ ծառայն գնացեալ 'ի սենեակն իւր առ ժամայն սկսաւ տարաբերիլ հողմով զանազան խորհրդոց և փորձութ͞եց. կամելով գիտել թէ զի՛նչ իցէ 'ի սափորին. և բազում անգամ նայելով և շրջեցուցանելով. ասէ 'ի սրտի իւրում, զի՛նչ իցէ թէ բացից. զի աստ միայն կամ ո՛չ ոք զիս տեսանէ. եթէ ոք զիս հարցանէ ուրացայց. զի ո՛չ գոյ վկայ որ զիս դատապարտիցէ. յայնժամ զսափորն եբաց. և զթռչունն որ անդ կայր փախեաւ. և ապա յո՛յժ տրտմեցաւ. զի զխորհուրդն իմացաւ. և յորժամ տէրն եհարց ցնա վ͞ն ամանին. և նա անկեալ առ ոտս ն͞ր խնդրէր զթողութի. բայց նա ո՛չ ընկալաւ զմեղայն. այլ ասէր ցնա. ո՛վ ծառայ չար և ինքնահաւան. զի դու զսկզբնահայրն մեր վ͞ն անհնազանդութ͞ն դատէիր. զքո հաստատութ͞ն մտացդ առաջի իմ գովելով զքեզ դատապարտեցեր. արդ՝ 'ի բաց գնա՛ յինէն. զի ո՛չ ևս զերեսս իմ տեսանիցես։

Գ Այր ոմն մեծատուն և ազնուատոհմ. ունէր կին արժանապատիւ և յոյժ սիրելի. Յաւուր միում մինչ դեռ ընդ միմեանս խօսէին վ͞ն և այլ. ը͞ս սովորութ͞ե կանանց, անգոսնէր զևան. և վ͞ն ան հաստատութ͞ե մտաց դատապարտէր. զի վ͞ն դու զնաքեա՛

պտղոյն զցանկութին իւր կատարելով․ այսպէս ի տառապանս և թշուառութիս զա՟մ ազգմարդկան էած․ Ասէ ցնա այրն իւր․ մի՛ դատապարտեր զնա․ զի և դու 'ի սոյն փորձութե՟ն զնոյն գործէիր՝ ես կամիմ թեթագոյն ինչ քեզ պատուիրել․ և վ՟ս սիրոյ իմոյ ոչ կարիցես զայն պահել․ և ասէ, ո՛ր իցէ այն պատուիրան․ և այրն ասէ․ յաւուր յորում 'ի բաղանիս լուացիս․ մի՛ մտանիցես բոկոտնիւք 'ի տիղմն, որ է արտաքոյ գաւթին մերոյ․ և անդ էր ջուր ժահահոտ ուր ա՟մ աղբք տանն ժողովէին․ իսկ կինն ծաղր առնէր զանցանել զպատուիրանա՟ն․ ասէ ա՟րն կամիմ զի ուխտ լիցի 'ի մէջ մեր․ եթէ դու հնազանդեսցիս ես տաց քեզ․ Ե՟․ լիտր արծաթոյ․ ապա թէ ո՛չ դու նոյն չափ ինձ պարտական լիցիս․ այս բանս յո՛յժ հաճոյ թուեցաւ կնոջն․ և այրն 'ի ծածուկ կնոջէն իւրմէ լրտես կացոյց 'ի վ՟ր տղմին այնմիկ։ Զարմանքէ կինն այն պատուելի և համեստ՝ յայնմ օրէ ո՛չ անցանէր 'ի տեղին յայն․ զի մի՛ հայեսցի 'ի տիղմն․ բայց քանիցս անգամ 'ի բաղանիս երթայր, պատերազմ ունէր սակս տղմալիր տեղւոյն։ Յաւուր միում ելեալ 'ի բաղանեացն ասէ ցաղախին իւր՝ եթէ ո՛չ մտից 'ի տիղմն այն մեռայց․ և 'իսկոյն վերացուցեալ զհանդերձն, և նայեցեալ այսր և անդր․ թէ չիցէ ոք որ տեսանիցէ զնա․ և մտեալ 'ի տիղմն յայն ժահահոտ մինչև ցծունկն՝ զգնալով ընդ այն այսր և անդր զցանկութ͞ն իւր ելից զոր վաղվաղակի պատմեցին առն իւրում. և նմա ուրախացեալ իբրև ետես զնա. և ասէ զի՛ է տիկին. բարուք ունէիր այսօր բաղանիս. և նմա ասէ բարւոք. ապա ասէ ցնա մըտեալ է քո 'ի ժահահոտ և տղմալից ջուրն. առ այս բանս զամօթի հարեա՛լ լուռ ևեթ եկաց. տեսեալ թէ յանցանքն յայտնի եղեն. յայնժամ ասէ այրն ցտիկինն, ո՛ւր են ան խոնարհելի միտքդ. ո՛ւր է հնազանդութիդ. ո՛ւր են պարծանքդ. ահա քան զևայ թեթևագոյն ունէիր պատերազմ. ոչ ապաքէն տկարագունին ընդ դիմացար. և չարագոյն անկար. ա՛րդ՝ հատոյ զոր պարտիս՝ և իբրև ոչ ունէր զինչ որ հատուցանէր նմա զա͞մ զօրդըն մեծագինս առեալ 'ի նմանէ. այլոց բաժանեաց՝ թոյլ տուեալ թէ առժամանակ ինչ. ինքն ըստ ինքեան տանջեսցի:

Ֆ Երկրին սպանիացւոց էր ոմն երիտասարդ որ վ͞ս ան հնազանդութ͞ե ծնողաց իւրոց ան չափ թշուառութ͞ի եհաս. մինչ զի. Ժ͞Ը. ամայլեալ՝ վ͞ս աւազակութ͞ե և այլոց յայտնի չարեաց կախեալ եղև 'ի փայտ է ոչ ունելով ամենևին մի հեռս մօրուաց յորժամ կայր կախեալ՝ և ան շնչացաւ և առ ժամայն մօրուսն բուսաւ. ընդ որ ժողովուրդն հայէր՝ և առ սակաւ երկայնացաւ. ապա հեր գլխոյն սպիտակացան. և այն չափ եղև մինչ զի իննսից ամաց լեալ երևեցաւ: Զայս սքանչելիս լուեալ եպիսկոպոսն՝ եկն հանդերձ կղերիկոսօք և ժողովրդեամբ. և ա͞մքն 'ի ծունկս անկեալ աղօթէին՝ սպասելով կատարածի սքանչելացն. և ահա եպիսկոպոսն յարուցեալ ել 'ի բարձր տեղի. և ասէ ցա͞մքն, տ͞ր ա͞ծ այսու կամեցաւ ցուցանել. թէ չափ զաւուր կենաց իւրեանց պակասեցուցանեն այնոցիկ որ 'ի ան հնազանդութեն ծնողաց նուազեցուցանեն. քան զի այս երիտասարդս հասեալ էր 'ի յայս հասակ կենացն, զոր ցուցանէին երեսքն. եթէ ո՛չ էր ան հնազանդութ͞ի զեօթանասունամ͞ն նմա ո՛ր էր պակասեցուցեալ։

Յաղագս ոմն փոքրիկ տղայոյ. Գլուխ եօթներորդ.

Ոմն մանուկ փոքր հասակաւ առեալ հաց 'ի մօրէ իւրմէ ել արտաքս և ուտելով այսր և անդր շրջէր. ո͞պ սովորութ͞ի է այսպիսի փոքր տղայոցն. դէպ եղև զի մանուկն այն եկն 'ի տեղի ուր էր պատկեր ա͞ծամօր կուսին մարիամու. ունելով 'ի գիրկս զք͞ս ա͞ծ. ընդ որ հայեցեալ տղայաբար և քաղցրութ͞բ ասէր առ մանկացեալն ք͞ս. ո՛վ սիրելի ընկա՛լ զայս աղաչեմ, զոր քեզ յօժարութ͞բ ընծայեմ։ Իսկ պատկերն այն թէպէտ գեղեցիկ էր նկարեալ. սակայն զի անզգայ էր, կայր ան շարժ և ո՛չ պատասխանի տայր։ Իսկ մանուկն այն ո՛չ դադարէր աղաչելոյ. զի հաց կերիցէ ընդ նմա. և յորժամ բազում ժամա- ա͞ նակս էանց. և նմա ըստէպ ստէպ աղաչէր. ա[illegible]մ յետ այսորիկ զի յայտնի լիցի թէ ո՟պ ա՟յ հաճոյ է ան մեղից խնդրուածք. նոյն պատկերն զօրութ՟ն ա՟յ, ձգեալ զձեռն և ընկալաւ զհացն իմանկանէն ասելով. ահա ո՟պ կամիս առնում 'ի քէն զհացդ, բայց զկնի երից աւուրց զայն կամիմ քեզ հատուցանել։ Իսկ մանուկն լուեալ զայն պատասխանին, ուրախութ՟բ դարձաւ 'ի տուն իւր. և նոյն ժամայն հիւանդացաւ. յորժամ եկն երորդ օ՟ն կոչեաց զնա տ՟ր և որդի՝ կուսին մարիամու. որ աւանդեաց զհոգի իւր առ ա՟ծ. զի տացէ զհաց կենացն յաւիտենից. և զբնակութ՟ն արքայութ՟ն երկնից։

է՟ Երանելին օգոստինոս գիրս գրէր յաղագս սրբոյ երրորդութ՟ն. սովորութ՟ն ունէր զկնի կատարման աշխատութ՟ցն և զհոգևոր գործոյն՝ յերեկոյեան ժամուն առ եզերբ ծովուն շրջէր՝ զհետ ն՟ր քահանայք և կղերիկոսք 'ի բացուստ երթային զի մի՛ խափանեսցեն զնա զրուցատրութ՟բ իւրեանց, յիմացական տեսութենէ նորին։

Արդ երբեմն յորժամ այսպ՟ գնայր. ետես մանուկ մի գեղեցիկ և վայելուչ առ եզր ծովուն նստեալ. որ արարեալ յերկրի փոս մի փոքր. ո՟պ սովորեն մանկունք խաղ առնել. և արծաթի դգալով զջուրն 'ի ծովէն առնոյր և հեղոյր 'ի փոսն յայն. զոր տեսեալ օգոստինոս և եկեալ առ նա հարցանէր թէ զի՞նչ առնես. և նա ասէ, կամիմ զայս ծովս 'ի փոսս այս լնուլ. ընդ որ ծիծաղեալ եպիսկոպոսին. ասէ ո՛վ որդեակ իմ՝ զի ա՛րդ կարես զայդ առնել՝ ծովս լայնատարածէ դրգալդ փոքրէ, և փոսն զոր կամիս հեղուլ դու զնաքեա՛յ. ապա մանուկն ասէ. դիւրագոյն է ինձ զայս առնել զոր խորհիմ՝ քան թէ քեզ կատարել զոր դու զմտաւ ածեալ ես. ընդ որ յոյժ զարմացեալ եպիսկոպոսին հարցանէր թէ զինչ լիցէ այդ. և նա՛ ասէ 'ի միտ ածեա՛ և կարծեա՛ եթէ գրով փոքու պարփակես թէ զի՛նչ է անբաժանելի երրորդութեան անճառելի խորհուրդ՝ զոր մինչչև դու կատարեսցես. ես զա̃մ ծովս լնում 'ի փոսս այս. և զայս ասացեալ անյայտ եղև. իսկ օգոստինոս գոհացաւ զ̃քէ ա̃յ. և զի Ճշմարիտ էր զասացեալն 'ի մանկանէն իսկոյն իմացաւ։

Յաղագս առն [illegible]

Մի մարդ եսպան զեղբայր ազատի ուրումն՝ և զի ոչ կարաց փախչել 'ի ձեռաց այնոցիկ. որք արեան վրէժ խնդիրք կամէին լինել. մեծաւ զղջմամբ խոստովանեցաւ զմեղս իւր. և զինքն յանձն արար ա̃յ. և հանճարով վարելով, յօժար կամօք էր ընդ յառաջ 'ի ճանապարհ եղբօր սպաննելոյն. յաւուրս աւագ ուրբաթի. և անկեալ յոտսն՝ չուան և գօտի զպարանոցն իւրմէ կախեալ խնդրէր զթողութ՟ն սպանման եղբօր ն՟ր. զի զկեանս շնորհեցէ նմա վ՟ն սիրոյն ա՟յ և որդւոյ ն՟ր յ՟ի ք՟ի. որ յաւուր յայնմիկ չարչարանս կրեաց վ՟ն մեր աղաչէր։ Իսկ նա տեսեալ զայնպիսի խոնարհութ՟ին որ վերայ ընբիւր առ նորին մարդասիրութ՟ին՝ 'ի գութ շարժեցաւ որ վայելէր ազնուական մարդոյ թողութ՟ն շնորհեաց նմա. և 'ի մահուանէ ազատեաց զնա վ՟ն սիրոյն ք՟ի. և գիրկս արկեալ համբուրեց զնա ասելով եղբայր երթ 'ի խաղաղութ՟ի. ա՟ծ քեզ յերկինս եթող. և ես քեզ թողում երկրի։ Արդ՝ լուր թէ որ չափ մեծ վարձս ընկալաւ ա՟յ. սակս այնպիսի գործոյ որ վ՟ն ք՟ի արար. 'ի նմին գիշերի երևեցաւ նմա տ՟րն մեր յ՟ս ք՟ս 'ի տեսլեան երազոյ. և ասէ որովհետև յերեկ ներեցեր թշ՟ամւոյն քո վ՟ն սիրոյն իմոյ. գիտասցես զի զհոգի եղբօր քո 'ի նմին ժամու արքայութ՟ն երկնից արժանի արարի. նա և զհայր քո ընդ նմին՝ 'ի յարկսն լուսեղէն տարայ. և ես յաւել զքեզ հրաւիրեմ յաւուր ութերորդի. զի թողեալ զանձկութ՟ի աշխարհիս վայելեսցես 'ի փառսն յաւիտենից. և եղև այնպէս. քան զի յաւուր ութերորդի. բարւ՛ք պատրաստեալ խաղաղութ՟բ հանգեաւ 'ի ք՟ս։ Ահա՛ տես՝ թէ ո՛ր չափ բարի է թողուլ թշնամեաց՝ աստ յայտնի է. զի վ՟ն ո՛չ թողլոյ յերեսաց ա՟յ հեռի լինիմք։

Է Այր ոմն անուն յովհաննէս ազնուական և

մեծ ազգի · պատահեալ թշնամւոյն որ զազգականն իւր սպանեալ էր · և վաղուց հետէ զնա 'ի մահ խնդրէր · և այն չափ զնա 'ի նեղ տեղւոջ գտեալ · մինչ զի մինն զմիւսն ոչ կարաց զանց առնել ։ Արդ թշնամին այն իբրև ոչ ունէր զօգնական ընդ իւր, բայց միայն մահ առաջի աչաց · սակայն յարուցեալ 'ի մարդասիրութին յովաննու, էջ 'ի ձիոյ և անկաւ յերկիր · տարածեաց զձեռս և վ͞ն սիրոյ խաչելոյն խոնարհաբար թողութ͞ի խնդրէր · և յովաննէս լուեալ զանուն խաչելոյն՝ շիջաւ վ͞ն սիրոյ խաչելոյն խաղաղութ͞ի արար ընդ նմա · և հրամայեաց նմա կանգնիլ · ազատեալ 'ի բաց եթող զնա ։ Յետ այսորիկ մտեալ յեկեղեցին և ծունր եդ առաջի խաչին ք͞ի · և ետես զի գլուխ խաչելոյն ք͞ի առ նա խոնարհեցաւ · իբր թէ շնորհակալ լինելով · զի վ͞ն սիրոյն ն͞ր մեծ թշնամւոյն իւրում թողութ͞ի շնորհեաց ։ Եւ մինչև ցայսօր · Շ · ամաց տեսանեն ոյք կամին · և արժանապէս պատիւ մատուցանեն խաչաձև պատկերին այնմիկ · և առ յիշատակ իրացն եղելոցն մինչև ցայժմ գլուխ պատկերին զուարթ երեսօք 'ի բացեա 'ի մարմնոյն խոնարհեալ երևի · իբր թէ զբարեկամի սիրով ողջունելով · վ͞ն յաղթութ͞ե նորին բերկրելով ։

Դէպ եղև այր ոմն զմարդ մեծ արգոյ և փ͞
փառաւոր քան զինքն եսպան · որոյ սակս որդին նորին ըստ աշխարհի սովորութ͞ե և ոչ

ք՟ի պատուիրանի սրբոյ աւետարանի բազում նեղութիւ՟ս կրէր. որպէս յայնմանէ որ հօր իւրոյ արեանն վրէժ խնդիր լինէր։ Արդ՝ մարդասպանն այսպիսի վշտի լեալ. դիմեաց առ կայսրն զի թերևս օգնու՟ի ինչ գտցէ ՚ի նմանէ։ Ս որ իմացեալ որդի սպաննելոյն փութացաւ զհետ ն՟ր. զի կամ դատաստանաւ պատժեսցէ զնա. և կամ սպանցի. յորժամ եհաս նմա մարդասպանն տեսեալ զի ընդ. դ՟ այրս ունէր. և նա. Է՟ զօրականօք շրջապատեալ զնա. ասաց իւրոյն զի փախիցեն. և տեսեալ զի ծառայն ն՟ր ոչ կարէր զերծանել. ապաւինեցաւ յողորմութ՟ի. զգեցաւ զզէն և զծածկոյթ խոնարհութ՟ե. ՚ի բաց ձգեալ զզէնն և տարածեալ զձեռս խաչաձև անկաւ յերկիր սպասելով ողորմութ՟ե։ Իսկ նա յաղթող գոլով վ՟ս պատուոյ և մեծարանաց խաչի. զինքն բռնադատեալ անդրէն եկաց. և պատուիրեաց զի մի յումեքէ վ՟նասցի։ Այս ևս խաղաղութ՟ի կատարեալ ընդ նմա. և պատուի սրբոյ և կենարար խաչին, ոչ միայն զնա կենդանի և ամբողջ եթող. այլ և զա՟մ վ՟նասն որ վ՟ս հօր մահուան նմա շնորհեաց. Արդ՝ իբրև զայսպիսի նշանաւոր յաղթութիւս գործեաց ոչ զայլ ոք այլ զինքն յաղթահարեաց ՚ի մեր ձակոյ յեկեղեցի եմուտ և մեծ զարմանք եղեն. քան զի պատկեր փրկչին խաչաձև տարածեալ եղև. զի երիցս զնա ողջունեաց. խոնարհեցուցեալ զգլուխ իւր. ով մեծի և գերապայծառ փառաց յաղբերագործէն ողորմութ̅ե· արժանի գոլ զայսպիսի պատիւ ը̅ունել· բայց զինա վ̅ս անուան խաչելոյն ո՛չ եղև վրէժ խնդիր· այլ հատուցումն հակակայ կենդանութ̅ե յօժարամիտ եթող· այնր աղագաւ 'ի նմանէ զպատիւ ողջունի ընկալաւ: Զայս իբրև լուաւ կայսրն յոյժ պատուեաց և մեծարեաց զնա· և մեծամեծ տրօք փարթամացոյց·

Շինական ոմն եսպան զայր մեծ ազգի և փախեաւ՝ յեղբայր սպաննելոյն մեծաւ գնդաւ զօրինականաց երթալով 'ի ճանապարհ· և զեղբայրասպանն միայն եգեալ 'ի դաշտի, և հանեալ զսուրն արձակեցաւ 'ի վ̅ր ն̅ր· իսկ շինականն անկեալ յերկիր աղաղակեա՛ց՝ ողորմեաց ինձ ո՛վ այր վսեմական վ̅ս այնորիկ որ քեզ և ա̅մ̅ցուն ողորմեցաւ· յորժամ զաշխարհս արեամբ իւրով ազատեաց· Զայս լուեալ քաջասիրտն արտասուօք եթաց զերեսս իւր· և զձեռն զոր վերացուցեալ էր իջոյց: Իսկ յորժամ իւր մարդիկքն զայս թողութ̅ի նորին համարէին· դարձեալ վերացոյց զձեռն իւր 'ի վ̅ր անկելոյն յերկիր այլ յորժամ մարդասպանն զողորմութ̅ի հայցէր· դարձեալ զձեռն իւր խոնարհեցոյց· Եւ իբրև երրորդ անգամ յանդիմանեալ իւր այնոցն, կամէր զնա սպանանել· և զեղկելին խնդրէր թողութ̅ի վ̅ս ազատութ̅են զոր ա̅մ̅ մարմին յաւուրն դատաստանի կրելոցէ· պա Դ̅ տասխանի ետ ազնուատոհմն և ասէ. Ես քեզ թողում զսպանումն եղբօր իմոյ, երթ 'ի խաղաղութի. 'ի նմին աւուր եմուտ յեկեղեցի 'ի ժամ պատարագի, և երիցս զգլուխն իւր խոնարհեցոյց առաջի պատկերին խաչելոյն քի. անդ այր ոմն այ ետես զի իշխանն քանիցս անգամ զգլուխն իւր խոնարհեցուցանէր. և պատկերն զգլուխն իւր խոնարհաբար խոնարհեցուցանէր. և առեալ զնա մեկուսի այրն այ. եհարց զնա. զի՞նչ մարդ ես. և նա ասէ, ես եմ զօրական 'ի նախնեաց իմոց. և սրբն ասէ, պատմեա՛ ինձ աղաչեմ, և մի՛ ինչ թագացաներ, յի՞նչ յուսաս. զի մեծագոյն ողորմութե արժանաւորեցար. և զօրականն ասէ մեղաւոր աշխարհի ծառայեալ. ո՛չ միոյ թողութե արժանի լեալ թէր ևս այսօր եղէր. և զա՛յս ասացեալ զամ եղեալսն պատմեաց նմա. և նա զոր ինչ ետես յայտնեաց նմա և յորդորեաց զնա 'ի մեծագոյն յառաքինութիւն և բարեգործութի։

Է Այր ոմն այն չափ էր բարկասիրտ մինչ ըզվնասն իւր յումեքէ արարեալ ամենևին ո՛չ թողոյր։ Զկնի մահուանն յորժամ տարան յեկեղեցին. և սաղմոս և աղօթս վա նո կատարէին պատկերն խաչելութեն քի, հանեալ զձեռն իւր բևեռեալս հանդերձ բևեռօք 'ի տախտակէն՝ խփեաց զականջս իւր. և ձայն լսելի եղև՝ ո՛չ եթող այլոց. և ես ո՛չ թողից դմա։

Երկու դրացիկ մերձայք միշտ 'ի բանակռութեն և խռովութեն կային՝ ամենևին ընդ միմեանս հաշտիլ և խաղաղութեն առ իրեարս ո՛չ կամեցան լինել. և մանաւանդ յոր ժամ խոստովանեցաւ. հայրն կամեցաւ 'ի մէջ երկոցունց հաշտութեն արկանել. պատասխանի ետուն՝ թէ վաղագոյն 'ի դժոխս իջցուք քան թէ մինն միւսում թողութեն արասցուք։ Արդ՝ երկուքինն զկնի սուղ ժամանակի մեռան. մի՛ն աղօթ առնէր խոստովանահա՛յրն զա̅ծ աղաչէր զի յայտնեսցէ նմա թէ զինչ եղև նց̅. ապա հոգւով 'ի հրեշտակէ տարեալ եղև 'ի տեղի ինչ, ուր ետես հնոց ծծմբով և ձիթով բորբոքեալ. յորմէ երկու արք ահագնակերպ ելանէին ունելով բոցեղէն սուսերս. և զմիմեանս 'ի մասունս կտրատէին. և սատանայ ժողովեալ զա̅մ անդամս նց̅ 'ի բոցն ձգէր. և դարձեալ վաղվաղակի յառնէին. և ոպ̅ ասացաւ երկիցս և երիցս զնոյն առնէին։ Յայնժամ ասէ հրեշտակն ցքահանայն. սոքայ են այն երկու դրացիքն, որք ո՛չ երբէք կամէին ընդ միմեանս հաշտիլ 'ի վ̅ր երկրի. այլ մանաւանդ զայս տեղիս իւրեանց ընտրեցին. զ̅

Այր ոմն այն չափ էր բարկասիրտ. մինչ զի հազիւ ոք կարէր ընդ նմա միաբանիլ։ սակայն զինքն ս̅բ լինել կարծէր և աղօթ առնէր. քան զի զմարմինն իւր պահօք ճնշէր՝ յերկար աղօթէր և այլ բարեգործութիւնս զանձն կրթէր. է̅ թէր․ բայց զայս պակասութ՟ն գլխաւոր յինքն ունէր․ զի եթէ յումեքէ միանգամ վիրաւորեալ լինէր բնաւ ոչ երբէք զոխէր ցուցանէր նմա․ զայնպիսի բարկութ՟ն և վրէժ խնդրութ՟ն ոչ ոք կարէր 'ի նմանէ հեռացուցանել։ Ապա յետ այսորիկ 'ի մեծ հիւանդութ՟ն անկեալ խնդրեաց խոստովան հայր՝ և զայլ մեղս իւր խոստովանեցաւ՝ իսկ զայս ամենևիմբ չյիշեաց։ Եւ յորժամ քահանայն եբաց զմասնատուփն զի տացէ նմա զմարմինն տ՟րունական․ նա փակեաց զբերանն իւր և զերեսն յորմն դարձոյց ասելով զոր օրինակ ես բազում անգամ դարձուցանէի 'ի վնասապարտուց իմոց՝ և ոչ երբէք սրտիւ թողութ՟ն առնէի նց՟ և ոչ իսկապէս սիրէի, այլ միշտ 'ի բարկութ՟ե կայի․ և զայլս բարկութ՟բ իմով խռովեցուցանէի․ և այնպէս և ա՟ծ դարձոյց զերեսս իւր յինէն․ և ոչ երբէք մարդասիրապէս յիս հայեսցի․ այլ ընդ ա՟մ դիւաց բարկացողաց դատապարտեցայց․ և տանջանաց նց՟ մասնակից եղէց։

Յաղագս անոխակալութ՟ն գլուխ․ Ը․ երորդ․

ա Սուրբն յոհան ոսկեբերան ասաց 'ի մէջ քարոզի իւրոյ․ թէ յորժամ ոմանք չարաբարոյ մարդիկք քարկոծ արարին զպատկեր երանելի կոստանդիանոսի ինքնակալին․ և բազումք յորդորէին զնա վրէժ խնդիր լինել անարգողաց պատկերին իւրոյ․ և կորուս ցէ զայնպիսի արհամարհողքն. և ասէին թէ ա̃մ երեսս քո չարաչար քարամբք վիրաւորեցեն. ձգեաց զձեռն յերեսս իւր ծիծաղելով ասաց. ես և ո՛չ մի խոց տեսանեմ յերեսս իմ. և ո՛չ զցաւ զգամ. նա՛ և գլուխ իմ առողջ և երեսս իմ ա̃մ ամբողջ: Իսկ ն̃ց լուեալ զամօթի հարան. և զչար խրատն իւրեանց 'ի բաց թողին: Այս խօսք իսկապէս արժանի է գովեստի. զոր մինչև ցայսօր ա̃մքն բարի համբաւէ̃ են. և ո՛չ երկարութ̃ի ժամանակաց կարէ եղծանել զնա՛ զի մի՛ յափշտակեսցի, որ և պայծառութ̃ե իւրով զա̃մ յաղթանակ յաղթահարէ և գերազանցէ:

Սուրբն յոհան ողորմած. ունէր եղբօր որդի մի. որ կռուեալ ընդ ուրումն պանդոկապետի. կարի եղև 'ի նմանէ անարգեալ և զի յայտնապէս այս բան եղև և անարգանս մարդոյ. մանաւանդ զի էր ինքն եղբօր որդի պատրիարգին. այսր աղագաւ կարեվէր 'ի սրտի խոցոտեալ մեծաւ լալով եկն 'ի սենեակն. զոր տեսեալ հեզա հոգի պատրիարգին. այսպիսի բարկութ̃ե զայրացեալ. և կոչեաց զնա՛ հարցանէր զպատճառ տրտմութ̃ե: Իսկ նա՛ 'ի սաստիկ տրտմութենէն ո՛չ կարէր յայտնել. և մարդիկքն որ մերձ էին զա̃մ ինչ ծանուցին պատրիարգին. իսկ նա որպ̃ զճշմարիտ բժիշկ սկսաւ մեղմով զբարկութ̃ի եղբօր որդւոյն իւրոյ շիջուցանել ասելով. արդարև այդ արդեօք հնարիցէ զի ոք համարձա ե̃ մարձակեսցի իւր ընդ դէմ քո բանալ. հաւատայ ինձ որդեակ. այնպիսի գործ արարից այսօր. մինչ զի բովանդակ աղէքսանդրիայ զարմասցի. և տեսեալ զնա փոքր մի հանդարտեալ. կարծելով թէ յայտնապէս պատժեսցի պանդոկապետն. գրկեալ զնա ասէ որդեակ. եթէ եղբօր որդի իմ ես՝ պատրաստեա զքեզ ՚ի գանս. եյ̄մ մարդոյ անսըգել. քան զի ճշմարիտ ազգականութի̄ ո՛չ յարենէ և ո՛չ ՚ի մարմնոյ. այլ հարազատ յառաքինութենէ ճանաչի։ Ապա առաքեաց և կոչեաց զպանդոկապանն. և արար զնա ազատ ամ̄ հարկաց. մինչ զի ամ̄քն որք լուան զարմացան. և ՚իմացան թէ այդ այնէ զոր ասացեալ էր. այնպիսի գործ արարից մինչ զի բովանդակ աղէքսանդրիայ զարմասցի. զի ո՛չ միայն վրէժ խնդիր չեղև. այլ փոխանակ պատժոյ շնորհս արար նմա։

Յաղագս Աչաց տեսութե̄. գլուխ. Ժ.

Ճ Էր ոմն կրօնաւոր կուսակրօն, որ մեծաւ զգուշութբ̄ պահէր զաչս իւր մանաւանդ ՚ի տեսութենէ կանանց. մինչ զի իւր ազգակայինսն ընդ հարկ պահանջէր խօսել ո՛չ կամէր հայել։ վս̄ որոյ խոստովանահայրն որ գիտէր զամ̄ գաղտնիս խորհրդոց նր̄. հարցանէր զնա, վս̄ ինչ պատճառի՝ դու որ զայսպիսի ունիս շնորհս սրբութ̄ն և կուսութ̄ն. զերեսս դարձուցանես ՚ի պատուաւոր

և համեստ կանանց տեսութենէ. պատաս
խանի ետ այրն այ̃. լուսաւոր գոլով ա̃ձ յին
լուով. հար եթէ մարդ առնէ զայն՝ զոր
ինչ հարկ 'ինման է պահանջէ. և իւր կարօ
ղութ̃ն զօրէ. և խորշի 'ի պատճառէ մեղան
չելոյ. յայնժամ և ա̃ծ փոխարէն առնէ զոր
ինչ իւր կողմանէ է. և մարդոյ օգնէ և պա
հէ ա̃ն չ̃արս. իսկ յորժամ մարդ լրբաբար
զանձն իւր մատնէ 'ի վտանգն. յայնժամ
իրաւի և ա̃ծ զնա անտես առնէ. և 'ի ձեռաց
թողու. և այնպ̃ լինի. զի դիւրեաւ վտ̃ապա
կանուե̃ բնուե̃ս 'իմեղս մեծամեծս անկանել.

Քահանայ ոմն ա̃ծահաճոյ. մինչ դեռ ե ե̃
րիտասարդ էր յաւուր միում. անզգու
շութ̃ ընդ երեսս ուրումն կնոջն նայեցեալ
էր. զերիս ամս զկնի մահուան նր̃ այն չափ
սաստիկ պատերազմ ունէր. մինչ զի զատ
յայնմանէ զոր յարթնութե̃ կրէր. յա̃մ գի
շեր յանուրջս երազին 'ինմանէ տեսանէր.
Արդ՝ տեսեալ քահանայն. թէ սատանայ
ոչ դադարէ մարտնչել. 'ի գիշերի ծածուկ
զգերեզման կնոջ մեռանելոյն եբաց. զքիմս
իւր և զերեսն իւր 'ի տղմի փտեալ մարմնոյն
այն չափ բռնէր մինչ զի 'ի սաստիկ ժահահո
տութենէ պակասել իբրև զմեռեալ յետ
կոյս անկաւ՝ որ գործոյն ան չափ օգուտոյ
եղև առն սրբոյ, մինչ զի յառ ապա́ 'ի մար
մնի իւրում բնաւ շորժումն ինչ ոչ գայր.

Եպիսկոպոս ոմն մինչ դեռ քահանայ էր և զ̃

կին ունէր · և վ՟ս ողջախոհութ՟ե և մաքրութ՟ե իբրև զքոյր սիրէր զնա · և կուսութ՟ե կային ընդ միմեանս · ապա գնաց 'ի վանս կուսանաց և ծառայէր ա՟յ · և յետոյ եպիսկոպոսն յիշեալ զն՟ր սէրն և զգեղեցկութ՟ին, այն չափ յաղթեցաւ մինչ զի հրամայեաց գալ առ յինքն · զոր լուեալ աղախինն ք՟ի ոչ կամեցաւ և դարձեալ յղեաց առ նա զի եկեսցէ · բայց նա անշարժ գոլով 'ի միտս իւր, ոչ յանձն էառ ։ Իսկ նա յերրորդ անգամ ստիպելով հրամայեաց զնա տեսանել · և կինն տեսեալ զխստութ՟ի եպիսկոպոսին՝ հնարս ինչ իմացաւ զի եպիսկոպոսն առաջի խորհրդոյն դարձուսցէ · և զկուսութ՟ին իւր անբողջ պահեսցէ ։ Ապա 'ի բաց ձգեալ զզարդ յանձնէ իւրմէ · գերծեալ զհեր գլխոյ իւրոյ և զգեցեալ զմազեղէնն, և երևեցոյց զինքն եպիսկոպոսին ։ Իսկ իբրև 'ի նա հայեցեալ եպիսկոպոսին յոյժ զարշեցաւ 'ի չար խորհրդոյն · և տեսեալ զիմաստուն խորհուրդ հանճարեղ կնոջն · որ զգայթագղութ՟ին գեղեցկութ՟են իւրոյ 'ի բաց ընկէց զի մի գուցէ 'ի ձեռն զգալի աչաց ըմբռնեսցի ծառայն ա՟յ, և տաճար նուիրեալ հոգւոյն սրբոյ ։

Յաղագս Ապաշխարութ՟ե Գլուխ · ծ՟է ·

[illegible] Այր ոմն մեղաւոր որ զդուստրն իւր ապականեալ էր · եկն առ եպիսկոպոսն զի խոստովանեսցի զյանցանս իւր · ա՛րդ՝ խոս տովանեցաւ մեծ և զարմանալի զղջմամբ· և յորդահոս արտասուօք· և հարցանէր արդեօք կարիցեմ զղջմամբ իւիք և չարչարանօք գտանել զթողութ̃ի 'ի տ̃նէ· ասէ եպիսկոպոսն՝ այդ այդպէս առանց կարծեաց· եթէ կամիս սակս այդպիսի յանցանաց ապաշխարել· և նա՛ 'ի խորոց սրտէ աղաղակեաց ասելով· կամիմ թէ· ռ̃ անգամ մահ հրամայես յանձն առնուլ։ Իսկ եպիսկոպոսըն գթացեալ 'ի վ̃ր թշուառականին մանաւանդ 'ի վ̃ր երջանիկ մեղաւորին· ասէ և ես քեզ զ· է̃· ամ միայն ապաշխարութ̃ի տամ· յայնժամ նա՛ ասէ զի՛նչ է այդ զի ինձ յոյժ մեծ չարագործ մեղաւորիս զ· է̃· ամ միայն ապաշխարութ̃ի դնես· որ թէ մինչ և 'ի կատարած աշխարհի կենդանի լինէի, զայն քան չարութ̃իս ան համար չարչարանօք ո՛չ կարէի քաւել։ Ապա եպիսկոպոս ասէ երթ և զերիս աւուրս միայն հացիւ և ջրով պահեա՛· յայնժամ նա՛ ևս առաւել կոծելով և զկուրծս իւր բախելով աղաչէր զի զապաշխարութ̃ն փրկութ̃ե ցուցցէ նմա։ Ի՛սկ եպիսկոպոսն կարի զարմացեալ և զուարճացեալ սաստիկ պատուիրեաց նմա· զի գնասցէ և զհայր մերն միայն ասասցէ· և ստուգապէս գիտասցէ զի մեղք իւր թողեալ են։ Իսկ նա՛ ուժգին զաղաղակ բարձեալ անկաւ յերկիր և առանդեաց զհոգին· ուստի անկարծելի յայտ զի առնս այսորիկ ապաշ խարութն ընդ ունելի ա̅յ եղև. և փոխեցաւ յանանց կեանքն.

Է Էր ումն ծերունի քահանայ մի և ա̅ծահաճոյ. առ որ բազում մարդիկք գային վ̅ն շնորհացն զոր ունէր 'ի յուսուցանել և 'ի խոստովանեցնել. դէպ եղև զի յամրոցէ 'ի մէքէ բազում արք և կանայք առ նա երթային. եհարց ցն̅ս ա̅ր ծերունին այնորիկ. ո՞ւր երթայք և վ̅ն ինչ իրաց. և նք̅ պատասխանի ետուն թէ առ այս ինչ այրն ա̅յ. զի խոստովանեսցուք առաջի ն̅ր զմեղս մեր. յայնժամ ա̅րն 'ի միտս իւր ասելով. զայդ ինձ մանաւանդ հարկէ առնել. որ մինչ եմ այլոց կողոպտող և յանցաւոր ա̅մ պատուիրանացն ա̅յ. Իսկ 'ի միուս կողմանէ ասէին զնա խորհուրդք իւր, ոչ ինչ եղիցի քեզ օգուտ. զի ոչ կարես ապաշխարել. սակայն զայն խորհուրդն ան փոյթ արարեալ գնաց առ ա̅րն ա̅յ խոստովանել զմեղս իւր. և զկնի խոստովանութենն եհարց ցնա հայրն. կարես զ. Է. ամ ապաշխարել. պատասխանի ետ թէ ոչ կարես զերիս ամս. ապա զմին. և. զ̃. ամիս. և նա ասէ թէ ոչ. յետ այսորիկ եհարց կարես զմին գիշեր յեկեղեցւոջն որ է առաջի բերդին ան բնակ հսկել՝ փոխանակ թողութն յա̅մ անցանաց քոց. իբրև զայն յանձն էառ. ասէ ցնա հայրն. զա̅մ գիշեր մի ելանիցես յարտաքս թէ զինչ ինչ իցէ որ մի անձամքեզ պատահեսցի. ո՛րդ ընկալեալ զա պաշխարութի̃ն դարձաւ 'ի բերդն և յորժամ երթայր յեկեղեցին այն խորհէր 'ի սրտի իւրում ասելով. լաւ է այժմ զապաշխարութի̃ն կատարել. զի մի՛ գուցէ թուլացեալ յետ ոչ դիւրեաւ կարիցեմ գործել. ապա իջեալ 'ի ձիոյն և կացոյց զնա առ դուրըն եկեղեցոյն. և ինքն մտեալ 'ի ներքս առաջի սրբոյ սեղանոյն աղօթից: Եւ յորժամ այսպիսի յաղօթս կայր՝ երկարէր մինչ 'ի խորգիշեր. դեք յա̃մ կողմանց գաւառին ժողովեցան. մինն 'ի նոցանէ որ էր ծերագոյն ասէ ցն̃ս. այսօր կորուսաք զմի 'ի բարեկամաց մերոց, որ միշտ էր մեր. եթէ համբերեսցէ փորձութեն զոր հրամայեալ է նմա. արդ եթէ ոչ յետս դարձուցանեմք զնա. և ոչ տանիցեմք զի զապաշխարութի̃ն 'ի բաց ձգեսցէ. և ոչ ևս մեր եղիցի. արդ եօք լիցէ ոք 'ի ձէնջ. որ զնա յեկեղեցւոյն արտաքըս հանիցէ. պատասխանի ետ ոմն դև̃ ես. եթէ հրամայես հանից զնա յեկեղեցւոյն. ասէ ցնա երթ. յայնժամ նա զկերպարան քեռ նորին որոյ խրատու նորին նա զա̃մ առնէր. զի էր յոյժ հանճարեղ և խորհրդական եկն առ զօրականն և ասէ. զի արդ այս անբնակ տեղւոջ մնասցէ առանց ուրուք օգնականի, ոչ գիտես զի բազում թշնամիք ունիս. և եթէ զքեզ աստ անօր գտցեն անդամ անդամ յօշեսցին. ան խոհեմաբար զայդ արարեր. արդ՝ եկ գնասցուք 'ի բերդն, պտ̃խնե ետ նմա զօրականն. տուաւ ինձ ապաշխարութիւն զա՟մ գիշեր ոչ ելանել աստի. վ՟ն այնր ոչ երթայց. ասէ կերպարանեալ քոյրն. եթէ ոչ երթիցես յայսմ հետէ ոչ ևս յաւելից տալ քեզ խրատ. և կորուսցես զսէրն իմ. և յա՟մ գործս քո եղէց քեզ հակառակ. և նա ասէ թէ և զա՟մ ինչ կորուսանիցեն այսր աղագաւ, որով հետև զայս առնեմ վ՟ն թողու՟ե մեղաց իմոց. ոչ իւիք կերպիւ ելից աստի. ապա դևն ամօթով ելեալ գնաց. և դարձաւ առ առաքիչն իւր ասելով. այսպէս և այս՟մ շարժեցայ. բայց ոչ ինչ շինեցի. քան զքար կարծր է ոչ կամի թողուլ զապաշխարու՟ին։

Դարձեալ եհարց իշխանն դևաց. ո՞վ կարէ զնա խաբել և հանել յեկեղեցւոյն. ասէ ոմն ես. եթէ հրամայես. պատասխանի ետ երթ. և նա գնացեալ զգեցաւ զկերպ կնոջ ն՟ր. ունելով 'ի գիրկս զերկու որդիս, և եկն 'ի հանդերձս ան պատշաճ գլխի բաց զհերս ձեղքեալ ունելով. և ասէ ահա թշնամիք քո դիմեցին 'ի վ՟ր ամրոցին մերոյ. և տարան զա՟մ ստացուածս մեր. և զա՟մ մարդիկքն որ էին 'ի բերդին գերի վարեցին. և զիս մեծաւ նախատանօք 'ի տանէ մերմէ 'ի դուրս հանեն. իսկ եթէ փութանակի պնդես ըզհետ ն՟ց հանդերձ մանկամբք որք մնացեալ են կարես զն՟ս ըմբռնել. և զա՟մ ինչսն մեր յետս դարձուցանել. և զ[illegible] իմոյ վրէժխնդիր լինել. և զօրականն պատասխանեաց նմա ոմ՟ յառաջնոյն · յայնժամ ասէ կինն եթէ ոչ ելանիցես աստի, զորդիդ քո ընկեցից առաջի քո · տեսցես թէ զինչ շահեսցիս · և մեծաւ զօրութ՟բ ընկեց զն՟ գետին · ասելով և ոչ ես խնամ տարայց դորայ · բայց նա և ոչ վ՟ այնորիկ 'ի տեղւոջէ շարժեցաւ · և ապա և սա՛ ևս կորագլուխ դարձաւ առ իշխանն ասելով · կարծր է քան զանդամանդ · զայս ինչ և զայս արարի ոչ կարացի խախտել զնա ։ Ասէ իշխանն խաւարի · ապա յաղթեալ եղէք ։ Երրորդ անգամ եհարց թէ ով իցէ որ կարիցէ յաղթել նմա ։ պատասխանի ետ մի ոմ՟ն · առաջին և երկրորդն ոչ էին հմուտ փորձութեց · եթէ ինձ հրամայես յարտաքս հանից զնա · և առեալ հրաման՝ արար իբր թէ հուր վառեցաւ շուրջ զեկեղեցաւն · և այն չափ սաստիկ հուրն երևեցաւ մինչ զի բոցն ընդ դուռն և ընդ պատուհան եկեղեցոյն մտանէր · և դևն սկսաւ տաղտկել · եկայք օգնեցէք ապա եկեալ 'ի դուռն եկեղեցւոյն ասէ որպիսի մարդ ես ոչ ապաքէն ամ՟ մարդ բարի օգնէ շիջուցանել զհուր · համարիս թէ ած՟ քեզ լուէ · զայսպիսի վ՟նաս կարող ես անցուցանել և ան փոյթ առնես ։ Առ այս պատասխանի ետ զօրականն՝ ոչ իւիք պատճառաւ ելանիցեմ աստի · զի զայս ինձ տուեալ է ապաշխարութես · և ապա՛ երրորդն դարձաւ ամօթով և ունայն ։ Յետ այսորիկ իշխանն դիւաց ասէ · և ոչ գտանիցի ով որ կարիցէ զնա յեկեղեցայն 'ի դուրս հանել։ ապա հրամայեաց միոյն 'ի նոցանէ. և նա գնացեալ էառ զկերպարանս քահանային. և ելեալ և զանկակապուրծն. և հարկանէր զզանկակն. և եմուտ վառեաց զմոմեղէնս 'ի վ̃ր սեղանոյն. և զարդարեաց զսեղանն. և հայեցեալ առաջի բեմբին ետես զզօրականն և ասէ. ոչ ապաքէն դու ես այս ինչ զօրական. պատասխանի ետ եսեմ, ասէ դևն դու ես ընդ անիծիւք զի այս ինչ և զայս գործեալ է քո. արդ ել վաղվաղակի յեկեղեցւոյս. զի ոչ կատարեցից զգիշերային պաշտօնն մինչ և ել անիցես աստի. Իսկ զօրականն ետ պատասխանի ամ̄ և այլոց. ապա դևն զամօթի հարեալ գնաց. Իսկ ընդ ծագել առաւօտուն ել գընաց զօրականն 'ի բերդն իւր՝ և եգիտ զկինն և զորդիս և զքոյրն և զամ̄ ինչսն զօր օրինակ յերէկ թողեալ էր. Իսկ ծանուցաւ յամ̄ հարց որբոյ՝ զի զօրականն այն գ̄ պսակս յերկինս շնորհեաց ընդ յաղթութե̄ն չորից փորձութե̄ցն. Այս օրինակէ ընդ դէմ այնոցիկ, որք ամենևիմբ ընդ դիմանան սատանայի. այլ վ̃ն դու գնաքեա՛ ինչ փորձութե̄ց անցանեն զահմանեաւ իւրեանց ապաշխարութի̄.

գ̄ Ազնուական ոմն փաղչէր 'ի թշնամեաց իւրոց. և տեսեալ զի ոչ կարէ զերծանիլ 'ի ձեռաց նց̄. յայնժամ անկաւ յերկիր. և տարածեալ զձեռսն իւր բաղկատարած և ասէր արդար դատաստանաւ արժանի եմ մահու.

զի զա՟ծ զանազան և պէսպէս անօրէնութ՟ք բարկացուցի․ և լալով խոստովանէր զինքն մեղաւոր գոլ և մեծաւ աղերսանօք աղաչէր զնա՟․ զի ա՟ծ ակոյս կողմանէ վրէժ խնդիրք լեալք․ զիւրաքանչիւր անդամ ուրոյն չար չարանօք մաշեցին․ և իբրև այսպիսի եղև ուրումն ճգնաւորի որ մերձ աստանօր բնակէր՝ զբազում ժամանակս մեծաւ ժուժկալութ՟ և ապաշխարութ՟ կացեալ, յա՛յտնեցաւ 'ի տ՟նէ․ զի զօրք անմարմին զուարթնոցն քաղցրաձայն երգով զհոգի աւազակի տանան երկինս։ Իսկ ճգնաւորն ո՛չ գոհացաւ զա՟յ․ այլ մանաւանդ բարկացաւ ասելով 'ի սրտի իւրում․ յայնժամ և ես զա՟մ հեշտութիս աշխարհի վայելեցից և բարութ՟ զաւուրս անցուցից 'ի վաղճան կենաց իմոց սոյնպէս ապաշխարեսցից․ և ինձ եղիցի․ զոր օրինակ եղև աւազակին այնմիկ։ Արդ մինչ դեռ թշուառական անապականն այն դառնայր աշխարհի զի ծառայեսցէ սատանայի․ դէպ եղև նմա ընդ ջուր ինչ անցանել․ և անկեալ 'ի կարմն ջրէն ընկղմեցաւ․ և դիւացն առեալ զհոգի նո՟ տարան 'ի խորս անդնդոց 'ի փառսըն սատանայի։

Այր ոմն որ վաշխ և տոկոսս առնոյր․ զոր քահանայն միշտ խրատէր և յորդորէր յապաշխարութի․ և նա ասէ՛ր բարւոք է եղիցի ժամանակ զի արարից․ զնոյն և 'ի հիւանդութեն իւրում ասէր․ իսկ քահանայն տե է՟

սեալ զնորին վտանգն մեծաւ ջանիւ ստիպէր զնա յապաշխարութիւն. և նա եղև իբրև զմեռեալ. այլ յորժամ եկն 'ի միտս իւր. դարձեալ քահանայն ջանայր բերել զնա 'ի խոստովանութիւն յապաշխարութիւն։ Իսկ նա աղաղակեաց՝ ով ապաշխարութիւն ուրես. ոչ ևս կարեմ ապաշխարել. և այս արդար դատաստանաւ ա̃յ զի յորժամ կարէր ապաշխարել ոչ կամեցայ և զայս ասացեալ սատակեցաւ։

Է Երկու ծերք ճանապարհորդք կամելով սակաւ մի հանգչել 'ի սաստիկ տօթոյ. խոտորեցան 'ի գոմ ինչ. և անդ 'ի խնամոյն ա̃յ գտին երիս երիտասարդս, ընդ իւրեանս ունէին կին մի պոռնիկ. ա՛րդ ծերքն՝ առանձին նստան. և մինն 'ի նոցանէ առեալ զս̃բ աւետարանն ընթեռնոյր. իսկ պոռնիկն տեսեալ զծերն զի ընթեռնոյր, թողեալ զերիտասարդքն մերձեցաւ առ ծերն և նստաւ առ ոտս նր̃։ Իսկ ծերն 'ի բաց մերժէր զնա ասելով՝ ով եղկելի և յոյժ անամօթ՝ զի ո՛րդ իշխեցեր գալ առ մեզ և ը̃ն մեզ նստիլ. և նա ասէ աղաչեմ զձեզ հարք մի գարշիք յինէն. և մի հանէք զիս 'ի բաց 'ի ձէնջ. զի թէպէտ բոլորովիմբ լի՛ եմ մեղօք. սակայն ոչ 'ի բաց մերժեաց տ̃րն ք̃ս իւրմէ զպոռնիկն։ պատասխանի ետուն նմա ծերքն. բայց պոռնիկն այն ոչ մնաց այնպէս. յայնժամ ասէ կինն՝ յուսամ որդին ա̃յ կենդանւոյ. զի և ես յայսմ հետէ ոչ մնացից յայս մեղս։ Ապա՛

թողեալ զերիտասարդսն և զա՟մ իւր գնաց զհետ ծերոյն. և ն՟ք ետուն 'ի վանս կուսանաց. և անդ բարւոք ապաշխարեալ հաճոյ եղև ա՟յ. և էր անուն կնոջն այնմիկ մարիամ:

Դ Երիտասարդ ոմն յազատ տանէ և մեծատուն ա՟մ ունայնութե՟ աշխարհիս. և մարմնասէր ցանկութե՟ց պարապեալ. յամէն առաւօտու աղօթէր առ ա՟ծ. և հայցէր ասելով. տ՟ր ա՟ծ խնդրեմ 'ի քէն մի՛ տար ինձ աստի, ելանել, մինչև զգուշացուցանես ինձ. և նախագէտ առնիցես վ՟ն փոխման իմոյ. և միում աւուր զկնի կատարման աղօթիցս էրևեցաւ նմա հրեշտակ տ՟ն ասելով. լսելի էղեն աղօթք քո. զի ո՛չ մեռանիս առանց ըզգուշացուցանելոյ. ուստի երիտասարդն վստահացեալ 'ի խոստումն հրեշտակին. բոլորովիմբ ետ զանձն իւր 'ի հեշտութ՟իս աշխարհի: Ապա՛ զկնի սուղ ժամանակի յաւուր միում ընդ առաւօտն յարուցեալ. զցաւ գլխոյն զգացեալ ո՛չ կարաց 'ի տանէ ելանել: Իսկ ընկերակիցք նորին եկեալ կամէին զնա ընդ իւրեանս տանել 'ի վատգործըս. այլ նա ո՛չ յանձն էառ. յետոյ ջերմացեալ անկաւ 'ի մահիճս. և ազգակիցք յորդորէին զնա զի զինքն պատրաստեսցէ ը՟ստ սովորութե՟ 'ի խոստովանութ՟ի. պատասխանի ետ թէ այս՛ հիւանդութ՟իս իմ ո՛չ է 'ի մահ վ՟ն այսորիկ ո՛չ է պարտ խոստովանիլ. քան զի փութով առողջացայց. ահա հիւան-

դութ՟ն սկսաւ զօրանալ․ և դարձեալ ընտանիքն խրատէին զնա զի խոստովանեսցի․ Նա պատասխանի․ ետ զայդ 'ի մտի ունիմ․ այլ կամիմ համբերել զի լաւագոյն զիս պատրաստեցից թերևս հիւանդութ՟ս փոքր ինչ թեթևասցի․ յետ այսորիկ ցաւն ևս քան զևս սաստկան այր․ և բարեկամքն մեծաւ ջանիւ 'ի խոստովանութ՟ի ստիպէին զնա․ պատասխանի՛ ետ թէ այն չափ վտանգեալ եմ մինչ զի հազիւ 'ի մտան ամ թէ զինչ խօսիմ և յորժամ մահն մերձեցաւ հրեշտակ տ՟ն երևեցաւ նմա ասելով․ ժամէ հոգւոյդ ելանել 'ի մարմնոյդ քումմէ․ և նա սկսաւ տրտնջել զ՟այ և ասել․ տ՟ր ա՟ծ խաբեաց ինձ վ՟ մահուան իմոյ․ ասէ հրեշտակն․ ո՛չ ապաքէն բազում անգամ զգուշացոյց զքեզ․ քան զի յորժամ եկն 'ի վ՟ր քո հիւանդութ՟ին․ նա էր գուշակումն մահուանդ․ յորժամ բարեկամք քո ասէին քեզ զի խոստովանեսցիս․ էր երկրորդ գուշակութ՟ի․ և երրորդն յորժամ քահանայն քեզ խրատ տայր․ և դու ո՛չ կամեցար լսել․ վ՟ որոյ ո՛չ ևս քեզ յաւելցի, հարկէ զի մեռցիս․ սատացեալ և այսպիսի առանց խոստովանութ՟ե
կենպէր միշտ եղև․

Յաղագս Առաջնորդաց․ գլուխ․ ծէ․

ա՟ Ի քաղաքի ուրեք մեծ․ եղև ժողով եպիսկոպոսաց քահանայից և ժառանգաւորաց․ հարկ եղև ուրումն քահանայի զի քարոզեսցէ զբանն կենաց առաջի ա̃մցւն. և նա յոյժ տըխրէր և վարանէր 'ի միտս իւր. թէ զինչ ասիցէ առաջի այնպիսի երևելի մարդկան. և բարձր ագահ առաջնորդաց եկեղեցեաց։ Եւ եղև իբրև զաղօթսն կատարեաց. և կամէր ելանել 'ի բեմն. եկն առ նա սատանայ և ասաց. էր վն̃ տխրիս և հոգաս թէ զի՞նչ ասասցես քահանայիցն. զայս միայն ասա՛ ցն̃ և ոչ այլ ինչ. իշխանք ժողովրդեան աշխարհակալ խաւարի՛ և իշխանք սանդարամետաց ողջոյն տաց ձեզ. մեք ա̃մքն զուարթ երեսօք ձեզ շնորհակալութի մատուցանեմք. քան զի իշխեցեալք ձեր հնդերձ ձեօք առ ձեզ բջանեն զն̃ մեզ ընծայէք. և պղերգութե̃ ձերով գրեթէ ա̃մ աշխարհ առ մեզ անկանի, և ասէ սատանայ ցքահանայն, զայն քեզ յակամայ ասեմ զոր ինչ ասեմս. քան զի հրաման բարձրելոյն ստիպէ զիս ասել. պատասխանի՛ եւ քահանայն. զայս եթէ ես ասացից ոչ հաւատասցեն ինձ. յայնժամ սատանայ մերձեցեալ յերեսս նր̃ ասէ. ահա՛ նշան սևութինդ անսովոր յերեսդ քո յառաջ քան զք՟րոզդ՝ մի՛ շօշափեր զի ոչ ինչ օգտեցես. բայց զկնի քարոզին ջրով լուասցես։ Ահա՛ քահանայն ել յամպիոնն զի քարոզ ասասցէ առաջի սինհոդոսին. և յորժամ ա̃մքն զարմանային ընդ տպաւորեալ նշանն նա՛ պատմեաց նց̃ զոր ինչ հրամայեցաւն։ և յահէ մեծէ զա̃մցւն սիրտն 'ի զղջումն շարժեաց։

բ Այր ոմն արհ եպիսկոպոս. որ յոյժ թշուառական մահուամբ ել յաշխարհէ. սա՛ երեւեցաւ ուրեմն առն մ՟յ սոյնպիսի կերպիւ: Եւ ետես իբր թէ անհնարին տանջանօք եպիսկոպոսին ՚ի մարմնոյ քարշեցին. եւ առաջի իշխանին դիւաց կացուցին, զոր ողջունեալ զբաժակն որ էր առաջի ն՟ր, ետ ցարհ՚իեպիսկոպոսին ասելով. ողջ լեր իշխան ժողովրդեան. ողջ լեր ահա արբ ՚ի բաժակէն իմմէ. զի բազում ժամանակս հաւատարմաբար եւ յօժարութ՟բ ինձ ծառայեցեր. Բայց իբր նա հրաժարէր առնուլ. սպասաւորքն ուժով բռնադատեցին զնա առնուլ եւ ըմպել. զոր իբրեւ է արբ առժամայն յականջաց, յաչաց. յըռնկաց բոց ծընըմբալէր ել. եւ այսպիսի ՚ի գուբն աբտոջքին ընկեցաւ: Ահա այսպիսէ կատարած այնոցիկ, որք արժանապէս զիշխանութ՟ին տ՟րունական ընդունին եւ չարաչար վարեն զնա զոր օրինակ այս արհ եպիսկոպոսն զահ՟գին պատիժն կրեաց

գ Առաքեալն պետրոս ուրումն եպիսկոպոսի որ բազում ամս ոչ բարուք հովուէր զոչխարս իւր՝ ՚ի հիւանդութ՟ն երեւեցաւ ցասուցեալ դիմօք ունելով զգիրս բացեալս ստիպէր զնա զի ընթերցցի. եւ էր գրեալ այսպիսի. մեռուցանես զհոգիս ոչ մեռանելիս. եւ կեցուցանես որք ոչ կեան: Եւ իբրեւ նա հրաժարէր աւելի ընթեռնուլ: Ս՟բ առաքեալն բռնադատեաց զնա զի եւ զմեկնու՟ի բանից

այսոցիկ ընթերցին որ էր 'ի լուսանցս ապա բնադատեալ ընթերցաւ, որ էր գրեալ. երբ հանցես զոգիդ 'ի դժոխոց զորս քո վատթար օրինակաւ անփոյթ արարեալ 'ի տանջանս յաւիտենականս մատնեցեր։ Յայնժամ յերկիւղէ և յամօթոյ ո՛չ կարաց տալ պատասխանի. 'ի տեսլենէն եկեալ 'ի միտս ահիւ ըմբռնեալ և քրտունք 'ի նմանէ հոսէին։ Ապա յետ աւուրց ինչ խրատու ուրումն առն ազնուականի զաշխարհ եթող. և ետ զանձն
իւր 'ի ծառայութ̃ն իւր։

Էր ոմն եպիսկոպոս յոյժ մեծապատիւ. Է̃
որ ո՛չ միայն զեկեղեցական գործ կառավարէր. այլ և այլոց աշխարհական իրագործութեց պարապէր։ Սա՛ աւուր միում մինչ դեռ սպառազինեալ հանդերձ բազմութբ̃ զօրականաց ըստ արտորայս երթայր. ետես զհողագործ որ զգութան իւր շրջեալ կայր յանդի պշուցեալ և մեծաւ զգուշութբ̃ հայէր 'ի հեծելազօրսն, ընդ որ զարմացեալ եպիսկոպոսն և խոտորեալ սակաւ ինչ 'ի ճանապարհէ զձին առ նա դարձոյց. և քաղցրութբ̃ ասէ ցնա. կամիմ ինչ հարցանել զքեզ այրդ՝ բանի. եթէ դու միամտաբար կամիս հարցմանն իմում տալ պատասխանի. և երկրագործն մեծաւ խոնարհութբ̃ պատասխանեալ ասէ. ով եմ ես, և զինչ են տ̃մ ազգականք իմ զի մի մեծապայծառ տ̃նդ իմում տայցեմ պատասխանի. և եպիսկոպոսն ասէ՛. ասա՛ ինձ զինչ

խորհէիր յոր ժամ այդպէս ծիծաղելով և հիանալով յիս հայէիր. պատասխանի ետ հողագործն. խորհէի արդեօք տ̄րն մարքինոս՝ որ և ինքն նմանապէս եպիսկոպոսէր՝ դոյնպիսի սպառազինօք և բազմութե̄ զօրականաց 'ի Ճանապարհ երթայր ընդ որ եպիսկոպոսն փոքրինչ զամօթի հարեալ ասէ. ես ո՛չ միայն եպիսկոպոս եմ և եկեղեցական, այլ և ըստ աշխարհի իշխան և կուսակալ. աՀա՛ այժմ իշխան երևիմ, իսկ եթէ կամիս զեպիսկոպոս տեսանել. յայս ինչ և յայս աւուր եկեսցես յեկեղեցին. ընդ որ պատասխանին հողագործն սկսաւ ինչ ծիծաղե՛լ ասէ ցեպիսկոպոսն. եթէ քո մեծութիւնդ ոչ դժուարեսցի կամեի ինչ ևս ցքեզ հարցանել. ասէ եպ̄իսկն հա՛րց զոր ինչ կամիս ո՛չ դժուարացայց. ասէ հողագործն եթէ իշխանն ա̄ծ մի արասցէ վ̄ն գործոց իւրոց մատնեսցի 'ի դժոխս, եպիսկոպոսն մեր ուր երթիցէ. այսու հարցմամբ զամօթի հարեալ եպիսկոպոսն գնաց. ոչ ինչ տուեալ պատասխանի՝ զհողագործն եթող. բայց ո՛չ սակաւ շահեցաւ 'ի բանիցն ն̄ր, քանզի յառապա՛յոյժ զգուշանայր, զի մի՛ առաւել զբաղեալ իցէ. 'ի գործս իշխանութե̄՝ քան թէ 'ի հոգա. բարձութենէ եպիսկոպոսութե̄ն, մի՛ գուցէ իշխանին մանաւանդ քան թէ եպիսկոպոսութե̄ զվարձն ընկալցին.

Յաղագս Մ. տեղւոյն Գլուխ. ԺԳ.

Ի մէջ երկուց արանց մեծ և ան հնարին թշնամութե̄ նամութ՟ն և ատելութ՟ն իվաղուց հետէ բունեալ էր․ զոր իմացեալ այր ոմ՟ն մ՟դահաճոյ․ նախ մեծաւ պաղատանօք աղաչէր զայն որ չխասկրեալ էր․ ապա անկեալ առոտս ն՟ր մի անգամ և երկիցս՝ և երիցս հանդերձ բազմութ՟բ մարդկան աղաչէր․ բայց ո՛չ ինչ կարաց առնել։ Ապա դարձեալ առ ժողովուրդն, որք մերձ կային ասէ․ յայտնի առաջի ձեր ա՟մ՟ցն վկայութ՟ի դնեմ, զի որ զմեզ անարգէ՝ անարգէ զայն որ առաքեաց զմեզ․ արդ աղաչեցէք զՏ՟ր՝ զի զայնպիսի նշան ցուցցէ առ այրն կամապաշտ․ մինչ զի ա՟մ՟ցն յայտնի լինիցի թէ դա՛ թշնամութ՟ն զատելութ՟ն պահելով ընդ՚ դէմ իւր անձին առնէ․ իբրև այնր ա՟յ զաղօթսն կատարեաց առ ժամայն եղկելին այն զաչս շրջեալ մի անգամ և երկիցս և երիցս անկաւ յերկիր․ և փրփրէր ահիւ և դողութ՟բ տեսիլ և պատիժ ա՟մ՟ցն երևեցաւ։ իսկ ժողովուրդն զայրն տեսեալ լային․ և այրն ա՟յ արարեալ զաղօթս․ զանկեալն յերկրէ կանգնեաց․ որ յուշաբերեալ կատարելապէս և տեսեալ զթշնամին առաջի իւր, իսկոյն վաղվաղակի իբրև ՚ի մեծ և սիրելի բարեկամի ունելով ինչ խնդրել, յորդ արտասուօք թողութ՟ի հայցէր․ և դարձեալ գիրկս արկանելով և համբուրելով ՚ի լալ և գոհանալ զփրկչէն զա՟մ՟ցունց սիրտ զարթուցյ։

Կրօնաւոր ոմ՟ն այն չափ սատանայական․ ատելութ՟բ վառեալ հակառակէր հօր վանացն․

նացն․ մինչ զի ուղիղ ակամբք ո՛չ կամէր 'ի նմա՛ հայել․ անկեալ 'ի հիւանդութ̅ի եկն 'ի կէտ մահուան իւրոյ։ Եւ յորժամ եղբարք 'ի մէջ օրէի ըստ սովորութ̅ե հանգչէին․ նա 'ի հիւանդանոցի անկեալ սկսաւ ձայնիւ աղաղակել․ իբրև 'ի սոսկալի տեսլենէ կամելով փաղչել դողալով և դեղնելով այսր և անդր զերեսդարձուցանէր․ եղբարք որ մերձ առ նմա էին զարհուրեալ եկին առ նա․ և ասեն զի՞նչ եղև քեզ․ և նա ասէ․ ահա․ բ̅․ արջք առաջի տեսիք կոխեցին զիս․ և ձգեալ զատամունս 'ի կոկորդս իմ․ ահա տեսանէք խեղդեն զիս․ և դուք հարցէք թէ զինչ եղև ինձ․ Զայս լուեալ ոմն փութանակի ծանոյց հօրն․ յայնժամ նա առ անձին մեկուսացեալ, յետ եմուտ 'ի հիւանդանոցն․ և զնշան սրբոյ խաչին 'ի վ̅ր հիւանդին արար ասելով յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ․ ապա՛ հիւանդն առ ժամայն հանգարտեցաւ․ և զուարթ երեսօք յա̅մ սրտէ գոհանայր զա̅յ ասելով․ իբրև եմուտ 'ի դուռն հայրն և զիս խաչակնքեաց․ տեսի 'ի բերանոյ ն̅ր բոց հրոյ 'ի ձև գեղարդոյ ելեալ 'ի վ̅ր արջոյն և 'ի բա՛ց յինէն հալածեաց․ Յայնժամ հայրն զեղբարքն 'ի ծածուկ մեծաւ պատուիրանօք յորդորէր և խրատէր վ̅ս փրկութ̅ե հոգւոյ նորին․ և այսպիսի 'ի զղջումն և 'ի խոստովանութ̅ի սիրտ ն̅ր խոնարհեցոյց․ զկնի խոստովանութ̅ե և արձակման 'ի կապանաց մեղաց․ ասէ ցեղ բարս թէ ինն ժամու յորժամ երթիցեն յեկեղեցին, յաստի կենացս ելից, որ և եղև իսկ ո՟պ ասացն ։

Յաղագս արքայութեան երկնից · գլուխ · ծդ ·

Երեք զօրականք մի միանց ուխտեցին, ո՛չ երբէք զմիմեանս թողուլ · այլ յա՟մ գործս իւրեանց միմեանց օգնական լինել խոստացան ։ Դէպ եղև երբեմն ընդ մայրի ինչ անցանել · և անցին լուութ՟ե · ամենևին ընդ միմեանս ո՛չ խօսելով · և ասէ ո՟մն 'ի նոցանէ՝ զարմանամ թէ զի արդ լուու՟թ ընդ մայրիս անցաք · մինն 'ի նոցանէ զպատճառ լուութ՟ե իւրոյ զայս ասաց · թէ հայելով 'ի դեղեցկութ՟ի մայրեաց՝ յիշեցուցանէն անձին 'ի մուտ զվայելչութ՟ի երկնային, զնոյն պատճառս ա՟մքն խոստովանեցան · ապա երկրորդունն 'ի նոցանէ ասէ · ընկերք հաւատացէ՛ք ինձ · զի այս ո՛չ առանց պատճառի պատահեցաւ մեզ · այլ խնամքն ա՟յ՝ ո՟պ մինչ ցայսօր · աշխարհի ծառայէաք · այսու հետև ա՟յ ծառայեսցուք · վ՟ն որոյ խրատ տամ ձեզ, զի հրաժարեալք յաշխարհէս 'ի վանս միաբանակեցաց կրօնաւորեսցուք · և զխոստացեալ յուխտադրութ՟ին մեր միմեանց տրտամբ պահեսցուք, որ եղև իսկ ։ Քանզի արիաբար և փառաւորապէս ժամանակ ինչ 'ի վանս համբերեցին ։ Ապա երկուք կրսերագունքն սկսան թուլանալ · և զայն մին միւսում պատմեաց խնդրելով միմեանց մխիթարութի՟: արդ եկին առ երրորդըն խնդրելով խրատ 'ի նմանէ. և գտին զնա զի միշտ ուրախ և անդադար աղօթիւք այ՟ ծառայէր. և նա տեսեալ զերեսս նց՟ տխուրս և տրտմեալս, ասէ ցն՟ս, վս՟ ան՟ աշխատութե՟ և անհամբերութե՟ տըրտմեմք և հեղգասիրտք. ինձ ամ՟ ժամանակ կարծերևի. զի միշտ գործոյ պարապիմ. և նք՟ զարմանային թէ զի՞նչ գործ գործիցէ՛ զի գրոց անհմուտ էր. ոպ՟ և ինքեանք. և ասէ ցն՟ս. զերիս գիրս միայն գտի զորս ուսոյց ինձ դաստիարակիմ յորժամ մտի 'ի վանս, ընթռնլով հանապազ ո՛չ երբէք ձանձրանամ. այլ 'ի սիրոյ ընթերցման ժամանակ ինձ պակասի. Առաջին գիրնէ մըրով ներկեալ, որ նշանակէ զմեղս իմ. և նոքա սևացուցին զհոգի իմ. այնպէս խաբեութի՟ և անհաստատութի՟ աշխարհիս այսորիկ. և տանջանք դժոխոց, զա՛յս ընթեռնում յառաւօտ մինչև երրորդ ժամ: Երկրորդ գիրն ներկեալ կարմիր դեղով, որ ցուցանէ ինձ զչարչարանս փրկչին մերոյ, զորս նա կրեաց վս՟ մեր և զա՛յս ընթեռնում յերրորդ ժամէն մինչ ցինն երրորդ ժամն յորժամ տրն՟ 'ի ձեռն հօր այ՟ զհոգին իւր աւանդեաց: Երրորդ գիրն ներկեալ ոսկւով, որ յայտնէ զխնդութի՟ և զանազան զուարճութի՟ յերկնային. զայս ընթեռնում մինչ ցխաղաղական. և այսպիսի զժամանակ իմ առանց ձանձրանալոյ անցուցանեմ: Զայս լուեալ ընկերակիցքն նր՟ յոյժ վառեցան 'ի ծառայութ̃ն ա̃յ. և 'ի նմին զմեծ աճումն ստացան:

Այր ոմն էր և առաքինի երբեմն կայր յաղօթս, և եղև 'ի զարմացման. և ահա՛ ետես զերկինս բացեալ. վ̃ որոյ յոյժ խնդաց և զուարճացաւ յոգի իւր. և մինչ դեռ բազումք 'ի մարդկանէ մտանէին ընդ այն բացեալ տեղի յերկինս. ահա՛ ետես. է̃. վիշապս ահագինս և յոյժ զարհուրելիս. որք ձգեալ զվարմ մեծ և ընդարձակ առաջի բացմանն երկնի: արգելուին զա̃մն որ կամէին մտանել. յորժամ ետես զայն այրն ա̃յ. լա՛յր դառնապէս և աղաչէր զա̃ծ ցուցանել նմա. թէ զինչ էին վիշապքն այնոքիկ. և զինչ վարմն այն նշանակեսցէ. և ահա՛ հրեշտակ եկեալ առ նա՛ ասէ. մէկ վիշապն է բղջախոհութ̃ին. և միւսն սնափառութ̃ին. վարմնէ անառակ և ընդունայն զարդ կանանց. քանզի նք̃ հպարտանան և բարձրամտին սնափառութ̃բ և գիջութ̃բ. և այն չափ զմեծ վնաս յաշխարհի գործեն մինչ զի զդուռն երկնից ք̃ի ա̃յ արեամբ բացեալ փակեն. և բարութ̃իք երկնայինք արգելեալ լինին՝ և հոգիք մարդկան ոչ կարեն մտանել յերկնային ուրախութ̃ին: Եւ ասեմ քեզ. զի առաւել մեծ է թիւ դատապարտելոցն՝ վ̃ խորամանկ կանանց խարդախութե՝ և զանազան զարդուց. քան թէ համար դիւաց անկելոց յերկնից. ե̃

Յաղագս բարեկամութեան գլուխ. ԺԷ.

ա Երկու կղերիկոսք միմեանց էին. մինն 'ի նոցանէ էր յոյժ չարաչար բամբասող. մինչ զի բարիս ումեք ոչ բնաւ կարէր ասել. յորժամ հիւանդացաւ միւսն՛ ընկերն ստիպէր զնա՛ 'ի զղջումն և 'ի խոստովանութ̃ի. և նա՛ ոչ ինչ համարէր զմահ. և ոչ եկն 'ի յաւ անդր. յորժամ մերձէր 'ի մեռանիլ ընկերն աղաչէր զնա. և նա՛ խոստացաւ թէ յետ .Ը. աւուրց եթէ կարիցեմ և ա̃յ հաճոյ թուեսցի երևեցայց քեզ. և այսպէս մեռաւ. Օկնի աւուրց ինչ կամօք ա̃յ. ոչ վ̃ն փրկութ̃ե իւրոյ. բայց զի այլք օրինակաւ նր̃ խրատեսցին. երևեցաւ ընկերին իւրում վառեալ 'ի ներքուստ դժոխային հրով. զոր իբրև ետես յաթէն սկսաւ նուաղիլ. ասէ ցնա՛ մեռեալն՝ ես եմ այն երբեմն եղկելի ընկերքո. վայրապար աղաչես վ̃ն իմ զի յաւիտեան դատապարտեալ եմ. եհարց ցնա՛ ընկերն. ո̃ր զգացեր 'ի յետոյն շունչ մահուանքո, պատասխանի ետ յորժամ էի 'ի վերջին կէտն՝ տարան զիս առաջի դատաւորին. և իբրև լուռ և եթ կայի վ̃ն ահի. տեսի յոյժ բազմու̃ն հոգւոց քան զարեգակն պայծառագոյնից որք ընդ դէմ իմ առ դատաւորն զձեռս իւրեանց համբառնային և աղաղակէին. տ̃ր վրէժ խնդրեա՛ արեան մերոյ 'ի ստաբանս բամբասողէս յայսմանէ որ չարաչար առաջի մարդկան զմեզ զրպարտէր. առ այս ձայն յորժամ դատաւորն ա-

հեղա

հեղակերպ և զայրագնեալ դիմօք 'ի յիս հայէր․ և յերեսաց նորին զահի հարեալ և զամօթի հարեալ զիս և զմեծ զողորմութի՟ ա՟յ մոռացայ․ և այսպիսի վստահելով՝ 'ի յաւիտեան

դատապարտեցայց․

Այր ոմն կրօնաւոր զգեստիւք և ոչ վարուք․ Է
անուամբ և ոչ արդեամբ․ առ ա՟մ բամբասանս կարի սովորեալ․ իբրև եղև մերձ 'ի մեռանել․ խրատէին զնա զի խոստովանեսցի՝ և վ՟ փրկութե՟ հոգւոյ իւրոյ մեծաւ ջանիւ փոյթ եղիցի նմա․ պատասխանի ետ թէ զայդ ոչ առնեմ․ հարցին զնա, էր վ՟ ասէ ոչ կարեմ։ Նա իբրև պէսպէս բանիւք յորդորէին զնա․ զի 'ի յետին շունչ ա՟մ ջանիւ և կատարեալ յուսով դիմեսցէ առ ողորմութի՟ն ա՟յ․ և կարդասցէ զմարդասիրութի՟ փրկչին՝ հանեալ զլեզուն ը հար մատամբ զնա ասելով․ այս ամենաչար զլեզուս զիս դատապարտեաց․ և իբրև զայս ասաց լեզուն այնչափ դիզացաւ․ մինչ զի այլ ոչ կարաց 'ի բերան տանել․ և այսպիսի մահուամբ մեռեալ ա՟մ

բամբասողաց օրինակ եղոյց․

Այր ոմն ժանդ չարաբարոյ գոլով․ զա՟մ ոք Ը
իւր չարաբանական լեզուաւ սովոր էր խածանել վ՟ որոյ և մահ յանկարծակի դիպեալ ոչ ետ թոյլ նմա խոստովանիլ․ քան զի ոչ էր արժանի նոյն լեզուաւ զթոյնս արտաքս ձգել․ որով այնքան զայլս անմեղս խոցոտէր։ Ո կնի աւուրց ինչ յետ մահուան երևեցաւ ուրումն՝

զվարձս կենաց իւրոց արժանի յայտնելով․ քան զի ունէր զլեզուն իբրև հրաբորբոք ’ի շրթանց մինչև յերկիր կախեալ․ զոր ստէպ ստէպ խածատելով նոյն ինքն կտրեաց՝ և ծամեալ ’ի դուրս եթուք․ դարձեալ առաջին մեծութ̄ի աճեաց․ զի միւս անգամ զնա՛ խածատեսցէ․ եհարց կենդանին ցմեռեալն․ զինչէ այդ նշան․ պատասխանի ետ՝ վ̄ս զի ես ’ի կենդանութ̄ե իմում այս անլծեալ անդամով զա̄մն հալածէի՝ այնր աղագաւ ’ի տանջանս այսոցիկ յաւիտեան ո՛չ ազատեցայց․ քան զի որով մեղանչէ նովին և տանջեսցի․

Այր ոմն ասէր եթէ բանբասեն խռովութ̄ի․ թշնամի աղբերն բարեպաշտութ̄ե և շնորհաց․ յորմէ իբրև ’ի թունից օձի․ կամ ահագին մահուանէ փախչել պարտէ․ զի մարդասիրին ա̄յ է յոյժ գարշելի և ատելի, քանզի բանբասող հոգւոյ արեամբ կերակրեալ լինի, զորս որով լեզուին սպանանէ․ և դարձեալ ասէր թէ առաւել անագորունէ գործ բանբասողաց․ քան թէ աւազակաց․ որ քան կրօնաւորութ̄ի ք̄ի որ ’ի պահպանութ̄ի բարեպաշտութ̄ե կատարեալ լինի առաւել հոգւոյ քան մարմնոյ փրկութ̄ե փոյթ ունել պահանջէ ’ի մէնջ․

Յաղագս բարեկամաց գլուխ․ ծդ․

ա Այր ոմն երիտասարդ արագամիտ՝ յոգնահանճար՝ և յոյժ մեծատուն, որ ’ի զանա զան կողմանս աշխարհի զծառայս իւր առաքէր սակս առ և տուր առութե՟, ոմանք 'ի նոցանէ գնացեալ 'ի կողմանս յարևելից գտին զոմն կռապաշտ՝ ա՟մի փարթամ. և յոյժ հարուստ, արժանապատիւ. և ճշմարտաբան. և ծանուցին նմա զիւրեանց տէրն նման գոլ նմա՛. այլ դարձան գնացին և պատմեցին տ՟ն իւրեանց վ՟ն առն կռապաշտին այնորիկ։ Իսկ յորժամ միւսանգամ գնացին 'ի կողմանսըն այնորիկ, տարան զընծայս 'ի տեառնէն իւրեանց առ կռապաշտ այրն. և փոխարէն մեծագոյն ևս ընկալան 'ի նմանէ զոր առաքեաց առ քրիստոնեայ վաճառականն, ուստի այնչափ 'ի սէր և 'ի զարմացումն վառեալ էր, մինչ զի բազում ամբոխիւ ծառայից և ընծայիւք 'ի կողմանս արևելից գնաց։ զի զայն կռապաշտն տեսցէ. զորնա մեծ փառօք և ուրախութ՟բ ընկալեալ ծանեաւ զնա գոլ այր ազնուական. մեծահոգի. բազմահանճար. և քան զա՟մ առատասիրտ. և ունէր զնա՛ առ ինքն զբազում աւուրս մեծածախիւք։ Իսկ յորժամ կամեցաւ դառնալ 'ի հայրենիս իւր. տարաւ զնա 'ի տուն անհամար գանձուց. բայց նա ամենևիմբ ոչ ինչ յանձնէ առնուլ. ապա եցոյց նմա. Է կուսանս 'ի սենեկի պահեալս ազնուատոհմս. և յոյժ հրաշագեղս, զոր կամէր առնուլ 'ի կնութ՟ե յիւրում ժամանակի ըստ սովորութ՟ե հեթանոսական. և ասէ ցնա՛ 'ի դոցանէ զմինն ընտրեա՛

՛քեզ․ զոր կամիս ունել ՚ի կնութ͞ն․ իսկ երիտասարդն յաղթեալ ՚ի տեսութենէ գեղոյ երեսաց ,զմինն ընտրեաց․ որ էր քան զա͞մն վայելչագեղ և բարեզարդ․ ասէ ցնա կուսապաշտն , ետու քեզ իշխանութ͞ի ընտրելոյ․ և դու քան զա͞մն ինձ սիրելին ընտրեցեր․ արդ դու ո͞չ ՚ի մաստուն ծանիցես թէ զինչ ետու քեզ ։ իսկ ես ո͞չ փոքր ինչ հանճարեղ՝ զոր ինչ վ͞ս քո թողի , ո՛չ ը͞դ դիմաբանեմ․ զայս ասացեալ հարսին մատոյց պարգևս ըստ արժանոյն՝ և ետ զնա քրիստոնէին։ Նունա՛ դարձեալ ՚ի տուն արարեալ զնա քրիստոնեայ և մկրտեալ մեծաւ փառօք էառ ՚ի կնութ͞ի իւր․ և ծանեաւ զնա գոլ կին մեծ առաքինութ͞բ և համեստութ͞բ զարդարեալ։ Յետ այսորիկ երիտասարդն այն մեծացեալ և բարգաւաճեալ անուամբ փառօք և ընչիւք․ մեծ և երևելի քան զբազումս եղև ։ Իսկ կուսապաշտն այն միշտ զմտաւ ածելով թէ զո՛րպիսի կինն կորոյս․ և ո՛ր քան բարոյն զրկեցաւ․ սկսաւ յո՛յժ տխրիլ մաշիլ․ և թշուառանալ , օր ըստ օրէ․ ամ յամէ․ ժամանակ ՚ի ժամանակէ․ նուազէին ինչք ն͞ր․ զի ո՛չ ինչ հոգայր վ͞ս ստացուածոյն, մինչ զի ՚ի յետին թշուառութ͞ի եկեալ․ արտաքսեալ եղև ՚ի հայրենեացն․ իբրև զանմիտ աքսորեալ ՚ի թշնամեացն իւրոց՝ որ իբրև ո՛չ գիտէր թէ զինչ արասցէ՝ եկն ՚ի միտս իւր զի երթիցէ ՚ի տեսութ͞ի բարեկամին իւրոյ․ որոյ աղագաւ այս ա͞մ պատահեաց նմա․

նմա . և ոչ երկ բայէր վ՟ս երախտեացն զոր առ նա արարեալ։ Արդ գնացեալ 'ի Ճանապարհ եկն 'ի տուն բարեկամին իւրոյ . և բախեաց զդուռն . ծանուցեալ թէ ո՞վ իցէ . բայց ծառայն անփոյթ արար յայտնել տ՟ն և ո՛չ եբաց . ուստի կռապաշտն տխրեցաւ մինչև 'ի մահ . և իբրև երեկոյ եղև եմուտ 'ի գաւիթ եկեղեցւոյ . և անդ ագաւ 'ի գիշերի աւազակ ոմն գաղտագողի անդ սպասելով որումն մարդոյ որ անդանօր անցանէր՝ եսպան զնա և փախեաւ . առաւօտու գտին զմեռեալն մերձ առ կռապաշտին այնմիկ կալան զնա և կապեցին . և զսպաննումն նր՟ համարէին . յուսահատ գոլով ո՛չ ուրանայր զմարդասիրութի՟, բարեկամին նր՟ շատ հիացեալ կայր . և իբրև լաւ 'ինահայեցաւ ծանեաւ՝ զնա . և յորժամ տանէին զնա 'ի սպանանել . առժամայն աղաղակեաց . անպարտ է դա ես զայն գործեցի, և յորժամ մեծաւ բարբառով, և ցաւակցութե՟ ժողովրդեան ծունր եդ զի մի՛ գլխատեսցի . Ճշմարիտ մարդասպանն 'ի խնամոցն ա՟յ զղջացեալ, զի մի՛ այնպիսի երևելի և անպարտ մարդ 'ի զուր կորիցէ . մատեաւ յատեան և աղաղակեաց . երկոքեան դոքա՛ ան մեղքեն . ես եմ այն չարագործն որ արարի զայնս . ընդ որ դատաւորն և սպասաւորք քաղաքին յոյժ զարմացան . և առեալ զերիսն տեղեկանային զստոյգն . և իբրև իսկութե՟ իրին հասին իբաց թողին զանմեղսն .

և զպարտաւորն սակս հրաշիցն ազատարարին։ Իսկ վաճառականն քրիստոնեայ մեծաւ ուրախութ՟բ և սիրով զբարեկամն ընկալեալ հաւանեցոյց զնա հաւատալ ՚ի Ք՟ս, որ և մկրտեցաւ․ և ապա՛ ետ առ զկին մեծ տանն, զմօր եղբօր աղջիկ բարեկամին․ և յերկուս բաժանեալ զա՟մ ինչս իւր զկէս ՚ի նմա ետ։

Յաղագս բարի վարուց գլուխ․ ԺԵ․

ա՟ Վարդապետն ոմն սովորութ՟ի ունէր ամ յամէ աշակերտաց իւրոց որք նո՟ր բանիցն ունկնդիր լինէին․ շուշան ծաղիկ մատուցանէր․ և հարցեալ ՚ի նոցանէ թէ վ՟ն էր զայն առնէր․ պատասխանի ետ թէ Է իրս տեսանեմ ՚ի շուշան․ քանզի անդ եռակի գոյն, որ զեռակի բարեձևութ՟ի նշանակէ սրտի, և մարմնոյ․ և դիտաւորութ՟ե․ գո՛յ անդ և հոտ անուշ, որ մինչչև շօշափեալ իցէ հոտ անուշութ՟ն բուրէ․ իսկ եթէ հարից ՚ի գարշութ՟ն․ են անդ Է տերև․ և Է՟ն․ հատ․ ա՛րդ աշակերտք իմ ունիցին բարեձևութ՟ի կատարեալ կրօնից․ պատասխանին խորշիլ ՚ի ժողովոց կանանց․ Է առաքինութ՟բ զարդարեալ․ և զ․ Է մահացու մեղս ատել․ վ՟ն այնորիկ զծաղիկ շուշան մատուցանեմ։

Յաղագս Գիտութեան գլուխ․ ԺԶ․

ա՟ ՚Ի ժողովն նիկիու յա՟մ յաշխարհէ ժողովել էին եպիսկոպոսունք քահանայք կղերք

կոյք և այլ անթիւ բազմութի̃նք երևելի ա-
րանց և 'ի փիլիսոփայից. յորս էր ոմ̃ն 'իմաստա
սէր. այնչափ հմուտ տրամաբանական արու-
եստին, մինչ զի ա̃մ ուղղափառաց յաղթեաց.
բայց զի ցուցցէ ա̃ծ թէ արքայութ̃ին երկնից
ոչէ 'ի բանս, այլ 'ի զօրութ̃ե կայացեալ. ոմ̃ն
եհարց բարեբարոյ՛ և միամիտ՝ ոչ ինչ գիտե-
լով. բայց միայն զյ̃ս ք̃ս. և զայն 'ի խաչ ելեալ.
տեսեալ զիմաստասէրն զայն հպարտացեալ
'ի վ̃ր ուղղափառացն. եկեալ յատեան կա-
մակցութ̃բ ա̃մ̃ցն. այսպիսի սկսաւ ասել ցի-
մաստասէրն. անուն յ̃ի ք̃ի ով փիլիսոփայ լուր
զոր ինչ ճշմարիտ է. մի է ա̃ծ արարիչ երկնի
և երկրիս, որ արար զմարդն 'ի հողոյ և հո-
գիացոյց զնա. և եստեղծ զա̃մ երևելիս և զա-
ներևոյթս զօրութ̃բ բանին իւրոյ. այս բան
և իմաստութ̃ի զոր որդի կոչեմք, գթացեալ
զազգս մարդկան 'ի կուսէն ծնաւ. և 'ի ձեռն
չարչարանաց և մահու 'ի յաւիտենական մա-
հուանէն փրկեաց. և յարութ̃բ իւրով զկեա-
նըս յաւիտենից մեզ պարգևեաց. որում ակն
ունիմք և հաւատամք զի գալոցէ դատել զա̃մ.
արդ՝ հաւատաս զի այդ այդպէսէ ով փիլիսո-
փայ. իսկ նա իբրև ոչ ինչ գիտելով ընդ դի-
մոնալ. այն չափ զարմացաւ վ̃ր զօրութ̃ե բա-
նիցն. մինչ զի ոչ կարաց տալ պատասխանի և
ոչ բան մի. միայն զայս. ինձ այսպիսի թուի
եթէ այդ իսկ է ճշմարտութ̃ի. յայնժամ ասէ
ս̃բն՝ եթէ զայս այդպէսէ դու հաւատաս,

արիւենկ զկնի իմ'ի հօտնքի. և 'այս հուատոյա առ զկնիւք. իսկ 'իմաստասէրն դարձեալ առ աշակերտսն իւր և առ այս որք լսէին. ասէ՛ լուարուք ինձ ո՛վ 'իմաստունք. քանի հանդէս բանիւքէ. բանիւ բանից հատուցանէի. և զասացեալն ճշմարտութե տապալէի. այլ յորժամ փոխանակ բանից զօրուի 'ի բերանոյ խօսողին երևեցաւ՝ ո՛չ կարացի ընդդիմանալ զօրութեյն՝ և ոչ մարդո̃յ. վ̃ս որոյ որ միանգամ'ի ձենջ կարաց զգալ զայն զոր ես զգացայ հաւատասցէ 'ի ք̃ս և երթիցէ զհետ ծերոյն, որով խօսեցաւ ա̃ծ։ Եւ այնպէս փիլիսոփայն եղև քրիստոնեայ. և ուրախ եղև զի յաղթեցաւ։

Յաղագս գողութեան գլուխ. ԺԲ.

ա̃ Մին վաճառական բարի անուն ստացեալ էր. զի այլոյ ուրուք զինչս 'ի նա յանձն տրարեալս բարւոք և հաւատարմապէս պահեալէր. բայց ինչ տեղ կարէր գողանալ ո՛չ երբէք կարէր ան փոյթ առնէր։ Մի օտարական լուեալ զայսպիսի բարի համբաւ զնմանէ ո՛չ սակաւ գանձ ետ 'ի պահել նմա. Յետ երից ամացն մարդն այն զինչսն պահանջէր 'ի վաճառականէն. իսկ վաճառական գիտելով զի ո՛չ վկայ ունէր՝ և ոչ ձեռագիր, ուրաստ եղև թէ ո՛չ զինչսն քո տեսի և ո՛չ զքեզ երբէք ճանաչեմ. լուեալ մարդոյն այն տրտում դարձաւ։ Այն մի պատուաւ տե սեալ զնա՛ այնպէս կարի տխուր հարցանէր զպատճառն. և նա ասէ ո՞վ կին. չես բաւական ինձ օգնել. զի՞ հարցանես. և նա ասէ, աղաչեմ ասա՛ ինձ զի՞ եղև քեզ՝ թերևս կարիցեմ բարի խրատ տալ քեզ. ապա պատմեաց նմա զա՟մ չար պատահումն իւր. յայնժամ ասէ կինն ունիս զո՞ք բարեկամ հաւատարիմ ՚ի քաղաքիս յայսմիկ. պատասխանի՛ ետ բազում բարեկամս ունիմ. և կինն ասէ երթ առ նս՟ ասա՛ զի բազում սապաթս գեղեցիկ գնեսցեն. և լցեալ զնս՟ անպիտան իրօք. ասասցեն թէ բազում մարգարիտս. և յոլով գանձս ոսկւոյ ՚ի նս՟ ունին. և տարեալ առ վաճառականն այն՝ ասասցեն թէ լուեալէ մեր վ՟քո բարի համբաւոյ՝ կամիմք զայս գանձըս առ քեզ թողուլ. մեք ՚ի տար աշխարհ երթալոցեմք. և յորժամ նք՟ յաղագս այդբանի ընդ միմեանս խօսիցին. յայնժամ դու եկեալ առ վաճառականն խնդրեսցես զգանձըս քո ՚ի նմանէ զորս առ յայնր ժամանակի թողեալէիր. յուսամ զի նա ակն ունելով մեծագոյն շահու. և վ՟ ամօթոյ մերձակայ բարեկամաց քոց. զի հաւատարիմ յաչս նց՟ երևեսցի. առժամայն զա՟մ ինչս քո առ քեզ դարձուսցէ։ Յայնժամ այրն այն արար զա՟մ ըստ խրատու կնոջն. և յորժամ բարեկամք նր՟ ընդ վաճառականին խօսէին, սակս մտացածին գանձուցն. իբր թէ առ նմա կամին թողուլ. ահա մարդն այն եկեալ առ վաճա ռականն պահանջէր 'ի նմանէ զինչս իւր. պատասխանի ետ վաճառականն քաջ գիտեմ զքեզ. դու այս ինչ մարդես. և այս ինչ աւուր եկեալ բերիր. և զոր ինչ առ իս թողեր ահա հաւատարմապէս քեզ պահեցի, և ետ ցնա։ Իսկ նա առեալ. զգանձս իւր ուրախութ̅ե դարձաւ 'ի տուն իւր։ Եւ վաճառականն այն եղկելի խաբեալ ի չարութենէ իւր մնաց ունայնաձեռն։

Յաղագս գաղտնապահութեան. Գլուխ. Է.

'Ի փարէզ քաղաքի էր ոմն 'ի մաստութ̅ե և գիտութ̅ե քան զբնաւս իւրում ժամանակի գերազանց. նա և ըստ արտաքին մարդոյ առաքինութ̅ե և սրբութ̅ե ոչ կարծի քէին զնմանէ զարդարեալ. ուստի քան զայս մեծապատիւ և անուն ստացեալ։ Արդ սա այսպիսի մարդ գոլով անկաւ 'ի հիւանդութի. և հաղորդեալ յա̅ծ ային խորհրդոյն մեռաւ. 'ի թաղումն ն̅ր ոչ պատշաճէր այնպիսի մարդոյ՝ որ զկնի իւր մեծանուն թողեալ էր. 'ի զանազան տեղեաց բազում երևելի մարդիկք ժողովեցան վարդապետք. 'իմաստասէրք. քահանայք. և այլ ազգք անհամար բազմութի ժողովրդոց։ Ո մարմինն մեծաւ փառօք և շքեղութ̅ե առեալ 'ի մէջ եկեղեցւոյն եդին. և շուրջ պարառեալ սկսան զկարգ ննջեցելոց, կատարել ոչ սովորութ̅ն քրիստոնէից. իբրև եկին ընթերցումն

գրոց.

դրոց • մարմին նո՟ր յարեաւ • ընդ որ ա՟մքն զարմացեալ և զահի հարեալ էին • և բարձրաձայն լու՛ 'ի լու ա՟մցն որ յեկեղեցւոջն էին • աղաղակեաց, արդար դատաստանաւ ա՟յ ամբաստանութ՟ի եղև զինէն • զա՛յս ասացեալ դարձեալ ընկողմանեցաւ • այսպիսի հրաշն զա՟մն որք անդ կային անհնարին երկիւղիւ ելից • ապա հաճոյ թուեցաւ թաղումն յապաղել : Յայնժամ համբաւս տարածեցաւ ընդ ա՟մ քաղաք և անթիւ բազմութ՟ի արանց և կանանց ժողովեցան • 'ի վաղիւ դարձեալ սկսան զկարգ ննջեցելոց • և յորժամ 'ի նոյն տեղին ընթերցուածոյն հասին • դարձեալ մարմինն յարուցեալ աղաղակեա՛ց՝ արդար դատաստանաւ աստուծոյ վճիռ հատաւ 'ի վերայ իմ • և դարձեալ ընկողմանեցաւ՝ ուստի ահ անհասելի կալաւ զա՟մն : բայց զի չև ևս յայտէ, թէ որպիսի վճիռ էր հատեալ • պատշաճ համարեցան երրորդ օր զթաղումն ձըգել : Յայնժամ գրէ թէ բովանդակ քաղաք ժողովեցաւ առ 'ի անտեսանելի հրաշն այն : Սկսան զկարգն և եկին 'ի նոյն տեղին ընթերցուածոյն • ապա թշուառականն երիցս բարձրացուցեալ զգլուխն ահագին գոչմամբ զվճիռ ա՟ծային ատենին յայտնեաց • արդար դատաստանաւ ա՟յ պարտաւորեցայ : Արդ՝ յայնժամ թէ որպիսի սրտաբեկութ՟ի կալաւ զա՟մն • ո՞րպիսի էր լուր մերձակայիցն • որ քան տագնապ և գոյն երեսաց • ո՞ պ՟լի դողումն և սարսափումն երիկամանց՝ ո՛չ ոք կարէ ընդ բանիւք անկանել. միայն այս ճշմարիտ է. զի վեց երիտասարդք գրոց աշակերտք զարհուրեալք յահագին դատաստանէն առն այնորիկ. առժամայն թողեալ և հրաժարեալ յաշխարհէ գնացին յանապատ և անտանելի ճգնութ՟բ ծառայեցին այ՟։

Էր ոմն եպիսկոպոս որ առաւել ջանայր ժողովել զինչս և զստացուածս և փառս աշխարհիս՝ քան թէ հոգալ վ՟ փրկութե՟ ժողովրդեանն, և բարի օրինակ լինել հօտին իւրոյ։ Յաւո՛ւր միում յորժամ հիւանդացաւ, եմուտ առ նա՛ սուրհանդակ հանդերձ դեղար դեամբ ասելով. մեծ քահանայապետն կոչէ զքեզ. զի եկեսցես առաջի նր՟ և տացես համար հաւատացեալ քեզ հօտիդ. և ժառանգութե՟ն զոր ստացաւ պատուական արեամբ իւրով։ Յետ այնորիկ եպիսկոպոսին թուեցաւ իբր թէ տարան զնա 'ի դատաստան. և կացուցին առաջի ք՟ի, ուր դեւք ան համար պատճառ դնէին պարտաւորութե՟ն նր՟. և մին աւանդ. ե՟ Նախ և առաջին զի կողոպտէր զաղքատս՝ և զգեցուցանէր զմեծատունս և զպոռնիկս. Երկրորդ զի զարդ քահանայականք և ա՟մ անօթք տանն էին ոսկւոյ և արծաթոյ։ Երրորդ զի վ՟ երկրաւոր և ժամանակաւոր իրաց մեծ հոգաբարձութի՟ ունէր. իսկ վ՟ շահելոյ զհոգիս մարդկան ո՛չ ինչ. և մանաւանդ իւր չար օրինակաւ անթիւ հոգիս կորոյս· և ցուցին զի աւելի քան զերկու հազար հոգիս դատապարտեալք էին ընդ իշխանութ՟ե Նորին։ Չորրորդ զի 'ի վ՟ր ունայնութեց աշխարհիս բազում ժամանակս ծախեաց· իսկ 'ի վ՟ր ա՟ծային գիտութե՟ն բնաւ ո՛չ։ Հինգերորդ· զի ո՛չ կամեցաւ և ո՛չ թոյլետ զի այլք փրկութե՟ հասանիցեն· յայնժամ քահ·նայապետատ մեծ ասէ ցնա· Ո՜վ անիծեալ զոր ինչ ես արեամբ իմով գնեցի· զայն դու 'ի գործ ածեր՝ զի երևեսցիս 'ի մեծութ՟ի թագաւորական։ ես ստացայ բևեռամամբ ձեռացս 'ի վ՟ր խաչին· և դու մխեցեր ձեռօքդ 'ի խաղսն։ ես շահեցի զպսակն 'ի փշոց կրելով· և դու վատնեցեր կակուղ բարձս դնելով ընդ գլխովդ· զոր ինչ ես գտի գանիւ և անարգանօք, դու ծախեցեր անօթս և իսկաւառակս արծաթեղէնս։ զոր ինչ ես ստացայ մերկանալով 'ի հանդերձիցս իմոց։ դու ցրուեցեր 'ի դիպակս· և պէսպէս օրինուածովք գունոց զարդարեալ հանդերձս։ ես ստացայ ճաշակելով լեղի և քացախ· և դու վատնեցեր 'ի քաղցրահամ կերակուրս և ըմպելիս։ ես լալով աղաղակեցի զի զոչխարս իմ 'ի հօտ ածիցեմ· և դու աղաղակեցեր առ ն՟ա իբրև զգայլ զի զն՟ա սպանցեն· վ՟ն այսորիկ սահմանեմ քեզ այս ինչ օր զի լուիցես զյետին վ՟ճիռ։ Եւ մինչ դեռ տխրէր և վարանէր սակս այնոցիկ· զարթեաւ 'ի քնոյ և պատմեաց ծա ռայից իւրոց զոր ինչ լուանն և ետես. և ն՟ք կամելով զեպիսկոպոսին հաճոյանալ. և առաւել հոգալով վ՟ ընչից քան թէ վ՟ն հոգւոյն. յանդիմանէին զնա զի երթայր զհետ երագոյն: Եւ ապա՛ օր քան զօր անցանէր առանց ապաշխարութ՟. մինչև մերձեցաւ օրն սահմանեալ: Եւ 'ի նմին աւուր 'ի նմին ժամու եկին առ նա́ ահագին դևք ասելով. արի անիծեալ՝ և լուր անդառնալի վճիռ 'ի բարձըր ագահ քահանայապետէն վ՟ կենաց քոց. յայնժամ սկսաւ աղաղակել առ ծառայս և սպասաւորս իւր 'ի բաց հանէք զդոսա 'ի բաց հանէք: Բայց ն՟ք ոչ ինչ տեսանէին թէպէտ զձայնն լսէին: Իսկ եպիսկոպոսն տեսեալ զն՟ կամէր հարկանել զդևսն. և 'ի սենեկի հալածել. և այնպիսի ձեպով հարեալ 'ի վ՟ր սեանն որ էր 'ի սենեկին. և վիրաւորեալ գլուխ իւր մեռաւ:

Ե Աւագ սրկաւագ ոմն ցանկացեալ աթոռոյ 'եպիսկոպոսութ՟ն, ջանայր թէ զինչ կերպիւ կարիցէ 'ի միջոյ բառնալ զեպիսկոպոսն, որ էր այր բարեբարոյ և առաքինասէր: Եւ զի սովորէր եպիսկոպոսն քաջ ընդ առաւօտն երթալ յեկեղեցի 'ի պաշտօն գիշերային, նախքան զայլս երթայր և մտանէր ընդ փոքր դուռն աղօթից առ ս՟բ կոյսն մարիամ ած՟ածինն. աւագ սարկաւագն եդ զքար 'ի վ՟ր բարաւորին դրան: Արդ եպիսկոպոսն յորժամ գնաց և եբաց զդուռն՝ քարն անկեալ զգլուխ եպիսկոպոսին պատառեաց և մեռաւ. ապա աւագ սարկաւագն մեծաւ ջանիւ ընկալաւ զաթոռ եպիսկոպոսութե։ Եւ յորժամ հաստատեցաւ զաթոռ մեծ խրախութե արար . և զբազումս հրաւիրեաց 'ի ճաշ . տաճարապետն որ սպասաւորէր առ սեղանն . առժամայն յափշտակեցաւ հոգւով ատեննին դատաւ որին երկնաւ որին ածին զեպիսկոպոսն այն ունելով 'ի ձեռին զուղիղ գլխոյ իւրոյ ։ Եւ ասէ սբ կոյսն մարիամ, ո՛վ ամենաքաղցր միածինդ որդի՛ իմ . ահա՛ քեզ ցուցանեմ զարիւն նոր հեղեալ . և զուղիղ այս սիրելի նահատակիս իմոյ , զոր անողորմ դաւաճանող՝ կամելով եպիսկոպոսութե 'իշխանութե հասանել անիրաւաբար եհեղ ։ պատասխանի ետ տրն՝ զո՞ առաքեցից . և ո՞վ երթիցէ . ասէ ամէն օրհնեալ տիրուհին . ահա աստ է ծառայ նորին . ասէ տրն ցծառայն՝ ընդ պատժով մահուանդ պատուիրեմ քեզ . զի անյապաղ կոչեսցես զտէրդ քո . զի վաղ վաղակի եկեալ առաջի տնս պատասխանեսցէ ամբաստանութեն զնմանէ . իսկ ծառայն եկեալ 'ի միտս վրդովեալ յոգւոց եհան . և զդանակն որ կտրէր զմիս 'ի սպասաւորելն ձգեաց . և սկսաւ դառնապէս լալ . և յորժամ ամքն և ինքն եպիսկոպոսն հարցին զպատճառն՝ պատմեաց նց . զոր լուեալ եպիսկոպոսին 'ի նմին ժամու առաջի ամցն յանկարծակի մեռաւ .

Է Յամի մարդեղութեն քի ․ ջ․ ձե ․ յերկրին որ ասի սասոնք ․ էր ոմն գրոց աշակերտ անունն ուտոն ․ բռնամիտ և ապաշնորհ , որ թէ պէտ բազում անգամ գանիւ հարեալ լինէր ․ սակայն ոչ աւելոյր 'ի գիտութե ․ Յաւուր միում սաստիկ գանիւ հարեալ և ելեալ 'ի դասատնէն՝ եմուտ յեկեղեցի սրբոյն մօրիկոսի ․ և անդ յերկիր անկեալ մեծաւ ջերմեռանդութբ աղաչէր զսբ ածածինն ․ և զսբն մօրիկոսնահատակ ․ զի բարեխօսութբ նոցին միտք պայծառասին լուսով գիտութե ․ և մինչ դեռ աղօթէր փոքր ինչ եմուտ 'ի քուն ․ և ահա երևեալ նմա սբ կոյսն մարիամ ասէ ․ լուայ աղօթից քոց ․ և տեսի զտառապանս քո ․ ահա ետու քեզ ոչ միայն զպարգև գիտութե այլ և զկնիք մահուան եպիսկոպոսին զեկեղեցին մօրիկոսի՛ նահատակին 'ի մոյ՝ քոյդ հոգեբարձութե յանձն առնեմ ․ որ թէ բարուք կառավարեսցես զվարձն յաւիտենական առցես ․ ապա թէ չարաչար հոգւով և մարմնովդ մեռանիցիս ․ և զայս ասացեալ աներևոյթ եղև ։ Իսկ պատանեակն զարթուցեալ գնաց ըստ սովորութե 'ի դասատուն ․ և յորժամ 'ի խօսել եբաց զբերան իւր հակաճառութբ ամնցն յաղթեաց ․ և յամ գիտութիս կատարեալ երևեցաւ ․ ամնքն որք լսէին զարմանային ասելով ․ ուստի՞ է սմա այսպիսի անկարծակի գիտութն , ոչ իցէ սա՛ ուտոն՝ զոր երեկ իբրև զանա

սուն

ռուն ծեծելին. և աՀա այժմ երևի գոլ 'ի մնաստանասէր : Յետ այսորիկ զկնի երկուց ամաց վաղճանեցաւ արՀեպիսկոպոս մագդըէբուրք քաղաքի. և ա̃մքն մի բերան զուտոն 'ի տեղի նորին ընտրեցին, որոյ նստեալ յաթոռ եպիսկոպոսութ̃ե սուղ ինչ ժամանակ բարւոք վարէր. բայց զի մեծութ̃իւք փափախեն զբարս. յետ ժամանակի սկսաւ անփոյթ առնել զպատուէր սրբուՀոյ ա̃ծածնին. և ոչ յիշէր զփրկութ̃ին Հոգւոյ իւրոյ : Ապա ետ զանձն իւր 'ի մարմնաւոր Հեշտութիւս զի կեղեցականս չարաչար վատնէր, ոչ միայն զաշխարՀական կանայս ապականէր. այլ և զկրօնաւոր կուսանս բռնադատէր՝ 'ի վերջն բընաւ թողեալ զՀետ ա̃մ չարեաց. մինչ զի կենցաղավարութ̃ե նորին ա̃մցւնց էր ատելի. և ա̃մ ոք 'ի նմանէ գարշէր : Արդ՝ յորժամ զբազում այսպիսի զազիր գործով և աղտեղութ̃ զօդ եզ ա̃մ յաշխարՀ չարաչար ապականէր. 'ի միում գիշերի ունելով ը̃ զիւր մայրպետն կուսանաց. լուեալ զձայն սարսափելի Հնչեալ զայս ձև բանից ո՛վ ուտոն ուտոն. դադարեաց խաղալ. երկար խաղացեր՝ ժամէ զգաստանալ. զայս լուեալ խորՀէր կըծելով ցնորս ինչ լինել. 'ի վաղիւ դարձեալ 'ի մարմնաւոր Հեշտութիւս զանձն ընկղմէր շաղախելով 'ի պղծագործութ̃եց. և եղև պինդ իբրև զքար 'ի սպառնալեացն զարՀուրելի ձայնին այնորիկ ոչ ինչ երկուցեալ: եր կրորդ գիշերին նոյն ձայն լսելի եղև յականջս նր̄ · բայց զնա́ ան տես արար · յերրորդ գիշերին ընդ նոյն մօրպետոն ննջ՚լով, և զպղծութ̄իս կատարելով դարձեալ նոյն ձայն ահեղագոչ հնչմամբ որոտաց 'ի լսելիս նր̄ · ո՛վ ուստոն եղկելի՛ թո՛ղ զխաղ գարշելի · խաղացեր յանկողնի՛ երկար քեզ համբերի ։ Արդ զայս ձայն լուեալ յոյժ զահի հարաւ · և փոքր ինչ ոգոցեհան · այլ ո՛չ եկն ուղղութ̄ի · և թէ պէտ մերձէր կորստեան · և կերպիւ ինչ զգայր զօրն · սակայն ո՛չ էր նմա փոյթ զապաշխարութե ։ Ապա́ յետ երից ամաց ոմ̄ն քահանայ նոյն եկեղեցւոյ 'ի գիշերի մ̄նաց յեկեղեցի կալ յաղօթս ոպ̄ սովորէր հանապազ · և պաղատանս մատուցանէր ա̄յ վ̄ս կաթողիկէ եկեղեցւոյ · մանաւանդ վ̄ս իւր աւագ եկեղեցւոյ · զի արարիչ ա̄մի արդար դատաւո՛ր զուտու եպիսկոպոսն վաղվաղակի յայսմաշխարհէ բարձցէ · կամ 'ի լաւանդր դարձուսցէ և այց արասցէ 'ի բարին հօտին իւրոյ ։ Աղօթք քահանային ելին առաջի աթոռոյն ա̄յ · և կատարումն իսկ եղև պաղատանաց նր̄, բայց պատիժն կարի սարսափելի զհետ ընթացաւ ա̄մ մարդկան յո́յժ ահարկու · այլ մանաւանդ գործակալաց եկեղեցեաց՝ որք վերակացուք գոլով հօտին քն̄ իւրեանց վատթար օրինակաւ զնա́ ապականեն · և բազում անգամ 'ի դժոխս 'ի ջուցանեն ։ Արդ՝ քահանայն կացեալ յաղօթս ետես և ահա́ հող̄մ հնչեաց և զա՟մ կանթեղս եկեղեցւոյն շիջոյց. ուստի ա՛հ մեծ անկաւ 'ի վ՟ր ն՟ց մինչ զի դրեթէ եղև զփայտացեալ. յետ այդորիկ եկին է՟ պատանեակք հանդերձ մոմեղինօք. և կացին առաջի սեղանոյն, մինն յաջմէ. և միւսն յահեկէ: ապա եկին երկու այլք երիտասարդք. յորոց մինն կերպասեա՛ ծածկոյթ սփռեաց առաջի բեմին. և միւսն եդ 'ի վ՟ր ն՟ր երկու աթոռս ոսկեղէնս՝ յետոյ եմուտ ոմ՟ն իբրև զօրական. ունելով սուսեր մերկ 'ի ձեռին իւրում. և կացեալ 'ի մէջ եկեղեցւոյն ահագին ձայնիւ աղաղակեաց ա՟մ ո՟րք որոց և նշխարք ոսկերաց աստկան՝ արիք և եկայք 'ի դատաստան ա՟յ: Զա՛յս իբրև ասաց երևեցաւ մեծ և պայծառ բազմութի՟ արանց և կանանց. ոմանք զինուորական զգեստիւ զարդարեալք. ոմանք եպիսկոպոսական նափորտիւ. սոքա ա՟մքն մտին առաջի բեմին. և կարգաւ ըստ արժանաւորութե՟ վարձուցն յայսկոյս և յայնկոյս նստան. յետոյ երկոտասան արք մտին 'ի մէջ նոցա. գայր քան զարեգակն պայծառագոյն ունելով թագ արքունական. և 'ի ձեռին գաւազան ոսկի, որք էին առաքեալքն և տ՟րն մեր յ՟ս ք՟ս թագաւորն երկնի և երկրի՝ զոր իբրև տեսին ա՟մքն առաջի ն՟ր անկան. և յաթոռ նստուցին. եկն և թագուհին երկնից քան զլուսին և զաստեղս լուսափայլեալ. զկնի ն՟ր եկն մեծ բազմութի՟ պայծառակերպ կուսից. յայնժամ ա՟մ ո՟րք մեծ պատիւ տանելով մօրն ն՟յ 'ի խոնարհ երկիր պագին նմա. և տ՟րն մեր յ՟ս ք՟ս ելեալ ընդառաջ ն՟ր. և առեալ զձեռանէ նստոյց ընդ աջմէ իւրմէ արժանապէս. Իսկ ահա 'ի վերջոյ երևեցաւ ս՟բն մօրիկոս փառաւոր զօրագլուխ հանդերձ գնդաւն իւրով. զ՟ռ. զ՟ճկ. և զ՟. զօրականօք. Սոքա ա՟մքն միաբան անկեալ յերկիր փառս ետուն տ՟ն ասելով. դատաւոր արդար և արարիչ յաւիտեանից իրաւունս արա. զայս ասացեալ յարեան և կանգնեցան վայելչաբար ակն կալեալք տ՟ն իրաւանց. Պատասխանի ետ ցն՟ս տ՟ր. օրհնեալք իմ զինչ կամիք. և յաւել ածէք այսր զուտոն եպիսկոպոսն. և վաղվաղակի ոմանք 'ի շուրջ կացելոցն գնացին՝ և զեղկելին զուտոն 'ի ծոցոյ մօր պետաին առեալ ողորմելի ածին. ընդ որ ս՟բն մօրիկոս զայրացմամբ հայեցեալ ասէ. տ՟ր իմ դատ արա։ ահա այս ուտոն ո՛չ եպիսկոպոս՝ այլ գայլ ո՛չ հովիւ. այլ պատառօղ. յափշտակօղ. զրկօղ և կլանօղ հօտից քո։ Սա է յորում տիրուհին իմ և մայր քո զիմաստութիւն նորհեաց և զայս եկեղեցի 'ի պատիւ անուան իմոյ և ընկերացս շինեալ 'ի դա յանձնեաց. պատուիրելով զի եթէ բարւոք զվերակացութիւն կառավարեսցէ զկեանս յաւիտենականս ժառանգեսցէ. ապա թէ չարաչարս մահու 'ի հոգի և 'ի մարմին արժանի եղիցի։ Սա 'ի սկէ թշուառական որ յանդիմանեալ միանգամ և երկիցս և երիցս ո՛չ կամեցաւ գալ յուղղութի. և ոչ միայն զայս եկեղեցի. այլ և ինքն՝ և զա̃մ ինչ 'ի դա յանձնեցաւն ոչ ընչացոյց և կորոյս՝ մանաւանդ զհարսունս քո մինչ և ա̃մ ուրեք վաւաշոտութե̃ և անամօթաբար բռնադատէր. վ̃ս որոյ 'իրաւունս առ՛ դատաւոր արդար: Զոր լուեալ տ̃րն նստաւ 'ի վ̃ր աթոռոյ դատողական. և հայեցեալ 'ի ն̃բսն ասէ. զի՞ արդ թուի ձեզ: Եւ զօրականն այն բարձրձայնիւ աղաղակեաց ասելով. մահապարտ է: Ի՛սկ դատաւորն և ա̃մ ն̃բքն որ անդ կային 'ի մի ժողովայն. և թէ որպիսի մահուամ պատժելոց իցէ չարագործն այն ընդ միմեանս խորհէին: Յայնժամ դատաւորն ասէ. գլուխ սորին կորուսանել արժանի է, որ առանց գլխոյ զժամանակ ծախելով 'ի տղմի աղտեղութե̃ն նեխեցաւ՝ ապա 'ի նմին ժամու զօրականն հրամայեաց ուստոնի. զի զպարանոցն խոնարհեցուսցէ. զոր իբրև նա արար և զօրականն զսուսեր վերացոյց զի հատցէ զգլուխն՝ ոմն աղաղակեաց ասելով արգել զձեռն քո մինչ զի նշխարք ա̃ծային խորհրդոցն 'ի նմանէ տարցին. յայնժամ ոմն ունելով զսկիհն եկաց առաջի ուստոնին. և զօրականն ուժգին ձեռամբ բախէր զգլուխ նորին. և յամէն անկամ զնշխարն՝ աղտեղեալ 'ի բերանոյ ն̃ր ելանէր և 'ի սկիհն անկանէր. զայս ա̃մ նշխարսն ս̃բ կոյսն մարիամ մեծաւ պատուով ընկալաւ. մեծաւ զգուշութե̃ մաքրագործեաց. և 'ի

վր̅ սեղանոյն եդեալ երկիր եպագ . և հան
դերձ իւր պարակուսանացն գնաց . ապա՛ զօ
րականն զեպիսկոպոսն թշուառական գլխա
տեաց . և այն պէս ժողովն այն աներևոյթ
եղև ։ Ա̅րդ՝ քահայն զորմէ վերագոյն ասա
ցաք . այր բարեպաշտ և ա̅ծասէր ետես՝ ոչ
յանուրջս՝ այլ յարթնութե̅ անքուն աչօք .
դողալով և լի ահիւ զլոյս գտեալ ’ի գաւթին
զն̅մ կանթեղս վառեաց ։ Նա և վն̅ եղելոց
իրաց թերևս երկբայելով . և զարմացեալ ’ի
միտս վարանելով . փոքր ինչ համարձակութի̅
առեալ . ’ի տեղի դատաստանին մատեաւ և
ահա՛ ետես զկիհն հանդերձ հաղորդու
թե̅ք ’ի վր̅ սեղանոյն . և գլուխ եպիսկոպո
սին զատ ’ի մարմնոյն անկեալ . և յատակն
արիւնա թաթախ ։ Ապա՛ զն̅մ դրունս եկե
ղեցւոյն փակեաց . և ոչ ումեք թոյլ ետ մտա
նել . և իբրև արեգակն ծագեաց . զն̅մ ժա
ռանգաւորս և զժողովուրդս հրամայեաց
կոչել . այնժամ զդրունս բացեալ զահագին
պատիժն ն̅յն այսինքն զուտոն եպիսկոպոսն
արիւնա թաւալ ա̅մցւնց եցոյց . և զն̅մ զոր
ինչ ետեսն և լուա՟ն մի ըստ միոջէ կարգաւ
պատմեաց . ’Ի նմին աւուր ոմն կղերիկոսաց
եպիսկոպոսին Ձանապար հորդեալ հրամա
յեաց ծառայից իւրոց յառաջքան զինքն եր
թալ . և ինքն ’ի ծանր քնոյ վաստակեալ . ’ի
ջեալ ’ի ձիոյ ’ի ներքոյ ծառոյ միոյ եդ ըզ
գլուխ և զերես անակ սանձի ձիոյն ’ի ձեռն

կապեալ սակաւիկ 'ի քուն եմուտ։ Եւ ահա մեծ բազմութիւն դիւաց պղծոց փողովք․ թմկօք․ բրօք․ սուսերօք․ գեղարդեամբք․ պայտատօք․ նիզակօք․ 'ի նոյն տեղին շուտով ընթանային․ և յորժամ ա̃մքն ժողովեցան․ զիշխան ոչ̃ երևիւր․ որ էր․ քան զայլս բարձրահասակ․ ահեղակերպ աթոռ նստուցին․ և ահա վաղաղակի երկրորդ գունդ բազմամբոխ խաղալով․ աղաղակելով․ պարելով․ ծափս հարկանելով․ խրախանալով․ ծիծաղելով երևեցաւ․ ոմանք 'ի նոցանէ յառաջելով բարձրաձայն աղաղակեին 'ի բաց կացէք 'ի բաց կացէք․ ահա իշխան ուտոն մեր սիրելի մերձենայ․ յետ այսորիկ սպասաւորք սանդարամետականք․ զթշուառական հոգին ուտանի 'ի մարմնաւոր կերպի հրեղէն շղթայիւք զպարանոցէ կապեալ առաջի իւրեանց իշխանին ածին։ Իսկ բելիար ընդառաջ նր̃ յարուցեալ ողջունեաց զնա խաղաղական բանիւք նենգութե̃ ասելով․ ողջ լեր իշխան զօրավիգ․ և ընդ արձակիչ թագաւորութ̃նս մերոյ․ ահաւասիկ ես պատրաստեմ քեզ և ա̃մ բարեկամաց մերոց փոխարէն հատուցանել։ Եւ յորժամ ուտոն լուաւ և եթկայր․ բելիարն սպասաւորաց իւրոց ասէ․ վաստակելէ սիրելին մեր գալով առ մեզ վս̃ որոյ հաճոյ թւի մեզ զի հանգիցէ․ տուք դմա ուտել․ և յորժամ նա դողայր հրաժարէր զերեսն դարձուցանէր՝ ան ողորմսպասաւորքն

զգործս և զօձ բռնութ՟ն 'ի բերանն ն՟ր կոխե
րին . և ապա ծծըմբով հեղին . և յորժամ ո՛չ
ինչ խօսեր հրամայեաց զնա՛ 'ի բաղանիս իշխա
նին տանել . և անտի մօտէր ջրհոր ծածկեալ .
զոր իբրև բացին բոց կիզանող մինչև յեր
կինս ելանէր , որ ո՛չ միայն զծառս և զլե
րինս՝ այլ և զքարինս և զջուրս որ մերձ նմա
իջանէր . իբրև զյա՛րդ մաշէր . ուր եղկելին
հոգին այն ձգեցին . և ապա հանեալ զնա՛ իբրև
զերկաթ հրացեալ . և բոլորովիմբ բոցավա
ռեալ . առաջի իշխանին կացուցին . որ ծի
ծաղելով ասէ . ո՛չ ապաքէն բարուք բաղա
նիս ունէիր իշխան : Յայնժամ ուստոն տե
սեալ ստուգապէս զինքն դատապարտեալ .
սկսաւ խօսել և հայհոյել անիծեալ լիջիր
դու սատանայ . և ա՟մ պիղծ դևք քո . անիծեալ
և ա՟մ ջան և զօրութինք քո . անիծեալ ա՟ծ որ
զիս եստեղծ . անիծեալ երկիր որ զիս բառն
այր . անիծեալ ծնօղքն որ զիս ծնան . անի
ծեալ ա՟մ արարածք որ յերկինս և յերկրի .
յայնժամ դևք հանդարձ իշխանաւն իւ
րեանց սկսան ծափս հարկանել և ասել . ար
դար և արժանէ դա՛ ընդ մեզ բնակել . զի
յոյժ բարուք գիտէ երգել զերգս մեր . առա
քեսցուք զդա առ բարձրագոյն դասատուն
դատապարտելոցն զի տեսցէ՝ լուիցէ 'ի մեա
ցի . և յաւելլի ուսցի յաւիտեանս յաւիտենից .
մինչ դեռ զայս բանս ասացին . և ահա՛ մի
բան բազմամբոխ հասեալ 'ի վ՟ր այն ատելի

ստեղծու

ստեղծուածոյն ․ այսքան ճեպով և որոտմամբ զնա յանդունդս դժոխոց ձգեցին ․ մինչ զի թուէր թէ երկինք երկիր և ամ՟ լերինք աշխարհիս 'ի միասին մարտնչէին ։ Կղերիկոսն այն զայս ամ՟ յանուրջս տեսեալ և լուեալ 'ի մեծ տագնապի՛ էր ․ յայնժամ բերլի առն մատամբ ցուցեալ զնա ասելով ․ տեսէք զի մի՛ փախիցէ կղերիկոսն այն որ հայի 'ի մեզ ․ քան զի միշտ էր օգնական և զօրավիգ չարեացն նց՟, վ՟ որոյ ոչ՟ էր ընկեր մեղացն ․ նմ՟ եղիցի վրէժ խնդրութ՟ն և պատժոյն ․ ձգեցէք զնա 'ի գուբն դժոխային զհետ ամ՟ նորին ։ Այս ասաց և դևքն կամէին զնա՛ ունել ․ և նա՛ սկսաւ փախչիլ ․ և առժամայն 'ի քնոյ զարթեաւ ․ Ձին զոր հուրեալ այր և անդրր վազելով զթշուառականն 'ի մեծամեծ հարուածս եհար ․ և զկուռն 'ի բազկացն քարշեաց ։ Եւ ապա մեծաւ դժուարութ՟ե նստեալ 'ի ձին եկն 'ի քաղաք ․ և իբրև լուաւ վ՟ մահուան տեառն իւրոյ վաղվաղակի տերութ՟ն ․ երկիւղն առ երկիւղն ․ դատաստան առ դատաստանն ․ վ՟ եդեա՛լ զարմանք 'ի վ՟ զարմանալեացն եղեն ․ Ամ՟ զոր ինչ նմա պատահեցաւ ․ զոր ինչ ետես և լուաւ պատմեաց ․ ցուցանելով զբազուկն չարաչար վիրաւորեալ և զյանկարծակի այլ իւր բուսեալ ․ առ 'ի հաստատութ՟ի ճշմարտութ՟ն ․ Քաղաքացիք տեսեալ և լուեալ զայսքան սարսափելի և անսովոր դատաստան առաջ նորդ լին իւրեանց յոյժ զահի հարան. և ըզգէշն զայն ողորմելի ՚ի բացեա՛ ՚ի քաղաքէ ի լիճ տղմին ընկեցին. զոր գազանք սանդարամետից ծափս հարկանելով. և խնճոյս խրախութ̅ե յօրինելով. զուարթութ̅բ ողջունեցին այսր և անդր քարշելով. ատամամբք խածատէին և պատառէին. և բնակչաց մեր ձակոյից պէս պէս վիշտս հասուցանէին. մինչև խորհուրդ արարեալ զանիծեալ գէշն ՚ի լճէ հանէին հրով այրեցին և զմոխիրն ՚ի գետն որ ասի աղբայ ընկեցին: Օրմանք ա̅մ ձկունք թողեալ զբնակութ̅ն իւրեանց գետոյն գնացին ՚ի ծով. մինչև պաղատանօք սաղմոսերգութ̅բք աղօթիւք և պահօք հաշտեցաւ ա̅ծ. ապա՛ յետ տասն ամաց հազիւ դարձան միւսանգամ ՚ի տեղին իւրեանց:

Ի յոր ահագին սքանչելեացս զյիշատակ առաջի աչաց դնէ զարիւնն ուտոնի ՚ի գլխատմանէն հեղեալ ՚ի վ̅ր յատակին սպիտակ մարմարոնեա՛ թողեալ որ այնչափ վիրաւորեալ ընդ մարմինն՝ մինչ զի թուի թէ այսպէս էր իսկզբանէ ՚ի նմին տեղւոջ գլխատմա՛ն միշտ է ծածկոյթ սփռեալ. և ՚ի ձեռնադրել նոր եպիսկոպոսին ՚ի բաց վեր առնուն՝ և անդ նոր եպիսկոպոս ծունր կրկնէ զի տեսեալ երկիցէ՝ մի՛ գուցէ և նմա՛ ըստ այնմ կերպի կորիցէ: Իրդ ա՛ր և ՚ի տ̅նէ եղև այս յահ և երկիւղ եպիսկոպոսաց եկեղեցւոյն այնորիկ. և ա̅մ անուղղա առաջնորդաց. զի լուեալ զարհուրեսցին և երկիցեն յանհաւոր դատաստանէն տ͞ն․ և ի յոյժ սարսափելի պատժոցն։

Ե Է՛ր ոմն ճգնաւոր եգիպտացի, որ աղաչէր զա͞ծ ասելով․ տ͞ր ցոյց ինձ զդատաստանս քո․ և իբրև բազում ժամանակս մեծաւ աղերսանօք յա͞յ հայցէր, յաւուր միում հրեշտակ յա͞յ 'ի կերպ ծերոյ եկն առ նա՛ և ասէ երթիցուք յանապատ խնդրել զս͞բ հարս․ զի 'ի նոցանէ լուիցուք զբանն կենաց․ և շահեսցուք զօրհնութի ն͞ց․ Ա՛րդ՝ մտեալ յանապատն յետ բազում աշխատութ͞ե գտին զայր․ և իբրև բախեցին ել առ ն͞ս ծեր մի այր ս͞բ․ և տեսեալ զն͞ս ուրախութ͞ե ընկալաւ՝ զո՛տս լուաց․ կերակուր պատրաստեաց ուրախացոյց․ և յանկողին զոր ունէր կազմեաց․ և ընդ առաւօտն ուրախութ͞ե ուղևորեաց․ հրեշտակն ընդ ելանելն թագնաբար էառ զսկաւառակն յորմէ կերան․ և գնացին․ զայն տեսեալ ճգնաւորն ասէր 'ի միտս իւրում․ զի՞նչ եղև ծերոյս այսմիկ․ զի առն սրբոյ զոր զմեզ այսպիսի սիրով ընկալաւ զսկաւառակն էառ․ և յորժամ էին 'ի ճանապարհին՝ առաքեաց զկնի ն͞ց ծերն այն զորդի իւր ասելով, դարձուցէք զսկաւառակն զոր առիք․ պատասխանի ետ նմա հրեշտակն․ յառաջ քան զմեզ եղբայրն որում զայն տուեալ եմ․ ե՛րթ և առ զնա․ և մինչ դեռ երթային ընդ ն͞ս ընկէց զնա՛ հրեշտակն 'ի լեռնէ․ որոյ բեկաւ ողն և մեռաւ։ Տեսեալ ճգնաւորն զոր ինչ արար հրեշտակն երկեաւ ասելով. վա՜յ ինձ թէ զինչ եղև այնպիսի բարեբարոյ առն, ո՛չ էր բաւական զի զսկաւառակ նր՟ գողացեալ էաք, այլ և զորդին նր՟ սպանաք։ Նա և յորժամ զերիս աւուրս գնացին յանապատն գտին զսենեակ մի ուրեք ծեր ոմն հանդերձ երկու աշակերտօք. և ասէ ցնոսա ո՞վ էք դուք. և զինչ խնդրէք։ պատասխանի ետուն 'ի հեռաստանէ եկաք կամելով 'ի քէն զօրհնութի՟ ընդունել. և լսել զբանն կենաց. յղեաց առ նս՟ ծերն 'ի բաց գնացէք չեմ պարապ այժմ։ ասեն ցնա՝ ընկա՛լ զմեզ 'ի սենեակդ զի սակաւ հա՛նգիցուք. քանզի յոյժ 'ի ճանապարհէ աշխատեալ եմք։ դարձեալ առաքեաց առ նս՟ ասելով. 'ի բա՛ց գնացէք. վս՟ էր ընդ յանապատս շրջէք. և նք՟ դարձեալ աղաչէին ասելով. դարձաւ օրս երեկս՝ զի գազանք սպանցեն զմեզ՝ ընկա՛լ զմեզ յայսմ միայն գիշերիս. ապա՛ յուշ յետոյ և մեծաւ դժուարութ՟ հրամայեաց աշակերտին մուծանել զնս՟ իգոմ և յորժամ գիշեր եղև խնդրեցին սակաւ ըզլոյս. ասելով զի տեսցուք թէ ուր անօր ննջեսցուք. և ո՛չ ետուն. յետոյ խնդրեցին վս՟ այ՟ սակաւ ջուր՝ յայնժամ ոմն աշակերտաց նորին գըթացեալ 'ի նս՟ ասէ. աղաչեմ զքեզ մի՛ գիտասցէ հայրն իմ. ահա 'ի բաժնէ իմմէ տամ ձեզ սակաւ հաց և ջուր. և այնու՟ զգիշերն անցուցին 'ի մերկ գետնի ննջելով. 'ի վաղիւ ասէ հրեշտակն ցոմն աշակերտաց նորին. աղաչեմ զհայրդ զի աղօթեսցէ 'ի վ̃ր մեր. ունիմ ինչ մատուցանել, նմա զայս լուեալ ծերն թէ առնուցու ինչ 'ի նոցանէ առժամայն ել, և հրեշտակն մատոյց զսկաւառակն զայն՝ զոր առեալ էր յառնէ յայսմանէ սրբոյ. զոր առեալ ծերոյն փակեաց զդուռն. և հրամայեաց նմ̃ 'ի բաց գնալ. Տեսեալ զայս Ճգնաւորն ա̃յ որ էր ընդ հրեշտակին. և ոչ գիտելով թէ հրեշտակիցէ բարկացաւ և ասէ ցնա 'ի բա՛ց գնա՛ յինէն ոչ յաւելից յայլուրեք երթալ ընդ քեզ. ահա՛ տես զի՛նչ արարեր յայնմ մարդոյ սրբոյ որ զմեզ մեծաւ պատուով ընկալեա՛լ էր. զսկաւառակն 'ի նմանէ առեր, և զորդին նր̃ սպաներ՝ և այսմ մարդոյ ամբարշտի որ ոչ յա̃յ երկնչի. և ոչ զնա դնէ առաջի աչաց իւրոց. և ոչ գութ ունի առ ընկեր. ետուր 'ի նա զսկաւառակն. պատասխանի ետ հրեշտակն, ոչ ապաքէն հայցէիր յա̃յ զի ցուցցէ քեզ զդատաստանս իւր. ահաւասիկ 'ի նմանէ առաքեցայ զի ցուցից քեզ. Սկաւառակն այն զոր առի 'ի սրբոյ յառնէ, ոչ էր բարւոք ստացեալ. վ̃ս այսորիկ ոչ էր պատշաճ, զի այրն այն ա̃ծ ունիցի զայնպիսի ինչ 'ի խցի իւրում. այլ որ ինչ էր 'ի չարէն եկն առ չարն. զի այս յաւելցի նմա 'ի կորուստ. Իսկ զորդին նր̃ վ̃ս այնորիկ սպանի. զի թէ ոչ սպանեալ էր 'ի զնա՛. նա՛ յայնմ գիշերի զհայրն իւր սպանանելէր. Որ լուեալ Ճգնաւորն անկաւ 'ի վ̃ր երեսաց իւրոց առաջի ոտից նր̃. տեսեալ զնա հրեշտակ ա՟յ գոլ. և նա առժամայն անյայտ եղև: և Ճգնաւորն ծանեաւ թէ այսեն դատաստանք ա՟յ: Արդ յորժամ ոք տեսանիցէ բարեաց նեղութի՟ ինչ հանդիպել. և չարեաց բարի յաջողութի՟ լինել. մի՛ համարեսցի զայն պատահմամբ. կամ անիրաւաբար եղեալ. քանզի դատաստանք ա՟յ մի՛շտ են արդարք. թէ պէտ ծածուկք և ՚ի մէնջ անյայտք.

Յաղագս Պատուաւորաց · Գլուխ · էէ ·

ա՟ Փառաւոր ոմն յաւուր միում յերեկոյ եղև նստեալ առ պատուհան տան իւրոյ նայէր ՚ի խոզարած, որ զխոզս ունէր՝ և ստիպէր զնո՟ զի մտցեն ՚ի տուն. և իբրև ոչ կամեցան մտանել. ընկերնո՟ ասէ ցնա՝ եթէ կամիս փութանակի մտցեն ՚ի խոզանոց կոչեա՛ առ նո՟ խո՛զք խոզք՝ այն պէս շուտով մտէք ՚ի խոզանոցն ձեր. զոր օրինակ դատաւորք մտանեն ՚ի դժոխս: Եւ յորժամ խոզարածնն ասաց. խոզքն առժամայն առանց յապաղելոյ սկսան մտանել իւրեանց բնակութի՟ն: Զոր տեսեալ դատաւորն մեծաւ երկիւղիւ արդարութ՟բ ըմբռնեալ զդատողական իշխանութի՟ն եթող. և հանդերձ որդով ՚ի վանս վաղվաղակի փութացաւ. ուրխստակրօն վարուք աղօթիւք և արտասուօք կայր. և անչափէր անողորմ ընդդէմ մարմնոյ իւրոյ. մինչ զի լեալ հայր բազում վանորէից յա՟մ տեղիս կրօնաւորաց բոկ ոտամբ շրջէր:

Պատա

Դատաւոր ոմն 'ի ժամանակի սովոյ զի մի՛ լուիցէ զձայն աղքատաց. փոխեցաւ յայլ տուն որ էր մերձ եկեղեցւոյ. ուր աղքատք տառապեալք և նուաղեալք 'ի սովոյ աղաղակէին։ Իսկ նա՛ զի մի՛ լուիցէ զձայն նցա ասէ. ո՛չ կարեմ հանդուրժել ընդ շանս այսոցիկ. և հրամայեաց զսեղան իւր յայլ օթևան տանել. և ահա՛ 'ի նմին ժամու ոմն սպառազէն եալ, բախեաց զդուռն ասելով. առաքեալ յայ եմ կամիմ խօսել ընդ տն դատաւորումդ։ Իսկ յորժամ սպասաւորն հրամանաւ տն իւրոյ ասաց թէ ո՛չ է 'ի տան։ ասէ ցնա սուտ ասես. ահա փոխեցաւ այլ սենեակ. զի մի՛ լուիցէ զձայն աղքատաց. ահա՛ այժմ կոչեմ զնա յատեան յայ. զի տացէ համարս գործոց իւրոց. ապա առժամայն հիւանդացաւ դատաւորն և յորժամ արեան մերձաւորք խրատ տային նմա զի խոստովանեսցի ո՛չ կամեցաւ. վն որոյ մեռեալ մատնեցաւ 'ի տեղի դատապարտելոցն. զի անդ կերակրեսցի ընդ դևսն։ Է

Յաղագս փոքին Բեղտասարոյ . Գլուխ . ԾԷ .

Ի վանս միաբանակեցաց, էր ոմն աբեղայ յոյժ խորամանկ հնարագէտ. և սա՛ 'ի խռովութիւս սերմանել 'ի մէջ աշխարհականաց կարի քաջ։ Որդ՝ սա՛ իբրև փոփոխել զհայրս վանից և 'ի խռովութիւս ձգել 'ի մէջ եղբարց ո՛չ յագեցաւ. զանձն իւր մատնեաց 'ի ձեռն սատանայի՝ միայն թէ զոր ինչ զի կա Ա տորեսցէ։ Իսկ չար դևն հայր ստութեն գոլով խոստացաւ նմա թէ երեք աւուրբք յառաջ քան զմահ փոխելդ քո աշխարհէ ծանուցից քեզ. նա թշուառական հաւատաց բանից դիւին. և բազում ժամանակք եկաց այսպիսի պատրողական վ͞ս տահութ͞ե սրտապնդեալ։ Իբրև անկաւ 'ի հիւանդութ͞ն. եհաս առ նա պիղծն ուխտադիր ծանուցանելով նմա սակս մահուան. և նա հրամայեաց կոչել զա͞մ եղբարս. և յայտնեաց ն͞ց զբանս իւր զորս ընդ սատանայի առնէր։ Եւ յորժամ ն͞ք յորդորէին զնա առ 'ի խոստովանութի և յապաշխարութի. առժամայն ննջեաց. և թէ պէտ աղաղակէին. և հնչեցուցանէին, ոչ կարաց զարթնուլ. և յորժամ լռեցին. և յաղագս այլ ինչ իրաց սկսան խօսել, վաղվաղակի զնա քուն եթող. և ընդ ն͞ն խօսէր. և դարձեալ եթէ ոք նմա յիշեցուցանէր սակս ապաշխարութե. 'ի նմին ժամու թմրեցաւ՝ մինչև սոսկալի մահուան մատնեալ եղև. և առ նա յորում զինքն եղկելի տուեալ գնաց. Յետ այսորիկ 'ի բազում գիշերս բազմութե սևակերպ շանց առ գերեզմանն ն͞ր տեսանիւր, որք իբրև զաւուրս իւրեանց սեպհական պահէին.

Բ Եղբայր ոմն էր զոր վ͞ս յանցանաց բազում անգամ եղբարք և ծերք յանդիմանէին՝ և առ լաւագոյն վարս յորդորէին՝ որ թէ պէտ ոչ անսայր խրատու բանից ն͞ց. սակայն

համ

համբերէին նմա վ՟ն պիտոյից գործոյն ։ զի
էր քաջաբան արուեստ դարբինութե՟ ։ սո
վորէր արբենալ 'ի հոգալն վ՟ն փրկութե՟ ան
ձին իւրոյ ։ ամենևին պղերգ զցայգ. և զցերեգ
'ի խուղն իւր ննջէր ։ յեկեղեցի սակս աղօ
թից ։ կամ լսելոյ զբանն կենաց ո՛չ երբէք եր
թայր ։ վ՟ն որոյ մարդիկք ասել ։ թէ որ ոչ
կամ յօժարութե՟ և խոնարհութե՟ 'ի դուռն
եկեղեցւոյն մտանել ։ կամայ յակամայ 'ի դու
ռըն դժոխոց դատապարտեալ մտցէ ։ քան
զի հիւանդացաւ 'ի կէտ մահուան իւրոյ ։ կո
չեաց զեղբարս յոյժ տրտմալից, և դատա
պարտելոց նմանեալ սկսաւ ասել ։ թէ տեսի
զգժոխս բացեալ՝ և զսատանայ որ զխորս
գժոխոցն ինձ սպառնայր ։ նա՛ և զկայիափայ
և զայլս տէրասպան մերձ առ նա՛ մատնեալ 'ի
տանջանս հրոյ ։ յորոց ո՛չ 'ի բացեա՛ ։ աւաղ
ինձ թշուառականիս՝ տեսանեմ վ՟ն իմ պատ
րաստեալ տեղի դատապարտութե՟ յաւիտենա
նից ։ Ո՛վ լուեալ եղբարցն մեծաւ ջանիւ
խրատ տային նմա, զի թէ պէտ 'ի յետին կե
տին՝ մինչ դեռ հոգին 'ի մարմնի է զղջասցի ։
պատասխանի ետ յուսահատն՝ չիք ժամանակ
ապաշխարելոյ ։ քան զի տեսանեմ զվճիռ դա
տաստանին իմոյ հաստեալ ։ զայս ասացեալ մե
ռաւ առանց հաղորդութե՟ ։ զմարմին նր բաց
դոյն 'ի վանիցն թաղեցին ։ ո՛չ պատարագ ։ ո՛չ
պաշտօն ։ ո՛չ յաղօթս ։ վ՟ն որոյ կատարել ո՛չ
իշխէին ։ ո՛հ զի՛ արդ հեռաւորութե՟ և տա
րակցութե՟

րակցութե͞ որոշեաց ա͞ծ 'ի մէջ լուսոյ և խա-
ւարի։ Մե͞ն ստեփաննոս յանձն առօղ զմահ
վս͞ արդարութե զերկինս բացեալ ետես և
զփառսն ա͞յ . և զք͞րն յս͞ զի կայր ընդ աջմէ
ա͞յ . և ուր լինելոցէր զկնի մահուան անդ-
զանջս հոգւոյ դարձուցեալ էր՝ զի այնու յօ-
ժարագոյն վաղճանեսցի։ Իսկ այս դարբինս
ներհակ կերպիս ունելով զմիտս խաւարայինս
և զգործս, նախ քան զմահ ետես զդժոխս
և զդատապարտութի͞ իւր . զի այնու առա-
ւել եղկելին կորնչիցի յուսահատելով սակս
փրկութե͞ իւրոյ . բայց կենդանեացն որք
զայս ծանիցեն պատճառ փրկութե͞ կորս-
տեամբ իւրովն եթող։ Ա՛յս համբաւս տարա-
ծեցաւ 'ի բազում և 'ի հեռաւոր տեղիս . և
զբազումս առ 'ի յապաշխարութի͞ չարաց
իւրոց յորդորեաց։ Օ որ տացէ ք͞ս ա͞ծ մեր .
զի և 'ի գրոցս մերոց ընթերցմանն պտուղ հօ-
գևոր կրթեսցի։

Է Է՛ր այր ամ͞ն երևելի . գիտութբ͞ զարդա-
րեալ . սա յաւուր տօնի զգեցեալ հան-
դերձնոր և մեծագին . մեծարեալ եղև 'ի
պատիւ ուրեք ուրեք կանդիրձ ընկերօք . և
զօրն ամ͞ 'ի խաղս՝ և 'ի խրախճանութիւս .
յըմպելիս, և 'ի զանազանու նայնութիւս աշ-
խարհիս այսորիկ ծախեաց . իբրև երեկոյ
եղև եկն 'ի մեռ իւր . և լռելեան ասէ 'ի սրտի
իւրում . ո՛ւր է տօնախմբութիւս զոր այսօր
կատարեցաք։ ո՞ւր դնացին ամ͞ խրախճանու-
թիւնք։

թէք · Ա՛րդ տեսեալ թէ ա̃մ ուրախութիւն աշխարհիս փութանակի անցանի · և 'ի տրտմութն և 'ի ցաւ փոխարկի · 'ի վաղիւ գնաց 'ի վանս կրօնաւորաց · յորում զբազում ամս ծառայեաց ա̃յ սրբութ̃բ · և գիտութ̃բ՝ և 'իմաստութ̃բ · և բարի համբաւով՝ հռչակեալ և փայլեալ փոխ̃ցաւ յանանց կեանս ·

է̃

Երիտասարդ ոմն մեծ ազգի · տեսլեամբ գեղեցիկ · և փափկասնունդ՝ եմուտ 'ի վանս միաբանակեցաց զոր տեսեալ ոմն ազգական ծնողաց նորին · խրատ տայր նմա զի 'ի վաղւն 'ի վանիցն ելանիցէ · և ասէր լաւ է զի այժմ ելցես առանց մեղաց և խոտրութե անուանդ՝ քան թէ յետոյ · զի դու ես յոյժ փափուկ մարմնով, և ո՛չ կարես զդժուար վարս կրօնաւորաց տանել · Առ այն էր պատասխանի պատանեակն · զպատճառսդ զոր տաս ինչ վ̃ս ելանելոյ 'ի վանիցս, զնոյն գիտեմ յորդորել ինձ լեալ առ 'ի մտանել այսր · քան զի խորհեցայ սրտի 'ի միում ասելով · եթէ զփափկութ̃ն աշխարհիս ոչ կարեմ տանել · զի ո՛րդ այն անտանելի և անթիւ տանջանաց դժոխոց կարիցեմ տանել · վ̃ս այսորիկ 'ի միտս հաստատեցի զայս խստակրօն վարս յայսմ աշխարհիս տանել · զի մի՛ յայնմ աշխարհի զյաւիտենական տանջանս կրիցեմ · այլ ընդ աղքատս աղքատ կամիմ լինել · զի յերկնից արքայութեն հարուստ լինիցիմ ·

Ե Երկու ընկերք միմեանց սիրելիք 'ի դասէ գուսանաց՝ ընդ ա՟մ տեղիս շրջէին կատակելով զմարդիկ 'ի խրախութ՟ե պահէին ։ Մինն 'ի նոցանէ զղջացեալ թագնաբար ընկերէն իւրմէ ելեալ գնաց · և գտեալ այր մի 'ի մէջ մայրեաց զինքն 'ի ներս ծածկեաց՝ ուր ժամանակ ինչ ապաշխարելով յոյժ նեղ և ճգնազգեաց ։ Իսկ ընկերն ն՟ր զարմացեալ թէ զինչ եղև · կամուր արդեօք իցէ ընդ ա՟մ գաւառն այն շրջէր մեծաւ ջանիւ խնդրելով զնա ։ Ապա լուաւ թէ ոմն մարդ անծանօթ յայս ինչ մայրեաց մէջ 'ի յայրն բնակէ · խորհէր 'ի միտս իւր , թերևս ն՟ր ընկերն իցէ՝ և անյապաղ գնաց անդր · և ծանուցեալ բերկրեցաւ յուրախութ՟ի մեծ ։ և խրատ տայր նմա զի ել անիցէ՝ և յառաջին ընկերակցութ՟ի ն՟ր վայելեսցէ · ասելով թէ մարդիկք այժմ առաւել մարմնասէրք են · զհետ յաշխարհի հեշտութ՟ե ընթանան յաւէտ քան զառաջինն · և զայլ ևս բազում փափկութ՟ե աշխարհի առաջի դնէր · բայց նա երկիւղ ա՟յ արմատացեալ ամենևին ոչ եղև ունկն դիր բանից ն՟ր ։ Իսկ նա 'ի խօսելոյ և 'ի շողոքորթելոյ ոչ դադարէր · Ապա ճգնաւորն այն յիշեալ զառաջին հնարագիտութ՟ին իւր՝ կամ մանաւանդ յազդմանէ ա՟յ · խորհէր թէ ո՞րպիսի կերպիւ կարէր զերծանել 'ի փորձութենէ յայնմանէ · և հնարիւք հնարիցն յաղթել · և ասէ ցնա եթէ կարես զքարն 'ի պատուհանէն 'ի բաց թաւալեցուցանել և զիս աստից հանել երթայց ընդ քեզ ։ Այրն այն յամմ կողմանէ էր պարածածկեալ . և 'ի վերուստ միայն մի պատուհանունէր , որ էր մեծ քարիւ խցեալ . ընկերն ուր ախացեալ իւր թէ յաղթեաց . և եգիտ զոր խնդրէրն ել 'ի վեր և թաւալեցոյց զվէմն և զնկերն 'ի դուրս ։ Արդ յորժամ երթային 'ի միասին ընդ անտառախիտ մայրեացն ։ ասէ՛ ճգնաւորն ցընկերն . աւաղահա մոռացայ քիսայ հանդերձ դրամով ։ կամիս դարձցուք և առցուք զայն . և նա ասէ այո՛ առցուք զայն . և դարձան . ասէ ճգնաւորն ցընկերն . ես շա՛տ նստելով նուաղեալ եմ . աղաչեմ մուտ դու և 'ի սնարս մահճաց 'իմոց գտցես զդրամն . և իբրև նա եմուտ՝ ճգնաւորն զկնի նր 'ի պատուհանէն զքարն թաւալեցոյց , և անդ զընկերն փակեաց . և եկեալ մերձ 'ի պատուհանն ասէ . ո՛վ սիրելի՛ ընկերիմ . յուսամ ողորմութին այ . թէ ես վարս բարիս փոխանակ չարեացն իմոց ստացեալ եմ . աղաչեմ նի՛ստ ա՛յդր և դու . և լա՛ց զմեղս քո ծառայելով այ . զի շատ երկար ժամանակ ծառայեցեր սատանայի . Իս՛կ նա կարծելով թէ կատակելով ասէ . աղաչէր զի թողցէ զնա ելանել . և նա ևս զգուշագոյն ամրացոյց զայրն՝ և ասաց թէ զայս հաստատու 'ի մտի՛ եդի ո՛չ թողուլ զքեզ յայրէն ելանել . Ապա զօրհանապազ խրատէր զնա 'ի գրոց սրբոց. և մեծաւ հոգաբարձութ՟բ սպասաւորէր նմա. բայց նա՛ զառաջին բարկանայր և յո՛յժ անհամբե՛ր լինէր. և ճգնաւորն ուժգին աղաչէր զա՟ծ վս՟ն ն՟ր. զի զխրատ փրկութ՟ե և զվարն. սրբոց միշտ առաջի ն՟ր դնէր և ուսուցանէր: Ապա առ սակաւ սակաւ զբանս ն՟ր ընդ ունէր. և 'ի հասանել շնորհին ա՟յ զհարկն 'ի բարի կամս դարձոյց. նոյնպէս երկոքեան համբերեալ 'ի վարս կրօնաւորութե և ժուժկալութե ա՟յ հաճոյացան և բարւոք հանգեան 'ի ք՟ս:

Զ Երկու պատանեակք ուսումնակիցք մըտեալ 'ի վանս կրօնաւորաց բարւոք և սրբասէր վարուք առաջի ա՟յ և մարդկան կենցաղավարեցան: Արդ՝ իբրև ոմն 'ի նոցանէ եհաս 'ի կէտ կոչման իւրոյ զի առցէ զպսակն արդարութ՟ե ընդ վաստակոցն. միւսն լա՛յր և ողբայր ասելով. թէ միայն որբ մնացի յերկրին օտար. պատասխանի ետ հիւանդն. եթէ տ՟ն հաճոյ թուեսցի. կամք ունիմ զկնի մահուանս զի երևեցայց քեզ. և հաւատարմացուցի զքեզ վս՟ որպիսութ՟ե իմոյ. Եւ իբրև վաղճանեցաւ յընկերն կայր յաղօթս. և ահա երևեցաւ նմա յոյժ զուարճ երեսօք և պայծառ դիմօք, աղաչելով զնա զի ընդ նմա փոքր ինչ յարտաքս ելանիցէ. Որ իբրև նա արար. ահաետես առաջի ն՟ր զի անցանէին մեծ բազմութ՟ի մարդկան 'ի հանդերձս լուսաւորս իւրաքանչ իւր ոք 'ի նոցանէ ունե լով զխաչ 'ի վ͞ր ուսուց յոյժ գեղեցիկ. և այնպէս երկինս ելանէին: Զկնի ն͞ց երթայր այլ դաս և առաւել գեղեցկագոյն մարդկան իւրաքանչիւրոք 'ի նոցանէ ունելով 'ի ձեռին զխաչս լուսապայծառ: Յետ այսորիկ երթայր երրորդ դաս յաւէտ լուսաճաճանչ և գերապայծառ. և իւրաքանչիւրոք 'ի նոցանէ ունէր զհրեշտակ, որ առաջին ն͞ր զխաչ լուսափայլեալ և յոյժ զարմանալի տանէր. և այնպիսի ձևով անցուրանէին ելանելով յերկինս: Զա՛ս տեսեալ ճգնաւորն եհարց ցընկերն մեռեալ զինչ իցէ այն: պատասխանի ետ առաջինքն էին որք 'ի ծերութ͞ն մեռեալ էին 'ի վանս կրօնաւորաց: Երկրորդքն որք 'ի կատարեալ հասակի. և յետինքն որ 'ի տիս մանկութ͞ն. դու ևս համարեցիս 'ի դասսն͞ց. եթէ ժուժ կալես յառաջի կայ սկսեալ ճանապարհիդ. և եղիցիս երանելի. և ես շնորհօք տ͞ն ա͞յ իմոյ ելանեմ յերկինս. և զայս ասացեալ գնաց զհետ ն͞ց. և հրեշտակ ունելով զխաչ ն͞ր երթայր առաջի նորա:

Այր ոմն աւազակապետ այնչափ չարագործ Է
անողորմ արեան արբու՝ մինչ զի որում մի անգամ 'ի ճանապարհի պատահէր սպանանէր. Զայս լուեալ ոմն հայր վանաց ս͞բ և առաքինասէր. զգեցեալ երկուս հանդերձս. և նստեալ ազնիւ ձի գնաց 'ի սահմանս այնոսիկ ուրէր աւազակապետն՝ զոր կալեալ ածին առաջի ն͞ր. եհարց հայր վանաց ցաւա

զակապետն · զի՞նչ կամիս՝ և նա ասէ. քո ձի և զհանդերձոդ · յայնժամ ասէ ցնա հայրն · զիրա՞ն խնդրես՝ քանզի այս ինչքս ա՟յ են ։ և մանաւանդ հասարակաց · ա՛րդ՝ որովհետև ես բազում ժամանակս վայելեցի · արժանէ զի դու այժմ վայելեսցես · բայց կամիմ գիտել թէ զի՞նչ արասցես զդոսա · պատասխանի՛ ետ · վաճառեսցուք և գնեսցուք կերակուրս ։ յայնժամ ասէ հայրն որդեակ՝ վ՟ է՞ր այնքան աշխատութե՟ և վտանգիւ խնդրես կերակուր և հանդերձ։ եկ ընդ իս, և տա՛ց քեզ զա՟մ պիտոյս ։ Իսկ յորժամ նա հրաժէր ասելով · թէ ո՛չ կամիմ ուտել ոսպ և բակլայ։ ասէ ցնա հայրն՝ տա՛ց քեզ միս և ձկունս և հաց · գինի անուշ · անկողինս զարդարեալ · միայն եկ զկնի իմ · և իբրև հաւանեցաւ եկն 'ի վանս · հայր ետ ցնա զոմն եղբարցն, որ յա՟մ աւուր բերէր առ նա՛ նախասացեալ պիտոյսն։ Արդ՝ յորժամ աւազակապետն յագեցաւ՝ կրօնաւորն այն հրամանաւ հօրն առաջի նո՟ 'ի գետնի նստէր, հաց միա՛յն ուտէր և ջուր ըմպէր · եհարց ցնա՛ աւազակապետն, թէ վ՟ է՞ր այն քան ծանր ապաշխարութի՟ս կատարես · միթէ զո՞ք սպանէր · կամ պոռնկութի՟ գործեցեր։ Իսկ կրօնաւորն զարմացեալ և սոսկացեալ ասէ · ո՛ն այդր 'ի բաց, մի՛ արասցէ ա՟ծ · եթէ ես մարդ սպանեալ իցեմ · կամ զմարմին իմ պոռնկութե՟ մեղօք ապական իցեմ · քան զի 'ի մանկութենէ իմմէ 'ի վանս այս սնեալեմ. բայց վս̃ այսորիկ զայս ապաշխարութի առնեմ. զի զողորմութի գտից առաջի այ̃ 'ի ժամ մահուան իմոյ: յայնժամ աւազակն զզջացեալ ասէ. ես եղկելի և թշուառական, որ այսչափ մարդասպանութիս՝ այսչափ անթիւ չարիս գործեալեմ, ոչ երբէք պահեցի. զի արդ զա̃ծ ողորմած առ իս ունիցիմ. և անկեալ առոտս հօրն. այն չափ զինքն ապաշխարութի ճգնէր հանդերձ արտասուօք. մինչև զամենեքումբք ժուժկալութե̃ գերազանց եղև.

Մի̃ գրոց աշակերտ խորհէր 'ի վանս կրօնաւորաց մտանել. և 'ի նոյն յորդորէր զուսումնակից իւր. և նա պատասխանի ետ. մնացից աստ 'ի փարէզ քաղաք, զերիս ամս. զի ուսայց զիմաստասիրութի. և ապա չորսամ ուսայց զբժշկական գիտութի. ապա գնացից 'ի քաղաք պանսեայ՝ և անդ կացից հինգ ամ զի ուսայց զա̃մ գիտութիս, և զօրէնս դատաստանաց. յետ այնորիկ անյապաղ մտից 'ի վանս. զայս բան ասացեալ գնաց յանկողինն իւր. և յառաւօտու գտաւ մեռեալ: է̃

Յաղագս Պատանեկութեան գլուխ. ՃԴ.

Երկու օտարական մուրացիկք եկեալ առ հայր 'ի սահակ պատառոտուն զգեստիւք և առանց շապկի. մինչ զի մերկ երևէին՝ ողորմութի խնդրէին 'ի նմանէ. և իբրև զհանդերձս 'ի նմանէ խնդրէին՝ այրն այ̃ լռութե̃ ա̃ ունկն դնէր լինելոց բանիցն նց՟։ Այլ կոչեալ առինքն զմին յաշակերտաց իւրոց ասէ ցնա՛ երթ 'ի մայրի· և յայս նիշ տեղւոջ գտանես զծառերկձղի· և առեալ զհանդերձս որ անդ կան բերցես այսր· և յորժամ աշակերտն գնացեալ եգիտ զնմ՟ 'ի ծածուկ ներբեր առ հայրն· և նա՛ առեա՛լ զնն՟, ասէ ցմերկ մուրացիկ աղքատս, եկէք զի մերկէք· զայս առէք և զգեցարուք։ իսկ նք՟ զայն տեսեալ ծանեան զոր ինչ եդեալ էին· և յոյժ զահի հարան։ Այլ սյ՟նպէս որք զայլոց հանդերձս դաւաճանութ՟բ խնդրէին զիւրեանցն ամօթով առին։

Երկու մեծատունք էին առ միմեանս մեծաւ թշնամութ՟բ վառեալք· որք հանապազ սպասէին ժամու թէ ո՟ք մինն զմիւսն կալցի կամ սպանցէ· և էր ում՟ն չարագործ միոյն 'ի նոցանէ ծառայ· և յայնժամ այլում ծառայէր· սա՛ եկեալ առայն յորումյառաջ ծառայէր· և խոստանայր դիւրաւ մատնել նա 'ի ձեռս ն՟ր· և յոյժ ուրախացաւ՝ խոստացաւ տալ նմա զարծաթ սակս ծառայութե՟ նորին· ապա չարագործն այն գտեալ դիպող ժամանակ՝ մատնեաց զտէրն իւր 'ի ձեռս թշնամւոյն, որ իբրև սպանաւառժամայն դաւաճանողն զայն գնաց առ բարեկամս սպաննելոյն՝ և նովին դաւաճանութ՟բ մատնեաց զսպանողն 'ի ձեռս նց՟· բանս այս վաղվաղակի եկն 'ի յայտ· և կալեալ յայնցանէ որոց կամէր մատնել զպապանօղն՝ հրամանաւ դատաւորին կախեալ եղև զփայտէ. և 'ի խնդրոյ ազգականացն մարմին նր̅ թաղեցաւ՝ բայց մեծ զարմանք եղեն. քանզի 'ի գիշերի թաղեցաւ. և ահա ընդ առաւօտն անծանօթ շունք որոց բազում մարդիկք ականատեսք եղեն՝ զմարմին նր̅ 'ի գերեզմանէն հանեալ 'ի մասունս պատառեցին:

Աբեղայ մի ոմն ցանկայր առաջնորդութե̅ վանաց. բայց զի գիտէր թէ 'ի կենդանութե̅ հօրն ո՛չ կարէր այնմ հասանել. հնարս իմացաւ 'ի ձեռն ուրումն մանկան զոր հայրն վանացն սովոր էր գանել. տուեալ 'ի նա փոքր ինչ մահացու ասելով. եթէ զայս փոշիցանես 'ի կերակուր հօրն հանապազ սիրէ զքեզ. և ոչ ևս յաւելուցի գանել զքեզ. անմեղ մանուկն առեալ զայն փոշին խորհէր խորտիկ ուրում ասելով. զկէան միայն ցանեցից. զի եթէ միւսանգամ հայրն 'ի բարկութի̅ շարժեսցի ընդդէմ ինչ դարձեալ զմնացեալն ցանեցից: Արդ իբրև ձգեաց զայն փոշին 'ի կերակուր հօրն. և նա ճաշակեաց մեռաւ. յայնժամ աբեղայն այն մարդասպան հասեալ յիշխանութի̅ նորին, զնոյն մանուկն զոր և առաջին հայրն գանէր, և նա ասէր 'ի սրտի իւրում բարուոք արարի. զի զկէս փոշոյն պահեցի. արարից դմա ո̅պ և առաջնոցն. զի գտից զշնորհս առաջի նր̅. և սիրեսցէ զիս. ապա անփորձ 'ի չարէն. առեալ փոշին արար նմա Է̅

ո̅պ

ո՟չ և առաջնոյն, և իսկոյն մեռաւ. և յայտնի եղեն իրաւունքն տ՟յ. զի որով ոք մեղանչէ. նովիմբ և տանջեալ լինին:

Յաղագս Երդման. Գլուխ. Ծդ.

ա Երկու քաղաքացիք 'ի խոստովանիլ զմեղս իւրեանց քահանայի. և ո՛չ երկուս կերպս մեղանաց. որ թէ պէտ ըստ ինքեանցն յայտ ծանունք սակայն վ՟նասովորութն. առ վաճառականս թեթև համարին՝ կամ թէ ո՛չ ինչ, այսինքն սուտ ասել և սուտ երդնուլ. և ասեն հայր ո՛չ ինչ կարեմք գնել կամ ծախել. թէ ո՛չ սուտ ասիցեմք և սուտ երդնուցումք. ասէ ց՟նա խոստովանահայրն. մեղքդ այդ ղքիկեն կարի ծանունք. և 'ի փրկչէն արգելեալք. անդ ո՞ւր ասէ. եղիցի բան ձեր այոն այո՛. և ոչն: և ն՟ք պատասխանի ետուն. զայդ պատուիրան ո՛չ կարեմք պահել յառ և տուրն մեր. ասէ ց՟նք քահանայն անսացէք խրատու իմում. և բարւոք յաջողեսցի ձեզ. սուտ մի ասիցէք, և սուտ մի երդնուցուք. այլ ո՟չ կամիք վաճառել զինչս, այն չափ գովեցէք: և ն՟ք խոստացան մինչև ցտարի մի այնպէս փորձել. ո՟չ և քահանայն իսկ 'ի նոցանէ պահանջէր: Յայնմ ամի 'ի հնարից սատանայի, որ միշտ բարւոյն հակառակէ ո՛չ կարացին ծախել: Ապա՛ զկնի տարոյ միոյ դարձան առ խոստովանահայրն ասելով. հնազանդութիւնս այս կարի՛ մեզ վնաս հասոյց. քանզի մարդիկ

'ի

'ի մէնջ զերեսս դարձուցին․ և առանց երդմանց ոչ ինչ կարեմք ծախել։ յայնժամ ասէ քահայն մի՛ երկնչիք, զի այդ փորձութին՝ պինդ հաստատեցէք զսիրտս ձեր, թէ ոչ ինչ՝ ներհակութի, և ոչ ինչ աղքատութի՟ յայդ ուխտադրութենէդ զձեզ ոչ յետս դարձուցէ, և տ՟ր ա՟ծ օրհնեսցէ զինչ ձեր․ և նք՟ խոստացան թէ կարողութե՟ն ա՟յ զխրատ քո և զպատուիրանն ա՟յ զա՟մ աւուրս կենաց մերոց պահեսցուք․ թէ մուրանալ հարկիցէ։

Զարմանք վաղվաղակի երբարձ ա՟ծ զայն փորձութին․ և մարդիկն սկսան առ նմ՟ դիմել առաւել քան զայլ վաճառականս․ և յետ ոչ բազում աւուրց հարստացան մինչև զարմացան ինքանց։ Եւ դարձեալ առ խոստովանա հայրն իւրեանց գոհացան զնմանէ զի փրկան խրատու նորին յայսպիսի մեծամեծ յանցանաց ազատեցան․ և երկրաւոր ստացուածովք փարթամացան։

է՟ Գրեալէ 'ի վարս սրբոյն նիկողայոսի․ թէ այր ոմն փոխ էառ իհրէայէ, և ունելով զերաշխաւոր 'ի վ՟ր սրբոյն նիկողայոսի երդուաւ․ թէ զայն գրամն շուտով 'ի նա դարձուցէ։ Եւ յորժամ շատ ժամանակ զայն դրամն առ ինքն ունէր՝ հրէայն զայն պահանջէր 'ի նմանէ․ և նա՛ պատասխանեաց թէ 'ի քեզ դարձուցի․ և քարշեալ 'ի դատաստան հրաման էառ երդնուլ։ Արդ՝ քրիստոնեայն զգաւազանն մէջ փորեալ և մանր հա տեալ ոսկւով զայն լցեալ ընդ իւր տարաւ իբր թէ սակս յենլոյ 'ի վ՟ր ն՟ր . և կամելով երդնուլ զգաւազանն ետ ցհրէայն զի ըբռնեսցէ զնա . և երդուաւ թէ աւելի տուեալ էր նմա քան զոր էր պարտական . Որդ իբրև դարձաւ և էր 'ի ճանապարհի ծանր քուն եկն 'ի վ՟ր . և այն պէս անկաւ առ ճանապարհաւ ։ Զայն լուեալ հրէայն փութանակի եկն և ետես զդաւաճանութ՟ին . և յորժամ բազում խրատ տայր նմա զի ժողովեսցէ զոսկին ոչ կամեցաւ . մինչև ասէ մեռեալն միջնորդութ՟բ սրբոյն նիկողոսի 'ի մեռելոց յառնիցէ . և խոստացաւ թէ այն պէս եղիցի հաւատացից 'ի ք՟ս և քրիստոնեայ եղէց . և ահա վաղվաղակի մեռեալն յարեաւ և հրէայն մկրտեցաւ ։

Յաղագս ողորմութեան . գլուխ . ՃԷ .

ա՟ Այր ոմն մեղաւոր բռնադատեալ զիւր դուստր՝ եկն առ խոստովանահայր և խոստովանեցաւ զյանցանս իւրոյ մեծաւ զղջմամբ սրտի և յորդահոս արտասուօք . եհարց ցեպիսկոպոսն արդեօք կարիցեմ ցաւօք իւիք . կամ չարչարանօք զինչ և իցէ 'ի տ՟նէ թողութ՟ին մեղաց գտանել ։ ասէ ցնա եպիսկոպոսն . այո՛ կարես առանց երկբայութ՟ե՝ եթէ փոխանակ այսքան մեծի մեղացդ զապաշխարութ՟ի յանձն առնուցուս ։ և նա մեծագոջմամբ աղաղակեաց և ասէ կամիմ, թէ և հազար մահ ինչ հրամայեսցես անձն առնուլ։ Իսկ եպիսկոպոսն յարտասուս շարժեալ 'ի վր̅ թշուառականին, մանաւանդ 'ի վր̅ երանեալ մեղաւորին՝ ասէ ցնա ահա ես քեզ դնեմ զեօթն ամ ապաշխարութ̅ի. և նա ասէ զինչ այս ինձ ամենաչար մեղաւորիս զեօթն ամ ապաշխարութ̅ի միայն դնես. ես թէ 'ի կատարած աշխարհիս կենդանի լինէի. զայս քան մեծագոյն անօրէնութ̅ի անթիւ չարչարանք ոչ կարէի քաշել։ Ապա եպիսկոպոսն ասէ՝ երթ և զերիս աւուրս հացիւ և ջրով միայն պահեսցես։ Իսկ նա առաւել կոծելով և ծեծելով զգլուխ աղաչէր զի ապաշխարութ̅ի փրկութ̅ե դիցէ նմա. յայնժամ եպիսկոպոսն զարմացեալ և ուրախացեալ՝ յոյժ պատուիրեաց նմա զի երթիցէ և զհայր մերն միայն ասասցէ. և ստուգութ̅ե գիտասցէ թէ թողեալ են մեղք իւր. և նա առժամայն սկսաւ մեծաձայն հառաչել՝ և անկեալ յերկիր եհան զոգին։ Այսու գիտելի է զի այսպիսի զղջմամբ սրտի մաքրեալ փոխեցաւ 'ի կեանսն յաւիտենական. և մասնակից եղև սրբոցն 'ի լոյս։

Երիտասարդ ոմն յազդմանէ չարին այնքան ե̅
չարագոյն և 'ի մեծամեծ մեղք անկաւ. մինչ զի վս̅ մեծի ամօթոյ ումեք 'ի մարդկանէ ոչ կարէր յայտնել զն̅ս. սակայն 'ի միտ ածելով զտանջանս դժոխոց զպատրաստեալս չարագործաց. և հանելով յերանութ̅ի և

յուրախութն զոր խոստացեալէ բարեգործաց. այլ և զարհուրելով զօրհանապազ 'ի դատաստանացն ա՟յ 'ի խիղճմտաց զինքն 'ի ներքուստ չարչարեր. և արտասուօք 'ի մարմնի հալեր և մաշեր. Ապա այնորիկ ողորմութբն ա՟յ երկիւղն այն ծառայական յաղթեաց ամօթոյն. և գնացեալ յեկեղեցի անկաւ առ ոտս քահանային. զի խոստովանեսցի զմեղս իւր. և իբրև երաց զբերան իւր. մարդասէրըն ա՟ծ՝ որոյ բնութին անհնարինէ բարութի. և կամօքն զօրութի. և գործն ողորմութի. 'ի նմին ժամու այնքան ետ նմա զղջումն սրտի. մինչ զի քանիցս անգամ սկսանէր զխոստովանութին 'ի հառաչելոյ և 'ի լալոյ ոչ կարացեալ խօսել նուաղէր. Ո այս տեսեալ խոստովանահայրն ասէ ցնա. երթ և գրեա մեղս քո և բեր առիս. և երիտասարդն յանձն առեալ գնաց և գրեաց. և 'ի վաղիւն դարձաւ առ քահանայն. և իբրև միւսանգամ ջանայր խոստովանել բերանով զմեղս իւր. դարձեալ ո՟պ առաջին և նուաղեցաւ. և ոչ ինչ կարացեալ առնել. զքարտէզն ետ ցխոստովանահայրն. զոր ընթերցեալ զարմացաւ. և ասէ ցնա՝ ոչ կարեմ ես անձամբ ինչ խրատս տալ քեզ. յայսմ իրի՝ կամիմ ցուցանել զայն եպիսկոպոսին. և երիտասարդն յանձն էառ:

Իսկ քահանայն եկեալ առ եպիսկոպոսն՝ ետ ցնա զքարտէզն առ յընթեռնուլ ծանուցաւ նմա զա՟մ զոր ինչ եղեն: Արդ՝ յորժամ եպիսկոպոսն

կոպոսն եբաց զ.քարտէզն զամ͞ գրեալս 'ի նմա եգիտ ջնջեալ և եղծեալ. ասէ ցքահանայն զինչ ընթերցաք. ահա ոչ ինչ գոյ գրեալ. զոր իբրև լուաւ քահանայն. հայեցաւ 'ի քարտէզն. և ասէ ցեպիսկոպոսն. գիտասցէ սրբութիւն .քո. զի երիտասարդն զմեղս իւր գրեալ էր 'ի վ͞ր այդր .քարտիզի զոր ես ըն͞թերցայ. և բերին առ սրբութիւն ընթեռնուլ. հաւանութ͞ե նորին. բայց ո՛չ տեսանեմ մարդասէրն ա͞ծ հայեցեալ 'ի զղջումն նորին. զի կատարելապէս պատժեալ մեղքն ն͞ր. արդարապէս տարագրեաց զն͞ս. քանզի ջնջումն գրոցն յայտնապէս ցուցանէ զեղծումն յանցանաց. և կոչեցեալ զերիտասարդն ցուցին նմա. ահա տ͞ր ա͞ծ ջնջեաց զմեղս .քո. ընդ որ հայեցեալ և ինչ անցանաց ծանուցեալ. և առաւել այնու բերկրեցաւ սիրտ ն͞ր և 'ի մեծ ուրախութե͞ն ընդ արձակեցաւ' որ քան յառաջագոյն 'ի կարի տրտմութենէ նեղութե͞ յաղթեալ էր նմա: Ապա ո՛չ ինչ կարդեցին նմա ապաշխարութ͞ի. բայց միայն սիրով խրատ տուեալ նմա զի գոհասցի զա͞յ. վ͞ն առաւել բարերարութե͞. և առ յապայ զգուշ լիցի անձին իւրում:

գ͞ Կին ոմն վառեալ հրով պոռնկութե͞ տռփացեալ 'ի սէր հարազատ որդւոյ իւրոյ. ծընաւ 'ի նմանէ արուզաւակ. ապա զարհուրեալ այնպիսի զազիր գործոյն: յա͞մ ժամու երկնչէր մի գուցէ ըմբռնեսցի 'ի դիւէ, կամ

՚յանկարծամահ սատակեսցի։ Յետ այսորիկ ողորմութ̃ե ա̃յ սկսաւ խորհել բուռն հարկանել ապաշխարութենէ և խրատու առաջնորդին իւրոյ հանդերձ զաւակաւն իւրոյ գնաց 'ի Հռոմ և մեծաւ վստահութ̃ե եկաց առաջի հայրապետին. այնչափ արտասուօք և հառաչմամբ. ա̃մ̃ցն լու 'ի լու խոստովանեցաւ զմեղս իւր մինչ զի զա̃մ̃սին զարմացումն կալաւ. 'ի գիրկս ունելով զտղայն վկայ գործեցեալ անօրէնութե իւրոյ։ Իսկ հայրապետն տեսեալ զայն քան զղջումն կնոջն. և զճշմարիտ ապաշխարութն. 'ի գութ շարժեալ նորին. ո̃ղ ճարտար բժիշկ. կատարելապէս և վաղվաղակի ողջացուցանէ զախտացեալն՝ նա́ և զղջման փորձ առնուլ հրամայեաց նմա զի այնպիսի զգեստիւ անդ զինքն երևեցուսցէ, որպիսի եկն առ որդին 'ի մեղանչելն։ Իսկ նա զամօթն յաւիտենական առաւել համարեալ քան զառ ժամանակեայն՝ զհանդերձս յանձնէ 'ի բա́ց եհան. և եդ՝ միայն շապկաւ եկն առաջի հայրապետին. և զոր օրինակ պատրաստէր առ 'ի հատուցումն փոխարինին. նոյնպէս և բաւական եղոյց 'ի հնազանդելն իւրում։ Զայս զմտաւ ածեալ հայրապետն՝ զի այնպիսի հնազանդութե այն քան ամօթոյ՝ այնչափ ապաշխարութե, ո́չ ինչ մեղաց պատիժ ոչ կարէ ընդդիմանալ առաջի ա̃մ̃ցնց։ ասէ ցկինն՝ թողեալ լիցին քեզ մեղք քո երթ 'ի խաղաղու

թե

թ՟ի և ո՛չ ինչ աւելի կարգեաց նմա ապաշխարութ՟ի։ Զայս իբրև լուաւ ոմն եպիսկոպոսացն՝ և ընդ փարիսեցոյն ընդ դէմ Հայրապետին քրթմնջելով զդատաստան ն՟ր յանդիմանեաց ասելով, վ՟ս այնորիկ այսքան մեղացն ոչ է կատարեալ այս չափակաւ ապաշխարութ՟ի։ Առ որ ետ պատասխանի Հայրապետըն՝ եթէ ես անիրաւաբար արարե յայսմ իրի և ո՛չ բաւական ապաշխարութ՟ի դորին առաջի ա՟յ զօրասցի սատանայ մտանել 'ի մարմին իմ. և զիս չարչարեսցէ յանդիման ա՟մցն. Իսկ եթէ դու անիրաւաբար զիս յանդիմանես՝ 'ի վ՟ր քո կատարեսցի. զայս իբրև ասաց Հայրապետն. առժամայն դևն սկսաւ տանջել զեպիսկոպոսն որով յայտնապէս եցոյց ա՟ծ եթէ կատարեալ էր ապաշխարութ՟ի կնոջն։ Ապա՛ յետ այնորիկ աղօթիւք ա՟մցուն ազատեալ 'ի դիւէն եպիսկոպոսն՝ ուսաւ 'ի չարչարանաց իւրոց յառաջայ ո՛չ նուազեցուցանել զմարդասիրութ՟ին ա՟յ։

Է՟ Լինէ վաճառ ոմն զա՟մ ոք 'ի տուն իւր ընդունէր՝ եթէ չար մարդ լինէր եթէ բարի. և թոյլ տայր նմ՟ խաղալ պարել. հայհոյել, արբենալ. և զա՟մ զազիր գործս կատարել. յաւուր միում կիրակի, մինչ դեռ սափորով գինի հանէր 'ի ներքնատանէն սակս որք նստէին առ դրանն ն՟ր. քան զի տունն լի էր մարդկամբք. ահա ուժգին փոթորակ յափշտակեաց զնա. և յօդն տարաւ առաջի աչաց մարդկան ։ Ո՛րդ՝ յորժամ այսպիսի զնա՛ դևք բարձրացուցին, զզղջացեալ սրտիւ աղաղակեաց՝ի ձայն մեծ ո՛ տ̃ր ա̃ծ զինչ եղիցի ընդ հոգւոյս իմում ։ յայնժամ դևքն զնա՛ ՚ի բաց թողին ՚ի դաշտի միում աւելով ։ որով հետև մոռացար զա̃մ երկրաւոր զստացուածս քո և զմարմինդ ։ և միայն վ̃ս հոգւոյդ քո աղաչեցեր զա̃ծ զղջացեալ սրտիւ ։ ահա՛ յայսմ հետէ այլ ոչ կարեմք տանել զքեզ ։ քանզի բարձրեալն ոչ տայ մեզ թոյլ զկամս մեր՝ի վ̃ր քո կատարել ։ զի առ նա կարդացեր զղջացեալ սրտիւ ։ և եթէ զայս ոչ էիր արարեալ հոգւով և մարմնով զքեզ՝ի դժոխս տարեալ էաք ։ Եւ այսպիսի գտեալ զնա ՚ի դաշտի տարան ՚ի տունն ։ և իբրև առողջացաւ բարի վարս ստացաւ ։ և թողեալ զպանդոկն ոչ ումեք թոյլ տայր խաղալ ՚ի տան իւրում ։ կամպարել և հայհոյել, և այլ ինչ չար գործել ։

Ե Ոմն դիւահարած էին առ այր ոմն առաքինի և սրբակրօն ։ որ հրամայեաց դիւին զի ելցէ յառնէն և զանուն իւր ասասցէ, պատասխանի ետ դևն ։ երեք եմք աստ որ բնակիմք յառնս ։ անուն իմ կոչի փակօղ սրտից ։ քանզի իմ գործ է փակել զսիրտ մեղաւորի զի մի ունիցի զզղջումն՝ յայնժամ եղբայր իմ որ աստ ընդ իս բնակէ ։ անուն կոչի փակօղ շրթանց ։ քանզի ջանայ զի մի՛ մարդ խոստովանեսցի ։ Իսկ եթէ խոստովան լինիցի ։ յայնժամ երրորդ եղբայրն իմ որ և նա աստ բնակէ՝

անուն ունի փակօղ քսակի, զի մի մարդոյ ինչ պակասեսցի ընչից և աղքատասցի. քան զի հոգտանի զի մի առեալ յետս դարձուսցէ. կամ անիրաւաբար զստեղն անդրէն հատուսցէ. կամ փոխանակ զըկելոյ բաւական առասցէ՝ և դա առաւել քան զմեզ հանապազահէ. վ՟ զի թէպէտ երբեմն մարդիկք զղջան և խոստովանին. սակայն հազիւ կամ ոչ երբէք զա՟մ բաւականապէս անդրէն ոչ հատուցանեն. և այսպիսի զինքեանս՝ դատապարտեն. քան զի ոչ թողցին մեղքն. եթէ ոչ առնելն անդրէն հատուսցի։

Յաղագս իմաստութե՟. գլուխ. ճզ.

Զորինչ ասաց 'ի մաստունն՝ թէ 'ի մաստութի՟ փրկէ 'ի մահուանէ՝ այս արդարև այսպէս է. Զի որ և առաջի կայպատմութիս մեզ իբրև 'ի հայելւոջ յայտնապէս երևեցուցանէ. Վ՟ան զի ոմն երի տասարդ յազատ տանէ՝ երագամիտ և հանճարեղ. զկնի մահուան թագաւորին՝ հաւանութ՟բ իշխանացն նստաւ յաթոռ թագաւորութ՟ե. Սա երբեմն եմուտ 'ի քաղաք անծանօթ հանդերձ քանի մի ծառայ իւր տեսանել զվաճառս և զխանութս. ուր վաճառէին զանազան ինչս և իրս մեծագինս, ոսկեղէնս, առծաթեղէնս չուխայս, բեհեզս և այլս. և մինչ դեռ զգնայր և հայէր 'ի վաճառս. ետես զայր մի պատուական ալէխառն. զի նստէր 'ի խանութ՝ եհարց ցնա թագաւորն թէ զինչ մարդ ես, և ինչ ունիս ծախելոյ. պատասխանի ետ թէ 'իմաստասէրեմ. և զիս փիլիսոփայ անուանեն. և զի իմաստութ̃ի ծախեմ, զայս լուեալ թագաւորն ուրախ եղև. և ծիծաղելով ասէ. որքան ինձ 'իմաստութ̃ի ծախես ընդ հարիւր լիտր արծաթոյ. և ալևորն ասէ՝ ընդ այդքան արծաթոյ մի այն մէկ բան քեզ ասեմ. զի եթէ պահիցես յոյժ բարւոք առնես և զթագաւորութ̃ին կարես վարել. ասէ մի ինչ խօսեսցիս ան խորհրդաբար. մի ինչ առնիցես առանց ընտրութ̃ե. եթէ ոչ յառաջ խորհիցիս թէ զինչ յետոյ գալոցէ. և եթէ կամիս աւելի 'իմաստութ̃ի. յաւել զգին ևս։ Օ այս բանս յորժամ այլք ծաղր առնեն. թագաւորն մտախորհ լեալ և խորագոյն խուզեալ, հրամայեաց զարծաթըն համարել և տալ 'իմաստասիրին. և զխրատն զայն պատուիրեաց նկարել յապարանս, 'ի դրունս. 'ի սեղանս 'ի բաժակս ոսկեղէնս. 'ի վարշամակս և 'ի կտաւեղէնս։ ❡ Ետ այսորինակ թգ̃ւորն աճելով 'ի հասակի աճէր և 'իմաստութ̃բ և յա̃մ զօրութ̃է հոգ տանէր. զի ռամիկ ժողովուրդն, զոր իշխանք և մեծամեծք յոյժ տառապեցուցանէին և կեղեքէին՝ 'ի բռնակալութ̃էն նց̃ ազատեսցէ. և զթագաւորութ̃ի իւր յա̃մի արդարութ̃բ կառավարեսցէ. որոյ ազգաւ նախարարք սկսան վրդովիլ. և զի յայտնապէս ոչ իշխէին ինչ առնել ընդ դէմ նր վս խռովութն ժողովրդեանն ընդ դէմ իւրեանց՝ 'ի ծածուկ զոմն վարսավերաց 'ի վարձու կալան որ սովորէր զթագաւորին հերս գերձուլ. զի յորժամ գերծուցու զհերս մուրուաց, ածելով կտրեսցէ զկոկորդն նր։ Արդ՝ յորժամ թագաւորն նստաւ 'ի վր աթոռոյ. զի զմորուսն գերծուսցէ վարսավիրայն. տեսեալ 'ի վր վարշամակին որ թագաւորն շուրջ զպարանոցաւն ունէր. զայս բանս ոսկեթելով նկարեալ. թէ մի՛ ինչ ըսկսանիցես ան խորհրդաբար, եթէ ոչ նախ խորհիցես, թէ զինչ աստեծնանիցի. զարհուրեալ 'ի չար խորհրդոց իւրեանց դեղնեցաւ, և գոյն երեսաց փոխեաւ. և ձեռնն նր դողացաւ զայս տեսեալ թգւորն հարցանէր զպատճառն. և յորժամ այլ և այլ բան պատճառէր. հրամայեաց զնա 'ի չարչարանս մատնել. և ապա ստուգութն իրին եհաս։ Արդ՝ թագաւորն ազատեալ 'ի մահուանէ իսկապէս ծանեաւ թէ լաւէ 'ի մաստութի քան զամմեծութիս. և ոչ ինչէ ցանկալի որ ընդ նմա համեմատի։

Յաղագս Լալոյ. գլուխ. ՃԷ.

Այր ոմն կրօնաւոր անուն յոհաննէս՝ հասակաւ երիտասարդ՝ միամիտ. խոնարհ. միշտ զուարթ 'ի կերակուր և յըմպելիս. և այլ իրս որք 'ի հասարակաց կենցաղավարութն վերաբերիւր ան պարսաւելի ամ եղբարց սիրելի և քաղցր. ոչ երբէք բան 'ի բե րանոյ նջ ելանէր · կամ գործ լինէր , որ զսէր եղբայր ական կ̃ւասէր · ամ̃ցն սպասաւորէր · մանաւանդ հիւանդաց և օտարաց , զորոց ոտս լուանայր · զհանդերձս սրբէր · և որ չափ կարէր ամ̃ցն զսէր ցուցանէր ։ Այս եղբայրս սովորէր երթալ ՚ի պարտէզ վանից · և միշտ տեսանիւր զի լայր և ողբայր · Եւ յորժամ հարցին ցնա թէ վ̃ն էր ողբաս · պատասխանի՛ ետ՝ զի տեսանեմ զծաղիկս , ծառս · թռչունս · և զերկիր հանդերձ ամ̃ պտղովք · հնազանդս գոլ այ̃ ։ Իսկ մարդիկք որոց վ̃ն հնազանդութ̃ն խոստացեալէ կեանք յաւիտենական · զպատուիրանաւ արարչին իւրեանց յանցանեն ։ վ̃ն այնորիկ լամ և վշտանամ ։ Այս կրօնաւորիս քանի մի օր յառաջ քան զմահ · յա̃մ աւուր պլպուլ գայր առ պատուհան նորին · և յոյժ քաղցր ձայնիւ երգէր՝ ընդ որ եղբարք զարմանային · և հարցանէին թէ զինչ է այն · ծիծաղեալ իբր խաղալով · պատասխանի ետ՝ հարսնիմ կոչէ զիս ՚ի դրախտն · ՚ի միում աւուր մինչ դեռ սպասաւորէր ՚ի ս̃բ խորհուրդն՝ ետես ՚ի վ̃ր սեղանոյ զլոյսն երկնային · և ՚ի նմին աւուր հիւանդացեալ · մեծաւ ջերմեռանդութ̃բ աւանդեաց զհոգին իւր ՚ի ձեռն արարչին իւրոյ · և բազում սքանչելիս արարած

միջնորդութ̃բ սորին ։

Է̃ Զօրական ումն ունէր զկին · ուստերս և դստերս , զորս յոյժ սիրէր · Եւ յորժամ

հիւան

հիւանդացաւ մերձ 'ի մահ. կնին և որդիքն մերձ առ նմին կալով լային. և իւրաքանչիւր 'ի նոցանէ զողբալն իւր կարիս յիշեր։ Իսկ քաջալերեալ ասէ ցկինն՝ ես ձեզ թողում զեղբայրս. զազգայինս. և զմերձաւորս. զմեծութի՟ս զստացուածս. և զայս ա՟մ և առաւել ևս թողում որդւոց 'իմոց. և լսելով զլալումն ձեր և որդւոց 'իմոց՝ ոչ ոք 'ի ձէնջ ողբայ զիս։ զի 'ի ջանեմ 'ի հող՝ ո՞ւր գիտեմ զի ո՛չ ոք բարեկամ գտանեմ. ո՛չ մեծութի՟ս. ո՛չ ինչս, այլ միայն մերկ երթամ ո՛չ գիտեմ զինչ հարցանիցեն ցիս. կամ զով խորհրդակից գտանիցեմ. կամ. ո՞ւր զօթևան. ունիցիմ. վ՟ն որոյ զի՛ լայք, ո՛չ վ՟ն իմ, այլ վ՟ն ձեր. ես զիս 'ինքնին լացից։ Եւ կոչեցեալ զծերակոյտս քաղաքին. ընջեաց զձեռագիր կտակին. և զկէս ինչ իւրոյ ետ աղքատաց,

Յաղագս· Ղազարէ գլուխ· ԽԲ·

Սուրբ հայրն փամփիլոյ՝ զի ո՛չ գիտէր կարդալ. գնաց առ ոմն ընթերցող զի ուսանիցի զսաղմոսն. և յորժամ լուաւ զառաջին տուն սաղմոսին երեսն երրորդին ութերրորդին զայն որ ասէ. Ասացի թէ պահեցից զճանապարհս իմ, զի մի՛ մեղայց լեզուաւ 'իմով. զերրորդ տունն ոչ կամէր լսել. ասելով եթէ զայս գործով կատարեցից. այս տուն սաղմոսս ինձ բաւական եղիցի. և յորժամ վարպետն որ զայն տուն սաղմոսին ուսուցեալ էր նմա, յանդիմանէր զնա . զի զվեցամիս ոչ եկն առ նա : պատասխանի ետ թէ չև ևս գործով կատարեցի : Յետ այսորիկ յորժամ ամս եկաց՝ ոմն 'ի ծանօթից նորին եկն եհարց ցնա եթէ ուսեալ իցէ զսաղմոսն զայն . ասէ զքառասուն և զինն ամ՝ թերևս կարացի կատարել զայն :

բ̅ Դարձեալ նոյն հայրն . այն չափ մեծաւ զգուշութ̅ պահէր զլռակացութ̅ի . մինչ զի յորժամ եպիսկոպոսն Թէոփիլոս եկն առ նա զի խրատ ինչ հոգևոր լուիցէ 'ի նմանէ . երանելի այրն զիւր սովորական լռութ̅ին այնքան պահեաց . մինչ զի և ոչ բան մի ոչ խօսեցաւ ընդ նմա . և յորժամ կրօնաւորքըն յանդիմանէին զնա զի ոչ խօսեցաւ ընդ եպիսկոպոսին . պատասխանի ետ՝ թէ լռակացութ̅իս իմ ոչ պահեսցէ զնա . և ոչ 'ի խօսիցս իմ օգտեսցի :

գ̅ Ոմն հայր վանաց գնացեալ ուրեք տարաւ ընդ իւր զոմն աշակերտաց իւրոց . և հրամայեաց նմա պահել զձիս ընդ հովիւս 'ի դաշտի . և ահա 'ի մէջ գիշերի յորժամ ամենեքին 'ի քուն մտին՝ կրօնաւորն այն հսկէր յաղօթս . և գող եկեալ առեալ զձին փախչէր . զայն տեսեալ կրօնաւորն ոչ խօսեցաւ . առաւել կամէր զձին կորուսանել քան թէ զլռակացութ̅ անցանել ըստ հրամանի կանոնաց . քան զի եթէ ձայն տուեալ էր և լռուկացեալ . գողն զձին թողեալ էր թերևս և ինքն փախուցեալ · բայց զմի 'ի հովուացն զարթոյց, և նշանաբար եցոյց զեղեալն ։ Արդ 'ի վաղիւ ընդ առաւօտ տեսանեն · և ահա գողն ոչ 'ի բացեալ 'ի տեղւոջէն յայնմանէ կայր, հանդերձ ձիովն · զոր կալեալ կապեցին և առ հայր վանացն ածին ։ Իսկ հայրն իսկոյն հրամայեաց տալ նմա հինգ դահեկան՝ ասելով ոչ է արժան · զի իցէ առանց վարձու որ զամ՟ գիշեր մեծ աշխատութ՟ի կրեաց ։

Երկու եղբարք կրօնաւորք բնակէին 'ի սենեակս խուցեանց առանձին · և մին 'ի նոցանէ յորում անուն էր Մարինոս · և առաւել միամիտ երևէր՝ որ չկայր յորում ոչ տեսանէր զսատանայ · կամ յարթնութե՟՝ կամ յանուրջս · և այն քան մինչ զի ընդ նմա սաղմոս երգէր · և զայլ աղօթս և պաշտօնս 'ի փառս այ՟ կատարէր ։ երբեմն 'ի կերպարան լուսաւոր հրեշտակի երևէր նմա · և պատուէր տայր զգուշ լեր մի ընդ ումեք 'ի մարդկանէ խօսեսցիս, որով հետև արժանի գտար զհրեշտակ տեսանել և ընդ նմա խօսել ։ Իսկ նա իբրև զհրաման այ՟ առեալ՝ յեղբայրական խօսակցութենէ 'ի բաց եկաց · և այն քան պնդութե՟ զլռակացութե՟ բուռն եհար · մինչ զի ընդ եղբօր իւրում նախ՝ յետոյ ընդ հօրն վանացն որք զնա յոյժ բռնադատէին զի ընդ նմա խօսեսցի · ամենևին ոչ կամէր խօսիլ ։ Ապա հայրն վանացն բռնութե՟ բացեալ զդուռն սենեկի նր՟ զեղբայրն այն կամա

պաշտ

պաշտպան եհար ոմն արժանէր · և հաւանեցոյց 'ի պատասխանելն · և նոյն ժամայն խրատելով զնա յաւել աւելով · ոչ գիտես զի հին թշնամին հակառակ ա̃մ գործոց բարեաց իշխեաց զլռութի̃ 'ի վ̃ր քո դնելով · զի և դու զեղբօր շահն կորուսանիցես · և այնք որք քև օգտեցեալ լինէին · ոչ կարեն զքո օգնականութի̃դ առ 'ի կանգնել գտանել · Արդ՝ վն̃ զի կրօնաւորն այն ոչ 'ի չարութենէ սրտի, այլ 'ի միամտութենէ ընդ դէմ եղբօրըն մեղուցեալ էր · առ ժամայն 'ի միտս իւր եկն · և արհամարհեալ զբանն դիւին՝ զխրատ բարեմիտ հօրն մեծաւ խոնարհութե̃ ընկալաւ :

Է Դ'վանս ուրեք էր ոմն կրօնաւոր որ այնչափ զլռակեցութի̃ պահեալ էր, մինչ զի զվեշտասան ամ ոչ ոք 'ի բերանոյ նր̃ լուաւ · և ոչ բան մի : Դէպ եղև զի 'ի վանս մեծ հուր յոյժ զօրանայր · յայնժամ կրօնաւորն այն տեսեալ թէ 'ի մարդկանէ օգնութի̃ ոչ մնաց · առ ա̃ծ դիմեաց · և փոքր ինչ աղօթեալ 'ի միտս իւր · ապա թոյլ ետ լեզուի իւրում, որ զայսքան ժամանակ լուռ եկաց · զայս բանս բարբառեալ · հուր կաց · և իսկոյն դադարեաց : Ո՜ արմանք հուրն 'ի զօրութե̃ իւր մոռացաւ, և ըստ բանից առն սրբոյ եկաց · և նոյն ժամայն բնաւ շիջաւ :

Յաղագս լսելոյ զբանն կենաց · գլուխ · ԺԸ ·

Յաւուր միում քահանայ ոմն քարոզ առնէր և

զբանն կենաց սերմանէր յականջս ժողովրդեան. անդ կին ոմն ազնուատոհմ մեծաւ յօժարութբ և մտադիւրութբ լսէր զքարոզութն. զոր իբրև ետես թշնամին հոգւոց մարդական. և ոչ կարացեալ տանել. կամէր զնա զրկել 'ի պտղոյ քարոզի. զգեցեալ կերպարան սուրհանդակի. եկն առ նա հանդերձ թղթով և ասէ. թշնամիք զորդիդ քո կալան և սպանին ։ Զայս դաւաճանութն խաբէութեն սատանայի՝ հոգւով ծանեաւ այրն այ. քանզի և մարմնաւոր ականջօք լուաւ՝ վն սպանման որդւոյ նր. և ասէ ցկինն առաջի ամցն. մի երկնչիր տիկին որդիդ քո կենդանի և առողջ է, սուրհանդակդ այդ սատանայ է. էառ ձայնն այն սուրհանդակն իբրև զծուխ անյայտ եղև.

Պ. եղջուկ ոմն ոչ երբէք կամէր լսել զբանն կենաց. այլ միշտ անփոյթ առնել զքարոզութն վարդապետաց՝ սա յորժամ մեռաւ և մարմինն նր բերեալ եղև եկեղեցի, քահանայքն և այլ եկեղեցականք, զկարգ ննջեցելոց 'ի վր կատարէին ։ Պատկեր խաչելութեն քի սկսաւ խփել զականջս իւր. հանեալ զձեռս իւր բևեռացն ։ Զայս յորժամ տեսին ամքն որ մերձ էին. և հիացեալ զարմանային. ոմն 'ի քահանայիցն ասէ ցժողովուրդն. դուք գիտէք զի սա ոչ երբէք կամեցաւ լսել զբանն այ և զքարոզութն քահանայից. վն այսորիկ այժմ 'ի ձեռս սատանայէ. այսպաղ ը̃ գաւ եւ խփեաց զականջս իւր զի մի լուիցէ աղօթից զորս դորա կատարեմք։ Արդ թողեալ զկարգ աղօթից վ՟նի · իբրեւ դատապարտելոյ զմարմինն 'ի դաշտի թաղեցին։

Գրեալ է 'ի գիրս ուրեք պատմութ̃եց թէ ոմն քարոզատու երեւելի և հռչակաւոր կամէր քարոզ ասել 'ի միում աւուր տօնախմբութ̃ն ուր բազում մարդիկք ժողովեալ էին յեկեղեցի · և 'ի նմին աւուր յոյժ հիւանդացեալ էր · վ՟ որոյ եպիսկոպոս այն եկեղեցւոյ յոյժ տրտմեալ և տարակուսեալ վարանէր 'ի միտս իւր ոչ գիտելով թէ զինչ արասցէ։ Եւ մինչ դեռ այսր և անդր շրջէր 'ի վանս իւր · ահա եկն ոմն առ դուռն երեւելի քահայ կուսակրօն ոմ̃ երևիւր, բայց էր նոյն ինքն սատանայ · և տուեալ զողջոյն եպիսկոպոսին · և հայեցեալ ընդ երես նր̃ ասէ · հա՛յր ս̃բ ոմ̃ տեսանեմ տրտմեալես ասէ · ինչ իրաց · բայց ո՛չ է զարմանք · զի այս բազում անգամ պատահի առաջնորդաց · վ՟ զանազան դիպուածոց · զինչ պարտէ առնել · բայց թէ մեծաւ համբերութ̃բ տանել · ցաւի անձն իմ վ՟ քո · սակայն եթէ հրամայես ասա՛ ինձ զպատճառն, զի մեծաւ յօժարութ̃բ պատրաստեմ օգնել քեզ։ Պատասխանի՛ ետ եպիսկոպոսն ճշմարտիւ յոյժ տրտմեալ եմ · քանզի օրս այս յորում բազմութ̃ն յոյժ մարդկան ժողովեալ է · առանց քարոզի անցանի · զի քարոզատուն հիւանդացեալ է։ յայն ժամ ասէ գեն. ո՛վ պատուական հայր՝ յուսա՛ առ ա՟ծ եւ օգնեսցէ քեզ. եւ յոյս ունիմ առնա՛ զինե զայդ պակասութ՟ի լցուսցէ. եւ ժողովուրդն հաւանեալ բաւական համարեսցի։ դու ինքնին գիտես. զի ա՟մ ինչ նորագոյն հաճոյ թուի մարդկան. եւ ես քաջ կրթեալեմ եւ 'ի վաղուց հետէ յայսմ գործի յառաջեցեալ եմ։ վ՟ս որոյ քաջալերեաց. զի այս անգամ ոչ ամաչեսցես, այլ մանաւանդ մեծ գոհութ՟ի ստասցիս. հրամայեա՛ բանալ զգրատուն՝ զի փոքր ինչ նայեցայց 'ի գիրս ա՟ծայինս, վաղվաղակի գտից զոր ինչ կամիմ, ոչէ պարտ յապաղել հնչեցուցանել զանկակն քան զսովորական ժամն։ Ապա եպիսկոպոսն ասէ՝ շնորհակալեմ զքեն, ո՛վ պատուական րաբունի. զի 'ի մեծ դառնութ՟է սրտին զիս յարուցեր. եւ հրամայեաց բանալ զգրատունն. իսկ դեն զի առաւել եւս 'ինա եպիսկոպոսն վասն եղիցի եւ հաստատեսցի. եհարց սակս գրոց մեծամեծ եւ ա՟ծաբան վարդապետաց. եւ նա եցոյց նմա։ եւ դեն փոքր ինչ ընթերցեալ հրամայեաց զանկակ հնչեցուցանել վ՟ս նշան տալոյ առ 'ի քարոզ. իբրեւ այն ինչ եղեւ. եւ անթիւ բազմութ՟ի մարդկան եկին. դեն կերպարանեալ ել յամպիոն. եկն յայնժամ անդ յեկեղեցի ո՟մն այր մի եւ առաքինի, որ տեսեալ եւ ծանուցեալ զնա դեւ գոլ. զարմացաւ. սակայն ոչ ինչ ումեք ասաց. այլ սպասէր վախճանի. Արդ կերպարանեալ քահայն սկսաւ ճառել յաղագս վայելչութե գրախտին. երանութե երկնից արքայութե. տանջանաց դժոխոց. վս մեղաւ որոց և թշուառութեց աշխարհիս այսորիկ. թէ ոչ մարդիկ ք զայնոսիկ դիւրաւ կորուսանեն. և զաստի ՚ի բաց բուռն հարկանեն. և զայս արտաքերեր այնպիսի ուժգնութբ. այնչափ վկայութբ. այնքան առակօք և հաւանութբ. մինչ զի զմտմն ողբումն և ՚ի զղջումն եած: Զկնի աւարտման քարոզութե գնաց առ նա այրն ոք. և տարեալ զնա առանձին. ասէ ցնա ո՛վ եղեկելի և թշուառական խաբեբայ ազգի մարդկան, գիտեմ զքեզ. զի ա՛րդ իշխեցեր զայնպիսի պաշտօն քի և առաքելոց ՚ի քեզ յանձն առնուլ. և թէ պէտ ո՛չ գիտեմ զստոյգ պատասխան. սակայն գիտեմ զի չար դիտաւորութբ զայդ արարեր. վս որոյ երդմնեցուցանեմ զքեզ յած կենդանի. զի ասասցես ինձ զպատասխանն այդ գործոյդ. յայնժամ դևն ասէ. որ ով հետև զիս երդմնեցուցեր, ոչ կարեմ լռել զպատասխանն. ահա ոչ տեսանես զգեցայ զկերպարան քահայի և վարդապետի. և քարոզեցի յանպիսինէն զոր լուար. պատասխան այս է, ահաւ ասիկ լուար թէ որպիսի բարութիս ասացեալ է վս փառաց արքայութե երկնից. նոյնպէս ասէ սակս տանջանաց դժոխայնոց. և յանցանաց ժողովուրդեանդ այդորիկ. և տեսեր թէ որպիսի լալումն ածի զդոսին. ես քաջ ճանա չեմ զբարս գոցա· զի սակաւիկ մի մոռացցին զա՟մ բանս իմ, և ոչ ինչ արդեամբք կատարեսցես զոր ինչ խոստացան· ուստի ա՟մ բանքըս այսոքիկ զոր լուան· եղիցի ն՟ց առաւել դատաստան և յանդիմանութ՟ի· և զայս ասացեալ անէրևոյթ եղև ։

Յաղագս խաղողոյ · գլուխ · ղ ·

Մին մարդ խաղայր նարդ դրամով· և յոր ժամ զա՟մ դրամս իւր կորոյս· 'ի վհատութ՟է և ինեղութ՟է առեալ զաղեղն ձգեաց զնետն յերկինս· իբր թէ զա՟ծ կամելով խոցոտել և ահա առժամայն նետն առաջի ն՟ր անկաւ արեամբ թաթաւեալ· զոր տեսեալ թշուառական այն սկսաւ դառնապէս լալ և կոծել· և խոստովանեալ զմեղս իւր զզջմամբ և ապաշխարութ՟բ, զառաջինն վարս ստացաւ· և մինչև 'ի մահ աղօթիւք և արտասուօք զկեանս անցոյց· ա

'Ի ժամանակի թէոդորոսի ինքնակալի· ոմն սինկլիտոս հռոմայեցի· յորժամ էր սաստիկ սով 'ի գաւառի բուրկուն դիոյ՝ ժողովեաց 'ի մի տեղի քան զչորս հազար աղքատ, որք ոչ ինչ ունէին ուտել· և կերակրէր զն՟ս զա՟մ աւուրս սովոյն· և յորժամ սովն էանց հրամայեաց զա՟մն յիւրաքանչ իւր տեղիս իւրեանց զն՟տ տանել· և ահա յերկնից ձայն լսելի եղև առ նա որ ասէր· ով սիրելի քեզ և զաւակի քում 'ի յաւիտեան մի' պակասեսցի բ

հաց. որով հետև 'ի ժամանակի սովոյ յան
դամսիմ խնամարկեցից զես.

Յաղագս խաչին՝ շաբաթին գլուխ լա.

ա Մին քարտուղար 'իմաստուն և բարեսեր. երբեմն խաբեաց զնա կախարդ. և տարեալ զնա 'ի տեղին ուր կոչեալ էր զդևս. խոստանալով նմա մեծամեծս և բազում մեծութիս. և ահա՛ ետես զեթովպացի մի մեծահասակ 'ի վ՟ր բարձրագահ աթոռոյ բազմեալ. և շուրջ զնվաւ այլք եթովպացիք հանդերձ նիզակօք և գեղարդեամբք. յայն ժամ մեծ եթովպացին այն կոչեաց զկախարդըն ասելով. զինչ է այդ պատանեակ. և նա պատասխանեաց տէր իմ ծառայ ձեր է. յայն ժամ դարձաւ սատանայ առ քարտուղարն և ասէ. եթէ կամիս ինձ մատուցանել զերկրպագութի՟ն ա՟ծային. և իմ ծառայ լինել. և զք՟ս ուրանաս նստուցից զքեզ ընդ աջմէ իմ մէ և բազում մեծութիս տաց քեզ: Իսկ քարտուղարն խաչակնքեալ զինքն յայտնապէս խոստովանեցաւ զինքն գոլ ծառայ ք՟ի և իսկոյն ա՟մ բազմութի՟ դիւացն յերկիր կործանեցաւ: Յետ այսորիկ յորժամ քարտուղարն ընդ տ՟ն իւրում յեկեղեցի եմուտ՝ և առաջի փրկչական պատկերի երկոքին կանգնածէին. տէրն այն նայէր անթարթ 'ի քարտուղարն, զոր տեսեալ տէրն զարմանայր. և հրամայեաց պատանոյն յաջմէ իւրմէ կանգնել. և ահա տեսանէր զի պատկերն յայն

կողմն

կողմն զերեսս դարձոյց. և մեծաւ զգուշութէ՟ 'ի քարտուղարն նայէր. դարձեալ հրամայեաց պատանոյն 'ի ձախմէ իւրմէ կանգնել և ահա պատկերն միւս անգամ յայնկողմ զաչս իւր դարձոյց և 'ի նա մեծաւ քաղցրութէ՟ հայէր. յայնժամ տ՟րն երդնեցոյց զնա զի պատմեսցէ նմա թէ իւիւիք այսպիսի հաճոյ եղև տ՟յ. զի պատկերն 'ի նա մեծաւ քաղցրութէ՟ նայէր. պատասխանի ետ թէ ոչ ինչ բարի մասն ունիմ. միայն զայն զի ոչ կամեցայ զք՟ս ուրանալ առաջի սատանայի:

Թ̄ Յերկիրն սպանիու էր ոմն կախարդ խիստ չար և դառնաշունչ. առ որ ոմն երիտասարդ յարեցաւ զի ընչիւք մեծասցի. 'ի միում աւուր եկն ընդ վարդապետին և տ՟ն իւր ում 'ի ծառատունկ ինչ. և այնպէս թուեցաւ նմա իբր թէ առ եզր գետոյն եկեալէին. և այն կոյս գետոյն ապարան յոյժ գեղեցիկ և զարմանալի ետես, հարցանէր ցվարդապետն իւր թէ զի՞նչ իցէ ապարանն այն: պատասխանի ետ տ՟ն իմոյ. և առ նմա 'ի գիշերիս այս միկ յօթևանս կալցուք. և դու պատրաստ կաց զի հանդերձ մեծ արանօք գայց ես առաջի նր՟: Յայնժամ սկսան ընդ գետանցանել. պահապանն աղաղակեաց. ո՞վ է այն որ ընդանցանէ: պատասխանի ետ կախարդն. ես եմ բարեկամ տ՟ն արքային. յայնժամ զկամուրջ 'ի ջուցին. և ահա ի̃, երիտասարդք մոմեղինօք հանդերձ բազում գնդիւ զօրա-

կանաց

կանայց ելին ընդ առաջ ն՟ր· և ողջունեցին զնա· և յորժամ տարան զն՟ն 'ի ներս թագաւորն 'ի վայր էջ ոսկեղէն աթոռոյ· և ընդ աջմէ իւրմէ նստոյց զվարդապետն· հարցանէր զպատճառն գալստեան· և նա ասէ այնըր աղագաւ եկի զի մեծացուսցես զիմ ընկերս զայս· և թագաւորն եհարց ցպատանեակն· կամիս ուրանալ զհայր և զորդի և զհոգին ս՟բ: Իսկ պատանեակ հիացեալ՝ և զաչս իւր վերացուցեալ խաչակնքեալ զինքն ասելով· ես զիս անձն առնեմ հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ· և ահա՛ նոյն ժամայն ապարանն այն հանդերձ թագաւորաւ և կախարդիւ և ա՟մ բազմութ՟բ իջին 'ի դժոխս· միայն երիտասարդն մնաց լի՛ ահիւ և դողութ՟բ·

Յաղագս խոստովանութե-ԲԷ· Գլուխ· ՃԷ·

Թագաւորին ընկուռու զաց մեծ և յաղթող· յաւուր միում յորժամ ծովն բարձրանայր ելանէր 'ի ցամաք· հրամայեաց զաթոռ իւր դնել առ եզր ծովուն· և ասէ ցծով քեզ հրամայեմ զի մի մտանիցես յերկիրս իմ· և մի թացցես զհանդերձս իմ· և մի զոտս ո՟տն քո իշխեսցես թանալ: Սակայն ծովն ելանէր 'ի ցամաք, և թանայր զոտսն ն՟ր· և յորժամ այս այսպիսի եղև· 'ի բաց վազեալ թագաւորն ասէ գիտասցեն ա՟մ բնակիչք աշխարհի· զի տկար և թշուառական է զօրութիւն թագաւորաց· և ոչ արժանի անուանիլ թագաւոր·

ւոր. միայն նա որում երկինք երկիր և ծով հնազանդին նմա: Եւ ապա յետ այսորիկ ոչ ևս յաւել դնել զթագ ոսկի 'ի գլուխ իւր. այլ եդ զնա 'ի գլուխ պատկերին 'ի խաչելութեն Քի. 'ի փառս թագաւորի անմահի:

Եպիսկոպոս ոմն նստաւ աթոռ եպիսկոպոսութե փարեզ մայրաքաղաքի. զոր լուեալ մայր Նր աղքատ պառաւ եկն 'ի քաղաք և մտեալ առ ոմն մեծատուն. ասաց նմա զինքն լինել մայր եպիսկոպոսին. և մեծատունն զգեցուցանել նմա հանդերձ մեծագինս. շքեղութե տարաւ զնա առ եպիսկոպոսն. և ծանոյց նմա թէ մայր Նրէ. և եպիսկոպոսն ուրաստ եղև թէ ոչէ դա մայր իմ. և ոչ ճանաչեմ զդա ասելով. այս կին երևելի գոլ մեծազգի և մեծատուն. և ես որդի եմ ուրումն աղքատ պառաւի որ ոչ ունէր զարդըս. և ոչ զհանդերձս մեծագինս: Ոդա՛ եթէ այնպէս տեսանէին, իսկապէս ճանաչէի մայր իմ լինել: Իսկ նա զամօթի հարեալ և հանեալ յանձնէ իւրմէ զզարդն. և զգեցեալ զիւր խոշոր հանդերձն, եկն առ որդին, զոր մեծաւ պատուով ընկալաւ. և մինչ և 'ի մահ պատուէր: Որդ՝ յորժամ այսքանս տարածեալ եղև. այնչափ յամցունց փառաւորեցաւ՝ մինչ զի եթէ էր ծնեալ 'ի մեծ և յազնուական զարմէ՝ ոչ երբէք զայնպիսի փառս ստացեալ լինէր: Է

Իշխան ոմն մեծապատիւ և ազնուատոհմ, Ը

վ̃ սիրոյն ք̃ի կրօնաւոր եղև . և կամելով իւր ձեռօք վանս շինել . տանէ 'ի տուն մուրանայր զկաթն վ̃ եղբարց և արուեստաւորաց ։ Յաւուր միում ունելով լի՛ կաթամբ՝ 'ի փողոցս քաղաքին պատահեցաւ որդւոյն իւրոյ . որք մեծաւ շքեղութե̃ և փառօք հեծեալ 'ի ձիագայեն . և ո՛չ ունելով ուրե՛ք խոտորիլ . սկսաւ փոքր ինչ մարդկօրէն զգալ՝ և յամօթոյ շարագունիլ . բայց առժամայն զայրացեալ 'ի միտս իւր , և սրտապնդեալ մինչ դեռ էր առաջի աչաց որդւոյն , վերացուցեալ զսափորն շրջեաց 'ի գլուխ իւր . և զա̃մ մարմինն կաթամբ եթաց , ասելով ո՛վ անամօթ . յամօթ համարեցար զաղքատութի̃ն ք̃ի , ունելով 'ի ձեռին զկաթն . ահա՛ այժմ ցոյց 'ի վ̃ր գլխոյդ քո , զոր բառնայիր ձեռօքդ ։ Արդ՝ ո՛վ իցէ որ ոչ զարմասցի ընդ այս քան խոնարհութի̃ և համբերութ̃ի և քաջութ̃ի . այնպիսի ազնուական մարդոյ ։

Յաղագս խոստովանութե̃ գլուխ . ԿԴ.

Երիտասարդ ոմն ա̃մ հեշտութեց և ցանկութեց մարմնոյ ընկղմեալ , յա̃մ առաւօտու զա̃ծ աղաչէր . զի մի՛ մեռանիցի , եթէ ո՛չ նախ յայտնեսցի նմա վ̃ մահուան իւրոյ . 'ի միում աւուր մինչ դեռ աղօթէր և զնոյն հայցէր յա̃յ . ահա՛ հրեշտակ երևեցաւ նմա ասելով . լսելի եղեն աղօթք քո ո՛չ մեռանիցես . եթէ ոչ նախ ծանիցէ վ̃ քո եղանելոյ աստէ յաշխարհէս, ընդ որ նա վստահացեալ՝ եւս քան զեւս զանձն իւր ընկղմեաց 'ի հեշտութ՟իս մարմնաւորս, բայց ոչ զկնի բազում աւուրց. 'ի միում աւուր առօտու գլխացաւ զգաց. վ՟ն որոյ ոչ ել 'ի տանէ. ընկերակիցք նորին եկեալ առ նա կոչէին զնա՛ 'ի խրախութ՟ն ընդ իւրեանս. այլ նա ոչ կամեցաւ. յետոյ 'ի տենդէ ըմբռնեալ անկաւ 'ի մահիճս. ազգականք ն՟ր յորդորէին զնա 'ի խոստովանութ՟ն ո՟պ օրէնք քրիստոնէից. եւ նա՛ ետ պատասխանի. հիւանդութ՟իս այս ոչ է ի մահ. վաղվաղակի առողջացայց. յետոյ հիւանդութիւն սկսաւ զօրանալ. եւ բարեկամքն դ՟րձլ խրատտայէին նմա զի խոստովանեսցի. եւ նա՛ ասէ եւ ես զյ՟դ խորհիմ. բայց զի լաւագոյն զիս պատրաստեցից. կամիմ յապաղել մինչեւ ցաւ՟ս թեթեւասցի։ Իսկ հիւանդութիւն եւս քան զեւս սաստկանայր. եւ իւրքն անդադար ստիպէին զնա 'ի խոստովանութ՟ն. պատասխանի ետ թէ այն չափ եմ նուաղեալ մինչ զի հազիւ գիտեմ թէ զինչ խօսիմ. եւ ահա մերձ եղէ 'ի մահ. եւ հրեշտակ երեւեալ նմա ասէ. ժամէ հոգւոյդ քո ելանել 'ի մարմնոյդ. վախճան կենաց քոց հասեալ է. եւ նա՛ սկսաւ տրտնջել եւ գանգատել զա՟յ ասելով. խաբեա՛ց զիս տ՟ր. խոստացաւ ինձ թէ ոչ մեռայց մինչեւ յառաջագոյն ծանուսցէ ինձ վ՟ն մահուան իմոյ. ասէ հրեշտակն, նա՛ մանաւանդ բազում անգամ զգուշացոյց զքեզ. քան զի յոր ժամ հիւանդութ͞նդ ըմբռնեալ էր զքեզ. նոյն ինքն էր զգուշացուցիչ. մանաւանդ յոր ժամ ազգականք խրատէին զքեզ առ 'ի խոստովանութ͞ն. էր երկրորդ զգուշութ͞ն, և ո՛չ կամեցար լսել. վ͞ս որոյ ո՛չ յաւելցի քեզ ժամանակ. հարկէ քեզ մեռանիլ. և այնպէս առանց խոստովանութ͞ե մեռաւ:

է Եպիսկոպոս ոմն յո՛յժ Ճոխափառ և փառթամ ընչիւք. համապազ շուայտութ͞բ և արբեցութ͞բ պարապէր. Սա՛ զխոստովանութ͞ն յանցանաց իւրոց և զբարի վարս ստանալով ընդ երկար ժամանակս յապաղէր. ապա անկեալ 'ի հիւանդութ͞ն. վ͞ս երկիւղի մահուան խոստովանեցաւ. և այլոց խորհրդոց եկեղեցականաց հաղորդեալ մեռաւ. և մեծաւ փառօք թաղեցաւ. զի էր մեծազգի և յոյժ ընչաւէտ՝ ուստի ոմանք համարէին ըզնա ժառանգորդ լեալ արքայութ͞ե ա͞յ: Յետ քանի աւուրց երևեցաւ ուրումն 'ի բարեկամաց իւրոց. և ասաց զինքն դատապարտեալ գոլ. և նա՛ ասէ. զի ա՛րդ՝ ո՛չ ապաքէն խոստովանեցար և այլոց խորհրդոյ եկեղեցականաց հաղորդեցար. և եպիսկոպոսն ասէ այ ո՛յ այդպէս է. բայց վ͞ս երկիւղի մահուան զայն արարի. եթէ ո՛չ էի մեռեալ, անդրէն միւս անգամ 'ի խաւարական իմ հեշտութ͞նս դառնայի:

գ Ռաբեղայ ոմն մեռաւ և յառաջին հաճախօսէ մինչ յերկրորդ ժամաւուր 'ի դագաղի ղի անկեալ գնիւր· և եղբայրք ըստ սովորութեն շուրջ զնովաւ զսաղմն երգէին· և իբրև պատարագն աւարտեալ եղև մինչ գաւըն ա̃յ· ահա մեռեալն յարեաւ· եղբարք հիացան և յոյժ երկեան· և մերձ եկեալ կամէին ինչ լսել՝ 'ի նմանէ։ Եւ նա՛ ըսկսաւ անիծանել և հայհոյել զա̃ծ և զանունն փրկչին մերոյ· և յորժամ զխաչ տային նմա համբուրել զաղրալից շրթամբք թքանէր· զամենաս̃բ ա̃ծածինն ոչ երկնչէր չարաչար հայհոյելոյ· և ասէր զինչ սաղմոս երգութ̃ե և պատարագաւ վ̃ն իմ բարեխօսել ջանայք, որով հետև յանդունդս դժոխոց իջի· և բելիար զիս իբրև զմի յիւրոցն անհրաժարելի՛ ընկալաւ՝ զթագն իւր պղընձեա́յ անշիջանելի հրով ջեռուցեալ 'ի գլուխ իմ եդ· և զբոցեղէն պատմուճան իւր զգեցոյց· և յորժամ եղբարքն յորդորէին զնա յապաշխարութ̃ի և խոստովանութ̃ի· սկսաւ անիծանել և հայհոյել· և ոչ միայն ոչ կամէր ապաշխարել· այլ և զա̃մ խորհուրդս փրկութ̃ե մերոյ անիծանեալ բերանով անարգէր և դատապարտէր։ Իսկ քահանայք անդադար վ̃ն ն̃ր աղօթէին կուրծս բախէին՝ պահէին· սաղմոս երգէին· լային· արտասուս հեղուն· և ոմ[illegible]արէին օգնել նմա ջանային։ Ապա յետ այսորիկ ամենազօր ա̃յ մարդասիրութ̃ե ճառագայթ ծագեաց 'ի վ̃ր ն̃ր, և ահա այն յուսահատն յանդունդս ծովու ընկղմեալ էր՝ 'ի վեր· սկսաւ մեծութ̃ե

փրկ

փրկչին մ՟յ օրհնել. 'ի սատանայէ և յորոգայթից նորին հրաժարել. զխաչ ջերմ սրտիւ համբուրէր. ապաշխարել խնդրէր. խոստովանեցաւ զմեղս իւր. զի յետ մտանելոյ 'ի կարգ կրօնաւորութե՟ անկեալ էր 'ի մեղս պոռնկութե՟. և ո՛չ երբէք ասացեալ էր 'ի խոստովանութե՟: Ա՛րդ՝ օրհնելով և փառաւորելով զա՟ծ կենդանի եկաց մինչև ցմիւս օր. Եւ այսպիսի մեծաւ զարմանալեօք դարձեալ առ փրկիչն իւր մ՟բ խոստովանութ՟բ և դաւանութ՟բ էլ յաշխարհէ աստի: Ա՛ստանօր յատնապէս երևեցաւ զօրութ՟ի աղօթից եղբարցն որ գրէ թէ յանդնդոց դժոխոց զայնպիսի աւար 'ի դուրս հանին:

Դ Յաւուրս պահոց քառասնորդաց քահայ ոմ՟ յեկեղւոջ նստեալ խոստովանեցուցանէր զժողովուրդն. և ոմ՟ սովորութինէ. ոմանք գային և այլք դառնային. ահա ոմ՟ եկեալ ոմ՟ երևիւր երիտասարդ և ուժեղ կայր 'ի մէջ այլոց. և սպասէր ժամու խոստովանութե. և իբրև եբաց զբերան իւր առ 'ի խոստովանել. այն չափ և այն քան ծանր և չարագոյն մեղս 'ի վ՟ր իւր բարդէր. այնքան մարդասպանութ՟իս. գողութ՟իս. հայհոյութ՟իս. ստախօսութ՟իս. խռովութ՟իս. և զայլ սոցին նմանս, որոց զինքն ասէր լեալ առաջնորդ պատճառ յորդորիչ զի քահայն զարշութեն և 'ի ձանձրութե՟ նեղացեալ. ասէ ցնա եթէ հազարամաց լեալ էիր կենդանի՝

շատ կարի զայդ քան ծանրագոյն և մեծամեծ մեղս գործեալ էիր. առ այն ետ պատասխանի կերպարանեալ երիտասարդն. աւելի՛ ունի քան զհազար ամ. յայնժամ քահայն առաւել զարհուրեալ ասէ. ո՞վ ես դու. պատասխանի ետ սատանայ եմ մի՛ յայնցանէ որք ընդ բելիարայ յերկնից անկաք, սակաւ և դու զնա քեա՛ մասն մեղաց իմոց ասացի. եթէ կամիս ունկն դի՛ր լինել մինչև իսպառ պատրաստեմ զա͞մ մեղս որոց ո՛չ գոյ թիւ առաջի քո խոստովանել: Իսկ քահայն գիտելով թէ մեղքն սատանայի ան բժշկելի են. ասէ՛ ցնա զի՛ կայ քեզև խոստովանութ͞ե ո՞վ սատանայ։ պատասխանի՛ կայի քեզ յանդիման և տեսանէի զմեղաւորս որք առ քեզ գային՝ և արդարացեալք դառնային մեծաւ մտադիրութ͞բ լսէի զասացեալսն 'ի նոցանէ. և զոր ինչ պատասխանի 'ի քէն առնուին. և զի զկնի ծանր յանցանաց խոստանայիր ն͞ց զթողութ͞ի և զկեանս յաւիտենականս՝ և ես ակն ունելով յայն͞մ հասանիլ եկի խոստովանիլ զմեղս իմ: Իսկ քահայն մեծաւ վստահութ͞բ պատասխանեա՛ց նմա. եթէ կամիս լսել խրատու իմում. և զճշմարիտ ապաշխարութ͞ի կատարել փոխանակ յանցանաց քոց. զոր օրինակ այնոքիկ զորս տեսանէիր, զի աստի ելին գնացին. զնոյն թողութ͞ի ընկալցիս: Ասէ՛ սատանայ եթէ կարէ լիապաշխարութ͞ի առ 'ի բառնալ դիցես 'ի վ͞ր իմ, արարից և քահանայն ասէ, յոյժ թեթև ապաշխարութ՟ն եդից 'ի վ՟ր քո, փոքրագոյն քան զայնոցիկ որք այժմ խոստովանեցան. երթ և երիցս անգամ անկեալ երկիրս, ասասցես տ՟ր ա՟ծ արարիչ իմ. մեղայ առաջի քո թողութ՟ի շնորհեա ինձ. արդ միայն եղիցի քեզ ապաշխարութ՟ի քո։ Ասէ սատանայ, զայս ո՛չ կարեմ առնել. զի յոյժ ծանր է. և քահանայն ասէ. Է՞ր վ՟ս այս քան սակաւ բան քեզ ծանր թուի. և նա ասէ, ո՛չ կարեմ այդ չափ խոնարհիլ. բայց զոր ինչ միանգամ այլ գործ ինչ հրամայես յօժարութ՟բ կատարեցից։ Յայնժամ բարկացեալ քահանայն ասէ. ո՛վ սատանայ որովհետև այդ քան է հպարտութ՟ի սրտի քո, մինչ զի ո՛չ կամիս. և ո՛չ կարես այն չափ փոքուիրի խոնարհիլ առաջի արարչին քո. 'ի բաց գնա յինէն. քան զի ո՛չ աստ՝ և ոչ 'ի հանդերձելում ողորմութ՟ի ո՛չ գտանես 'ի նմանէ. առ այս ձայն առ ժամանայն աներևոյթ եղև։

Ե Երիտասարդ ոմն գնաց 'ի ծառատունկ ուրեք չար դիտաւորութ՟բ մտաց զի անդ նստեալ հային ան պարկեշտ կանայք. և ահա սատանայ ընդ առաջ պատահեալ նմա ասէ Ե՛րթ ուր երթաս բարւոք հատուցից քեզ յիւրում ժամանակի. իբրև գնաց յառաջ երևեցաւ նմա տ՟ր ք՟ս 'ի կերպարանս աբեղայի, եհարց զնա ուր երթաս որդեակ. և նա ասէ, դու ոչ ես հայր իմ. և տ՟րն ասէ, ե՛ս եմ հայր քո․ և եցոյց նմա զձեռս և զկողս իւր արիւնաթաթախ ասելով․ ո՞չ հաւատաս եթէ ես եմ հայր քո․ յայնժամ երիտասարդն ասէ․ ա̃ծ իմ և տ̃ր․ ասէ ք̃ս գնա́ և խոստովանեա́ զմեղս քո․ քանզի այնմոր այժմ քեզ պատահեալ էր սատանայէ և սպասէ քեզ սատակել․ իբրեւ երիտասարդն 'ի մայրեաց․ ունելով յօժարութի̃ խոստովանիլ․ սատանայ զնա ո՛չ ծանեաւ․ և յորժամ եհարց ցնա ասելով․ թէ ո՞ խնդրես․ դևն ասէ արդարև ո՛չ ես դու այն․ զի նա բոլորովիմբ մեր է․ և ինձ տուեալ է իշխանութի̃ 'ի վ̃ր ն̃ր սպանանել զնա․ դու այլ ոք ուր իցես։ Երիտասարդն գիտացեալ զմարդասիրութի̃ ա̃յ 'ի վ̃ր իւր․ եմուտ 'ի վանս խոստովանեալ զմեղս իւր․ և բարի վարուք փոխեցաւ աստի։

Երկու կրօնաւորք քահանայք մոլորեալք 'ի Ղ̃
լերինս ուրեք ճանապարհ խնդրէին գտանել․ և ահա տեսին զայր մի կարճահասակ․ զոր յորժամ կոչէին զնա́ փաղչէր 'ի նոցանէ և ոչ ինչ տայր պատասխանի․ բայց իբրև ստիպէին զնա և հարցանէին․ թէ ինչ մարդ ես․ ասէ զերեսուն ամ ծառայեմ դիւաց․ զիս ն̃ց մատնեցի․ և զդրոշմ ն̃ց կրեմ 'ի ձեռս իմ, զանազան կերպարանօք ինձ երևէին․ զոր ինչ հրամայէին կատարեմ հանապազ։ Մին 'ի նոցանէ սկսաւ ցուցանել նմա մեծութի̃ տանջանաց դժոխոց․ և զունայնութի̃ մեղաց․ և զանսպառ ողորմութի̃ ա̃յ, ընդ որ նա զղջա-

ցեալ խնդրէր զխրատ որով կարիցէ զփրկու
թի̃ անձին իւրոյ գտանել. յայնժամ քահայն
ասէ խոստովանեա՛ մեղս քո, քանզի այն քա
նէ զօրութի̃ խոստովանութե̃. մինչ զի զա̃մ
զօրութի̃ սատանայի բեկանէ. զա̃մ բարկու
թի̃ ա̃յ շիջուցանէ. և ա̃մ հոգև որ զարդու
զքեզ զարդարէ. Արդ յայնժամ այրն ա̃յ
կատարեալ զղջմամբ խոստովանեցաւ՝ իս
կոյն դրոշմն սատանայի անկաւ 'ի ձեռաց նր̃։
Յայնժամ ասեն ցնա քահայքն. արդ զի ա_
ռաւել ևս ստուգագոյն ծանիցես զզօրու
թի̃ խոստովանութե̃ սրբոյ. կա՛ց աստ համար
ձակ. և յորժամ դևն յորում մատնեալ էիր
զքեզ. եկեսցէ առ քեզ և ո՛չ ծանիցէ զքեզ.
գիտեա՛ զի տ̃ր ա̃ծ եթող զյանցանս քո։ Իսկ
նա յուսալով ողորմութի̃ ա̃յ. աներկիւղ սպա
սէր դիւին. իբրև գիտացին քահայքն. ահա
մեծաւ բազմութե̃բ հեծելոց եկն սատանայ.
եհարց ցնա՛ թէ տեսեալ իցէ զծառայ նր̃։
պատասխանի ետ այրն. ե՛ս եմ այրն որ քեզ ծա
ռայեցի զերկեամն ա̃մ. և դևն ասէ՝ սուտ ա_
սես խաբեբայ. աղաչեմ զքեզ տեսեալ ես
զայն խնդրեմ որ զկնիք իմ ունի 'ի ձեռս իւր.
և նա՛ զայն լուեալ գնաց զհետ քահանայիցն.
և ծառայեաց ա̃յ մինչև 'ի մահ։

է Ողջումն առանց խոստովանութե̃ ո՛չ հա
սանի թողութե̃ մեղաց։ և այս այսու
օրինակաւ ցուցանի. քանզի կին ոմն խոստո
վանեալ զմեղս իւր՝ զմի՛ թագոյց, զոր սակս

չար ամօթոյ ո՛չ համարձակէր յայտնել. վ՟ն
որոյ 'ի խղճէ մտաց յոյժ չարչարեալ գնաց
յեկեղեցի. և անկեալ առաջի սրբոյ սեղա
նոյն զա՟մ մարմինն Թանայր արտասուօք. և մե
ծաւ պաղատանօք աղաչէր զա՟ծ. զի զոյն մե
ղք զոր ոչ իշխէր ումեք յայտնել, առանց
խոստովանութե՟ Թողցէ նմա, իբրև զբա
զումժամանակս այսպիսի աղօթէր. քահայն
որ էր յայնժամ յեկեղեցւոջ. ետես սատանայ
որ 'ի վ՟ր կնոջ այսր անդր Թռչէր. և 'ի խըն
դուե՟ ծիծաղէր. ծափս հարկանէր. և վաշ
վաշ կարդայր. վ՟ն որոյ քահայն այն երդմնե
ցոյց զսատանայ յանուն տ՟ն ա՟յ յ՟ի ք՟ի ասելով.
ո՛վ պիղծ. զի՛ է զի այդ չափ ուրախանաս. ա
սա՛ ինձ զպատաճառ զինչ պատահեցաւ քեզ.
պատասխանի ետ սատանայ, զի՛ արդ ոչ ծիծա
ղեցայց. տեսեալ զայս կին որ կոծելով և ող
բալով ճեպի 'ի դժոխս կործելով ան միտ Թե
լալով և արտասուօք զմեղս իւր զոր ո՛չ խոստո
վանեցաւ կարիցէ ջնջել. յանկարծ լ՟իս ձգտի
ծաղու, և ո՛չ Թողուե՟ արժանի. զայս լուեալ
քահայն գնաց առ կինն՝ զոր ինչ ետես և լո
ւաւ ծանոյց նմա. և զերկ չոտն առ 'ի կատա
րեալ խոստովանութ՟ի ո՟չ կարէր յորդորէր
Իսկ կինն 'ի բաց Թողեալ զամօթն իւր, զմե
ղքն զոր այսքան ժամանակ Թաքուցանէր.
մեծաւ խոնարհուե՟ և արտասուօք խոստովա
նեցաւ, զոր իբրև ետես սատանայ մեծաւ ա
ղաղակաւ և գարշահոտուե՟ զեկեղեցի լցեալ
անյայտ եղև.

Է Եթէ ոք ան փոյթ առնէ զխոստովանութե̄ ո՛չ ինչ բարեգործութի̄ կարէ զնա ՚ի տանջանաց ազատել. որ մի՛ ումեք երկբայելով երևեսցի քանզի այր ոմն արդ արև բարեպաշտօն ունէր կի̄ն ամուլ. որք խնդրէին ա̄յ զաւակ. և խոստովանային տալ զնա ՚ի ծառայութի̄՝ զոր իբրև ընկալան ետուն զնա ՚ի վանս. և նա յոյժ սրբութե̄ ծառայէր ա̄յ. և զի այլ զաւակ ո՛չ ունէին. զա̄մ ինչս բաշխէին աղքատաց. մինչ զի մարդիկք զնա հայրս աղքատաց կոչէին: Յետ այսորիկ կինն անկաւ ՚ի շնութի̄ ուրումն ծառայ ՚ի տա̄ն իւրոյ. և ծնեալ որդի իւրում ձեռօք եսպան զնա. և ընդ մահճօք թաղեաց. ուստի յաւել ողորմութն̄ և ՚ի տուրս կարօտելոց. մեռաւ այրն նր̄. և նա ևս ՚ի պղծագործութի̄ մատնեաց զանձն իւր. և զերկրորդ արու զաւակ ծընեալ զնա ևս ո̄պ զառաջինն եսպան. և ոչ երբեք զայն մեղս խոստովանեցաւ. այլ յուսալով ՚ի մեծութի̄ տրոց աղքատաց. առանց խոստովանութե̄ զփրկութի̄ հոգւոյ իւր խոստանայր. և իբրև հիւանդացաւ և ստիպեալ եղև առ ՚ի խոստովանութի̄ և ան փոյթ արար և մեռաւ՝ և ՚ի դժոխս թաղեցաւ. որդի նր̄ քահոյ լուեալ վա̄ մահուան մօր իւրոյ՝ մեծաւ՛ պաղատանօք աղաչէր զա̄ծ վա̄ նր̄, պահէր, պատարագ մատուցանէր. ճգնէր. զմարմինն չարչարէր: Յաւուր միում մինչ դեռ զպատարագ կատարէր ջերմեռանդ սրտիւ ետես զմայր իւր յանդիման . և երկուս ահագին վիշապս, որք զստինս և զա̃մ մարմին նր̃ չարչարէին . և յորժամ որդին եհարց զմայր իւր թէ ոպ̃ կաս . պատասխանի ետ դատապարտեալ եմ սակս ամօթոյ խոստովանութե̃ . զի ո՛չ ինչ բարեգործութ̃ի օգնէ խոստովանութե̃ . եհարց զնա որդին՝ զի՛նչ նշանակեն այդ վիշապք . և նա ասէ թէ զորդիս զորս պարտէի սնուցանել ձեռօք իմովք սպանի, վ̃ որոյ տուեալեն ինձ 'ի տանջել զիս 'ի յաւիտեան ։

Յաղագս խոստովանութե̃ գլուխ . ՀԳ .

Ի մէջ հօր վանաց և ուրումն աշխարհական իշխանի մեծ խռովութի̃ եղև սակս անդաստանի . և զկնի երկար բանակռուո̃ի 'ի պատերազմի եկին երկոցունց կողմանց բազումք էին զօրավիգք . զժամանակ և զտեղի մարտի սահմանեցին . իշխանն զօրու ծանուսպառազինեալ եկն 'ի հանդէս, զգունդս բաժանեաց . և զա̃մ ինչ 'ի մարտ պատերազմի կազմեաց . իսկ հայրն ո՛չ յերկրաւոր տէգնիզակի, և ո՛չ 'ի զէնս, այլ 'ի փրկիչն իւր յուսացեալ . և որք կամեցան ճակատել ընդ թըշնամւոյն ո՛չ եթող գալ ընդ իւր . բայց միայն զկրօնաւոր իւր նստուցեալ ի ձիս հրամայեաց կնկղով ծածկել զգլուխս իւրեանց . և այսպիսի հանդերձ նոքօք իբրև զբահիւք և սաղաւարտովք ամրացեալովք ունելով ընդ իւրեանս զնշան խաչին 'ի ճակատամարտն եհաս ։ Արդ՝ իշխանն իբրեւ ետես ո՛չ երկաթի զինու սպառազինեալս ո՟ք կարծէր, այլ զերկնային և զհրեշտակական գունդս 'ի հետաստանէ եկեալս ․ այնքան ա՛հ մ՟ծ ային երկիւղին զնա կալաւ ․ մինչ զի իջեալ 'ի ձիոյ ․ և զզէնն յանձնէ իւրմէ 'ի բաց ձգեալ խոնարհաբար ամ՟քն յերկիր անկան ․ և թողութի՟ խնդրեցին ։

Է՟ Պառաւ ո՟մն երթայր 'ի ճանապարհ ․ ետես զերիտասարդ տխուր երեսօք, զինստէր առ ծառ՝ ունելով քսակ լի՛ դրամով ․ եհարց ցնա թէ զինչ եղև քեզ ․ պատասխանի՛ ետ ես սատանայ եմ և մեծաւ փափաքանօք ցանկամ խռովութի՟ ձգել 'ի մէջ այսինչ առն և կնոջն ․ այլ զի ոչ եմ ճարտարաբան լեզուաւ որ է՛ ամ՟էն չարեաց ամիան, վ՟ս այնր ոչ կարեմ կատարել զոր կամիմ ․ բայց զի խօսք քո ճարտար վ՟ս այոր զայս դրամս քեզ տամ զի դու զայն կատարեսցես ։ Եւ պառաւն գնացեալ 'ի տուն կնոջն ծածուկ հաստատէր առաջի նո՟ ասելով ․ թէ այր քո ընդ դէմ օրինաց ամուսնութե՟դ մեղանչեաց ․ և զի ստուգէ, աղջիկ մի մեկնեսցէ առ այր քո, զի առցէ զհանդերձ ընդ ան պատշաճ գործոյն ։ Ապա գնաց առ այրն ծանոյց նմա ասելով ․ թէ կին քո ծանօթութի՟ ունի ընդ ուր ումն քա՟հայի քան զի յորժամ ընդ միմեանս խօսէին, ես մերձ սեան աղօթս կայի, և լուայ զմիմեանց ուխտեցին թէ 'ի վանղիւ 'ի մի տեղ գայցեն։ Ահա՛ տես չար պառաւին զորոգայթ. քանզի սատանայ ա͞մ չարեաց ինքնա գիւտ 'ի բազում ժամանակս ոչ կարաց կատարել, նա՛ 'ի սուղ ժամանակի կատարեաց։ Ապա՛ առաքեաց զաղջիկն զի առցէ հանդերձն. զոր ինքն պառաւն գնեալ էր. յորժամ զայս բանս ծանուցանէր առնն՝ զոր տեսեալ կնոջն զա͞մ ինչ չար կարծէր. և յորժամ յերեկոյ եղև ոչ կամէր ուտել. անկաւ 'ի միտս առն, իբր թէ վ͞ն քահային խորհէր։ Յետ այնորիկ խորհրդով և բանիւ պառաւին քահանայն և կինն ընդ միմեանս խօսեցան. զոր տեսեալ այրն մեծ չար կարծիս կալաւ զկնոջէ իւրմէ։ Յետ այսորիկ պառաւն դարձաւ առ կինն. և խրատ տայր նմա զի զհերս մօրուացն ածելեաւ կտրեսցէ. և կերակրի մէջ ուտել առն տացէ. խոստանալով նմա թէ այրն նր͞ զա͞մ կին օտար ատեսցէ։ Դարձեալ եկեալ առ այրն ասէ ցնա. թէ կին քո ուխտ եդեալ ը͞ն քահային, զի զքեզ յայսմ գիշերի սպանցէ։ Վ͞ն որոյ զգուշ լեր, և յորժամ կինն կամէր ածելեաւ սակաւ ինչ հերս մօրուաց կտրել. այրն կալեալ զձեռանէ աղաղակեաց բերէք ճրագ. բարեկամք ժողովեցան՝ աղմուկ և խռովութի͞ մեծ եղև։ Զոր տեսեալ սատանայ ասէ ցպառաւն. զերեսուն ամ աշխատէի և ջանայի, զի այս խռովութի͞ս ձգեմ և ոչ կարացի. և դու զերիս աւուրս զայս կատարեցեր,

րեցեր, քան զի ունիս ազնիւլեզու դժոխային. Եւ յաւէտ նր̃ արժանես քան զիս. ապա առեալ զնա՛ տարաւ ընդ իւր. բայց ա̃ծ 'ի ձեռն հանճարեղ քահայի որումն զչարութի̃ն դիւին յայտնեաց. Եւ ապա՛ այրն եւ կինն յառաջին սէր եւ միաբանութի̃ն եկին:

Յաղագս խօսից. գլուխ. ՀԵ.

ա̃ Երանելին Նեղոս կրտսեր գովեստի եւ հետեւման արժանի. ունէր սովորութի̃ն, որ տեսեալ զոմանս արս երեւելիս յունաց 'ի պալատէ կայսեր առ ինքն եկեալ՝ եւ փաղչելով 'ի դատարկաբանութե̃ կատարել զաղօթս, եբաց զգիրս զորս ունէր 'ի ձեռին եւ գտեալ պատշաճ ինչ տեղի, զկնի ողջունելոյ զմիմեանս. Ետ ցնս̃ առ 'ի յընթեռնուլ, որք յորժամ եկին 'ի տեղին այն յորում գրեալ էր թէ 'ի տուն հազարաց հազիւ մի հոգի գտանի արժանի փրկութե̃ զարմանային յոյժ: Իսկ երանելին Նեղոս ուստի առեալ զնիւթն բանից, այն չափ եւ այնպիսի պիտանի բանս խօսեցաւ, մինչ զի ա̃մքն յոգւոց հանելով ասէին. վա՛յ մեզ մեղաւորացս եւ թշուառականացս:

բ̃ Ծառայ ոմն ա̃յ 'ի ձմերայնի ճանանապարհորդեալ էմուտ 'ի տուն որում քահայի զի ջ̃եռնուցու: Իսկ որք 'ի տունն էին ունելով զայնպիսի հիւր. ո՛չ միայն զնա ո՛չ պատուեցին. կամ բարի ինչ ուսանել կամեցան.

այլ

այլ ևս առաջի նր՟ բանս աղտեղիս և անպատշաճ խօսէին. անդ էր և դատաւոր տեղւոյն այնորիկ։ Իսկ նա ասէ՝ ցնոսա սիրով՝ որ դևակըք, ո՛չ ապա՞քէն լուայք ՚ի մր՟ աւետարանէն՝ թէ ա՟մ դատարկ բանի համարս տալոցեմք յաւուր դատաստանի. և ապա ասէ, կամէի աստ ջեռնուլ փոքր ինչ առ խարոյկ. բայց ձեր աղտեղի խօսիցդ, հարկէ ինձ թողուլ. և ապա ո՛չ ջեռեալ ոտ՟ պարտէր յարեաւ և թօթափել զփոշի ոտից իւրեանց գնացեալ ՚ի ճանապարհ իւր։ Այլ տես թէ որպիսի պատիժ յա՟յ հեղաւ ՚ի վ՟ր թշուառական արանցն այնոցիկ. քահայն այն որ զինքն և զայլս ո՛չ արգել, առժամայն կուրացաւ. և դատաւորն ՚ի ծածուկ անդամս չարաչար կեղև հարաւ. յա՞յն ժամ զգաստացեալք, բայց ոչ յիւրում ժամանակի, աղաչէին մեծաւ պաղատանօք զայրն ա՟յ, զի դարձցի ՚ի տունն նց՟, այլ ո՛չ կամեցաւ։ Եւ այնպէս մինն ՚ի կուրութե՟ն մնաց, իսկ միւսն ՚ի սաստիկ վիրաց ծածուկ անդամոց մեռաւ։

Սմ՟ն հայր վանաց ձգնազգեաց և առաքինի, Փ
զա՟մ խորհուրդս ՚ի ք՟ս յ՟ս հաստատեալ. զա՟մ հոգս՝ ցանկութիւնս, աղօթս, ընթերցումըն ՚ի հաճոյս նր՟ ուղղէր, նոյնպէս և զընկերակիցս իւր խրատէր. Յաւուր միում վառեալ հոգւոյն սրբով միում ՚ի նոցանէ հրամայեաց՝ զի յանուն ա՟յ բացեալ զբերան վ՟ն աստուծոյ ինչ խօսեսցի որպէս և հոգին սբ՟ տացէ։ Իսկ նա առժամայն վ՟ն հնազանդու-

թէ սկսաւ խօսել զմեծամեծս յազդմանէ հոգւոյն սրբոյն։ Որպ՛ հայրն հրամայեաց նմա լռել. և միւսումն. և նա՛ վն՟ այ՟ խօսեսցի. ոպ՟ հոգւին սբ՟ ուսուցանէ նմա։ Իսկ նա վաղվաղակի ըստ պատուիրելոյն զարմանալի իրս ած՟ային պատմէր հայրն և նմա հրամայեաց լռել. և երկրորդումն հրաման ետ՝ զի առանց խորհելոյ 'ի փառս տ՟ն մերոյ յի՟ քի՟ խօսեսցի ինչ. և նա՛ ըստ օրինակի այլոցն խոնարհաբար գոլով հնազանդ՝ զծածուկ իրս ած՟այինս 'ի յայտ կացուցանէր. ուստի աներկբայաբար երևէր, զի հոգւին սբ՟ խօսէր բերանով նց՟։ Որդ՝ յորժամ յաղագս ած՟այնոցն խօսէին. ահա՛ տ՟րն մեր յս՟ քս՟ 'ի կերպարան գեղեցկա տեսիլ երիտասարդի եկաց 'ի մէջ նց՟. և այն քան քաղցրութ՟ շնորհին իւրոյ լցոյց զնս՟. մինչ զի և հայրն և ամ՟ աշակերտքն էին 'ի զարմացման անկեալք յերկիր իբրև զմեռեալս զաստի կենացս ո՛չ ինչ զգալով. և իբրև եկն 'ի միտս. հայրն ասէ ցն՟ս. սիրելի եղբարք իմ գոհացարուք զմարդասէրէն տ՟նէ մերմէ յէ՟ քէ՟, զի նմա հաճոյ եղև շրթամբք անմեղացն, զգանձս երկնային սերմանել. քան զի նա՛ բանայ զբերանս համրց. և զլեզուս միամտից ճարտարախօսս և 'ի մասնաւորս առնել։

Թագաւորն ընկլուզաց երիս որդիս ունէր և կրտսերոյն ետ զաթոռ թագաւորութե՟. վն՟ զի հարցեալ թէ զինչ խնդրէ իրյ՟ն. եթէ քեզ իշխանութի՟ տուեալ էր խնդրել զինչ և կամեսցիս, պատասխանի ետ՝ զի զվիզ կռունկի խնդրել, միայն զբուն բարուոք և խոհեմաբարս խորհեցեալս խօսել։ Իսկ այլ աւագեղբարք, բայց հանճարով կրտսերք, և խնդրէին զոմ՟ն զքաջութ՟ի. և միւսն զգեղեցկութ՟ի. ոմ՟ն զի զամ՟ն հնազանդեցուսցէ ընդ իշխանութ՟բ իւրով. իսկ միւսն զի զամ՟ն ձգեսցէ առ 'ի սիրել զնա. սակայն կրտսերոյն ոչ ոք յաղթեաց. զի խնդիրն էր հանճարեղ։

Յաղագս ծիծաղելոյ. գլուխ. ԼԶ.

Մատեանք ժամանակագրութ՟նց պատմեն սակս ուրում՟ն թագաւորի, որ հազիւ կամ ոչ երբէք ծիծաղէր։ Իշխանք և նախարարք աղաչեցին զեղբայր թագաւորին զի տեղեկասցի և իմասցի զպատճառ տրտմութ՟ե արքայի, թէ էր վ՟ն հազիւ կամ ոչ երբէք ծիծաղի. այլ միշտ տխուրէ և տրտում զօրն անցուցանէ։ պատասխանի ետ թագաւորն եղբօրն իւրում, թէ յայլ աւուր ծանուցից քեզ։ Յայնժամ թագաւորն հրամայեաց խորագոյն վիհ փորել. մինչև իկեա զայն կայծակամբ հրոյ լնուլ. 'ի վ՟ր հրոյն ասաց զաթոռ դնել հին և փտեալ. և 'ի վ՟ր աթոռոյն սուր երկսայրի կախել զբարակ թելէ. մերձ առ նմին հրամայեաց սեղան դնել՝ պատրաստել լի՝ ամ՟ զանազան կերակրովք. և խորտկովք և անուշահամ գինով. և զեղբայրն իւր նստուցանել 'ի վ͞ր այնր աթոռոյն, չորս սուսերամերկս շուրջ զնովաւ կացոյց. մի 'ի թիկանց. երկրորդն առաջնոյ. երրորդն յաջմէ. և չորրորդն յահեկէ, որք զսուսերս իւրեանց մերձ առ նմա եդին. և հրամայեաց զա͞մ քնարս և նուագարանս առաջի նո͞ր երգել: Եւ ասէ թագաւորն ցեղբա՛յրն իւր, ուրա՛խ լեր և զուարճացիր. կե՛ր արբ, և բերկրեսցի սիրտ քո: Եւ ասէ՛ ցթագաւորն, զիա՛րդ կարիցեմ ուրախանալ կամ ծիծաղիլ, որ յա͞մ կողմանց 'ի մեծի՛ ահկութեն եմ, եթէ նայիմ 'ի խոնարհ տեսանեմ զհուր, եթէ կամիցիմ մերձենալ 'ի սեղան աթոռ փտեալ բեկանի և ի հուր անկանիմ, եթէ հայեցայց 'ի վեր տեսանեմ զսուր մերկ կախեալ վբարակ թելէ, եթէ նայեցայց առաջի իմ կամ յետոյս, յաջմէ կամ յահեկէ յա͞մ կողմանց պաշարեալ եմ մերկ սուսերօք: Եւ այսպիսի որով հեռև անկեալ կամ 'ի մէջ այսպիսի նեղութեց, ո՛չ ուտել, ո՛չ ըմպել, ո՛չ ուրախանալ կամիմ: Յայնժամ թագաւորն ասէ ցեղբայրն, ո՞վ դուկաս այժմ, նոյնպէս և ես յա͞մ ժամ, քան զի եթէ հայիմ 'ի վեր. անդ տեսանեմ զդատաւո՛րն իմոր զիս դատելոցէ. և նմա համարս տալոցեմ, յա͞մ խորհրդոց բանից և գործոց իմոց: Եթէ նայիմ 'ի խոնարհ զմտաւածեմ զհուրն դժոխոց. և զտանջանս դատապարտելոց, ընդ որս 'ի յաւիտեան դատապարտելոցեմ, եթէ հանդերձ միով մա հացու մեղք աստի յաշխարհէս ելանիցեմ։ Եթէ նայիմ զհետիմ, տեսանեմ զմեղսիմ զոր ընդ դէմ ա՟յ կատարեցի և զժամանակ վայրաբար անցուցի, եթէ նայիմ յառաջ և 'ի միտ ածեմ զմահ իմ, առ որ մերձենամ զօր հանապազ. և ոչ գիտեմ զժամ և զտեղի մահուան իմոյ. Եթէ նայիմ յահեակ տեսանեմ զդևս, որք 'ի տուէ և 'ի գիշերի խնդրեն զանձն իմ, և հակառակ կան փրկութ՟ե իմոյ. Եթէ նայիմ յաջմէ տեսանեմ զհրեշտակս ա՟յ. որք միշտ զբարի խորհուրդս ինձ տային. և 'ի չար ճանապարհէ զիս. դարձուցանէին. որոյ աւաղ ոչ արարի բաւական. և ոչ գնացի զհետ բարի խրատուն ն՟ց։ Եւ արդ՝ յորժամ զայս ա՟մ յիս և շուրջ զինև խորհիմ զի արդ կարիցեմ ուրախանալ յայսմ յաշխարհիս կամ իմ՞իւիք զուարձացի սիրտ իմ։

Յաղագս Կամապաշտութ՟ե. գլուխ. ճէ.

Այր ոմն երթայր ընդ կնոջ երբեմն ընդ արտորայս. և ասէ ցնա, տեսանես՝ զի արդ գեղեցկա՟պ և պատշաճաբար արտս հնձեալէ. և կինն ընդ դիմաբար ասէ ոչ է հնձեալ. այլ խուզեալ՝ հակառակ կալով բանից առն իւրոյ. և յորժամ այրն ասէր թէ հնձեալէ. և կինն թէ խուզեալէ. բարկացեալ այրն ընկէց զնա իջուր։ Արդ՝ իբրև այլ ոչ կարաց խօսել, եհան զձեռն 'ի ջրոյն, նշան տալով մատամբ 'ի վերայ մկրատի. ցուցանել մինչև 'ի մահ թէ [illegible] խուզեալէ։ ա՟

Դարձեալ այլ ոմն ունէր կին թէ խիստ ինքնահաւան՝ և կամապաշտ. և յորժամ անկաւ 'ի գետ և հեղձեցաւ. այրն խնդրէր զնա ընդ դէմ ջրոյն գնալ: հարցին ցնա մարդիկք. է՛ր վ՟ն ընդ դէմ ջրոյն խնդրես: պատասխանի՝ ետ կինն հանապազ էր ինձ հակառակ բերանով և արդեամբք. ա՛րդ՝ զոր օրինակ առնէր 'ի կենդանութե. նոյնպէս կարծեմ թէ զկնի մահուան արար, և ա՛յնպէս հաւատամ զի գնաց ընդ դէմ ջրոյն:

Յաղագս կանանց. գլուխ. ՀԸ.

ա Քահանայ ոմն երկիւղած յ՟յ ունէր կին, զոր իբրև զքոյր սիրէր. բայց իբրև 'ի թշնամւոյն խորշէր 'ի նմանէ, ո՛չ երբէք առ ինքն մերձենալ կամ սպասաւորել իւրեան թոյլ տայր նմա: սա՛ բազում ժամանակս կեցեալ. յամի քառասուն երորդի քահայութեն իւրոյ անկաւ 'ի հիւանդութ՟ի մեծ և մերձեցաւ 'ի կէտ մահուան. կինն կարծելով թէ մեռեալ իցէ. զունկն 'ի քիմս ն՟ր մերձեցոյց: Իսկ նա՛ ունելով դեռ փոքր շունչ 'ի յինքն. տեսեալ զնա՛ յայտնապէս ասէ ցնա. 'ի բա՛ց կաց յինէն կին դու չև ևս կայծ ակն շիջեալ է: 'ի բաց տար զխոտն. և իբրև 'ի բաց եկաց 'ի նմանէ. առեալ զզօրութ՟ի ինչ մարմնոյ փոքր ինչ զօրացաւ. և մեծաւ ուրախութ՟բ սկսաւ աղաղակել ասելով. բարի եկիք տեարք իմ, զի՛նչ է այս զի խոտորեցայք գալ առ իս՝ ձեր նուազ ծառայ, գա՛մ գամ, շնորհակալեմ· և յորժամ զայս բազում անգամ կրկնէր, որք շուրջ զնովաւ էին հարցին ցնա՛ թէ ընդ որում խօսիս. և նա զարմացեալ պատասխանի ետ մի՛ թէ ոչ տեսէ՞ք զսբ՟ առաքեալսն եկեալ առ իս, զերանելին պետրոս և պօղոս, արդեօք ոչ տեսանէ՞ք զդոսա ։ Եւ դարձեալ առ սբ՟ առաքեալսն ասէ. ահա գամ, ահա գամ· և զայս ասացեալ աւանդեաց զհոգին իւր առ ած՟ ։ Եւ զի ստուգապէս զսբ՟ առաքեալսն ետես, նոցին շաւղաց հետևելով յայտնի եցոյց. քանզի բազում անգամ արդարոց պատահի 'ի ժամ մահուան իւրեանց զյառաջ ընթաց սբ՟ն տեսանել. զի մի՛ զարհուրեսցին 'ի ցաւագին վճռէ մահուան իւրեանց. մանաւանդ զի 'ի տեսութ՟է երկնայնոցն ընկերակցացն առանց ցաւոց և երկիւղի 'ի մարմնոյ իւրեանց հրաժարեսցեն ։

Ախտն մարդոյ որ չափ 'ի մարմնիէան հաստատէ. վ՟ն որոյ ոչ է պարտ վստահանալ յառաքինութ՟ի իւր. և ոչ հաւատալ ծերութ՟ե իւրում, Ո՜ որ օրինակ քահայն ոմն ած՟ային գրոց յոյժ հմուտ, զկուսութ՟ի 'ի մանկութ՟է պահեալ փրկութ՟ե հոգւոց մարդկան ցանկացեալ. զեօթն ամ բազում արդիւնս մեծաւ գոհութ՟բ յեկեղեցի այ՟ արար բանիւ քարոզութ՟ե իւրոյ. և վարուց օրինակաւ զբազում հոգիս առ Ք՟ս դարձոյց ։ Դէպ եղև զի կոյսն ոմն կ̅ ամաց լեալ. որ սովորէր ե̅

մողեղէն

մտզեղէն քահային լուանալ . միայն առանց ընկերին եմուտ 'ի սենեակ նորին : Եւ զի կարճառօտ ասացից՝ այն քան թշուառութ՟ի մեծ անկան մինչ զի նախ քան զհրաժարիլն 'ի միմեանց , 'ի վաղուց հետէ պահեալ կուսութ՟ն ծաղիկ շուշանի թառամեալ գտաւ . ուստի կինն այն քան 'ի տխրութ՟է ըմբռնեալ եղև . մինչ զի վ՟առաւել դառն արտասուաց և հառաչանաց վաղագոյն մահուան իւրոյ պատճառ լինէր : Իսկ քահայն ներհակորէն 'ի ճաշակել հեշտութ՟է զոր ոչ ճաշակէր իբրև խոզ 'ի տիղմ մինչև 'ի վաղճանթաւալէր :

Եպիսկոպոս ոմն բարեպաշտութ՟բ և առաքինի վարուք զարդարեալ . առ ա՟մ ս՟բս աղօթասէր , այլ առաւել առ ս՟բ առաքեալըն անդրէաս . մինչ զի ա՟մ գործս իւր հանապազ զայս վերնագիրն յաւելոյր 'ի փառս ա՟յ և սրբոյն անդրէի : Իսկ սկզբնաչարն թշնամի հոգւոց մարդկան . նախանձաւորեալ ընդ դէմ սրբոյն, ա՟մ խորամանկութ՟բ իւրով հնարէր թէ ո՟պ զնա կարասցէ պատրել : Ապա զգեցեալ կերպարան յոյժ գեղեցիկ կնոջն, եկն յապարանս եպիսկոպոսին՝ ծանուցանելով թէ կամի առաջի նո՟ր խոստովանել զմեղս իւր : Եւ եպիսկոպոսն առաքեաց առ նա՛ զի խոստովանեսցի խոստովանահօրն որ 'ի վ՟րայնմ գործոյ կարգեալ էր : Իսկ նա՝ պատասխանեաց թէ ո՛չ ումեք 'ի մարդկանէ զգաղտնիս սրտի իմոյ յայտնեցից· բայց միայն եպիսկոպոսին։ Եւ նա հաւանեալ հրամայեաց նմա գալ առ ինքն· և նա՛ եկեալ ասէ ցեպիսկոպոսն՝ տ՟ր աղաչեմ զքեզ ողորմեաց ինձ· քանզի ո՞չ տեսանեսդ 'ի տիս մանկութե՟ գոլով· 'ի մանկութե՟ 'ի փափկութի՟ սնեալ եմ· ծնեալ 'ի թագաւորական զարմէ· այսու զգեստիւ միայն եկի· քանզի հայրն իմ թագաւոր մեծազօր ուրումն իշխանի ազնուականի կամէին զիս տալ 'ի կնութի՟· որում ես պատասխանի ետու թէ կնութե՟ բնաւ ո՛չ կարեմ յանձն առնուլ· զի զկուսութի՟ս իմ տ՟ն իմում յի՟ ք՟ի 'ի յաւիտեան խոստացեալ եմ· բայց արդ անչափ եղէ վշտանգեալ, մինչ զի հարկէր կամ զկամս հօր իմոյ կատարել· կամ զան հնարին տանջանս ընդունել· ապա՛ թագնաբար փախեայ· լաւ համարեցայ պանդխտութեամբ կեալ· քան հաւատոյ փեսային իմում ուխտադրուժ լինել։ Արդ՝ լուեալ եմ զհամբաւ սրբութե՟ ձերոյ, 'ի հովանի թևոց քոց դիմել ապաւինեցայ· յուսալով աստանօր գուցէ գտանել տեղի ինչ առանձնակի ուր աղօթից և մտաց տեսութե՟ և լռութե՟ պարապել կարիցեմ· և 'ի վտանգէ այս կենացս զերծանիլ։ Իսկ եպիսկոպոսն զարմացեալ ընդ մեծութի՟ ազգատոհմութե՟ նր՟· և գեղեցութե՟ մարմնոյ· և ջերմեռանդութի՟ հոգւոյ· և այսպիսի քաղցրութե՟ մեղմաբար և սիրով ետ պատասխանի՝ ասելով. քաջալերեա՛ց զուստր մի՛ երկնչիր. քանզի նա վ̃ որոյ զքեզ և զմեծութիդ և զբարեկամս քո այդ չափ արիաբար արհամարհեցեր. դոցա՛ փոխարէն քեզ զառաւելութի̃ շնորհաց 'ի կեանս յայսոսիկ հատուսցէ. և 'ի հանդերձելումն զկատարեալ փառս պարգևեսցէ. նա՛ և ես ծառայ նորին զա̃մ պիտոյդ քեզ լցուցանել առատապէս խոստանամ. ընտրեա՛ քեզ ուր և կամիս բնակութի̃. և այժմ կամիմ զի ընդ իս ճաշակեսցես. և նա՛ ասէ ո՛վ հայր տ̃ր մի՛ առնիցես զայդ մի՛ գուցէ ոք աստուստ կարծիք ինչ առնուցու. ուստի բարեհամբաւ մեծութե̃ ձերում վնաս ինչ ծնանիցի: պատասխանի ետ եպիսկոպոսն բազում եղիցին ընդ մեզ 'ի սեղանն վ̃ այնր ո՛չ ինչ կածիք չարք իրաւ̃ի աստ ուստ կարիցի ծնանել: Արդ իբրև եկին 'ի սեղան. եպիսկոպոսն հրամայեաց նստուցանել զնա դէմ յանդիման իւր. և զայլս այսր և անդր բազմեցուցանել. եպիսկոպոսն բազում անգամ 'ի նա հայէր. և 'ի նայելոյ 'ի գեղեցկութի̃ նր̃ հազիւ կարէր յայլ ուրեք զաչս իւր խոտորեցուցանել: Եւ այնպէս մինչ դեռ զակն իւր 'ի նա՛ ընկղմէր, սիրտ վիրաւորեալ լինէր. և յոր ժամ երեսն նր̃ 'ի հայելոյ ոչ դադարէր. սատանայ զհոգին նր̃ սաստիկ վիրաւորէր, և մերձէր 'ի հաւանիլ մեղաց, եթէ դէպ ժամանակի ձեռնտու լինէր. բայց խնամքն բարերարին ա̃յ ոչ ետ թոյլ անկանիլ նմա. քանզի այր ոմն պանդուխտ եկեալ բախէր զդուռն և մեծաձայն աղաղակէր՝ զի մուծցեն առ եպիսկոպոսն. և զի ոչ կամեցան. ևս առաւել ուժգին բախէր, եհարց եպիսկոպոսն ցկին թէ պատշաճ թո՞ւի քեզ մուծանել զայրն զայն. և նա ասէ յառաջ արկցուք նմա զառակ. զոր եթէ արտալուծեսցէ մուծցի այսր. և իբրև ոչ գիտասցէ ան արժան տեսութ՟ն եպիսկոպոսին մի՛ մտցէ: Այս բանս ամ՟ցուն հաճոյ թուեցաւ. բայց զի ոչ ոք զայնպիսի յառաջարկեալ ոչ գիտաց. եպիսկոպոսն ասէ ցաղջիկն, դու որ զամենեքումբք իմաստութ՟բ և ճարտարութ՟բ գերազանցես զայսպիսի ինչ յառակ. յայնժամ կերպարանեալ աղջիկն ասէ. հարցցեն ցնա. ո՞ւր իցէ մեծագոյն հրաշ, զոր տ՟ր ա՟ծ 'ի փոքուն իրի արար. իբրև զայս առն պանդխտին յառաջ արկին: Պատասխանի ետ զանազանութ՟ի և գեղեցկութ՟ի երեսաց՝ քան զի 'ի մէջ այսքան բազմու՟ն մարդկան որք. և են՝ և լինելոց են մինչ և 'ի կատարած աշխարհի՝ երկու ոչ գտանին որոց երեսք ամենևին իմեք նմանք իցեն, նոյնպէս այս դու զնայեա՛ երեսս ամենազօր ա՟ծ զա՟մ զգայութ՟ի մարմնաւորս եդ: Այսպիսի պատասխանիս լուեալ ամ՟ցունց՝ զարմացան և ասեն յոյժ գովելի պատասխանի. յայնժամ կինն ասէ. այլ առակ ազնուագոյն յառաջ արկցուք նմա. զի առաւել մեծ իմաստութ՟ի նորին ծանիցուք. հարցցեն ցնա՛ ուր երկիր գեր ՚ի վերոյ քան զերկինս ․ իբրև զայս յառաջ արկին պանդխտին ․ պատասխանի ետ՝ ի բարձրագոյն երկնի ուր նստի ՚ի մարմինն ք͞ի ․ քան զի նա՛ է բարձրացեալ քան զա͞մ երկինս ․ և է՛ մարմին ՚ի մարմնոյ մերմէ ․ և մարմին մեր է իմ͞ն խոկութ͞ն երկրի ․ ուրեմն ուր մարմին ք͞ի է ․ անդ է երկին ՚ի վեր քան զերկինս ․ զայս պատասխանի լուեալ ա͞մցւնց հիացան ։ Յայնժամ ասէ ցաղջիկն՝ տակաւին երրորդ առակ յառաջ արկցուք նմա․ քան զա͞մ դժուարալուծանելի զի ճշմարիտ եղիցի վկայութ͞ն սակս իմաստութե͞ն նորին ․ և արժանի եղիցի սեղանոյ եպիսկոպոսին ․ ա՛րդ ասասցէ որ չափ հեռի՛ են յերկրէ մինչև յերկինս ։ Օ այս լուեալ պանդուխտն ասէ ցերթևեկող ․ ասա՛ ցայն որ առաքեացն զքեզ ․ դու ինքնին տու՛ր պատասխանի առայդ ․ քան զի նոյն ինքն զայն ճանապարհն չափեա՛ց յորժամ յերկնից ՚ի դժոխս անկաւ ․ զի ո՛չ է նա՛ կին՝ այլ սատանայ զայս լուեալ երթ և եկողն յո՛յժ զարհուրեցաւ ․ և զոր ինչ լուա՛ն առաջի ա͞մցւնց պատմեաց ․ և յորժամ ա͞մքն զարմանային՝ հին թշնամին ՚ի նոցանէ աներևոյթ եղև ։ Ի՛սկ եպիսկոպոսն ե՛կեալ ՚ի միտս յո՛յժ սաստիկ զինքն կշտամբէր ․ և աղի ողորմ և դառն արտասուօք զմեղս իւր կոծէր ։ Եւ առժամայն առաքեաց զի մուծցեն զպանդուխտն զայր զայն ․ բայց զնա ո՛չ կարացին ուրեք

գտա

գտանել։ Յայնժամ եպիսկոպոսն հրամայեաց կոչել զա՟մ ժողովուրդն, և պատմեաց նց՟ որ ինչ եղև. և պատուիրեաց զի ա՟մքն 'ի պահս և յաղօթս կայցեն՝ թերևս ա՟ծ յայտնեսցէ ումեք թէ զինչ մարդ էր պանդուխտըն այն, որ զնա այնպիսի մեծամեծ վտանգէն ազատեաց. 'ի նմին գիշերի յայտնեցաւ թէ ս՟բ առաքեալն անդրէաս էր, որ վ՟ն փըրկութե՟ նր՟ 'ի կերպարանս պանդխտին երևեցաւ. յայնժամ եպիսկոպոսն ևս քան զևս յաւել յաղօթս առ ս՟բ առաքեալն անդրէաս.
և գոհանայր զմարդասիրէն ա՟յ։

Յաղագս հեռանդութեն գլուխ. ՀԲ.

Կոյսն ոմն կրօնաւոր վայելչագեղ և յոյժ գեղեցիկ տեսլեամբ. բնակէր 'ի վանս որում ոմն իշխան փարթամ և մեծազօր, յորոյ յագարագի վանք շինեալ էր ցանկայր։ Եւ իբրև ոչ աղաչանօք և ոչ պարգևօք ոչ կարաց զնա 'ի կամս իւր դարձուցանել. առաքեաց 'ի ձեռն հրեշտակաց առ մայրապետն զի մի յերկուցն ընտրեսցէ. կամ զկոյսն առ նա առաքեսցէ. կամ ինքն զա՟մ վանս հրով մաշեսցէ։ Զայսպիսի բանս լուեալ մայրպետըն զահի հարաւ՝ քան զի գիտէր զի թէ ըզկամս նր՟ ոչ կատարեսցէ, չար ևս քան զոր սըպառնայրն արասցէ. ապա՛ լի՛ երկիւղիւ սըրբոյ կուսին զաստիկ հրամանն պատմեաց. Եւ նա երկուցեալ և դողալով հարցանէր.

ո՞յր| աղագաւ զիս քան զայս այսպիսի սիրէ և իբրև իմացաւ 'ի դեսպանաց, թէ վս̃ գեղեցկութե̃ աչաց քոց նոյնպիսի սիրով 'ի քեզ վառեալ է, ուրախացաւ, և փոքր ինչ առանձնացաւ յայլոց, զերկուս աչս իւր անխնայաբար եհատ. և եդեալ առ միմեանս 'ի վ̃ր նալպաքոյ ետ ցդեսպանսն ասելով. գնացէք և զայս յինէն նմա մատուցէք տ̃ն ձերում ասելով. ահա՛ նոքա որ զսիրտ քո սաստիկ ցանկութե̃ հարին. ունիս զոր խնդրեիր վայելեա՛ ո̃պ քեզ հաճոյ է. և զաչս սրտի իմոյ յամբողջ պահես:

ե̃ 'Ի մէջ Եհմի և Բենթղեհ մի էր վանք կուսանաց. յորում էին կուսանք յոյժ գեղեցիկք տեսլեամբ. և յորժամ տաճիկք առին զերկիրն աւերեաց. սուլտանն լուեալ վս̃ գեղեցկութե̃ նոցին՝ ցանկանայր հասանել փափաքանաց իւրեանց պատուիրեաց առ նս̃ զի զարդարեսցին և զգեցցին հանդերձս գեղեցիկս: Իսկ մայրապետն կուսանացն զի մի՛ լինիցին 'ի նախատինս մարմնոյ և սատանայի. զի մի՛ զշուշան կուսութե̃ իւրեանց 'ի գարշութի̃ վաւաշոտութե̃ զվարձսն կորուսցեն ինքեանք. և ա̃մցուն առաւել կամեցաւ զքիթսն հատանել. քան թէ ամբողջ մարմնով և գեղեցիկ տեսլեամբ լինել զազրագործ պոռնիկս. Ապա՛ իբրև յա̃յ ուսեալ. յորժամ բռնաւորն առ դուռն կայր, նոյնպիսի յորդարական բանիւք խօսեցաւ ընդ նս̃. զգաստա սէրք քորք իմ, ժամանակ նեղութն վշտաց և հալածանաց մերոցէ. սուլտանն կուսութե և համեստութեանս մերոյ թշնամի ահա՛ դուռն կայ, ո՛չ կարէք ՚ի ձեռաց նր փախչիլ. ա՛րդ լուարուք խրատու իմում. և զոր ինչ ես արարից զնոյն և դուք արասջիք. որում իբրև ամքն հաւանեցան. մայրապետն զիւր քիթն եհատ. և ապա ամքն յօժարութբ զնոյն արարին։ Որ լուեա՛լ սուլտանն յոյժ զարմացաւ ընդ ա՛ն խոնարհելի միտսն նց. և գովեաց զհանճար իմաստութն կուսանաց։

Ի վանս ուրեք էին կրօնաւոր կանայք. միմեանց սիրելի ընկերք, երկուք էին կուսանք, և մին այրի. աղքա՛ առ ա̄թ կոյսն մարիամ յոյժ էին աղօթասէրք։ Ա՛րդ յորժամ մի կոյսն վախճանեալ էր՝ և այրին մերձեալ աստի ելանելոյ. երրորդ քոյրն մնացեալ աղաչէր զայրին, զի յետ մահուան երևեսցի նմա և վս̄ վարձուն ընկերակցին իւրոյ մեռելոյն ծանուսցէ նմա. զոր նախոստացաւ՝ եթէ կամքն այ լինիցի, և մեռաւ. յետ երեսուն աւուրց մինչ դեռ աղօթէր առաջի սրբոյ սեղանոյ, երևեցաւ նմա այրին քոյր նր անպատմելի բոցաճա՛ ճանչ ճառագայթիւք լուսափայլեալ. և ասէ ե՛կ այսր. զի զայս յինէն խնդրեալ էիր. ահա տեսանես դու զնպքեա՛ մասն վարձուն իմոյ։ Երանելի օրն յորում ծնեալ եղէ. և կոյսն կրօնաւոր քաջալերեալ և համարձակեալ եհարց զորպիսութի քեռն Գ կուսին ընկերակցին իւրոյ. և նա՛ ասէ եթէ բովանդակ աշխարհ լինէր մագաղաթ՝ և ծովք թանաք. և ա՟մ տերևք և շուղք քարտուղարք, հանդերձ ա՟մ ծնընդօք մարդկան, որք էին՝ և են. և եղիցին՝ վաղագոյն ա՟մքն նուաղէին քան թէ զանպատում վարձն կարէի նկարել. բայց կարճ ՚ի կարճոյ փոքր ինչ ասացից քեզ. քոյր մեր անվախճան պայծառութ՟բ քան զիս գերազանցէ և իրաւ՛ի քան զի նա յերէկ ընդ գառին պարէր. ամենևնմ՟բ սպիտակայլ հանդերձ բազմութ՟բ կուսանացըն ՚ի հանդերձս սպիտակս երգելով զերգս զարմանալիս կուսանաց միայն գիտելիս՝ ունելով ՚ի գլուխ զպսակս յա՟ծային ծաղկանցըն հիւսեալ աղաչէին զնա զի զպսակն իւր առժամ մի շնորհեսցէ ինձ. և նա ասաց ոչ է պատշաճ, սակայն ՚ի ծաղկանցն ետ. զոր ես քեռդ իմոյ սիրելոյ բերի, զի թերևս զզօրութ՟ի նոցին որ քան զգայութ՟ի մարդոյ կարէ ընդունել ծանիցես: Յետ այսորիկ յորժամ ծաղկօք այնոքիւք արար զբոլորակ ՚ի գետնի, այն քան զարմանալի հոտանուշահութ՟ն բուրեաց, մինչ զի զկոյսն կրօնաւոր ՚ի սաստիկ քաղցրութ՟է ՚ի զարմացման եղև: Եւ ա՛յնպէս այրին այն անյայտ եղև. և ա՟մքն որք ՚ի վանս մտանէին զբազում ժամանակս զերկնային անուշահոտութ՟ին զգային:

Դ Էր ոմն կոյս կրօնաւոր որ բազում ժամանակս պահեալ զկուսութիւն. երբեմն հպարտութ՟բ ասաց պարծելով, ոչ կամիմ լինել նման մագդաղենացւոյն: Այս՟ այնր մեծամտութ՟բ զկնի սուղ ժամանակի 'ի խաբեբայէ ումեմնէ պատրեալ զկուսութի՟ կորոյս և 'ի մեծամեծ չարիս անկաւ:

Երեք կուսանք մտին յեկեղեցի վս՟ աղօթից Ե
'ի ժամ պատարագի. և մինչ դեռ քահանայն զա՟ծային խորհուրդ կատարէր և եկն 'ի տեղին բանիցս յիշեա՟մր. և եղև 'ի զարմացման. և ետես զհրեշտակ ա՟յ 'ի ջեալ յերկնից. ունելով զպսակ 'ի կարմիր վարդից հիւսեալ եդ 'ի գլուխ միոյ կուսին: Դարձեալ ետես զի հրեշտակ ա՟յ եբեր զպսակ սպիտակ վարդից՝ և եդ զնա 'ի գլուխ երկրորդ կուսին. և երրորդ անգամ ետես, զի դև մի եբեր հին մուշտակ. և էարկ զնովաւ 'ի գլուխ երրորդ կուսին. և ընդ իւր բերեալ զքնարն երգէր առաջի նր՟: Իսկ քահայն եկեալ 'ի միտս իւր կատարեաց զս՟բ պատարագն. և խորհէր թէ զինչ նշանակիցէ տեսիլն այն: Զկնի պատարագին կոչեալ առ ինքն զկուսանսն. եհարց յառաջին թէ զինչ խորհեիր 'ի ժամ պատարագին: պատասխանի ետ՝ թէ վս՟ փշեղէն պսակին խորհէի որով գլուխ մր՟ ունական պսակեալ եղև. և արիւն 'ի պատուական գըլխոյն նր՟ հոսէր. և քահայն ասէ ցնա՛ ես 'ի ժամ պատարագին տեսանէի զի հրեշտակ տն՟ 'ի ջեալ երկնից զպսակ կարմիր վարդից եբեր՝ և զայն 'ի գլուխ քո եդ: եհարց ցերկրորդն՝

և դու զի՞նչ խորհէիր · պատասխանի՛ ետ՝ վ՟ն տղայութե՟ն տ՟ն մերոյ և անմեղութե՟ն նորին, թէ ո՟պ մարդասէր՝ քաղցր ցանկալի · և 'ի մանկութե՟ իւրմէ սիրելի · և քահայն պատասխանեաց նմա՝ և ես զհրեշտակ իջեալ յերկնից տեսի բերելով զպսակ 'ի սպիտակ վարդից, զոր եդ 'ի գլուխ քո ։ Եհարց ցերորդն՝ թէ դու զինչ խորհէիր, պատասխանի ետ թէ նեղասրտէի՝ զի պատարագն երկարէր, և ասէի, ո՜թէ շուտով աւարտեալ լինէր · զի գնացեալ մուշտակ գնէի ինձ · և ապա՛ պարէի և ուրախ զօր հանապազ անցուցանէի ։ պատասխանի ետ քահայն · թէ տեսի զսատանայ որ մուշտակ ժահահոտ դժոխոց բերեր և նովաւ զգլուխ քո հարկանէր · և առաջին ն՟ր խաղար և պարէր ։

Յաղագս հաղորդութեան գլուխ Ի.

20 Հերետիկոս ոմն կամէր յիւր աղանդն դարձուցանել զոմն ուղղափառ քահանայ · և իբրև ետես զնա՛ թէ խորշէր 'ի նմանէ, և ոչ հաւանէր բանից ն՟ր · ասէ ցնա ինքն ահաւա՜ն ես՝ և ան խոնարհելի 'ի հաւատս քո, եթէ կամէիր հաւատալ բանից իմոց · ես քեզ ցուցանէի զք՟ս և զմայր ն՟ր և զսբ՟ս ն՟յ ։ Իսկ քահայն 'ի մնացեալ թէ այն ցնորք և պատրանք սատանայ են կամելով փորձել թէ զինչ իցէ այն · իրաւի քեզ այժմ հաւատայի · թէ կատարէիր զոր խոստանաս · զայս լուեալ հերիտ

կոսն յոյժ ուրախացաւ՝ և սահմանեաց զոր։ Իսկ քահայն առեալ զմասնատուփն հանդերձ տ̃րունական մարմնոյն․ ՚ի ծածուկ եդ ՚ի ներքոյ վեղարին․ Հերիտիկոսն առեալ զքահանայն տարաւ ՚ի յայրն միոյ լերին և եմոյծ զնա ՚ի մեծ ապարան․ որ զարմանալի բոցաճաճանչ լուսով փայլէր․ իբրև մտին ՚ի ներս․ տեսին բազում շարակարգեալ աթոռ ոսկեափայլեալս ՚ի վ̃ր միոյ աթոռոյ բազմեալ կայր թագաւոր շրջապատեալ մեծաւ լուսով ընդ աջմէ ն̃ր և յայնկոյս բազմեալ էին ծերք․ իբր թէ նահապետք և առաքեալք շուրջ կային մեծ բազմուն̃ հրեշտակաց․ որք ամ̃քն իբրև զաստեղս փայլէին․ զորոց ո՛չ կարծի ունէին այլ թէ դևք իցեն։ Զայս ա̃մ իբրև ետես Հերիտիկոսն անկաւ յերկիր․ և երկիր եպագ իբրև ա̃յ։ Իսկ քահանայն ան շարժ կայր յոյժ զարմանայր ընդ տեսիլն․ և Հերիտիկոս դարձաւ առ քահանայն ասէ․ վ̃ն էր որդւոյն ա̃յ փառս ո՛չ մատուցանես․ երկիր պագ այնորիկ որ բազմեալ տեսանես․ և ՚ի բերանոյ ն̃ր ուսուանիս զխորհուրդ հաւատոյս մերոյ․ յայն ժամ քահանայն մերձ եկեալ զմասնատուփն եհան․ և ետ ցթագուհին բազմել ՚ի վ̃ր աթոռոյն ասելով եթէ դու ես թագուհի մայր ք̃ի ահա որդի քո զի եթէ ընկալցիս խոստովանեցից զքեզ գոլ մայր ա̃յ․ իբրև զայս ասաց առ ժամայն բովանդակայն ժողովն առաջօք եղեալ յո՛չ ինչ դարձաւ․

և այն չափ թանձրախիտ խաւարի մէջ մնացին մինչ զի հազիւ կարացին յայրոյն ելանել. ահա հերետիկոսն դարձաւ յուղղութ՟ի. և ընդ հնարագէտ խորամանկութ՟ին սատանայի զարմացեալ զարհուրեցաւ։

Է Այր ոմն ազնուական այն չափ էր իրաւասէր և արդարադատ մինչ զի ընաւ ՚ի դատաստանի յերես մարդոյ ո՛չ ակն արկէր։ Սա՛ երբեմն կարի հիւանդացեալ ՚ի մերձակայ սենեկի զաղաղակ և զողբումն կնոջ լուեալ. և հարցեալ զպատճառ ոչ ոք իշխեաց զստոյգն պատմել. ապա զոմն ՚ի սպասաւորաց առաքեաց և սաստիկ պատուիրեաց նմա զի զստուգութ՟ին ասասցէ իւրեան. և նա՛ ահիւ ծանուցեալ պատասխանեաց, տ՟ր. քո քեռ որդի կամէր բռնադատել կին ոմն. և այս է պատճառ աղաղակին. ընդ որ յո՛յժ զարմացեալ իշխանն հրամայեաց զօրականաց զի կախեսցեն զքեռ որդին։ Ի՛սկ ն՟ք կեղծաւորեալ զհնազանդութ՟ի ասեն ցմիմեանս. եթէ սպանանիցեմ զայս երիտասարդ մեծ ազգի. և տ՟րն մեր ոչ հաւատալի՛ է մեռանիցի. կամ զմեզ սպանցեն կամ յաքսորս առաքեսցեն. ապա ծանուցին երիտասարդին զա՟մն ինչ. և խրատ ետուն զի յերեսաց քեռոյն ուրեք թաքչիցի. յետ քանի ժամուց մտին առ տ՟րն զօրականքն՝ և ասացին թէ զհրամանդ կատարեցաք. հինգերրորդում աւուր երիտասարդն կարծելով թէ քեռին զվնասն իւր անտես է՛ արարեալ.

բացեալ զդուռն հայեցաւ. զոր իբրև ետես հիւանդն մեղմաբար առ ինքն կոչեաց. մեկ ձեռամբ զպարանոց է ն̃ր կալաւ, և միւսով զսուսեր ծածկաբար հանեալ 'ի կոկորդն եհար. և այսպէս մեռաւ՝ ողբալով և հառաչմամբ սրտի զմեռեալն արտաքս հանին գործըն ա̃մ գաւառին յոյժ գարշելի թուեցաւ. նա և իշխանին ցաւ 'ի վ̃ր ցաւոյն առաւելեալ. իբրև հիւանդութիւն զօրանայր. առաքեաց առ եպիսկոպոսն հայցելով զս̃բ խորհուրդ՝ որ իբրև եկն մեծաւ զղջմամբ խոստովանեցաւ զմեղս իւր՝ բայց զսպանումն երիտասարդին լռեաց. ընդ որ բարկացեալ եպիսկոպոսն ասէ վ̃ն էր զմարդասպանուե̃իդ թագուցեր. զի քեռ որդիդ քո սպաներ. և նա ասէ մի թէ այն մեղք էին. ասէ եպիսկոպոսն կարի յոյժ, պատասխանի ետ իշխանն՝ ես զայն ոչ համարիմ 'ի մեղս. և ոչ խնդրեցից զթողութի̃ 'ի ա̃ն է վ̃ն այնորիկ՝ ապա ասէ եպիսկոպոսն և ոչ ես քեզ զհաղորդութի̃ տամ, մինչև խոստովանեսցիս զայն մեղս. յայնժամ ասէ իշխանն գիտեա հայր ս̃բ. զի ես ոչ եթէ ոխակալութե̃ զնա սպանի. կամ 'ի զայրացմանէ սրտիս, այլ միայն վ̃ն երկիւղի յա̃յ և 'ի ցանկութե̃ արդարութե̃ ոչ երբէք այն չափ սիրեաց զքեռ որդի իւր, ո̃պ ես զնա սիրէի եթէ ոչ տացես ինձ զմարմին տ̃րունական. ես զհոգի և զմարմին իմ 'ի նա յանձն առնեմ, զայս ասաց և արար սակս օրինակ. մի գուցէ ընդ դէմ արդարութե՟ և դատաստանի երևեցին ինչ պակաս գործել. չև ևս եպիսկոպոսըն ընդ սեմ դրանն անցեալ էր. Հիւանդն ձայնեաց առ նա ասելով, դարձիր Հայր մե՟ դարձիր, տես թէ իցեն մարմին տ՟րունական 'ի մասնա տուփին, զոր իբրև եբաց և ոչ ինչ եգիտ. ասէ ցնա իշխանն՝ ահա զոր դու ինձ հրաժարէիր տալ, նա ինքն ոչ հրաժարեցաւ յինէն, և երևեցաւ մե՟ խորհուրդն 'ի բերանն. և կատարեցաւ առ նա զոր ինչ ա՟ծային գիրք ասեն. սիրեցէք զարդարութի ոյք դատէք զերկիր. ծառայեցէք տ՟ն բարութե՟. և խնդրեցէք զնա ուղղութե՟. քան զի գտանի առ ն՟ա որք ոչ փորձեն զնա. և յայտնեսցի այնոցիկ ոյք յուսան 'ի նա, իսկ եպիսկոպոսն զահի հարեալ յա՟մ ուրեք զքանչելիսն զայնոսիկ։

Գ Կին ո՟մն ունէր բազում մեղու, բայց զի ոչ աճէին, այլ մանաւանդ օր ըստ օրէ սատակէին. մեծաւ ջանիւ հնարէր. խրատ խնդրէր. դեղ հարցանէր. լուեալ յումանց թէ մարմին տ՟րունական եդեալ 'ի մէջ նց՟ յոյժ օգտարէ վ՟ն շատանալոյ նոցունց. գնաց յեկեղեցին և իբր թէ կամելով հաղորդիլ. ըզմարմին տ՟ն էառ. և փաղփաղակի ելեալ յեկեղեցւոյ 'ի բերանոյ եհան. և 'ի միում փեթակի եդ զնա։ Օ զարմանալի զօրութի ա՟յ եղև. անբան կենդանիքն ծանուցեալ զարարիչն իւրեանց՝ 'ի հացէ մեղեր զարմանական գմբէթայարկ եկեղեցին կազմեցին, վ՟ն ամենաքաղցր հիւրին երկնաւորին՝ և՛ի նմին ինոյն նիւթէ զսեղանն յօրինեցին. և զմարմինք՟ի 'ի վ՟ր ն՟ր եդին. վ՟ն որոյ և ա՟ծ օրհնեաց զվաստակս ն՟ց. յետ ժամանակի կինն այն բացեալ զփեթակն, և զայն հրաշալի եկեղեցին տեսեալ զարհուրեցաւ. և գնացեալ առ քահանայն խոստովանեցաւ նմա զոր արարեալ էր և տեսեալ. յայնժամ քահանայն կոչեալ զժառանգս իւր՝ եկն առ ձինձոցն և զմեղուս որք շուրջ թռչէին՝ և զզարմանալի երգս արարչին իւրեանց եղանակէին, 'ի բաց վարեցին. և յոյժ զարմանային. տեսեալ զեկեղեցին զպարիսպն, զլուսամուտ. տանիս. զանգակատունս, զդուռն և զսեղան 'ի նմա պարեալ. Իսկ զմարմին տ՟ռնական մեծաւ փառօք և սաղմոս երգութ՟բ տարան յեկեղեցի. ուստի յայտ է զի թէպէտ սքանչելի է վ՟ն սրբոց իւրոց. սակայն առաւել սքանչելի երևի գոլ 'ի փոքունս կենդանիս յայսոսիկ:

Է Զօրական ոմն այն չափ էր աղօթասէր, մինչ զի քանիցս անգամ զմարմինն ք՟ի բարձրացուցանէին. կամ թէ ուրեք 'ի հրապարակս պատահէր քահանայի որ զայն տանէր առ հիւանդ. անկեալ 'ի վ՟ր երեսաց երկիր պագանէր. և ա՟ծավայելուչ պատիւ մատուցանէր: Դէպ եղև յաւուր միում, զի մեծագին հանդերձ զգեցեալ հեծեալ 'ի ձի մտանէր 'ի քաղաք. փողոցն ընդ որ անցանէր լի էր տղմով. և ահա քահանայ հանդերձ հա ղորդութե̃ պատահեալ նմա, զոր տեսեալ փոքր ինչ մտախորհ լեալ 'ի սրտի իւրում ասէ. զինչ այժմ արարից եթէ այս քան խորագոյն տղմիս մէջ անկանիմ 'ի վ̃ր ծնկացս այս ազնիւ զգեստս՝ բոլորովիմբ ապականեցին. և թէ ոչ իջից 'ի ձիոյ հանապազ զիս խիղճ մտացս չարչարեսցէ իբրև զյանցաւոր փրկական սովորութ̃ին. ապա յաղթեալ 'ի բարեպաշտութ̃ե էջ 'ի ձիոյ. և անկաւ 'ի տիղմն ուր ծունր եդեալ և զձեռս համբարձեալ երկիր եպագ մարմ̃նոյն ք̃ի. բայց զի մարդասէրն ա̃ծ, ոչ միայն 'ի հանդերձեալ կեանսն վարձ հատուցանէ փառաբանչացն անուան իւրոյ. այլ և աստ երբեմն փոխարէն պատիւ հատուցանէ զայն որ աբր զօրութի նորին 'ի տղմին այնորիկ. ամենևիմբ կաթմի ոչ հպեցաւ 'ի հանդերձս նր̃. յայնժամ մեծաւ զարմանս լեալ նստաւ 'ի ձի և առաւել հաստատեցաւ 'ի հաւատս և գոհացաւ զա̃յ։

է Ոմն զինուոր թագաւորի 'ի պատերազմին վիրաւորեալ իբրև զմեռեալ անկեալ դն իւր 'ի մէջ սպանելոցն զօր և գիշեր. ապա ուշաբերեալ կենդանացաւ և զվէրս իւր ոչ̃ կարէր պատեաց. ապա յարուցեալ շրջելով խնդրէր զոք բարեկամ որ նմա խնամ տանիցէ. և անկաւ 'ի ձեռս թշնամեաց, որք տարան զնա առ իշխան իւրեանց, հարցեալ ցնա իշխանն թէ ինչ մարդ ես. և նա երկուցեալ յայտնել զինքն թէ զօրական էր թագաւորի. ասաց շինական եմ աղքատ կնոջ տէր, որ զուռ

ձիկս

ճիկս և զկերակուրս 'ի հետ զօրուն 'ի բանակըն ընկերիս իմում բերէի։ Իսկ իշխանին հրամայեաց դարմանել զնա. և իբրև սկսաւ առողջանալ 'ի գիշերի զի մի՛ փախիցէ հրամայեաց կապել զնա։ բայց ոչ կարէին կապել զնա. քանզի մինչ դեռ հեռանային 'ի նմանէ կապողքն, վն զի ունէր զեղբայր իւր հարազատ. քահնայ և հայր վանաց, որ լուեալ վն սպանման նր 'ի պատերազմի, եկն խնդրել զմարմինն նր թերևս գտանիցէ 'ի մէջ անկելոցն և գտեալ զայլ ոմն ամենևիմբ եղբօր նման տարաւ 'ի վանս, և արժանապէս թաղեաց, և հրամայեաց վն հոգւոյ նորին հանապազ զմբ պատարագ մատուցանել, որոյ սակս ոչ ոք կարէր զնա կապել։ Իշխանն որ զնա ունէր ընդ այն զարմացեալ եհարց ցնա վն էր ոչ կարեմ ես կապել զքեզ, մի՛ թէ կախարդութի ինչ առ քեզ ունիս։ պատասխանի ետ թէ ոչ. այլ զեղբայր ունիմ քահանայ՝ որ լուեալ վն մահուան իմոյ 'ի պատերազմի, պատարագ մատուցանէ վն իմ, և այսպիսի եթէ ճշմարտապէս մեռեալ էին արդեօք և թաղեալ՝ հոգի իմ ազատ լինէր 'ի տանջանաց։ Արդ՝ յորժամ բազում ժամանակ ունէր զնա առ ինքն իշխանն ծանեան 'ի բանից և 'ի գործոց զի ոչ էր գեղջուկ ոպ զինքն կոչէր, այլ մեծազգի ոմն. յայնժամ իշխանն առեալ զնա մեկուսի. եհարց ցնա թէ ուստի՛ ես դու. խոստանելով թէ ոչ ինչ եղիցի քեզ վնաս. ե-

թէ ճշմարիտն ասասցես. նա՛ պատասխանի
ետ թէ թ՟գւորի ծառայեմ. ասէ իշխանն՝
արդարև մահու արժանի ես. զի եղբարք
իմ և ազգականք անկան յայնմ պատերազմի
այլ զի զքանս իմ պահիցեմ լիջիր կենդանի.
Սակայն իբրև առողջացաւ վաճառեաց զնա
որումն առն. բայց և ոչ առ նմա կարաց կա
պեալ լինել. զոր տեսեալ որ գնեացն զնա
ետ նմա իշխանութ՟ին գնալով ազատել զինքն
և նա երդուաւ նմա եթէ ոչ առաքեսցից ըզ
գինս անձին իմոյ ինքնին առ քեզ դարձայց։
Ապա եկեալ առ թագաւորն խնդրեաց և ըն
կալաւ ՚ի նմանէ զգին փրկանաց և ազատութ՟ե
իւրոյ. և տ՟ն իւրում ըստ խոստմանն առաքեաց
Յետ այսորիկ դարձաւ ՚ի տուն իւր. և եկեալ
առ եղբայր իւր պատմեաց նմա զա՟մ որ ինչ
անցք անցին ընդ նմա և ծանեաւ ՚ի քանից
հօրն. թէ յայնժամ կապանք ոչ կարէին մնալ
՚ի վ՟ր ն՟ր. յորժամ զ՟բ պատարագ մատու
ցանէին վ՟ն ն՟ր։

է՟ Հրեայք իսկզբանէ լեալք թշնամիք ք՟նի և
ոչ կարացեալ տանել զա՟ծային պատիւ
զոր քրիստոնեայք մատուցանեն տ՟ր ունակին
մարմնոյն. մի՛շտ սատանայական նախանձու
վառեալք. յաւուր միում ՚ի մի վայր ժողո
վեալք. խորհուրդ արարին թէ ինչ կեր
պիւ զմարմինն ք՟ի գտեալ անարգեսցեն, և
զհրեանց դիւական ցանկութ՟ին լցուսցեն.
ապա կոչեալ զեկեղեցպանն խոստացան տալ

նմա զերեսուն ոսկի • զի վաճառեսցէ՛ նց̃ զնշխար խորհրդական • ևնա՛ թշուառական լուեալ զայն քան գին յանձն էառ • հրէայք զոմն 'ի միջոց իւրեանց առաքեցին • զի առցէ եկեղեցպանէն զհացն խորհրդաւոր • և զերեսուն ոսկին 'ի նա տացէ և երկոյքեան մտան յեկեղեցի • եկեղեցպանն եբաց զխորհրդանոց՝ երկրորդ յուդայ զա̃ծ զարարիչ իւր ետ 'ի ձեռս անհաւատ հրէի • և զայս արարեալ գնաց 'ի տուն իւր, և էր մէջ գիշերի ։ Իսկ հրէայն մտեալ 'ի տուն իւր ուր ժողովեալ էին հրէայք, և վերացուցեալ զմարմի̃ն քի̃, ասէ սա է հաց զոր քրիստոնեայքն հաւատան թէ փոխարկի 'ի մարմին և յարիւն • փորձեսցուք եթէ այնպէս է • ապա՛ բերեալ սեղա՛ն եդին 'ի վ̃ր̃ նր̃ զնշխարն, զոր ազգի ազգի անարգութբ̃ հայհոյելով • թշնամանելով • նախատելով թքանելով • խողխողէին • խոցոտէին • և յետոյ 'ի մասունս հատին • և այսպիսի երկրորդ անգամ զորդին ա̃յ 'ի խաչ հանէին ։ Արդ իբրև այսպիսի զայր ագնեալք ոչ յագեցան՝ այլ 'ի նոյն մոլեգնութե̃ կային • 'ի մասանց սրբոյ հացին հատելոցն սկսաւ արիւն հոսել, մինչ զի բովանդակ սեղանն արեամբ թաթաւեալ եղև • զոր տեսեալ ամբարիշտ հրէայքն 'ի հիացման է սկսան աղակել • ընդ որ ձայն 'ի խնամոցն ա̃յ, պահապանքն քաղաքի հայեցեալ ընդ պատուհան • և իրացն հասու եղեալ • մեծաձայն լալով աղա ղանչէին 'ի փողոցս և 'ի հրապարակս. և զմարդիկք 'ի քնոյ զարթուցին, որք իմացեալ զեղեռն. աղաղակաւ, ողբովք, հառաչմամբ զա՟մ քաղաք լցին. քահանայք փողփողակի խաչիւ խաչվառովք. և այլ սրբութ՟բ և երգովք հոգևորօք ընթանային. զի զբարկութ՟ի արարչին երկնի և երկրի սակս այնքան նախատանաց իւրեանց շիջուսցեն: Ի. յլիբրև եկին 'ի տեղին և տեսին զթագաւորն փառաց արիւն աթաւ՛ալ, ընկեցեալ զխաչս և զխաչվառս, երկիր անկանէին, կոծելով հառաչելով. և դառնապէս 'ի խորոց սրտէ ողբալով ապա՛ յարուցեալ յերկրէ զսուղանն զայն հանդերձ մարմնով և արեամբ տ՟ն ողբերգութ՟բ տարան յեկեղեցի. ուր մ՟ծավայելչաբար և արժանապէս ժողովեալ զմասունս մարմնոյ և զարիւնն ք՟ի զսկիհ զսեղանն 'ի մէջ կացուցին առ 'ի տեսութ՟ի ա՟մ ժողովրդեան. բայց զի մի՛ վայրաբար այնպիսի մեծամեծ սքանչելիք ցուցեալ լիցին. հրէայքն ականատեսք ոմանք հաւատացին 'ի ք՟ս և մկրտեցան. և ոմանք մնացեալ յիւրեանց անհաւատութ՟ե, մինչև. ՃԾ. հոգիք հրովայրեցան: Իսկ եկեղեցպանն այն ամենաթշուառ զի մի՛ իւիք պակաս գտանիցի. և զանազան երևեսցի 'ի յուդայէ վարդապետէն իւրմէ աղի ողորմ թաղձութ՟բ կոծելով և հառաչելով յուսահատ և խեղդեցաւ:

Է Իր [illegible] կին ընդ որում ազգի ազգի հնա րիւք սատանայ պատէր աղմէր զի կախեսցէ զինքն. յաւուր միում գտեալ ժամանակ և տեղի 'ի ժամ պատարագի, զա՟մ ընտանիս իւր 'ի տանէ եհան. պարան 'ի գերան կապեաց՝ և զդուռն ամրացոյց. և իբրև կապեալ զպարանոցէ իւրմէ պարան կամէր զինքն իջուցանել 'ի վայր. լուաւ զանկակի ձայն 'ի վերացուցանելն զմարմինն ք՟ի, և ո՟պ սովորէր ասել յ՟ս ք՟ս որդի ա՟յ կենդանւոյ՝ ողորմեաց ինձ. և ահա առժամայն գերանն անկաւ. և դեւքն մեծաւ հնչմամբ 'ի տանէն փախեան աղաղակելով. զօրութ՟ն մարմնոյն ք՟ի զքեզ ազատեաց յաւիտենական կորստենէն.

Յաղագս հիատոնդոբէ. գլուխ. խա.

Կոյս ոմն տեսլեամբ գեղեցիկ. բայց հաւատով գեղեցկագոյն. ա՟ծապաշտ, աղօթասէր. աղքատասէր. և կարօտելոց խնամածու. Յորժամ 'ի մարդասիրէն ա՟յ իբրև ըզդուստր սիրելի բորոտութ՟բ հարեալ եղև. մինչ զի բովանդակ երեսն ապականեալ եղև. և ա՟մքն լքին որք 'ի նմա հայէին. նմա միայն ցընծայր և ուրախանայր գոհանալով զա՟ծ. եպիսկոպոս ոմն եկեալ 'ի տեսութ՟ն նորին. և տեսեալ զնա այնպէս չարաչար վիրաւորեալ զնա, որ այն չափ գեղեցիկ էր և ա՟մցունց ն՟ր համարեալ. սկսաւ լալ և զարմանայր ընդ դատաստանն ա՟յ. Իսկ նա ծիծաղեալ եհարց ցնա թէ ընդէր ողբաս. նա պատասխանի ա՟ծ

եպիս

եպիսկոպոսն· Նոյն ինքն ցաւակցութին շարժէ զհայարտասուս· և յորժամ եպիսկոպոսն եհարց ցնա՛ իսկ դու ընդ էր ծիծաղեցար· պատասխանի ետ՝ տ՟ր եթէ ոք մատնեալ լինէր 'ի բանդ ոյնու բնաւ ո՛չ թէ ելանիցէ անտի, մինչև պարիսպ բան դին 'ի հիմանց տապալեսցի, յորժամ տեսանէր թէ պարիսպըն սկսանի կործանել ո՛չ ապաքէն ուրախանայ վ՟ն փրկութ՟են իւրոյ։ Ա՛րդ վ՟ն զի հոգի արգելանի մարմնոյ է ըմբռնեալ պարտի ուրախնալ յորժամ տեսանէ թէ մարմին իւր նուազի· և առ վաղճանի իւր փութայ· զի անարգել կարասցէ դառնալ 'ի տեսութ՟ին փրկչին իւրոյ։

է՟ Ա՟ր ո՟մն անապատաւոր ս՟բ և առաքինի, որ 'ի մէջ այլոց առաքինութ՟ց ևս ունէր մեծ շնորհս առ 'ի սպասաւորել հիւանդաց· սա՛ 'ի տեսլեան հրաման առեալ գնաց 'ի մերձակայ քաղաք, և եկեալ 'ի դուռն ետես զհիւանդ յոյժ չարաչար խոցոտեալ և հոտեալ· զոր և բորոտք ո՛չ կարէին տանել 'ի միջի իւրեանց։ Սմա՛ ճգնաւորն սկսաւ սպասաւորել, քաջալերելով զնա 'ի տ՟ր։ պատասխանի ետ հիւանդն· օրհնեալ եղիցի բարձրեալըն ա՟ծ, որ զայս հիւանդութ՟իս շնորհեաց ինձ, բայց երկնչիմ զի գուցէ տ՟ր ա՟ծ պակասեցուսցէ ինձ զվարձս յերկինս· վ՟ն քո այդքան խոնարհամիտ սպասաւորութ՟եդ· և նա՛ ասէ ո՛չ այդպէս՝ այլ վ՟ն քեզ սպասաւորելոյ առաքեցաւ այսր։ Եւ այնպիսի մ՟բ վիճաբանութի՟ զօր հանապազ լինէր 'ի մէջ ն՟ց. և որչափ ձգնաւորն սպասաւորէր հիւանդին։ այն չափ և ս՟քն զևս լաւագոյն սպասաւորել ցանկայր։ Իսկ հիւանդն ոչ տայր թոյլ նմա. զի աւելի համբերելով առաւել վարձ յա՟յ առցէ։ Ապա՛ յետ հնգետասան ամաց հիւանդ սկսաւ համբուրել զձեռս ձգնաւորին շնորհակալ լինելով նմա սակս բարերարութե՟ նորին։ և անապատաւորն հայցէր յա՟յ յայտնել նմա թէ ու՟ր երանելի հոգին ելանիցէ 'ի մարմնոյն՝ և ցուցանէ նմա. քանզի յորժամ 'ի կէտ վերջին մերձ եղև լուաւ զձայն որ ասէ ե՛կ սիրելի իմ. յայնժամ երանելի հոգին այն սկսաւ խօսել առ ա՟մ զգայութ՟իս մարմնոյ իւրոյ՝ շնորհակալ եմ 'ի ձէնջ հնազանդք եղէք ինձ. աչք՝ զի ոչ ցանկանայիք ունայնութե՟ց. ականջք՝ զի ոչ լսէիք սնոտեացն. ձեռք՝ զի ոչ սիրէիք զհեշտութ՟իս։ ոտք՝ զի ոչ ընթանայիք զհետ նանրութե՟ց։ հոտոտելիք՝ զի արհամարհէիք զփափկութ՟իս։ ճաշակելիք՝ 'ի փափուկ կ՟րացն։ Արդ դու ո՛վ մարմին իմ հանգիր 'ի խաղաղութե՟. զի 'ի ժամանակի իւրում փոխանակ վաստակոց քոց առցես զվարձն յաւիտենական։ և զա՛յս ասացեալ երանելի հոգին այն հանգերձ երգաբանութ՟բ հրեշտակաց գնաց յերկինս։

Զօրական ոմն վազելով զկնի որսոյն եկն 'ի ծառաստունկ ինչ. և լուաւ զձայն մար Է դոյ յոյժ քաղցր և հեշտալուր՝ զարմանայր թէ ուստի եղանէր ձայնն. և մտեալ 'ի ներս եգիտ զոմն բորոտ յոյժ չարաչար վիրաւորեալ. մինչ զի մարմինն պատառանկանէր 'ի նմանէ. զոր իբրև ետես ոչ գիտէր թէ զինչ արասցէ. ապա մտախոհ լեալ մերձ եկն առ նա և սիրով ողջունեաց զնա՛ հարցանելով թէ ո՞վ իցէ նա որ այնքան քաղցր եղանակաւ երգէր պատասխանի ետ բորոտն՝ ես եմ. յայն ժամ զարմացեալ զօրականն ասէ. զի արդ՝ կարիցես ուրախանալ 'ի մէջ այդպիսի ցաւոց անկեալ. և նա ասէ. 'ի մէջ ա̃յ և իմ ոչ ինչ բաժանէ. միայն պարիսպ ի հողոյ. այսինքն մարմին իմ, որ իբրև քակտեսցի առ նա երթայց. և զի յա̃մ աւուր տեսանեմ թէ քակտի և պակասի մարմին իմ ուրախանամ, և 'ի խնդութե̃ երգեմ, սպասելով մինչև իսպառ աւերման մարմնոյ իմոյ. զի առանց արգելման կարացից երթալ առ տ̃ր ա̃ծ աղբիւրն կենաց.

Է **Ե**րկու կրօնաւորք երբեմն 'ի ճանապարհի գտին զհիւանդ մի անկեալ յերկրի լի̃ բորոտութբ̃ յոյժ խոցոտեալ և կեղով հարեալ. որ ողբաձայն աղաղակէր առ ն̃ս. և զօգնութ̃ի ինոցանէ հայցէր. և նք̃ հարցին ցնա թէ զինչ տկրութ̃ի ունիս. պատասխանի ետ 'ի խորոց սրտէ. սաստիկ ցաւ զմարմին իմ ըմբռնեալ ունի. և մին առաւել քան զա̃մ զիս չարչարէ և վշտացուցանէ՝ որ եթէ յաւուր յայսմիկ ոչ գտից զօգնութ̃ի յումեքէ, կարծեմ

վաղ

վաղվաղակի մեռանիմ, քան զի զքիմս իմուն իմ լի՛ այրեցեալ թարախով 'ի սաստիկ իհիւանդութե՟ս, յայնժամ աշակերտն առեալ վերացոյց յերկրէ. և հայրն վանաց զձեռս իւր ձգեաց 'ի քիմս հիւանդին. Իսկ նա լալագին ձայնիւ սկսաւ աղաղակել. հայր մի՛ շօշափել զձեռք իմ 'ի քիմս իմ. զի ցաւս ոչ թողու. բայց եթէ կամիս զցաւս իմ թեթևացուցանել. 'ի բերան քո մերձեցո՛ զքիմս իմ. և այնպէս շրթամբք զթարախ 'ի դուրս քարշեա՛. յայնժամ հայրն այն մեծահաւատ խոնարհեցաւ առ հիւանդն և համարելով կարօղ դօղ զցաւս նր՟ թեթևացուցանել. 'ի բերան էառ զմարմին որ դոյն ա՟յ. և յորժամ ինքըն քարշեաց զթարախ առժամայն զարմանալի մարգարիտ անկաւ 'ի բերան նր՟. Իսկ աշակերտն բառնալով ընդ մէջ զտ՟րն 'ի վեր նայեցեալ ետես զերկինս բացեալ. և 'ի վ՟ր գլխոյ տ՟ն զոր 'ի ձեռս իւր ունէր խաչերևցաւ՝ և տեսանէր զհրեշտակ, զի ընդ առաջջի իջանէին. և ասէ՛ ցհայրն. հա՛յր այր այս զոր ես ձեռօքս բռնեմ. և դու բերանովդ ունիս, հաւատայ ինձ զի նոյն ինքն է տ՟ր մեր յս՟ քս՟. որ վ՟ս մեր զինքն մատնեաց. և իբրև կամէին ըմբռնել զտ՟րն՝ համբարձաւ ընդ ամպս երկնից ասելով. որով հետև դուք ծառայք իմ ոչ ամօթ արարիք զիս 'ի տառապանս իմ, 'ի ցաւս իմ, և ոչ զձեզ յամօթ արարից յարքայութե՟ն հօր իմոյ. ժառանգու

թե

թն ձեր ընդ իս է. և որք յիշեսցեն զձեզ յաղօթս գտցեն յարքայութն իմում։ Զայս ասացեալ համբարձաւ յերկինս, և յաներևոյթ եղև յաչաց նց. յայնժամ նց զարմացեալ գոհացան զայ. և ասէ՛ հայրն ցաշակերտսն՝ եղբայր՝ քո վարձուցն աղագաւ այսպիսի տեսութն արժանացաք. քան զի այնքան խոնարհութի և հնազանդութի ունիս մինչ զի զոր ինչ մի անգամ մարդկային լեզու կարէ հրամայել դու յօժարութբ սրտի կատարես։ Իսկ նա ընդ դէմ ասէ. ո՛չ այդպէս հայր՝ այլ դու որ հանապազ զմարմինն և զարիւն տր ունական պատարագ ես, առաւժանի եղեր տեսանել զնա 'ի մարմնի զոր միշտ ունիս 'ի մտի։

Ե Այր ոմն ազնուական ըստ աշխարհի մարմնով գեղեցկատես. սա անքննելի դատաստանաւ այ անբժշկելի բորոտութբ հարեալ եղև. իբրև. ետես զի ո՛չ էր հնար նմա բժշկել. վստահացաւ 'ի միտս իւր և յուսահատ գոլով 'ի փրկութի անձին իւրոյ ասաց 'ի բարկութն ած էառ յինէն զմարմին գեղեցիկ. և այսպիսի պարծենայր եղկելին այն. իբր թէ վրէժխնդիր եղև փոխանակ հիւանդութն իւրոյ. զոր հոգին իւր վն մեղաց սատանայի մատնեալ էր։ Ապա թողեալ 'ի բաց զերկիւղ այ յայտնապէս վաշխից չարաց պարապէր. և համարձակ 'ի մեղս թաւալէր, մինչև յետ սուղ ժամանակի կելով անապաշ խար մեռաւ և 'ի դաշտն Թաղեալ եղև ։

Յաղագս Հիւրասիրութե̃ն. Գլուխ ԽԷ.

Այր ոմն այր 'ի հռոմքաղաքէ բարեմիտ և ա̃ երկիւղած յ̃յ որ անխտիր զկրօնաւորս և զաղքատս 'ի տուն իւր յօժարութ̃բ սրտի ընդունէր, և յորժամ ծերացաւ 'ի մարմնաւոր ընչից աղքատացաւ. վ̃ն որոյ խիստ տխրէր և 'ի միտս իւր վարանէր. զի ոչ կարէր զսովորական մարդասիրութի̃ առնել հիւրից և օտարաց քանզի և զիւր պէտս ոչ կարէր ուստեք լցուցանել ։ Արդ՝ յորժամ 'ի միում գիշերին յանկողնի իւրում այսր աղագաւ խիստ նեղասրտէր. ահա արթնութե̃ լուաւ զձայն որ ասէր առ նա. տեսնի՛ զոէր զոր բազում ժամանակս անձանձիր 'ի հիւրասիրութե̃ յանձն առնուիր, որոյ սակս և 'ի յետին չքաւորութե̃ն եկիր. արդ կամիմ ոչ միայն հանդերձելումն քեզ հատուցանել. այլ և աստ յայսմ աշխարհի ։ Ասա այս ինչ մեծատուն թէ կամիմ զայգի իմ ընդ քո փոխարկել որ լաւագոյն է քան զնորին. և նա յօժար մտօք յայդմ հաւանի. և յորժամ զնա՛ ըստանձնաս փորեա՛ 'ի մէջ այգւոյն և գտցես զոր ոչ երբեք հռոմքաղաք տեսեալ է. զայս ձայն անփոյթ արար. դարձեալ երկրորդ և երրորդ անգամ ձայն ա̃յ 'ի նմանէ պահանջէր. ապա յարուցեալ գնաց առ մեծատունն. և մատուցանէր զայգին իւր ընդ նորին, յորում մեծատունն յօժարութ̃բ հա ւանեցաւ. և ասաց թէ ո՞րքան գնոց քո այգիդ աւելի իցէ կամիմ քեզ հատուցանել. բայց աղքատն ասաց թէ ո՛չ կամիմ. այլ այգի ընդ այգւոյ հաւասար իցէ, և այս այսպիսի եղև: Արդ՝ աղքատն ծանուցեալ զայս որդւոյ իւրում 'ի ծածուկ, որ էր միածին. և երկուս դստերաց. և առաքեալ զն՟ս գնաց 'ի տեղին այն, որ յայտնեալ եղև նմա 'ի տ՟նէ. և յորժամ շատխոր փորեցին և ո՛չ ինչ գտին. որդին և աղջկունքն ծաղր առնէին զհայրն իւրեանց զի խաբեցաւ: Իսկ նա ասէր ո՛չ երբէք հաւատամ զի խաբեցայ: Ապա յորժամ շատխոր ևս փորեցին 'ի մէջ մեծամեծ քարանց գտին զաման մի մարմարեայ լի՛ ջրով, և 'ի վ՟ր ն՟ր պըլորեայ շուշա՛յ լիպալասանով. և 'ի վ՟ր գլխոյ շուշային փոքր բղուկ կաճեայ. և 'ի մէջ ն՟ր. գ՟. մեծագին ակունք. զմրուխտ. կարկեհան և շափիւղայ, ոչ դուզնաքեայ: Արդ՝ զի Ջուրըն զայն թեթև համարելով հեղին յերկիր. որ հեղեալ ուր մի անգամ դիպեցաւ յերկաթեղէն գործիս որովք փորէին, առ ժամայն զերկաթի գոյն յոսկի գեղեցիկ փոխարկեաց քան զի այն Ջուրըն էր յարենէ և 'ի մարոյ վասիլիսքոսի, 'ի կերպ կուլապի քարշեալ և պարզեալ որ ով մարդիկք Ճարտարք նոյնպիսի արուեստի սովորեն յայլ նիւթ յոսկի փոխարկել, բայց ա՟ծ ո՛չ կամեցաւ թէ անմեղուն առն այնորիկ արատ ինչ կրեսցէ, վ՟ն այսորիկ Ջուրըն այն հեղեալ յո՛չ ընչացաւ. իսկ պալասան ուլ զի ունէր զտեսութին աչաց տկար․ անգիտութե̃ իբր այլ իմն սոսկ ձիթով քանիցս անգամ օծեալ զկատարեալ աչաց զտեսութին իսկ ընկալեալ․ յետոյ գիտացեալ թէ պալասանէ մեծագնոյ վաճառեաց զայն նոյնպէս և զայն մեծագին ակունս մեծածախ գնով վաճառեաց․ և եղև կարի մեծատուն երևելի․ և գոհացաւ զա̃յ․ և զկնի իւր մահուան՝ որդւոյ և թոռանց բազում ինչ եթող։

Յաղագս Հոգւոյ կենաց խգ․

Դէպ եղև երբեմն զի ոմանք գինի ըմպէին 'ի պանդոկի․ և մտեալ 'ի գինարբուսն խօսէին ընդ միմեանս զանազան իրաց․ յետոյ զրոյց անկաւ 'ի մէջ թէ զինչ լինելոց է զկնի աստի ելանելոյ․ յայնժամ մի 'ի նոցանէ ասէ վայրապար քահանայք խաղառնեն զմեզ, որք ասեն թէ հոգիք զկնի աստի կենացս կենդանի են՝ զայս ասելով ամ̃քն ծիծաղեցան։ Իսկ ահա ոմն մարդ ուժեղ և մեծահասակ եկեալ նստաւ մերձ առ նմա և հրամայեաց գինի բերել՝ սկսաւ ըմպել և հարցանել թէ զինչ ընդ միմեանս խօսէին։ Պատասխանի ետ առաջինն թէ յաղագս հոգւոց մարդկան զրուցէաք զի եթէ կամիցի ոք զհոգին իմ գնել․ դիւրագին վաճառէի զնա․ և զոր ինչ առնուցում փոխարէն գինւոյ գինն յօժարութե̃ տաց․ և յորժամ ամ̃քն զանմիտ բանս նր̃ ծաղր առնէին․ հիւրն ասէ․ ես զայդպի սի վաճառօղ խնդրեմ, և յօժարեմ գնել · ասա՛ ո՞րքան գնոց վաճառես զնա · իսկ նա բացեալ զբերան իւր ասէ, այսքան · և առժամայն գինն կորեցին · և գնօղ հոգւոյ ըզդրամ համարեաց ։ Եւ յորժամ ա̃մքն ուրախութ̃ե ըմպէին լի՛ բաժակաւ · այն որ զհոգի իւր վաճառեալ էր ո՛չ ինչ հոգայր · յորժամ երեկոյ եղև վաճառական ասէ · ժա՛մ է զի իւրաքանչիւր ոք դարձցի 'ի տուն իւր, բայց մինչ չև երթիցեմք յառաջ դատաստան արարէք · եթէ ոք գնեսցէ զձի · և նա ունիցի սանձ 'ի բերան իւր, մի թէ չիցէ սանձն այնորիկ որ գնեաց զձին · պատասխանի ետուն ա̃մքն 'ի մի բերան · թէ այդ նոյնպէս է ։ Եւ ահա՛ այն հոգեվաճառ թշուառականն յահէ սկսաւ դողալ ։ իսկ վաճառականն առեալ զնա առաջի աչաց ամենեցուն բարձրացոյց 'ի վեր հոգով հանդերձ և մարմնով տարաւ ընդ իւր 'ի դժոխս՝ քանզի սատանայ էր 'ի կերպարան մարդոյ · զի ով այլ ոք իցէ որ զհոգի մարդոյ գնէ · եթէ ո՛չ ևս որ միշտ և հանապազ խնդրէ զմարդոյ հոգի կորուսանել ։

Յաղագս Հպարտութե̃ կրօնի դ.

ա̃ Անապատաւոր ոմ̃ն բնակէր մերձ 'ի վանից միաբանակեցաց · և հիւանդացեալ առաքեաց առ հայր վանաց աղաչելով զի եկեսցէ առ նա՛ և հաղորդեսցէ յա̃ծային խորհրդոյն · իսկ հայրն առեալ զոմն եղբայր լուա կաց զի հաղորդեցուսցէ զնա․ մինչ դեռ եր թայլն, ոմն աւազակ լուեալ զձայն զանկակի ընթացաւ զհետ ն՟ց մինչև 'ի սենեակ անապատաւորին․ և եկաց առաջի դրան՝ անարժան զինքն համարելով մտանել 'ի խուց այնպիսի առն սրբոյն։ Եւ իբրև անապատաւորն խոստովանեցաւ և հաղորդեցաւ․ աւազակն կացեալ ո՛չ հեռի 'ի դրանէ հանդերձ խոնարհութ՟բ սրտի իւրոյ ասաց, երանի էր ինձ թէ լինէի իբրև զքեզ։ իսկ անապատաւորն հպարտութ՟բ սրտի, և ինքնահաճութ՟բ ասէ, զայս իրաւ՟ի խնդրէիր իբրև զիս, յայնժամ եղբայրն լուակաց հոգեզարդ․ որ և զծածուկ գաղտնիս սրտից յա՟յ իմանայր․ սկսաւ դառնապէս լալ․ և յորժամ հայրն ընդ եղբօրն այնորիկ ելեալ գնաց, աւազակն այն 'ի հեռաստանէ զհետ ն՟ց երթայր, կարդալով առ ա՟ծ զի ցուցցէ նմա զճշմարիտ զղջումն և ուղղութն վարուց․ քան զի հաստատեալ էր 'ի միտս իւր խոստովանել առաջի հօրն և ո՛չ ևս յաւելուլ մեղանչել․ այլ ապաշխարել վ՟ն մեղաց իւրեանց․ և մինչ դեռ վազէր անկաւ և 'ի սկոյն մեռաւ․ զայս տեսեալ եղբայր այն յոյժ զուարձացեալ սկսաւ ուրախանալ։

Յորժամ եկին 'ի վանս հայրն եհարց ցեղբայրն թէ վ՟ն էր այդպէս լուռ և եթկաս․ Եւ նա պատասխանի ետ՝ հայր յաւուր միում հրամայեցեր ինձ լալ․ և ես յօրէ յայնմանէ մի՛շտ լուռ կայի․ միայն թէ ոչ զիս հարցանէր ապա խօսէին. ասէ ցնա՛ հայրն ո՞ր աղագաւ լացեր, յորժամ տայի զհաղորդութ̃ին անապատաւորին այն սրբոյ և վ̃ն է՛ր ծիծաղեցար յորժամ աւազակն այն չարագործ զկնի մեր վազէր կամելով կողոպտել կամ սպանանել, և յայնպիսի մեղս իւր մեռաւ. պատասխանի ետ երիցայրն, հա՛յր պատճառ լալոյն իմոյ այս էր, զի յորժամ ետուր զհաղորդութ̃ի ճգնաւորին այն հիւանդին. յայնժամ աւազակն կացեալ արտաքոյ դրան 'ի խոնարհ սրտէ ասաց՝ ո՞չ թէ լինի իբրև զքեզ. իսկ ճգնաւորն հպարտութե̃ սրտի պատասխանեաց՝ զա՛յս յօժարութե̃ կարես խնդրել. ապա մեռաւ և դատապարտեցաւ վ̃ն այնորիկ լացի. բայց աւազակն որ մեր զկնի ընթանայր. և յորժամ զհաստատուն միտս ունէր խոստովանել՝ և ո՛չ կողոպտել զմեզ կամ սպանանել. և յորժամ վազէր անկաւ և մեռաւ. հրեշտակաց առեալ զհոգի նր̃ ուրախութե̃ յերկինս տարան. քան զի զղջումն նր̃ այն քան էր մինչ զի զպատիժ ժամանակեա՛ և յաւիտենականաց ջնջեաց:

Է Օդիւսահայր ումն ածին 'ի վանս կրօնաւորաց. զի աղօթիւք հանցեն զդևն ի նմանէ. հայր վանացելոց նր̃. առեալ ընդ իւր զոմն կրօնաւոր մեծ անուն. զորմէ գիտէր զի էր անարատ և մաքուր մարմնով. և ասէ ցդևն եթէ այս կրօնաւոր հրամանն տացէ քեզ ելանել. զի ո՛րդ կարիցես ընդ դիմանալ:

նալ։ պատասխանի ետ դևն՝ ո՛չ երկնչիմ ՚ի դևմանէ․ զի թէպէտ անարատ, սակայնէ՛ հպարտ։

Յաղագս հեզութեան Գլուխ ԽԵ․

Երբեմն հրեշտակ ՚ի կերպարանս մարդոյ երթայր ընդ ճգնաւորի ուրումն․ և եկին ՚ի տեղի ինչ ուր դէշ անկեալ դնիւր յոյժ ժահահոտ․ և յորժամ ճգնաւորն ծածկէր ըզ քիմս իւր՝ ասէ ցնա հրեշտակն՝ ընդէ՞ր ծածկես զքիմսդ․ և նա՛ ասէ ո՛չ կարեմ տանել զայս ժահահոտութեանս․ և իբրև փոքր ի՛նչ յառաջ գնացին, ահա պատահեցաւ նց̃ երիտասարդ ոմն գեղեցկատես պայծառ զգեստիւք զարդարեալ ի՛նքն և ձի, որ հեծեալ էր և մի՛նչդեռ բացեա՛յ էր ՚ի նոցանէ հրեշտակն սկսաւ խնուլ զքիթն իւր․ ընդ որ յոյժ զարմացեալ ճգնաւորն ասէ, վ̃ն է՛ր այդպէս ծածկես զքիմսդ․ պատասխանի ետ, այդ երիտասարդ բղջախոհ և հպարտ անհամեստ առաւել զզարշելի հոտ բուրէ առաջի ա̃յ և հրեշտակաց, քան թէ դէշ ինչ հոտեալ առաջի մարդկան։

Ուսակրօն քահանայ ոմն յաւուր միում ըզ փրկական խորհուրդ կատարէր, և իբրև եկն ՚ի բանս այս, թէ աղաչեմ զքեզ ամե՛նակալ ա̃ծ հրամայեա՛ զայս ընծայս տանել ՚ի ձեռն հրեշտակի քո առաջի երկնային սրբոյ սեղանոյ․ և խոնարհեցուցեալ զգլուխս իւր ըստ սովորութե̃ն աղօթէր ետես զհրեշտակս շուրջ զսեղանովն, գեղեցկատեսիլ և զուարթ երեսօք 'ի հանդերձս պայծառ և զարմանալիս զարդարեալս, 'ի մէջ նց̄ ոմն երևելի և առաւել փառաւոր և պայծառակերպ, առաջի այլոց առեալ 'ի սեղանոյ զնշ̄ խորհուրդն՝ մի այն 'ի վեր տանէր. և առաջի երեսաց ա̄յ մատուցանէր՝ Իսկ այլք հրեշտակք որք շուրջ կային. այն չափ ուրախանային ընդ հրեշտակին այն միկ. մինչ զի գրեթէ իւրաքանչիւր ոք զնշ̄ խորհուրդն առնոյր 'ի վեր տանէր, և ա̄յ ընծայեցուցանէր. Ապա քահանայն զերեսս իւր 'ի սեղանն դարձուցեալ զոր ինչ եդեալ էր եգիտ. և այնպիսի լի՛ ուրախութ̄ե զմնացեալ խորհուրդն կատարեաց.

ե̄ Սբ̄ն յոհան ոսկեբերան ընդ բանիւ տրարեալ զպալջ լատիոս զօրագլուխն և դօքսիայ թագուհոյն, և ո՛չ թոյլ տայր նմա յեկեղեցւոյ ելանել. մինչև դարձուսցէ ուրումն այրի կնոջ զյիսուն ոսկի որում բռնութ̄ե առեալ էր, դոյն լուեալ և դօքսիայ զայրացաւ և բարկութ̄ե 'ինքին ժամու առաքեաց երկուս զօրավարս հանդերձ ե̄ ճ̄ զօրականօք, հրաման տուեալ էր նց̄. զի բռնութ̄ե մտեալ յեկեղեցի զպավլ լատիոս յափշտակեսցեն 'ի ձեռաց եպիսպ̄սին. և 'ի տուն նորին տարցին որք իբրև եկին 'ի դուռն եկեղեցւոյ. և կամէին' ներս մտանել. տեսին զհրեշտակ ա̄յ առ դրան գաւթին սուսերա մերկ որք արգելոյր զնս̄ մտանել 'ի գաւիթն. Իսկ նց̄ տե սեալ զայնպիսի սքանչելիս յոյժ զահի հարեալ և դարձեալ առ Թագուհին ասէր և դողութ̃բ զոր ինչ տեսին պատմեցին՝ և թէ ոմ̃ ընդդէմ նց̃ զսուսեր 'ի պատենից էր հանեալ. զոր լուեալ Թագուհին զարհուրեցաւ, և լի՛ եղև դողութ̃բ սակայն այնու ոչ դադարեաց 'ի բարկութ̃է և ատելութ̃է ընդ դէմ սրբոյն յոհաննու։

Կրօնաւոր ոմ̃ն ճգնազգեաց հանդերձեալ էր փոխիլ աստի, զի հանգիցէ աշխատանաց. և առցէ վարձ 'ի տ̃նէ փոխանակ վաստակոց իւրոց. հայրն վանաց գնացեալ 'ի սենեակ իւր, և խոր քնով ըմբռնեալ ետես 'ի տեսլեան երազոյ երկուս երիտասարդս գեղեցիկս դիմօք և զգեստուք յոյժ պայծառս որք զշուշանս. վարդս. և զայլ զանազան ազգի ազգի ծաղիկս 'ի վ̃ր յատակի եկեղեցւոյ վանացն սփռէին. մինչ զի բովանդակ յատակըն ծաղկեալ և բազմադիմի գունովք յարդարեալ երևէր։ Զայն տեսեալ հայրն զարմանայր և իբրև վ̃ան մեղութ̃ն կրօնաւորութ̃ն ինախանձ վառեալ ասէ ցն̃ս. զինչ է այս ով պատանեակք զի ընդ դէմ սովորութ̃ն մերում զյատակ եկեղեցւոյս ծաղկօք յօրինէք. և զնորադոյն զբանդ զայդ 'ի վանս մուծանէք. և նք̃ ասեն ցնա մի՛ ինչ զարմանայր. և մի՛ խափաներ զգործն մեր առ 'ի կատարել զնա. քան զի ահա աստ կատարեաց 'ի տօն նոր սրբոյն ա̃յ, յորոյ տօնախմբութ̃է հրեշ- ՟Է տակք զուարճացին · և երգեցին զերգս տ՟ն 'ի սիոն · մինչ դեռ զայն խօսէին զանկակ հարին · և յարուցեալ հայրն վանաց փութանակի եկն հանդերձ այլ եղբարբք առ հիւանդ մերձ 'ի մահ · և մեծաւ պաղատանօք զհոգին ն՟ր ա՟յ յանձն արարին, ստուգիւ գիտելով և յուսալով զկրօնաւորն զայն գոլ նոր մ՟րքն · որ հրեշտակք ա՟յ տանելով 'ի հանգստեան յաւիտենականն նոր տօն և նոր ուրախութ՟ի առ ժամայն կատարեալք էին:

Յաղագս Ս՟ Ֆրանչեսքոսին Գլուխ · ԽԴ ·

ա Երեք աւազակք էին նշանաւորք որք 'ի քաղում տեղիս քաղաքում չարիք գործեալ էին, սոքա երբեմն եկին 'ի վանս ուրեք և խնդրէին կերակուր ինչ · աթոռակալ վանիցն՝ սաստիկ կշտամբեաց զ՟ն ասելով · դուք գողք և աւազակք · արիւն արբուք, ոչ միայն ոչ ամաչէք այլոց վաստակս յափշտակել, այլ և համարձակիք անամօթաբար ծառայից ա՟յ տուեալ ողորմութ՟ի ուտել · ոչ էք արժանիք զի զձեզ երկիր բառնայցէ · զի ոչ յա՟յ երկնչիք և ոչ 'ի մարդկանէ ամաչէք, 'ի բաց կացէք հանդերձ չարագործով ձերովք, և ոչ ևս յաւելուցէք դառնալ այսր · Իսկ ն՟ք զայրացեալք մեծաւ տրտմութ՟բ դարձան: Եւ ահա հայր վանացն յայլ ուստ եկեալ 'ի նմին աւուր ունելով ընդ իւր քանի՛ մի նկանակ · և մի կճուճ գինի · և լուեալ յաթոռակալէն թէ զինչ պատասխանի տուեալ էր աւազակացն. յանդիմանեաց զաթոռակալն ասելով. թէ զայս անիրաւաբար արարեր. զի մեղաւորք դիւրագոյն առաւել դառնան մարդասիրութբ̅ և քաղցրութբ̅. քան թէ սպառնալեօք և խստութբ̅. քան զի և ք̅ս վարդապետն մեր որոյ զաւետարանն խոստացաք պահել. ասաց ոչ է պիտոյ բժիշկք ողջոց, այլ հիւանդաց և ոչ եկի կոչել զարդարս այլ զմեղաւորս. վ̅ն որոյ բազում անգամ ընդ մեղաւորս ուտէր: Արդ՝ որով հետև զայդ արարեր ը̅դ դէմ սիրոյ. և ընդ դէմ պատուիրանին ք̅ի. վ̅ն որոյ հնազանդութ̅ե հրամայեմ քեզ. զի առեալ զայս նկանակ և շուշայ գինի մեծաւ փութով խնդրեսցես զաւազակսն. և գտեալ ն̅ց ընծայեսցես յանուանէ իմմէ. և ապա՛ ծունր եդեալ առաջի ն̅ց խոնարհութբ̅ ասասցես զյանցանս քո. քան զի այդպիսի անմարդութբ̅ և խստութբ̅ գնացեր ընդ ն̅ս: Իսկ աղաչես զն̅ս զի մի՛ առաւել զայսպիսի չարիս գործեսցեն, այլ երկիցեն 'ի տ̅նէ ա̅յ. և մի՛ վնասեսցեն զընկերս. և թէ զայս արասցեն ես խոստանամ զա̅մ կարիսն ն̅ց լցուցանել. զայս ասացեալ առ ն̅ս դարձցիս անդրէն: Իսկ յորժամ նա գնաց խնդրել զաւազակսն, հայր վանաց եկաց յաղօթս առ ա̅ծ. զի տացէ ն̅ց զղջումն և դարձ յապաշխարութ̅ի: Արդ՝ յորժամ աւազակքն ուտէին զողորմութ̅ին զայն զոր առաքեալ էր ն̅ց այրն ա̅յ. սկսան ընդ միմեանս խօսել ասելով. վա՜յ մեզ եղկելոյս և թշուառականացս. թէ ո՜րչափ մեծ և անտանելի տանջանք դժոխոց մեզ մնան որք ո՛չ միայն ստացուածոց կողոպտեմք զմարդիկք, այլ և ՚ի կենաց հանեմք. սակայն սակս այսքան մեծամեծ չարաց և մարդասպանութեանց ամենևիմք ոչ երկիւղ ա̃յ. և ոչ խիղճմտաց չունիմք. և ահա եղբարք այս ա̃ր որ եկեալ է առ մեզ վ̃ս սակաւ բանից որովք զմեզ արդարապէս չարաց մերոց փոխարէն յանդիմանեալ էր. այսքան զինքն խոնարհեցուցանէ առաջի մեր. և զանձն դատապարտ առնէ և մանաւանդ այսպիսի առն առաքինոյ և սրբոյն զայնչափ առատ խոստումն մեզ պարգևեաց հացիւ և գինով զմեր պէտս ելից։ Արդ և դոքա են ո̃րք ա̃յ, որ զերկինս ժառանգեն։ Իսկ մեք որդիք կորստեան օր ը̃ս օրէ յաւելումք մեզ զտանջանս դժոխային յաւիտենականս. ո՛չ գիտեմք եթէ կարացից գտանել զողորմութի̃ ա̃յ. վ̃ս այնքան չար և զազիր գործոց մերոց։ Արդ՝ յորժամ զայսպիսի բանս ոմն ՚ի նոցանէ խօսէր. երկուք այլք ասեն. ապա՛ զինչ առասցուք. և նա ասէ երթիցուք առ այրն ա̃յ. և եթէ մեզ յոյս դիցէ. զի մեք այնպիսիք չարագործք կարիցեմք գտանել զողորմութի̃ ա̃յ զոր ինչ միանգամ մեզ պատուիրեսցէ արասցուք միայն թէ կարասցուք զոգիս մեր ազատել ՚ի գեհենոյն դժոխոց. Այժմ հաւանեալ երեքեանս. իսկ և իսկ առ այրն ա̃յ եկեալ ասեն. Հայր մեր վ՟ն մեծութ՟ե չարաց մերոց տարակուսիմք. արդեօք կարիցեմ գտանել զողորմութ՟ի ա՟յ. բայց եթէ դու զմեզ յուսադրես. թէ ա՟ծ ոչ դարձուսցէ զերեսս իւր ՚ի մէնջ, ահաւասիկ պատրաստեմ ընդ քեզ ապաշխարել. և ա՟մի զոր ինչ մի անգամ պատուիրեսցես մեզ կամիմք լինել հնազանդ։ Իսկ այրն ա՟յ ընկալաւ զն՟ս սիրով և քաղցրութե՟բ. զանազան ապացոյց ՚ի մէջ բերելով հաւատարմացոյց զն՟ս յաղագս գտանելոյ ըզմարդասիրութ՟ի ա՟յ։ Եւ ևս խոստացաւ գըտանել ն՟ց ՚ի տ՟նէ ա՟յ զշնորհս և զողորմութ՟ի ուսուցանելով զն՟ս։ Արդ աւազակքն այնք հրաժարեալք յաշխարհէ, և ՚ի չար գործոց իւրեանց ընկալեալք եղեն յառնէ ա՟յ, որք և ՚ի նա զգեստիւք և սրտիւ յարեցան։ Երկուքն ՚ի նոցանէ զկնի սուղ ժամանակի ստացեալք վարս գովելիս հրաւիրեալք և ՚ի տ՟նէ յաստե աշխարհէ փոխեցան։ Իսկ երրորդն երկարեկաց՝ որ միշտ զմտաւ ածելով զծանր և զանազանս մեղս իւր, այնքան ապաշխարութ՟ի ետ զանձն իւր. մինչ զի հնգետասան ամ, որքան որ եկաց հացիւ և ջրով միայն անցուցանէր՝ միշտ բոկ ոտիւք շրջէր. ՚ի մէջ գիշերի յառնէր յաղօթս. և անտի մինչև ցառաւօտ ոչ ննջէր. Եւ ապա այնպիսի ճգնասէր առաքինութ՟ե առ ա՟ծ միջնորդութ՟ե հրեշտակաց փոխեցաւ։

Յաղագս Մարգարտանոցին գլուխ. ԽԷ.

ա Թագաւոր ոմն լեհաց նստեալ յաթոռ տէրութե՟ իւրոյ, ոչ վարէր զիշխանութե՟ ըստ իրաւանց և բարեպաշտութե՟ն ո՟ղ յօրէն թագաւորաց՝ այլ ընթանայր զհետ անիրաւութե՟ զեխութե՟. զրկանաց. և ա՟մ ամբարշտութե. վ՟ս որոյ խրատեալ և սիրով յանդիմանեալ 'ի հօր եղբարցն իւրոց որ խորհրդակիցք էին, ոչ անսայր բանից՝ ն՟ց. այլ մանաւանդ դժուարանայր և խորհէր բառնալ զն՟ս 'ի կենաց 'ի սադրելոյ կնոջ իւրոյ: Ապա յետ այնորիկ անկեալ 'ի մահճս իբր թէ կարի հիւանդացեալ. կոչեալ առ ինքն զհօրեղբարս իւր. և նք̅ անյապաղ եկեալ. և շուրջ զմահճօք պատեալ մեծաւ տրտմութե՟ և ցաւագին սրտիւ մխիթարէին զնա. Իսկ նա ասէ ցն՟ս. ահա ժամանակ մահուան իմոյ եհաս և ստուգէր զբանս իւր. և զկին և զորդիս 'ի ն՟ս յանձն առնէր. ուստի պալատ արքունի լի՛ եղև կոծով և լալով, և արտասուալից ողբովք կանանց. բայց թագաւորն իբր թէ գոլով 'ի մահ՝ զհօրեղբարսն իւրաքանչիւր յանուանէ կոչելով. ի նշան սիրոյ հրամայեաց բաժակ լի գինով խառնեալ մահուադեղ տալ ց՟ն՟ս. և իբրև կարգաւ ա՟մքն արբին. ինքն կարծիս տայր ննջել և ի քուն լինել. իսկ նք̅ մեծաւ սիրով և պատուով ողջոյն տուեալ գնացին 'ի տունս իւրեանց. և իբրև մահադեղն 'ի ներս ազդեաց, և զաղիս ն՟ց ըմբռնեաց.

նեաց. առ ժամայն 'ի մտաց թափեցան. և անկեալ մեռանին: Օ՜ այս 'ի մնացեալ կէին թագաւորին՝ հրամայեաց զմարմինս նց՟ անթաղ արտաքս ընկենուլ. կոչել զնս՟ դաւաճանող վս՟ կենաց թագաւորին. և համբաւ տարածեաց թէ յայտնի և արտաքոյ իրաւամբք զդատաստան պատուհասի կրեցին. և թէպէտ յայտնի նշան մահադեղին երևէր 'ի մարմինս և յաղիս նց՟ սակայն վս՟ երկիւղի բռնաւորին ոչ ոք իշխէր ընդ դէմ խօսել: Այլ Տր՟ Ած՟ արդար դատաւոր ոչ կամէր զայսպիսի ամբարշտութն՟ առանց պատուհասի առնել. քանզի փտեալ մարմնոյն նց՟ մեծամեծ մկունք ծնան զորս ոչ երբէք այսպիսի տեսանել. և դիմեցին 'ի վր՟ այն ամբարիշտ մարդասպանին՝ և կնոջ նր՟. և որդւոց նց՟, և թէպէտ փողչէին 'ի ծովակս և յաշտարակս. և շուրջ զնոքօք հուր վառէին, և ամ՟ ուրեք զհետ երթային. ոչ բարձրաբերձ ամրոցք օգնէին, ոչ զէնք ծառայից որք զմկունս փախուցանէին կարէին ինչ գործել. այլ մանաւանդ որ զնս՟ սպանանէին. ևս աւելի ծնանէին. ապա այնու հետև անձար մնացեալ. և ոչ ինչ օգնութն՟ գտեալ. ամ՟քն 'ի բաց 'ի նոցանէ գնացին. յետ այսորիկ մկունքն նախ զորդիս կերան. ապա զկինն 'ի վերջոյ զինքն թագաւոր երկելի և թշուառական. ոչ առ ժամայն՝ այլ սակաւ սակաւ մեծաւ տառապանօք և չարչարանօք կերան 'ի բերթի միում: Իսկ այնպէս կա տարեցան անէծք հօր նր. յորժամ սովորէր իւր անձին և այլոց ասել. մկունք կերիցեն զիս կամ մկունք կերիցեն զքեզ:

բ Ոմն քրիստոնեայ ճանապարհորդակից լեալ ուրումն հրէի. կամէր սպանանել զնա վն դրամին: ասէ ցնա հրէն այն մի՛ առներ զայս մեղս, գիտեա՛ զի երբեմն այս եկեսցէ ՚ի յայտ: ասէ քրիստոնեայն ո՞վ կարէ յայտնել զայն. զի աստ մեկուսի եմք ՚ի մարդկանէ, պատասխանի ետ հրէայն՝ սալամբ թռչունք որ շուրջ զքև թռչին. բայց քրիստոնեայն այն փոյթ արարեալ եսպան զհրէն այն և էառ զդրամն: Արդ՝ ՚ի միում աւուր յորժամ կայր առաջի կրակի. և սալամբ խորովէին ՚ի վն շամփուրի, զորս տէրն իւր ըմբռնեալ էր. սկսան ձայն հանել. իսկ նա՛ զահի հարեալ դեղնեցաւ. և գոյն երեսաց փոխեցաւ. յիշեալ զբանն հրէի. այսր և անդր հայէր, զայն տեսեալ տէրն գիտաց թէ չէ առանց պատճառի. և այրն զահի հարեալ խոստովանեցաւ. և այնպէս զփայտ է կախեալ եղև.

Յաղագս Մարիամու սրբոյ կուսին Գլուխ. խբ.

ա Այր ոմն պատկերահան յոյժ արուեստաբան. և անուանի ՚ի գովեստ արուեստին իւրոյ, այլ և սիրելի սրբոյ կուսին մարիամու. վն առաքինի ասէր վարուց իւրոց. սա՛. քանիցս անգամ պէտք էր քաշել զպատկեր սատանայի կարի զազրատես և գարշելի դիմօք նկարէր

րէր զնա․ Իսկ սատանայ յանուրջս երևեալ նմա ցասմամբ․ և սրտմտութ՟բ մեծաւ հարցանէր թէ վ՟էր նոյնպիսի զազրատես զիմ պատկեր նկարես պատասխանի ետ պատկերահանն․ բարւոք զայս առնեմ․ զի զոր ինչ չար գործեցի հանապազ դու է իբր յորդորիչ այլ և ջանս զիմ հաստատուն միտս պղծել խորհրդով տապալել։ Իսկ սատանայ առաւել ևս սպառնալով սաստէր նմա, զի դադարեսցի վիրաւորելոյ զնա․ բայց ծաղկարարն առաւել այսու քաջալերեալ առ ՚ի նեղութ՟ի հասուցանել սատանայ։ Դէպ եղև զի ՚ի վ՟ն պարսպի ուրումն եկեղեցւոյ պատկեր ամենաս՟բ կուսին մարիամու նկարեաց․ և ըստ հմտութ՟ե արուեստին իւրոյ ո՟չ պատշաճէր զանազան գունովք և դեղորէիւք գեղեցկապէս և փառաւորապէս զայն կատարեաց, և ՚ի ներքոյ ոտից պատկերի ա՟ծածնին ըստ այնմ որ ասացեալ էր առ օձն․ թէ նա կոխեսցէ զգլուխ քո․ զսատանայ ձևացոյց թխագոյն դեղովք, զազրատես․ գարշելի․ մթագոյն ո՟չ վայել է զազրասիրին և իշխանի խաւարին։ Զայս տեսեալ սատանայ յոյժ զայրացաւ․ և խնդրեաց ՚ի ա՟յ հրաման տալ իւրեն զի արասցէ նմա չար․ որ ընկալեալ թոյլ բայց յիւր ՚ի նախատինս և ՚ի փառս ք՟ի և մօր ն՟ր կուսին մարիամու․ քան զի մինչ դեռ տախտակամած շինուածն և գերազանց շինուածըն հաստահիմն էր, և զպատկերն զայն նկա րէր. և ահա մեծ մրրիկ և փոթորիկ զտան տախտակս և փայտս շարժեաց և յերկիր կործանեաց, զոր յորժամ զգաց զարհուրեալ ծաղկարարն, զսիրտ և զձեռս համբարձ առ պատկեր տիրամօրն: Զարմանք մինչչև այլք եկեալ էին զի օգնեսցէ նմա. պատկերն ըզ ձեռն ձգեաց, և ընկալաւ զնա և անվնաս պահեաց. յայնժամ ամենքն որք մերձ էին զՔ՟ս փառաւորէին և զմայրն ն՟ր և զաստուածային նախատանօք հայհոյէին՝ վ՟ն խաբէութ՟ն և նենգութ՟ն ն՟ր:

ե Այր ոմն անուն Թէոփիլոս, յերկրին Կիլիկիոյ. 'ի միում քաղաքաց աւագ եկեղեցւոյ գործակալ, բարի վարուք և գործովք զարդարեալ. ամ՟ գործս և զհոգաբարձութիւ եկեղեցւոյ խոհեմաբար և մեծաւ փութով կառավարէր և հոգայր՝ որոյ աղագաւ ամենեցուն թէ եկեղեցականաց և թէ աշխարհականաց էր սիրելի և բաղձալի: Զկնի մահուան եպիսկոպոսին ամենքն միաձայն վարկանէին զնա արժանի գահաթոռոյն եպիսկոպոսութ՟ն: Իսկ նա յորժամ հրաժարէր այնպիսի պատուոյ և անարժան զինքն ասէր. զի ոչ էր հնար այլազգի լինել. զայլ ոք յաթոռ եպիսկոպոսութ՟ն ձեռնադրեցին: Յետ այսորիկ ոմանք հաւանեցուցին զեպիսկոպոսն, զի զԹէոփիլոս յիւր առաջին գործոյ 'ի բաց հանցէ, և զայլ ոմն 'ի տեղի ն՟ր կացուսցէ, յորժամ այս այսպիսի եղև խորամանկ թշնամին հոգւոց մարդկան. ձգեաց 'ի սիրտ ն՟ր ամբար

հաւա

հաւաձութ̃ի. և այն չափ պարտեաց զնա, մինչ զի առ կախարդաւ ՚ի յօգնութ̃ի գտանել ապաստան եղև. գնաց ումն հրէայ ամբարիշտ. և դիւաշունչ կախարդ՝ ասելով. աղաչեմ զքեզ օգնեա՛ ինձ. զի եպիսկոպոսն ետ զիս ՚ի նախատինս և յարհամարհանս. պատասխանի ետ նմա, յայսմ գիշերի եկ առիս. և ես տարայց զքեզ առ տէրիմ, որ քեզ օգնեսցէ ո̃ղ և կամիս, բայց զգուշ լեր մի՛ երկիցես. յորժամ որոտումն ինչ լսիցես. և մի՛ խաչ յերեսդ հանիցես. Իսկ նա՛ թշուառական խոստացաւ: Եւ ահա՛ առ ժամայն եցոյց նմա զբազմութ̃ի զօրաց ՚ի հանդերձս սպիտակս և լուսափայլս. և ՚ի մէջ նց̃ իբրև թագաւոր նստեալ. և նա՛ ինքն էր սատանայ. և ծառայք նր̃. հրէայն զձեռանէ Թէոփիլեա՛ ունէր. և սատանայ ասէ ցնա՛. վս̃ որո՛յ իրաց զայդ այրդ առ մեզ ածեր: պատասխանի ետ զրկեալ է եպիսկոպոսէ իւրմէ, առ ձեզ օգնութ̃ի դիմեաց: ասէ սատանայ եթէ կամիս ծառայ լինել, ես դմա օգնեցից և արարից, զի առաւել քան զառաջին մեծասցիս: Զա՛յս լուեալ Թէոփիլոս խոստացաւ զամ̃ առնել զոր ինչ հրամայեսցէ նմա և անկեալ առ ոտս նր̃ համբուրէր և աղաչէր: յայնժամ ասէ սատանայ ցհրէայն՝ ուրասցի զորդի մարիամու և զմայր նր̃. զի զնս̃ ատեմ. և զնոյն ձեռագրեսցէ. յայնժամ պատասխանի ետ Թէոփիլոս. ուրանամ զքս̃ և զմայր նր̃. և գրեաց մուրհակ իւրով կնքով կնքեաց· և դարձան մեծաւ ուխութ՟բ կորստական· 'ի վաղիւ եպիսկոպոսն գործառութ՟ի սատանայի· կամ մանաւանդ նախախնամութ՟բ ա՟յ զղջացեալ 'ի բաց եհան զգործականն· և զԹէոփիլոս մեծաւ պատուով յառաջին տեղին նստոյց և մեծարեաց· խոստովանելով զի չար արար ընդ նմա· և զի ընդ դէմ ն՟ր մեղանչեաց։ Ա՛րդ՝ յորժամ 'ի մէջ նոյնպիսի չար մխիթարութ՟ե սուղ ինչ ժամանակ եկաց· արարիչն ա՟մի և փրկիչ, որ ո՛չ կամի զմահ մեղաւորի յիշելով զառաջին ն՟ր հաւատարիմ ծառայութ՟ի եկեղեցւոյ, և թէ ո՛րպ բարերար առաղքատս· և մարդասէր առ կարօտեալս, ե՛տ նմա տեղի ապաշխարութ՟ե, որ 'ի միտս իւր եկեալ սկսաւ զղջանալ զոր ինչ արար, ասելով վա՜յ ինձ եղկելոյս· յո՛ երթայց· կամ ո՞վ ինձ ձեռնտու լիցի, զք՟ս և զմայր ն՟ր ուրացայ, եղէ ծառայ սատանայի· և ետու 'ի նա զձեռագիր իմ, ո՞վ զնա 'ի ձեռանէ ն՟ր խլեսցէ· ա՛րդ՝ յորժամ զայսպիսի բանս· և զայլ սոցին նմանս դառն արտասուօք ասէր· յայնժամ ազդմանէ ա՟յ ասէ դիտեմ զի ք՟ս որդի ա՟յ· զոր ես թշուառական չարաչար ուրացայ· ծնաւ 'ի սրբոյ կուսէն մարիամայ՝ սակայն երթայց առ նա· և բոլորով սրտիւ աղաչեցից զնա· մինչև զողորմութ՟ի ա՟յ միջնորդութ՟բ նորին ընկալայց։ Արդ՝ սրտապնդեալ և քաջալերեալ ա՟մ խոնարհութ՟բ գնաց յեկեղեցի ամենաս՟բ ա՟ծածնին·

ղ. Խ. տիւ. և զ. Խ. գիշեր աղօթիւք և պահօք եկաց. անդադար աղաչելով զտիրամայրըն. զի յահագին վիշապէն և յուրացութենէն զոր արար ազատեսցի։ Ո կնի. Խ. աւուրցըն այնոցիկ՝ 'ի մէջ գիշերի երևեցաւ նմա ամենա͞սբ կոյսն մարիամ ասելով. ո՛վ մարդ խոստովանեա՛ զք͞ն զոր ես ծնայ. որ և դու ուրացար զնա. զի է ողորմած և մարդասէր. և նա ընկալցի զարտասուս ապաշխարութ͞ե. քո. քան զի վ͞ս այնորիկ մարմին զգեցաւ յինէն զի փրկեսցէ զմեղաւորս. յայնժամ Թէոփիլոս մեծաւ պատկառանօք և լալագին արտասուօք յերկիր անկեալ ասէ. հաւատամ ի հայր ա͞ծ. և փառաւորեմ զորդին ա͞ծ 'ի հօրէ նախ.քան զյաւիտեանս, և 'ի վերջին աւուրս 'ի քէն ս͞բ կոյս մարիամ ծնեալ, է յ͞ս որ վ͞ս մեր մեղաց զչարչարանս յանձն էառ։ Ո այս խոստովանիմ. զայս ընդունիմ, այսմ մեծաւ փափաքանօք ցանկամ, և ընդ այս հաճեալ. այսու դաւանութ͞բ և աղօթիւք աղաչեմ ընծայեա՛ զիս որդւոյ քում. ո՛վ ամէն երջանիկ սրբուհի կոյս. իսկ նա խոստացեալ անյայտ եղև։ Եւ Թէոփիլոս ևս մեծագոյն պնդութ͞բ երից աւուրս կայր յաղօթս յորդառատ արտասուօք։ Դարձեալ երևեցաւ նմա լուսաճաճանչ ւոյն արուսեակն.քաղցր և զուարթ երեսօք, և ասէ, ո՛վ մարդ ա͞յ. ահա վ͞ս աղաչանաց իմոց ընկալաւ տ͞ր զարտասուս և զաղօթս քո, միայն թէ այդպէս կայցես մինչև 'ի մահ. ո՜վ ինև խոստացօղ որդւոյ իմոյ. պատասխանի ետ նա ես առաւել պահեցից ըզ խոստումն իմ ո՜վ տիրուհի. բայց ես մեղաւոր և յաւէտ չարագործ. աղաչեմ զանսպառ աղբիւր գթութե՟ քո. զի կարացից առնել զնիծեալ մուրհակն ուրացութե՟ն իմոյ, որով որսացաւ զիս սատանայ. զի այդ իսկ է որ զիս մանաւանդ չարչարէ և տառապեցուցանէ: Եւ յորժամ դարձեալ զերիս աւուրս եկաց յաղօթս, միւսանգամ երևեցաւ նմա յանուրջըս մայրն ողորմութե՟. ունելով ՚ի ձեռն ըզ ձեռագիրն կնքեալ. և եդեալ ՚ի վ՟ր լանջաց ՚ի քուն եղելոյն գնաց: Իսկ նա զարթուցեալ և զձեռնագիրն տեսեալ. անճառելի ուրախութ՟ե լի՛ եղև. և առժամայն ընդ առաւօտըն որ էր կիրակի օր. գնացեալ եկեղեցի ուր էր եպիսկոպոս հանդերձ ժողովրդովք. անկեալ առ ոտս նր՟ զամ՟ պատմութի՟ չարաց իւրեանց յայտնեաց նմա: Եւ թէ ով դիմեալ առ ջըհոր ողորմութե՟ սբ՟ կոյսն մարիամ, նորին մաղթանօք և միջնորդութ՟ե զապաշխարութի՟ և զարտասուս իւր տ՟ր ընկալաւ՝ և թողութի՟ շնորհեաց նմա: Եւս և թէ ով ձեռանգիր կնքեալ անիծեալ ուրացութե՟ն դարձուցեալ էր ՚ի նա պատմեաց նմա. և զի առաջի ամ՟ցն ընթերցեալ լիցի. ետ ցպիսկոպոսն: Յայնժամ եկեղեցականք և ժողովրդականք և ժողովուրդք այնպիսի մարդասիրութ՟ե ա՟յ շարժեալք մշտնջենաւոր փառա-

բանու

քանութ՟ն տ՟ն տ՟յ մերոյ մատուցանէին։ Իսկ եպիսկոպոսն լցեալ խնդութ՟ե աղաղակէր առ ժողովուրդն զանազանապէս յորդորելով և ստիպելով վ՟ն առ 'ի գոհութ՟ն մատուցանել ք՟ի տ՟յ, և փառաբանութ՟ն ամենաս՟բ կուսին մարիամու մօր ն՟ր։ բայց Թէոփիլոս էր անկեալ 'ի վ՟ր երկրի, որում զկնի աղօթից եպիսկոպոսին հրամայեաց նմա յառնել և զձեռագիրն զայն ա՟մ՟ցն այրել։ Ապա եպիսկոպոսն մատուցեալ առ սեղանն զփրկական պատարագ կատարեաց, և զԹոփիլոս հաղորդեցոյց մարմնոյ և արեան որդւոյն ա՟յ։ և առ ժամայն երեսք ն՟ր իբրև զարեգակն պայծառացին։ զայսպիսի արգայլակերպու՟ի տեսեալ ա՟մ՟ցւնց առաւել օրհնաբանէին զա՟ծ։ որ առնէ զսքանչելիս միայն։ և զամենասրբուհի կոյսն մարիամ մեծապէս օրհնաբանէին։ իսկ երջանիկն Թէոփիլոս գնացեալ յայն տեղին յորում տեսեալ էր զերանաւէտ տեսիլն։ անշարժ եկաց անդ զերիս տիւս։ և ապա ողջունեալ զա՟մ՟ն։ զհոգին իւր աւանդեաց 'ի ձ՟ռն ամենաս՟բ երրորդութ՟են։ և տիրամօր աղաչանի իւրոյ։ և 'ի նոյն տեղւոջ զկեանս իւր վճարեաց։ յորում և մարմին ն՟ր թաղեցաւ։

Այր ոմն երիտասարդ մեծ ազգի, որում հայր ն՟ր մեծատուն և ազնուատոհմն գոլով։ բազում ինչս և մեծութ՟իս եթող 'ի մեռանիլ իւրում։ սա կամեցաւ զինուորիլ և անուն մեծ ստանալ և պատիւ ժամանակեա՛ գ

'ի

'ի մեծ աղքատութին անկաւ. քանզի մեծամեծ ծախս առնէր՝ և առատ պարգևս իւրաքանչիւր ումեք բաշխէր՝ զի կէլ ուր մը տիցնորէն ոչ բաւէին առնել. ուստի սկսաւ զստացուածս իւր ծախել. էր մերձ նր̄ դրացի ոմն յազատ տանէ բարեպաշտ և մեծատուն որում երիտասարդն այն զիւր գիւղս զանդաստանս զոմանս ծախեաց, և զոմանս գրաւ ետ: Եւ յորժամ ոչ ինչ ունէր զոր ծախեսցէ. խորհեցաւ 'ի տար աշխարհ երթալ. համարելով դիւրագոյն յօտար երկրի մուրանալով, քան թէ 'ի մէջ ընտանեաց և ազգականաց զնախատինս չքաւորութեն տանել: Ունէր զոմն ըշտեմարանապետ՝ այր ամբարիշտ անուամբ միայն քրիստոնեայ, որ զանձն իւր մատնեալ էր ծառայութին սատանայի: Նա տեսեալ զնր̄ իւր տրտում. և ոչ գիտելով զպատճառն. ասէ ցնա տր̄ իմ կամիս լինել հարուստ, և նա ասէ. կամէի լինել հարուստ՝ միայն թէ տմ̄ իսկ ըշտեմարանապետն ասէ մի երկնչիր եկ ընդ իս՝ և բարի եղիցի քեզ. և գնաց զկնի նր̄ 'ի գիշերի 'ի տեղի ինչ տղմալիր. սկսաւ խօսիլ ընդ ումեք, հարցանէր զնա երիտասարդն թէ ընդ որում խօսիս: պատասխանի ետ ըշտեմարանապետն, դու լուռ կաց մի հոգար թէ ընդ որում խօսիմ: Եւ յորժամ տր̄ն իւր եհարցցնա թէ որում խօսիս. ետ պատասխանի թէ ընդ սատանայի. յայնժամ երիտասարդն սկսաւ յոյժ դողալ․ և ըշտեմարանապետն ասէ՛ ցսատանայ․ ահա՛ զայրս զայս ազնուական զո՛ր իմ տու քեզ ածի մեծութենդ քում երկրպագելով․ զի օգնականութբ՟ քո ով յաւաջի մեծութի՟ և ստացուածս հասանիլ կարիցէ․ ասէ՛ սատանայ, եթէ կամիցի ինձ հաւատարիմ լինել, տաց նմա բազում մեծութիս և յաւելից նմա փառս․ և պատիւս գերագոյնըս քան զնախնեաց նորին․ պատասխանի ետ ըշտեմարանապետն․ յօժարութբ՟ եղիցի քեզ հնազանդ և հաւատարիմ, եթէ այդպիսի իրաց հանդիպի․ և նա՛ ասէ եթէ զայս կամի ունի յինէն՝ պարտի ուրանալ զբարձրեալն։

Զայս լուեալ երիտասարդն ոչ կամէր ունել։ Իսկ որդի կորստեան մարդն այն՝ ասէ զի՛ է զի երկնչիս ասել զայն մէկ բանն թէ ուրանամ․ ապա՛ եղկելի երիտասարդն այն հաւանեալ բանիցն ըշտեմարանապետին ուրացաւ բերանով զարարիչն իւր․ և զայս արարեալ յաւել սատանայ, չև ևս գործ կատարեալ․ հարկէ զի և զմայրն բարձրելոյն ուրասցիս․ քան զի նա՛ է որ մեծամեծ վնաս մեզ առնէ, զի զորս որդին արդր՟ դատաստանաւ դատապարտէ, մայրն դարձեալ՝ զի է յոյժ ողորմած և գթասէր, հաշտեցուցանէ ընդ որդւոյ իւրում․ Դարձեալ մարդն այն որդի անիծից աղաղակեաց յականջս երիտասարդին զի հնազանդեսցի յայդմ իրի տն՟ իւրում․ զի ոչ զորդին՝ նոյնպէս և զմայրն նորին ուրասցի․ յայս բանիցս յոյժ զարհուրեցաւ՝ և քան զչափն յաւէտ երկուցեալ ասէ․ զայդ ոչ երբէք առնեմ․ ապա ամբարիշտն ըշտեմարանապետն ասէ՝ է՞ր վ՟ս մեծ արարեր և ըզնուաչն՝ մեծ է արարիչ քան զարարածս․ և նա ասէ ոչ երբէք զնա ուրացայց․ թէ և հարկ ինձ լինիցի տանէ ՚ի տուն մտանել և մուրանալ զամ՟ աւուրս կենաց իմոց՝ և ոչ հաւանեցաւ առնել․ Եւ ապա ոչ ինչ ներծործեալ երկրպագեանն ունայն՝ հանդերձ մեծամեծ յանցանօք․ ըշտեմարանապետն խրատելով, և տ՟րն հաւանելով․ Եւ մինչ դեռ երթայի զճանապարհ այն եկին ՚ի տաճար մի երիտասարդն իջեալ ՚ի ձիոյ, ետ ցըշտեմարանապետն զի բռնեսցէ զնա․ ասելով՝ կա՛ց աստ մինչ դարձայց․ և մտեալ յեկեղեցին յառաջ քան զծագել արուսեկին․ անկաւ առաջի պատկերին և յա՟մ սրտէ գոչէր առ մայրն ողորմութե՟․ և ՚ի վ՟ր պատկերին այն էր նկարեալ սրբուհի կոյսն մարիամ, ունելով ՚ի գիրկըս զմանուկն յ՟ս ք՟ս․ Եւ ահա՛ վ՟ս արժանաւորութե՟ և սրբութե՟ տիրամօր որ է մեծապայծառ աստղ ծովու․ արեգակն արդարութե՟ ծագեաց ՚ի սիրտ ն՟ր․ քան զի վ՟ս անուան մօր իմոյ զոր ոչ կամեցաւ ուրանալ․ այնքան ետ նմա զղջումն սրտի․ մինչ զի ՚ի տասնիկ լալոյ գոչէր․ և կողկողագին կոծելով զեկեղեցին լնոյր․ ՚ի նմին ժամու մարդն այն ազատ որդի որ ունէր զամ՟ ստացուածս

երիտասար

երիտասարդին 'ի խնամոցն ա՟յ 'ի նոյն եկեղեցի եմուտ, քան զի կարծէր թէ պաշտօն ա՟ծային կատարէին · մանաւանդ զի մեծաձայն աղօթս լսէր, մերձ եմուտ և գտեալ առաջի սեղանոյն զերիտասարդն իւրեան ծանօթ արտասուելով, և համարելով թէ միայն զիւր թշուառութ՟ին ողբայր՝ գնաց յետ կոյս սեան՝ սպասելով՝ թէ զինչ իցէ յետ այսորիկ ։ Եւ յորժամ զահագին անուն ա՟ծութե՟ն զոր ուրացեալ էր, ո՛չ համարձակէր յիշել և կոչել. այլ միայն առ գթասէր մայրն ն՟ր լալագին ձայնիւ բախէր՝ երկոքին լուան յորժամ ամենօրհնեալ տիրամայրն միջնորդն քրիստոնէից շրթամբք պատկերին իւրոյ առ որդին իւր միածին զայս ձև բանից ասէր, ո՞վ ամենաքաղցր որդի իմ ողորմեա՛ մարդոյդ այդմիկ. և մանուկն ո՛չ տայր պատասխանի մօրն, այլ զերեսս 'ի նմանէ դարձուցանէր ։ Եւ յորժամ դարձեալ աղաչէր ասելով. թէ խաբեցաւ՝ թիկունս դարձոյց առ մայրն ասելով այրդ այդ ուրացաւ զք՟ս, զինչ արարից դմա ։ Զկնի բանիցս այսոցիկ պատկերն կանգնեցաւ՝ զմանուկն եդ 'ի վ՟ր սեղանոյ և առ ոտս ն՟ր խոնարհեալ ասէր, աղաչեմ զքեզ ո՞վ միածին իմ թո՛ղ զմեղս դորա վ՟ն իմ, և առ ժամայն մանուկն զմայրն վերացուցեալ պատասխանեաց ո՞վ մայր իմ ո՛չ երբէք կարացայ անտես առնել զաղաչանս քո՝ ահա՛ վ՟ն քո զա՟մ յանցանս թողում դորայ ։ Զառաջին թողեալ էր զտանջանս յաւիտենականս վ՟ն զղջման սրտի իսկ այժմ պատիժ եթող վ՟ն աղաչանաց մօր։ Ա՛րդ՝ յարուցեալ երիտասարդն ել ՚ի տաճարէ թէպէտ տրտում վ՟ն անկման. սակայն ուրախ վ՟ն թողութե՟ն մեղաց։ Եւ և այն ազատ որդի զկնի ն՟ր ՚ի ծածուկ, և իբրև ոչ ինչ գիտելով հարցանէր ցնա, թէ վ՟ն էր այդ չափ արտասուալից և սառուցեալ աչս ունիս. ետ պատասխանի թէ հողմ արար զայս։ Եւ նա ասէր, տէր ոչ է ինձ ծածուկ պատճառ տրտմութե՟ն քո. ունիմ դուստր մի միամօր։ եթէ կամիս ցնա ունել կին քո՝ զա՟մ ստացուածս քո ՚ի քեզ դարձուցից՝ ևս և ընչից իմոց ժառանգ զքեզ արարից՝ հաւանեցաւ երիտասարդն։ Եւ դարձեալ ՚ի տուն իւր այրն այն և պատմեաց կնոջ իւրում, և նա ևս հաւանեցաւ. հարսանիս արարին. և զա՟մ ինչս և ստացուածս երիտասարդին ետուն ՚ի նա։

Դ Էր ոմն քահնայ իմաստուն, և քաջ հմուտ ա՟ծային գրոց. և ՚ի մաստասիրական արտաքնոց. սա՛ բազում ամս մեծ տարակուսանս կրէր յաղագս կուսութե՟ն ամենաս՟բ ա՟ծածնին. քան զի անկարելի նմա թուէր թէ կոյս մայր լինիցի. սակայն զի էր ուղղափառ և երկիւղած յոյժ տխրէր և վարանէր ՚ի միտս վ՟ն այնր երկբայութե՟ն իւրոյ. և ցանկայր յումերէ ըստ ա՟ծատուր լուսաւորութե՟ն՝ ազատիլ յերկբայութ՟է յայնմանէ. ա՛րդ՝ լուաւ զումեմնէ առաքինի ասէր ձգնաւորէ. եթէ ա՟ծային լուսով զարդարեալ. գնաց առ նա։ Իսկ ճգնաւորն գիտացեալ հոգւովն սրբով զգալուստ նր՟ և զտրտմութ՟ի. ել ընդ առաջ նր՟ և զաւազանաւ որ 'ի ձեռին ունէր հարկանելով զերկիր ասէր. ո՛վ եղբայր վարդապետ՝ մարիամ կոյս էր յառաջ քան զծնանելն. և առ ժամայն ուր էարկ զաւազանաւ՝ անդէն շուշան յոյժ գեղեցիկ բուսաւ։ Երկրորդ անգամ էարկ ասելով. ո՜վ եղբայր վարդապետ՝ մարիամ կոյս էր 'ի յղանալն. և երկրորդ շուշան բուսաւ։ Եւ ընդ հարցանելն երրորդ անգամ և ասել. ո՛վ եղբայր վարդապետ՝ մարիամ կոյս մնայր զկնի ծնանելոյ. նոյնժամ երրորդ շուշան բուսաւ վայելչագեղ. Եւ զա՛յս արարեալ ճգնաւորին փախեաւ. Ի՛սկ քահանայն այն ազատեցաւ յերկբայութ՟ե իւրմէ. և գոհացաւ զայ՟. զի և զմիտս նր՟ լուսաւորեաց. և զմէգ խաւարի 'ի նմանէ փարատեաց։

ՍՄ̄Ի երիտասարդ լեալ կրօնաւոր. է՛ր յոյժ առատամիտ փիլիսոփայական հանճարով զարդարեալ. յետոյ մեծաւ ջանիւ ա՟ծային գրոց վարդապետութ՟ե մտադնէր. բայց զի չև ևս ո՛չ ունէր զմիտս լուսաւորեալ յա՟ծային շնորհացն. և ո՛չ աղօթիւք կրթեալ, զարմանայր ընդ վարդապետական լուսափայլութ՟ե. և զի ո՛չ կարաց ըմբռնել. սկսաւ հողմով անհաւատութ՟ե շարժիլ. և այնր և անդր դեգերել. խորհելով թէ կրօնաւորքն 'ի վր՟ Ե վիմի ճշմարտութեան հաստատագոյն ամրացուցեալ իցեն. հրէից, թէ հեթանոսաց, թէ քրիստոնէից. 'ի մէջ հեթանոսաց տեսանէր զի իմաստասէրք զկնի բնախօսութեան ընթանային. հրէայք՝ կը զօրէնս ա̃յ 'ի վաղուց հետեւեալ. և քրիստոնեայք կը զաւետարանաւ սրբով պարծենան. 'ի սոցանէ թէ որում պարտ էր հաստատագոյն հետևիլ երկբայէր. և որքան զմտաւ ածէր յայնքան յազդմանէ չարին 'ի խորագոյն խաւար մտաց և յերկբայութեան տարակուսանաց արկանէր. մինչ զի սրբուհին կոյսն ա̃ծածինն գթացեալ 'ի նա. կամելով զմոլորեալն 'ի ճանապարհ ճշմարտութեան ածել. երևեցաւ նմա և ասէ. Թիւրեցար 'ի ճանապարհէն ո՞վ թերահաւատ երկբայելով. թէ ո՛չ գտանես զճշմարտութիւն 'ի հաւատս որդւոյ իմոյ: Ա՛րդ՝ գիտեա՛ զի հեթանոսութիւն լի՛ է զանազան այսպիսի մոլորութիւնք. հրէայք ոչ ինչ ունին հաստատուն՝ զանազան ստուերաց հետևլին. միգով չարութեան կուրացեալք. իսկ աւետարանն նոր շնորհի զճշմարտութեանն յինքեան պարունակէ, որ աստուստ իսկ յայտնի՛ է. զի 'ի սէր 'ի խոնարհութիւն. և 'ի սրբութիւն ծաղկեալ է: Դու զայս երիս իրս 'ի կրօնաւորութիւնդ յոր մտեալ է՝ մաքուր հոգւոյ աչօք դիւրաւ կարես տեսանել: Ե՛ս եմ մարիամ մա՛յր ք̃ի, որ ո՛չ թողի ըստ բնածին քաղցրութեան իմոյ. զի քո գեղեցիկ հանճար խաբեալ իցէ՝ կամ 'ի կորուստն մերձեցի։ Եւ զա՛յս ասացեալ անյայտ եղև. զերիտասարդի 'ի հաւատս հաստատեալ և զօրացեալ հանդերձ մեծաւ ուրախութ̅բ սրտի եթող. որոյ յետոյ մեծ և երևելի այր աճեաց և բարուք զկեանս վճարեաց։

Մին քահանայ երթայր զճանապարհ այն և տեսանէր զաւաղակս որք ճեպով ընթանային զհետ նր̅, զի ըմբռնեսցեն զնա, և նա ո՛չ ունելով ուրեք թաքչիլ. անկաւ 'ի մէջ ցորենոյ, զի մերձէր 'ի հնձել. իսկ աւազակքըն զայն տեսեալ եկին 'ի տեղին ուր թաքուցեալ էր. քահանայն մեծաւ պաղատանօք կարդայր առ կոյսն մարիամ յօգնութ̅ն կոչելով. և 'ի խորոց սրտէ բազում անգամ զայս բանս երկրորդէր. ցո՛յց զքեզ մայրողորմութ̅ն ո՛վ տիրուհի. քան զի լուեալ էր յառաջագոյն, թէ ոմն մանուկ ընկղմեալ և մեռեալ յեկեղեցուջ առաջի պատկերի ամենամ̅ք կուսին մարիամու եղեալ. յորժամ քահանայք երգէին զերգն զայն, ուրախլե՛ր մարիամաստղ ծովային. և ասացին թէ ցո՛յց զքեզ մա՛յր ողորմութ̅ե. մանուկն կանգնեցաւ և յարեաւ։ Արդ քահայն յիշելով զզօրութ̅ն բանիցն այնոցիկ. զնոյն բանս 'ի սրտի և 'ի շրթունս ընտէ՛կ ստէպ երկրորդէր. վ̅ն որոյ աւազակքն խնդրէին զնա 'ի մէջ ցորենոյ այսր և անդր. և թէպէտ 'ի նոյն տեղի ուր թաքուցեալ կայր գային՝ սակայն զնա ո՛չ տեսանէին։ Եւ ո՛չ գը- Ղ տեալ դարձան ունայն 'ի տունս իւրեանց. Իսկ քահանայն ազատեալ 'ի ձեռաց նց՟ օգնականութե՟ սրբուհոյ ա՟ծածնին. գոհանայր զա՟յ. և փառաբանէր զամենաս՟բ կոյսն մարիամ. որ 'իսկապէսէ ապաւէն յուսացելոց 'ինա. և արագապէս հասանէ յօգնութի որ կարդան առ նա:

Է Լ՟ր երբեմն վիճումն 'ի մէջ հրէից և քրիստոնէից յաղագս հաւատոյ. քանզի հրէայք յամ՟ զօրութե՟ ջանային տապալել զհօտն սակս մարդանալոյն բանին ա՟յ ասելով. թէ անհնար է կուսի ծնանիլ. զոր լուեալ ոմն կոյր. և էր գրոց հմուտ՝ ընդդէմ եկաց հրէից. և այնքան յաղթեաց. մինչ զի ամ՟քն տեսանէին զնա պարտեալս 'ի նմանէ. յայնժամ ծաղր առնէին և հայհոյէին զկոյրն ասելով. դու մեղաւոր գոլով. ամենևինմբ 'ի մեղս ծընեալ ես և զի՞ արդ իշխեցեց զհաւատն քրիստոնէից հաստատել. ոչ ապաքէն յայտնի՛ է. թէ ք՟սն քո այնչափ զօրաւոր է, որ քեզ զտեսութի ոչ կարէ տալ: Առ այս ետ պատասխանի կոյրն. համբերեցէք մինչև ցերիս աւուրս և տեսանիցէք զզօրութի ա՟յ 'ի վ՟ր իմ. զայս լուեալ հրէիցն այպն առնէին զնա ասելով. արդ ապ և ք՟ն քո զոր հարքն մեր խաչեցին. ոչ կարէ զայս 'ի վ՟ր քո ցուցանել, զոր ինքն ոչ կարաց 'ի մահուանէ ազատիլ: Սակայն եթէ նա զքեզ լուսաւորէ առաջի աչաց մերոց, մեք ամ՟քն 'ի նա հաւատասցուք. և յայն ժամ յայտնի երևեցի. Թէ նա՛ է Ճշմարիտ որդի աստուծոյ. և ոչ ոք բայց 'ի նմանէ փրկիչ աշխարհի: Օ այս ասացեալ հրէիցն գնացին՝. և կոյրն գնացեալ 'ի ծածուկ առ հայրապետն՝ պատմեաց նմա զամենայն, ընդ որ յո՛յժ ուրախացեալ հայրապետն՝ հրամայեաց ա̅մ հրէիցն ժողովիլ եկեղեցի 'ի տօնի ա̅ծածնին, որ յետ երից աւուրց ա̅մ. քրիստոնեայք մեծաւ հանդիսիւ տօնելոց էին. եկն տօն և ա̅մ եկեղեցականք ժողովեալ էին 'ի պաշտօն գիշերային. նոյնպէս և բազմութիւնք յոյժ հրէից եկին. և ըզկոյրն լի՛ հաւատով և յուսով 'ի մէջ ատենին ածին. և յորժամ զգիշերային պաշտօն կատարացին. կոյրն աղաչէր: զի տարցեն զնա առաջի պատկերի սրբուհւոյ ա̅ծածնի. և անդ յեցեալ 'ի գաւազան. սկսաւ երգել զերգըն որ ինքն երկու աւուրբք յառաջ կազմեալէր, որոյ սկիզբն էր, ուրախ լեր մարիամ. Եւ յետ աւարտման երգոյն՝ լոյսն Ճշմարիտ յս̅ քս̅ միջնորդութ̅ ծնօղի իւրոյ, զորոյ զկուսութի̅ անարատ 'ի մէջ երգոյն դաւանեալ էր. զլոյս շնորհեաց աչաց կուրին, զոր յառաջագոյն լուսով հաւատոյ լուսաւորեալ էր:

Օ այս տեսեալ զքանչելիս քրիստոնէից սկին մեծաւ ուրախութ̅ե փա՛ռք 'ի բարձունս ա̅յ երգաբանել. և հրէայք հոգիք. Ե̅Ճ̅. 'ի նմին ժամու մկրտեցան. և ոմանք 'ի քաղաքէ փախեան. և ո՛չ ևս երևեցան:

Է̄ Ոմն հրեայ բնակէր մերձ առ փոքրիկ մատուռ յորում ոմն կղերիկոս զիւր սովորական աղօթս ա̄յ մատուցնէր · Նոյնպ̄ և ձայնիւ երգով փառաբանէր զս̄բ կոյսն մարիամ ա̄ծածինն · քանզի առ նա էր յոյժ աղօթասէր · և զի գիտէր թէ ազգն հրէից 'ի բնէ անտի կարի թշնամի էին կուսուն ամէն օրհնեալ տիրուհոյն · վ̄ն այնր 'ի պատիւ նորին' և մանաւանդ 'ի յամօթ և 'ի նախատինս այն ամբարիշտ հրէին որ մերձ բնակէր · և զօրութի̄ կուսական հայհոյէր · սովորութի̄ ունէր 'ի մէջ աղօթական այլոց երգոց, զորս 'ի փառս սրբոյ կուսին կատարէր զօրհանապազ · մըտեալ 'ի մատուռն այն · ծունր կրկնեալ առաջի պատկերի նորին զայն երգն · ուրախ լեր աստղծովային, ուղղիչ մարդկան ճանապարհին · որք 'ի ծովու մեղաց ծփին · նաւահանգիստ տանիս յերկին · ուրախ լեր մարիամ քաղցր ձայնիւ և աղօթասէր սրտիւ բարձրաձայն երգէր ։ Օ այս հանապազ լսէր հրէայն այն · քանզի ն̄ր լեզուն գիտէր · և կարծէր թէ զայն 'ի նախատինս և այպն կատականաց առնէր · և յոյժ 'ի վ̄ր ն̄ր զայրանայր · և սպասէր թէ ո̄պ զնա սպանցէ 'ի միումաւուր մտեալ 'ի մատուռն և տեսեալ զի միայնէր կղերիկոս եսպան զնա · և անդամ անդամ կտրեալ՝ առաջի սեմոց դրան մատուռին թաղեաց · բայց ամենամաքուր ս̄բ կոյսն մարիամ որ զգութ մարդասիրութե̄ իւրոյ և մեղա

ւորաց

ւորաց և սապերախտից ընաւորեցաւ ցուցանել յայսմ հաւատարիմ ծառայի իւրոյ և մարտիրոսի 'ի նեղութեան օգնութիւն եհաս, զմարմինն նորա 'ի մասունս հատեալ վասն ծառայութեան իւրոյ ժողովեալ. միւսանգամ գթասիրաբար կենդանացոյց. և կենդանւոյն հրամայեաց զի այնու առաւել ևս յօժարամիտ եղիցի 'ի ծառայել ինքեան. և յաղօթանուէր մաղթանս փոյթ, որոյ փոխարէն այնքան առատապէս զօգնութիւն գտեալ: Իսկ երիտասարդն իսկոյն դարձաւ առ սեղանն. և զնոյն երգն ուրախ լեր մարիամ առաւել աղօթական և բարձր ձայնիւ եղանակէր: Եւ յորժամ եկն 'ի բանս այնոսիկ. թէ յամօթ լիցի երբայեցի թշուառական և եղկելի, որ կուսութեան սրբոյ կուսին է հակառակ և թշնամի յամօթ լիցի թշուառական երբայեցի. ևս քան զևս զձայն բարձրացուցանէր, զի այնու բարձր ձայնիւ զմեծ փառաբանութիւն տպաւորեսցէ: Իսկ հրէայն որ վասն խափանելոյ ծառայութեան անարատ կուսին. և հանդարտութեան անչափ ատելութեան իւրոյ սպանեալ էր զնա. յորժամ լսէր թէ երգէր, առաւել ևս զայրանայր, ոչ եղեն իսկ. քանզի հրէայն լուեալ զայս համարէր զայլ ոք գալ. այլ յորժամ եկն և ետես հիացաւ. զի գիտէր զնա թաղեալ էր. և տեսանէր միւս անգամ յարուցեալ: Յայնժամ երիտասարդն զի մի այնպիսի սքանչելիք 'ի մոռացումն գայցեն. գնաց առ եպիսկոպոսն և կարգաւ զա՟մ պատմեաց նմա. ցուցանելով զսպին իւր նշան ՚ի տեղւոջ իւրաքանչիւր վիրաց վ՟ն հաստատութե՟ թողեալ։ Ապա եպիսկոպոսն զի սքանչելիքն յայտնի լինիցին կոչեաց զա՟մ ժողովուրդն և քարոզեաց ն՟ց յաղագս ողորմութե՟ և մարդասիրութե՟ սրբուհոյ ա՟ծածնին ՚ի վկայութի՟ բանիցն իւրոց զքրիստոսասէրդն ՚ի մէջ կացոյց. և որ ինչ եղև ընդ նմա պատմեաց։ Զա՛յս ա՟մ լուեալ ժողովուրդն փառս ետուն ա՟յ. և մօր ն՟ր ամենասրբոյ կուսին, որ զծառայս իւր ՚ի դէպ ժամու ոչ առնէ անտես։ Յորժամ լուան զայս դատաւորք քաղաքին. կալան զհրէայն և դատապարտեցին ՚ի մահ. բայց նա՛ ա՟մ սրտէ աղաչէր լինել քրիստոնեայ. և շնորհեցին նմա կեանս. որ յետոյ յա՟մ զօրութե՟ զկուսու՟ն սրբոյ կուսին հաստատէր որքան յառաջագոյն չարչարէր հակառակէր և թշնամանէր։

Թ Ամէնօրհնեալ սրբուհին կոյսն մարիամ, միշտ ծառայից իւրոց ՚ի յօգնութի՟ արագապէս հասանի, և որք ՚ի նմա՛ ապաւինին իզանազան յորոգայթից սատանայի ազատէ. զոր օրինակ ՚ի բազում վկայութե՟ց առաջի կայ պատմութի՟ս յայտնապէս մեզ ցուցանէ. քանզի այր ոմն ազնուատոհմն և պերճապատիւ՝ ազատաբարոյ և առատասիրտ գոլով զա՟մ ինչս և ստացուածս իւր անխոհեմաբար ցրուեաց. և յայնքան աղքատութի՟ անկաւ. մինչ զի սովորէր բազում ինչ այլոց տալ. ինքն փո քուն կարօտանայր: Սա՛ ունէր կին բարեպաշտ և երկիւղած յա̃յ. մանաւանդ առ ս̃բ ա̃ծածինն յոյժ աղօթասէր. յորժամ տօնախմբութի մերձենայր յորում սովորէր զանազան պարգևս բաժանէր՝ և ոչ ունէր զինչ տացէ. վասն մեծի ամօթոյ մինչ տօնախմբութիւնն անցանիցէ խոյս ետ 'ի տեղի ինչ առանձինն կծելով զթշուառութի իւր: Եւ ահա՛ ոմն հեծեալ ահագնակերպ 'ի վ̃ր զարհուրելի՛ ձիոյ նստեալ, եկն առ նա և զպատճառ տրտմութ̃են հարցանէր: Եւ յորժամ զա̃մ զեղեալն առ նա պատմեաց. ասէ ցնա. թէ 'ի փոքու իրի կամիս ինձ հնազանդ լինել. առաւել քան զառաջին փառօք և ձոխութ̃բ մեծացիս. և նա խոստացաւ իշխանին խաւարի. թէ զոր ինչ հրամայես յօժարութ̃բ արարից՝ միայն թէ զոր ինչ խոստացար կատարեցես: Եւ նա՛ ասէ. ահա գնացեալ 'ի տունքո խնդրեսցես յայս ինչ տեղւոջ, և գտանիցես այնչափ ոսկի. արծաթ. ակունըս պատուականս: Եւ ինձ փոխարէն յայս ինչ աւուրս ածցես առ իս այսր զկինքո: Ապա այսպիսի խոստմամբ այրն այն դարձաւ 'ի տուն իւր. և 'ի տեղւոջն ո̃ր լուաւ զա̃մ եգիտ զասացեալսն: Այնու հետև սկսաւ գնել զապարնս պարգևս բաշխել. զագարակս 'ի վարձու եդեալ յետս ազատել. և նորս գնել: Յորժամ օրն մերձեցաւ յորում խոստացեալ էր բերել զկին իւր. կո չեաց զնա առ ինքն և ասէ, նի՛ստ ՚ի ձի և ե՛կ ընդ իս ՚ի տեղի փոքր մինչ ՚ի բացեա՛. իսկ նա զայս լուեալ դողալով և զարհուրելով. ո՛չ համարձակէր ընդդիմանալ առն իւրում. զինքն յանձն արար ամենա սրբոյ կուսին ա՟ծածնին. մեծաւ պաղատանօք և արտասուօք՝ և գնաց զհետ առն իւրոյ: Յորժամ երթային զճանապարհ այն՝ կինն տեսեալ զեկեղեցի մերձաւոր ճանապարհաւ՟ն՝ էջ ՚ի ձիոյն և եմուտ ՚ի նա. և այրն կայր արտաքոյ: Արդ մինչ դեռ կացեալ յաղօթս բոլորով սրտիւ. զինքն յանձն առնէր սրբոյ կուսին ա՟ծածնին, առ ժամայն ՚ի քուն եմուտ՝ և ահա կոյսն մարիամ ՚ի կերպ նո՟ր ելեալ եկեղեցւոյն նստաւ ՚ի ձի, այրն կարծելով զիւր կինն գոլ երթայր. յորժամ եկին ՚ի տեղին նշանակեալ. ահա իշխան խաւարի մեծաւ երագութե՟ գայր: Եւ յորժամ մերձ եղև իսկոյն դողումն կալաւ զնա. և յահէ ո՛չ համարձակեցաւ մերձենալ. և ասէ ցզօրականն ո՛վ ամենաչար ա՟մ մարդկան. վ՟է՛ր զիս խաբեցեր՝ և փոխանակ այս քան բարերարութե՟ այսպիսի ինձ հատուցեր. ես ասացի զկին քո ածել. և դու զմայրն ա՟յ ինձ ածեր. ես զկին քո կամեցայ: և դու զմարիամ կացուցեր. քան զի կին քո մեծ վ՟նաս ինձ հասուցանէր. կամէի վրէժ առնուլ ՚ի նմանէ. իսկ դու զդա՛ ածեր այսր զի չարչարեսցէ, և ՚ի դժոխս առաքեսցէ զիս. զայս լուեալ զօրականն յո՛յժ զարմացաւ և 'ի զարմանց մանէ ոչ ինչ կարաց խօսել ։ Իսկ սր̃ կոյսն ած̃ածինն ասէ ցսատանայ · ո՛վ չար դև՝ որով հետև համարձակութ̃ե իշխեցեր վնաս ածել աղօթասէր աղախնոյ իմում · ոչ թողից զքեզ առանց պատժոյ · ահա այժմ վճիռ առնեմ 'ի վ̃ր քո՝ իջցես 'ի դժոխս · և առ յապա ոչ զոք վնասել համարձակեսցես, որք առ իս աղօթիւք ապաւինին ։ Ապա սատանայ վայելով և մեծապէս կոծելով անյայտ եղև · իսկ զօրականն իջեալ 'ի ձիոյ՝ անկաւ առ ոտս սրբոյ կուսին՝ կոր նա յանդիմանեալ հրամայեաց զի երթիցէ առ կինն իւր · որ յեկեղեցւոջ ննջէր · և պատուիրեաց 'ի բաց հրաժարել 'ի սովորական սատանայական մեծութ̃եցն ։ Արդ զօրականն գնացեալ յեկեղեցի եգիտ զկին իւր 'ի քուն · և զարթուցեալ զնա՛ պատմեաց նմա զա̃մ որ ինչ եղևն ։ Եւ դարձեալ 'ի տուն իւրեանց՝ զա̃մ ինչ սատանայական 'ի բաց ձգեցին՝ և հանապազ զամենասրբուհի կոյսն մարիամ · մեծապէս սաղմոսիւք և օրհնութ̃ե փառաւորէին · և շնորհիւ և բարերարութ̃ե տիրամօր կուսին՝ իմեծ փարթամութ̃ե հասին · և բարւոք զկեանս վճարեցին ։

Օ գերագոյն մաքրութ̃ի և զգեղեցկութ̃ի սրբուհւոյ կուսին ած̃ածնին՝ կամելով ցուցանել ած̃ային գիրք ։ և ո՛չ կարացեալ լիապէս յայտնել · և բաւականապէս գովել · միայն կարճառօտ բանիւք այսոքիւք պարու Ծ նակեաց ասելով. ամենևին գեղեցիկես մերձաւորիմ. և արատ ինչ ոչ գոյ 'ի քեզ. և դարձեալ քանի գեղեցկացար: և քանի քաղցրացար՝ սիրելի 'ի փափկութեան քում: Օ ա՛յս բանս ընթերցեալ և բազում անգամ լուեալ ոմն քահանայ առաքինի. և աղօթասէր առ ամենամաքուր սբ. կոյսն մարիամ անդադար հայցմամբք. և մեծաւ պաղատանօք աղաչէր զնա. զի արժանի արասցէ տեսութեն նր. և ցուցցէ նմա զպայծառութին իւր: Եւ զի հանապազ պաղատէր՝ աղերսէր՝ արտասուօք հայցէր. և կարի զղձամբ սրտի փափաքէր. մայրն ողորմութեան սբ. կոյսն մարիամ կամելով զփափաք սրտի նր կատարել. 'ի ձեռն հրեշտակի պատուիրեաց նմա. թէ յայս ինչ ժամու երևեցայց քեզ. բայց գիտասցի՛ր զի ոչ է պատշաճ. և ոչ արժան թէ այն քան աչօքդ որով տեսցես զիս. զի յետոյ նայեսցիս յերկրաւորս. պատասխանի ետ քահայ՝ թէ ոչ ինչ հոգամ. և թէ զկնի տեսանելոյ զնա կոյր մնացից. Իսկ յորժամ գնաց հրեշտակն 'ի նմանէ. սկսաւ մտախորհ լինել, և վարանէր 'ի միտս իւր ասելով. թէ զլոյս աչաց կորուսից՝ հարկէ ինձ մուրանալ. ապա՛ զայս խորհուրդ եգիտ եթէ զմի ակն խփեալ միւսով հայեցայց: Ա՛րդ յորժամ ամենաօրհնեալ սրբուհի կոյսն մարիամ, ըստ նշանակեալ ժամանակի զինքն եցոյց քահանային՝ անպատմելի պայծառութբ՝ ետես զգեղեցկութի նորին. կամելով կա

տա

տարեալ գոյն տեսանել. զակն զոր ունէր խղփեալ երեւաց. բայց տեսիլն 'ի նմին ժամու աներեւոյթ եղեւ։ Արդ զակն որով ետես զս̃բ կոյսն կորոյս միւսն ամբողջ մնաց սկսաւ դառնապէս լալ. կոծել զինքն յոյժ յանդիմանէր ասելով. ո՛թէ բովանակ մարմինս ակն լինէր. զի զնա կատարեալ եգոյն տեսանել կարէի։ Եւ յորժամ դարձեալ մեծաւ հառաչանօք եւ պաղատանօք աղաչէր զս̃բ ա̃ծածինն՝ զի միւս անգամ երեւեսցի նմա. կամելով վ̃ն այնորիկ եւ զմիւս ակն կորուսանել. ահա գթասէր մայրն ողորմութե̃ն երեւեցաւ նմա. եւ անճառելի ուրախութե̃ մխիթարեաց զնա. զմիւս ակն ամբողջ պահեաց. եւ զառաջին կորուսեալն լուսաւորեաց. փառաւորեալ լիցի անուն ամէն օրհնեալ տիրամօր կուսին՝ որ զցանկութի̃ սրտի ծառայից իւրոց լցուցանէ։ Եւ ես անարժանս անկեալ առաջի մայրենի գթութե̃ քո, ո՜վ ամենա մաքուր եւ գերապայծառ աստղ զառաւօտէն, զի փարատեսցես զմէգ աչաց իմոց. եւ արժանի արասցես քո քաղցրութե̃դ՝ թերեւս 'ի հանդերձելում արքայութե̃ որդւոյ քո միածնի. եւ տ̃ն մերոյ։

Դարձեալ թէ զի՛արդ ոչ վրիպին յօգնականութէ̃ ամենա մաքուր կուսին մարամու, որ 'ի նա ապաւինին, աստուստ յայտնի երեւի՝ ոմն երիտասարդ եմուտ 'ի վանս կրօնաւորաց՝ որ թէպէտ մանուկ տիօք, բայց ըստ Յ̃ա

բա

բարուց մեծա ոգի · և վարուց առաքինի · Այ՟մ զօրութե՟ կրթեր զինքն 'ի հնազանդութ՟ի · 'ի խոնարհութ՟ի · 'ի ճգնութ՟ի որ քան կարէր զաշխարհ իւրեան · և զինքն աշխարհի ոչ միայն 'ի խաչ եհան, այլ և թաղեաց 'ի սէրն ա՟յ և յիշումն ա՟ծածնին, այն չափ զինքն բոլորովին տուեալ էր, մինչ զի ա՟մ 'ոք բարեպաշտ որ զինքն ճանաչէր · և զվարս նր՟ գիտէր · այնպէս համարէր զնմանէ · թէ այլ ո՛չ գիտէր · բայց միայն զյս՟ քս՟ և զայն 'ի խաչ ելեալ · և զամէնօրհնեալ մայրն նր՟ · Յայսպիսի կրթութե՟ իսկիզբն դարձին իւրոյ և ս քան զևս աճէր և զօրանայր · վս՟ որոյ նախանձ սատանայի ընդդէմ նր՟ բարև զթոյնս իժից վառէր, և զայրանայր · ո՛չ միայն 'ի ծածուկ այլ և յայտնապէս · քան զի 'ի միում գիշերի 'ի սենեկի մինչ դեռ արթուն էր, և զվերինն խորհէր, ահա բազմութ՟ի դիւաց 'ի կերպարանս վայրենի խոզից հասին · և 'ի մէջ սենեկի այսր և անդր կատաղաբար վազելով ընդդէմ նր՟ զայրագին մարտնչէին · և զատամունս իւրեանց սրելով պաշարեցին · և իսկոյն պատառել զնա կամէին ։ Իսկ նա զարհուրեալ յոյժ դողայր · տագնապէր · և յահէ քրտունք 'ի նմանէ հոսէին · և մինչ դեռ զայսպիսի նեղութ՟ի կրէր · և ս առաւել նմա ա՛հ և յերկիւղ · քան զի անճառելի ահագնատեսիլ հսկայ զինչ խան խաւարի ետես · զի 'ի սենեակն նր՟ եմուտ, որ 'ի մտանելն ասէ ցխոզսն՝

զի եղև • զի հեղգացայք, վ̅ն ե՞ր այդպէս թոյլ շարժիք, ե՞ր վ̅ն զդա ոչ ըմբռնէք, և ո՛չ պատառէք • և նք̅ ասեն թէ ա̅մ զօրութե̅ ջանացաք • այլ ո՛չ ինչ կարացաք առնել • և նա՛ ասէ ես ինքնին արարից, զոր դուք ո՛չ կարէիք կատարել • և հանեալ երկաթի շամփուր, հանդերձ երկայն աձիգ քերչօք • սկսաւ ընդ դէմ նր̅ մեծաւ բարկութ̅բ վարել կամելով զնա 'ի մասունս պատառել: Իսկ կրօնաւորն 'ի յահէ դրէ թէ 'ի մտաց անկանէր • բայց բարերարն ա̅ծ ո՛չ թոյլ ետ առաւել փորձութ̅ն մերձենալ • քան զի մինչ դեռ չար դևն զինքն պատրաստեաց • և զձեռն իւր համբարձեալ • զի զնա այն շամփուրով պատառեսցէ • ահա առ ժամայն մայր ամենա զօր որդւոյն ա̅յ կոյսն մարիամ • որ դարև մայր ողորմութ̅ե, յորում կրօնաւորն այն • ոպ̅ ասացաք զա̅մ յոյսն իւր յե՛տ 'ի նա՛ 'ի նմա հաստատեալ ունէր • յայտնապէս եհաս • և զդաւաղանն 'ի ձեռն ունելով • ասէ ցն̅ս, ո՞վ պիղծք • զի արդ համարձակեցայք այսր մտանել • ո՛չ է դա՛ ձեր, և ո՛չ ինչ կարէք ընդ դէմ դորա զօրել • զայս իբրև ասաց • դևքն իբրև զծուխ անյայտ եղեն: Ապա՛ յետ այսորիկ զկրօնաւորն զարհուրեալ և երկիւղալից այսպիսի բանիւք սկսաւ մխիթարել • ո՛վ որդեակ ընդ ունելի՛ է ինձ զոր ինչ միանգամ առնես քո ճգնութ̅ի, աղօթք և առաքինութիւք • գիտեա՛ զի հաճոյէ ա̅յ և ինձ սիրալի • արդ զոր ինչ առ նես՝ որմ և յայսմ հետէ 'ի լուսադրոյսն հանդերձ ժուժկալութե համբերելոյ ջանադիր և յինէն այս քեզ լիցի պատուէր · հոգտար · զի նուաղ կերակրով բաւականեսցիս · զոր հանապազ 'ի ձեռագործս աշխատեսցես · և զհանդերձս անզարդ զգեցցիս ։ Զա՛յս խրատ տուեալ · և զտրտմեալն ամփոփեալ համբարձաւ յերկինս ։ Իսկ կրօնաւորն ոչ առեալ էր հրաման յամ յանձնէ ջանայր · զի զամ կատարեսցէ · քան զի խոշոր կերակրովք առաւել · քան թէ ախորժելօք բաւականայր, անպաճոյճ զգեստ աւելի քան թէ այլ ոք մինչև 'ի մահ զգենոյր · և այնպիսի բարեձևութե և առաքինասէր վարուք ել յաշխարհէս և փոխեցաւ առ քս ։

Յաղագս Մեծատան գլուխ ԽԸ ·

ա̃ Էր ոմն քահանայ ընչաւէտ և անուանի · այն չափ մեղօք և չարգործովք լցեալ · որ չափ մեծութե ևս տացուածովք փարթամ · 'ի սորա վիճակի էին ոմն մեծատուն · և կին մի այրի աղքատ · որք երկոքեան հիւանդացեալ · և տեսեալ զինքեանս մերձ 'ի մահ · առաքեցին առ քահանայն զի եկեսցէ առ նս · և յառաջ 'ի տանէ մեծատան կոչեցին զնա · զի եկեալ խոստովանեցուսցէ զնա և հաղորդեցուսցէ մարմնոյ և արեան որդւոյն այ · և զհոգին նր ելեալ 'ի մարմնոյ ուղարկեսցէ առ ած · իսկ քահայն առաւել հոգալով մ՟ ընչից. քան թէ մ՟ փրկութն հօգւոյ. առ ժամայն յարուցեալ փութանակի գնաց առ մեծատուն. և եմուտ յապարանս յոյժ մեծածախս՝ և գեղեցկապէս զարդարեալ. ուր հիւանդն անկեալ դնիւր. և անդ եգիտ բազումս շուրջ զմահճօք սուտս կասպաս՝ և շողոքորթս, զորս արտաքս հանեալ զինչ և իցէ կերպիւ՝ հարևանցի խոստովանեցոյց զնա։ Ապա՛ նստեալ մերձ առ նմա կեղծաւորէր. զգութ սիրոյ առ նա. ցուցանելով զտրտմութն սրտի իւրոյ. հարցանէր թէ զինչ ախորժես. ինչ տեղւոջ ցաւ ունիս. ի՞ իւիք առաւել վշտանաս. 'ի մէջ երկուց երկսայր ից. վստահութն և խաղաղութն խոստանայր նմա. ըստ նմանութն սուտ մարգարէին՝ ստաբանութբ զպարիսպն. այսինքն զմարմին նր հաստատէր, զոր ած կործանել ապառնայր։ մինչ դեռ նա այսպիսի սնոտի բանիւք մխիթարէր, զմեծատունն. ահա՛ 'ի նմին ժամու եկն ոմն 'ի տանէ այրոյն ասելով. մերձէ փոխիլ աստի յաշխարհէս՝ և կարօտէ հաղորդիլ եկեղեցւոյ խորհրդոյն. բայց քահայն յամ անձնէ ջան առնելով միայն սնոտի յուսով կերակրել զմեծատունն. ոչ ինչ ետ պատասխանի. իսկ փոխանորդ քահանային մերձ գոլով. աղաչէր զնա մ՟ աղքատ կնոջն այնորիկ ասելով. մեծէ մեղք մեր. և այրոյն վնաս. եթէ սակս հեղգութն և անհոգութն մերոյ՝ առանց խոստովանութն և հաղորդութն մեռանիցի կլինն այն • քան զի պահանջելոցն ա՟ծ դատաւոր արդար 'ի ձեռաց մերոց վարիւն ոչ խարացիւրոց • զորս 'ի մեզ յանձն առաք • զի ոչ միայն վ՟ն մեծատանց • այլ և վ՟ն աղքատաց պարտիմք հոգալ • միապէս և հաւատարմապէս համարս տալոցեմք վ՟ն երկոցունց • արդ փութացուք, մի գուցէ սակս մեր հեղգանալոյ առանց ա՟ծային խորհրդոց մեռանիցի : Իսկ քահայն բարկացեալ նմա ասէ • ո՛վ խրատ առողջ գլխոյն • վ՟ն տառապեալ կնոջն , զայսպիսի մեծատուն թողումք , պատասխանի ետ փոխանորդ նորին • մի՛ ինչ հոգար՝ եթէ հրամայես, ես գնացից 'ի տեսանել զնա : Եւ հրաման առեալ գնաց 'ի տուն այրոյն հանդերձ հաղորդութ՟բ • և եգիտ զնա պահօք չորացեալ և անկեալ 'ի վ՟ր սակաւ խոտոյ, որ թէպէտ էր չքաւոր և առանց երկրաւոր ստացուածոց՝ սակայն առաքինութ՟բ և բարեգործութ՟բ փարթամ : Արդ իբրև եմուտ 'ի ներս, և համբարձ զաչս մտաց • տեսանէր զզօրս հրեշտակաց՝ որք սպասաւորէին աղախնոյն ք՟ի • և ս՟բ կոյսն մարիամ հանդերձ բազմութ՟բ կուսանացն մերձ գոլով առ նմա • և 'ի ձեռն ունելով թաշկինակ զքրտունս յերեսաց հիւանդին սրբէր • և մեծ խնամս տանէր նմա : Զայս տեսեալ փոխանորդն . քահանային հիացեալ կայր 'ի հեռաստանէ : Իսկ ս՟բ կոյսն մարիամ երկրպագեալ փառս ետ խորհրդաւոր մարմնոյն որ դւոյն իւրոյ. նոյնպէս և ամ՟ կուսանքն որք իբրև կանգնեցան 'ի վ՟ը ոտից իւրեանց. ապա համարձակեալ եմուտ 'ի ներս, զորս քաջալերեալ ս՟բ կոյսն մարիամ յորդորեաց զնա նստեալ 'ի վ՟ը աթոռոյ. խոստովանեցոյց զհիւանդն և հաղորդեցոյց զնա. և կարգն հանդստեան կատարեաց: Ապա՛ լի՛ ուրախութե՟ և ստիպով դարձաւ 'ի տուն մեծատանն, և կացեալ առ դրան ետես կատուս սևադոյնս շրջապատեալ շուրջ զմահճօք մեծատանն՝ զորս տեսեալ թշուառական մեծատունն. և 'ի նոցանէ յոյժ վշտացեալ դողէր. հառաչելով ասելով. 'ի բա՛ց արարէք զկատուս զայսոսիկ, հեռացուցէք զդոսա՛ աստի. և օգնեցէք ինձ եղկելոյս: Եւ ահա՛ եթովպացի ահարկու 'ի ձեռն ունելով զգեղարդ եհար 'ի կոկորդ մեծատանն՝ որոյ հոգին ոչ ինչ մխիթարութի՟ խղճ՟ իմտաց գտանելով. սկսաւ դողալ. զարհուրել. մինչ առ սակաւ մահ ըմբռնեաց զեղկելին. քան զի եթովպացին այն մեծաւ արտմութե՟ զգեղարդն 'ի կոկորդէ թշուառականին 'ի դուրս եհան, և նա՛ զահագին ձայն արձակելով զհոգին ետ. յայն ժամ հասեալ և այլ ընկերք սկսան հարկանել. խոցոտել. չարչարել. մինչև զ՟նա 'ի տեղի աղջամղջին, և գուբն յաւիտենական մահու ընկղմեցին. յորժամ զա՛յս ետես փոխանորդ քահային. ահ և դողումն անկաւ 'ի վ՟ը ն՟ը. և անկեալ էր 'ի զարմացման. և ահա 'ի նմին ժամու երևեցաւ նմա մր̄ ա̄ծածինն · և ասէ մի՛ երկնչիր սիրելի՛ ոչ ինչ չարութ̄ի դիւաց վնասեսցէ զքեզ · զի քեզ պատրաստեալ է և երկնային ուրախութի̄ , այսպիսի բանիւք . քաջալերեալ եկեալ 'ի միտս գոհացաւ զմխիթարիչէն իւրմէ · և յերկուց տեսութե̄ յայսցանէ ոչ սակաւ օգտեցաւ ։

Է̄ Մին մեծատուն ընչաւէտ ունէր տուն իւր մեծ ընդ արձակ · կացեալ ընդ առն որում աղքատի , յաւուր միում յանկողնի իւրում անկեալ վշտանայր , և ոչ կարէր ննջել · վա̄ խորամանկութե̄ · և առաւել ագահութե̄ ստանալոյ զինչս · և լսէր զի աղքատն այն նըստեալ առ թոնիր ուրանայր ընդ որդիս իւր · և զմնացեալ գիշերն անոյշ քնով անցուցանէր · և ընդ առաւօտ հազիւ զարթուցանէր զնա կին իւր · զի յարուցեալ երթիցէ 'ի գործըն ։ Զայս լուեալ մեծատունն և նա խանձելով ընդ ուրախութի̄նն · խորհեցաւ զնա առնել հաղորդակից տրտմութե̄ և տառապանաց իւրոց ։ Յարուցեալ 'ի գիշերի և բացեալ զդուռն տան աղքատին կախեաց զքիսայ դրամ առ դրանն · զոր առաւօտու գըտեալ աղքատն , ոչ կամէր երթալ 'ի սովորակն վաստակն , երկուցեալ մի՛ գուցէ ոք գողասցի զդրամ̄ն · և վարանէր 'ի միտս իւր , զի մի՛ գիտասցէ դրացին · կամ կինն · թէ գտեալ է զդրամ̄ն · այլ եդ զդրամ̄ն 'ի ներքոյ խոտոյ ուր ննջէր · և պատճառաւ զհիւանդութի անկեալ դնիւր 'ի վ՟ր դրամին. մինչ խորհեսցի թէ զինչ արասցէ. Եւ իբրեւ զբազումս աւուրս այսպիսի էր վշտացեալ՝ եւ ո՛չ ուրախանայր՝ եւ դադարեալ էր յերգելոյ. 'ի գիշերին եկն առ նա մեծատունն եւ հարցանէր ըզնմանէ. Ե՛տ պատասխանի կին թէ հիւանդացեալ է. ասէ մեծատուն. ես վաղվաղակի զնա՛ բժշկեցից. եւ եկեալ առ նա՛ ասէ ցնա՛ 'ի ծածուկ. դարձո՛ առ իս զդրամս իմ զոր առեր յայս ինչ տեղւոջ ապա թէ ո՛չ տաց ըզքեզ կախել. որ յերկուցեալ դարձոյց ըզդրամս. եւ եկն յառաջին ուրախութիւն.

Յաղագս Յաջողման գլուխ Ծ.

ա՟ Գրեալ է 'ի վարս երանելոյն սրբոյն Ամբրոսիոսի եպիսկոպոսին թէ երբեմն երբեմն երթայր 'ի մեծն հռոմ, եւ 'ի գեղջի միում 'ի տան ուրումն մեծատան իջեւանեցաւ. եւ կոչեալ առ ինքն զտանուտէրն հարցանէր ըզբախտէ եւ զկենցաղավարութենէ նորին. Պատասխանի ետ ետ նմա թէ միշտ եմ բարեբախտ եւ փառաւոր յամենեցունց անթիւ մեծութիւն եւ զստացուածս ունիմ ծառայս ան համարս զորդիս եւ զթոռունս բազումս. ա՟մ ինչ յաջողեալ է ինձ ըստ կամաց իմոց՝ ո՛չ երբեք չար ինչ ներհակ դիպեցաւ ինձ. եւ ո՛չ ինչ երբեք տրտմեցոյց զիս. զայս լուեալ երանելին Ամբրոսիոս յոյժ զարմացաւ. եւ որոց շուրջ էին զնովաւ ասէր. արիք վաղվաղակի փախիցուք աստի. զի չիք ա՟ծ 'ի տեղւոջս յայսմիկ փութացարուք որդեակք փութացարուք, և մի՛ հեղգայցէք, զի մի՛ բարկութի՟ն ա՟յ ըմբռնեսցէ զմեզ 'ի մէջս մարդկան այսոցիկ: Եւ յորժամ փախեան և սակաւ ինչ հեռացան՝ ահա առ ժամայն բացաւ երկիր և եկուլ զմեծատունն այն. և զա՟մ ինչ որ իւրն էր՝ մինչ նշան ամենևին ո՛չ երևէր. զոր տեսեալ Ամբրոսիոս ասէ, եղբարք տեսէք թէ ո՟պ ողորմութի՟ն ա՟յ ներէ. յորժամ թո՛յլ տայ անյաջողութեն գալ 'ի վ՟ր մեր. և ո՛րքան բարկանայ՝ յորժամ հանապազ 'ի բարեբախտութե՟ն վայելեմք: Եւ 'ի նոյն տեղւոջ է՛ ահագին վիհ մինչև ցայսօր 'ի վկայութի՟ն իրանց:

Յաղագս Ախոնջոյ գլուխ ԾԱ՟.

Այր ոմն այսահար. յոյժ չարաչար տանջեալ
ա՟ և լլկեալ լինէր 'ի դիւէն. և ազգի ազգի պատասխանիս տայր մարդկան դևն 'ի բերանոյ նր՟. եհարց ցնա ոմն և ասէ. ասա՛ ինձ եթէ կարէիր միւսանգամ զշնորհն գտանել յա՟յ զոր ունէիր յառաջագոյն, զորպիսի աշխատութիս և չարչարանս այնր աղագաւ յանձն առնուիր: պատասխանի ետ դևն, եթէ այդ իշխանութի՟ն լինէր 'ի ձեռս իմ. առաւել յօժար էի 'ի դժոխս իջանել ընդ միոյ դատապարտեալ մարդկային հոգւոյ՝ քան թէ անդրէն դառնալ յերկինս: Եւ յորժամ ա՟մքն հիացեալ զարմանային թէ էր վ՟ս զայն ասէր

պատաս

պատասխանի ետ ետ մի՛ ինչ այն չափ զարմանայք· այն չափ է իմ չարութ՟ի· և այն չափ անզեղջեմ, մինչ զի ո՛չ ինչ կարեմ կամենալ ըզբարի· այլ միշտ նախանձու վառիմ ընդդէմ փրկութ՟ե մարդոյ։

Զօրական ոմն յոյժ սիրելի Թագաւորի· Է
տեսեալ զինքն մերձ 'ի մահ· կոչեաց զորդի իւր առ ինքն և ասէ· յուսացեալ ողորմութ՟ի այ՟, զքեզ Թողելով միամօր որդի· աղաչեցի զարքայն զի զքեզ կարգեսցէ 'ի տեղի իմ· զա՟մ ստացուածս քեզ միայն Թողում զխրատ իմ կամիմ, զի ա՟մ զգուշութ՟բ պահեսցես· որ քան զա՟մ ոսկի եղիցի քեզ պտղատու և օգտակար· նախ ո՟չ կարողես՝ յա՟մաւուր զպատարագ մինչ 'ի վերջ լսիցես։ երկրորդ պահելով զպ՟ր ամուսնութ՟ի ամենասբ՟ կուսին մարիամու, ջերմեռանդ սրտիւ ծառայեսցես զա՟մ աւուրս կենաց քոց· և էԹէ ո՛չ կամեսցիս զայլ ոք հարսն ունել· բայց ամենամաքուր ա՟ծածնէն· ևս առաւել սիրելի և բաղձալի նմա եղիցիս· քանզի կուսութ՟ ունի զպտուղ հարիւրաւոր։ ամուսնութ՟ի· Լ· աւոր։ և այրութ՟ի· Կ· աւոր։ Իսկ եԹէ ոք զատ յամուսնութ՟է 'ի պղծութ՟ի անկանիցի, ո՛չ միայն պտուղ ո՛չ ինչ ունի այլ պատրաստեալ են նմա տանջանք յաւիտենականք երկրորդ միշտ խնդասցիս ընդ խնդացեալ արքայի և կնոջ· և ողբասցիս ընդ նց՟։ Զա՛յս պահեսջիր որդեակ և յիշեսջիր զհոգ՟ի իմոյ

չափ կարողութ՟իդ բաւեսցէ, և զա՛յս ասացեալ վաղճանեցաւ: Արդ յորժամ եհա՛ս որդին 'ի պատիւ հօր իւրոյ՝ 'ի մտի ունէր ըզկտակն նր՟. և զիմ՟ զգուշութ՟ և ջերմեռանդութ՟ պահէր. ուստի սակս առաքին ասէր պարկեշտութ՟ իւրոյ յաչս ամ՟ցին էր սիրելի: Եւ այն չափ զամօթ սիրեաց, մինչ զի յորժամ կուսանք և նաժիշտք թագուհոյն ինքնայօժար կամօք զանձինս իւրեանց նմա մատուցանէին. յո՛յժ սաստիկ յանդիմանէր զնս՟ և 'ի բա՛ց վարէր բայց վս՟ զի նախանձ վս՟ բարոյն այլոյ սովոր է չարչարել. մի 'ի ծառայից թագաւորին չարախօս եղև զնմանէ սակս կարծեցեալ սիրոյ ընդ թագուհոյն: Եւ յորժամ ոչ հաւատաց թագաւորն. ասէ այրն՝ նախանձոտ բանսարկուին, այս եղիցի քեզ նշան ճշմարիտ բանից իմոց: Արա՛ ինչ պատաճառ տրտմութ՟ տիկնոջդ և տեսցես զի առ ժամյն ը՟ նմա մինչև ողբալ տրոմեսցէ քան զի զայն բազում անգամ ծանուցեալ էր ըստ խրատու հօր նր՟: Արար այնպէս թագաւորն և ետես. զի անմեղ զօրականն այն տրտմեցաւ. Ապա եկն չարախօսն այն յեկեղեցի. և ասէ ցթագաւորն. տ՟ր իմ ծանեա՛ր ստուգութ՟ի բանից իմոց. արդ զի առանց խռովութ՟ մեռանիցի. քան զի նա՛ ամ՟քն իբրև զբարեբարոյ սիրեն. խրատ տամ քեզ հրամայես ընդ երեկս մշակաց՝ թէ. ո՞վ որ վաղառաւօտու առաջի առ նս՟ եկեսցէ զոր դու առաքեսցես, զնա՛ 'ի հնոց բորբոքեալ կրի ձգեսցեն, հաճոյ եղև Թագաւորին խրատ. և հրամայեաց ոպ՟ չարախօսն ասաց: Ա՛րդ ընդ առաւօտն՝ ասէ Թագաւորն ցան մեղ ծառայն, ե՛րթ 'ի հնոց ուր զկի՛րն այրեն. և ասա՛ ցվարպետս, փութանակի կատարեցէք զհրաման Թագաւորին, զոր յերեկ հրամայեալ է ձեզ. և նա՛ առ ժամայն գնաց լուաւ զձայն զանկակի յեկեղեցւոջ առ ճանապարհաւ՝ եմուտ 'իներս՝ զի աղօթեսցէ 'ի ժամ պատարագի. և աղօթելով առ տ՟ր ա՟ծածինն՝ զհոգի և զմարմին 'ինա՛ յանձն առնէր. և իսկոյն 'ի խնամոյն ա՟յ եմուտ 'ի քուն. և ըզբոլոր ժամ միննջեաց. յայնժամ չարախօսն այն ասէ ցԹագաւորն. հրամայեա՛ տ՟ր արքայ. զի երթայց և տեսից թէ զինչ եղև. և հրամայեաց Թագաւորն. և նա հեծեալ 'ի ձի վազէր փութանակի 'ի փուռն կրի, ասելով կատարեցէք զհրաման Թագաւորին. և ն՟ք ասեն ո՛չ. սակայն ո՛չ յամեսցուք. և առեալ զնա ձգեցին 'ի բոց հրոյն: Եւ ահա՛ եկն ան մեղն այն. և խոնարհութ՟բ ասէ կատարեցիք զհրամայեալն ձեզ յեր եկեան աւուրս և ն՟ք ասեն այո՛ և նա՛ ո՛չ ինչ գիտելով վ՟ն խրատուն: Յերեկոյ յորժամ եհարց Թագաւորն ցմանկոն. թէ ընդէ՞ր ոչ ընկեցէք զայդ զօրական 'ի հնոց. ետուն պատասխանի. այլ յառաջագոյն քան զդոսա եկն. և բոց եկեր զնա. յայնժամ Թագաւորն յանդիմանեաց զան մեղն սակս յապաղելոյ. և նատաւ. փոքր ինչ յեկեղեցի մտի 'ի ժամ պատարագի յանձն առնելով զիս ս̄բ ա̄ծածնին. հայցելով 'ի նմանէ զի պահեսցէ զիս ընդ հովանեաւ իւրով. զի զիմ խոստացեալ կուսութեն զոր մինչև ցայսօր ամբողջ ունիմ մինչև 'ի վաղճան անարատ կարիցեմ պահել. յետոյ յակամայ այն չափ անոյշ քնով ըմբռնեալ էի. մինչ զի համարէի թէ 'ի դրախտն փափկութե տարեալ եղէ. ապա 'ի քնոյ զարթուցեալ առժամայն ճեպով փութալ կատարել զհրաման արքայիդ. յայն ժամ թագաւորն ասէ զինչ ասես. սակս խոստացեալ կուսութինդ. զի ես գիտացի թէ 'ի վաղուց հետէ ջանաս հասանել յանարժան բարեկամութե̄ն թագուհոյն. թէպէտ ոչ գիտեմ վ̄ս անարժան գործոյդ՝ սակայն զնշան սիրոյ ընդ նմին ինքնին ծանեայ. մանաւանդ այնու զի յորժամ թագուհին տրտմի՝ և դու զտրտմութի̄ հանդերձ արտասուօք ցուցանես ։ ⁘ այնժամ զարմացեալ երիտասարդն ասէ լո՛ւր արքայ. յորժամ հայրն իմ մերձէր 'ի մահ. զորմէ և դու քաջ գիտես. զի էր ա̄ծապաշտ և արքայիդ ծառայ հաւատարիմ. զայս երիս խրատ առի 'ի նմանէ փոխանակ կտակի. և ասաց զնա՛ առաջի թագաւորին՝ զայսոսիկ ըստ կարի իմում ջանայի կատարել։ ⁘ այնժամ թագաւորն յոյժ ուրախացաւ՝ և ասաց նմա զա̄մ որպիսութի̄ նախանձու՝ և զխրատն որ վասն մահուանն նր̄. Յայ

յայնժամ

'յայնմ հետէ սիրեա՛ց զնա Թագաւորն առաւել քան զա̃մ ծառայս. և նա՛ փառաւորելով զա̃ծ ջերմեռանդ սրտիւ ծառայ է՛ր նմա. և ամենաս̃բ կուսին մարիամու. և երանելի մահուամբ փոխեցաւ 'ի ք̃ս ա̃ծ յոյսն ա̃մ, որ է
օրհնեալ յաւիտեանս ամէն

Այնչափ չարութի̃ է նախանձու. մինչ զի ո՛չ միայն այլում, այլ իւրեան անձին զվնաս կամի. քան զի Թագաւոր ո̃մն երբեմն խոստացաւ նախանձոտի ուրումն՝ և միուսում ագահի. Թէ զինչ և խնդրեսցեն 'ի նմանէ տացէ նց̃. սակայն այնու կերպիւ՝ Թէ որ վերջին խնդրեսցէ կրկին տացի նմա: Եւ յորժամ երկոքեան յապաղէին զխնդրելն. Թագաւորն հրամայեաց նախանձոտի. զի նախ խնդրեսցէ. և խնդրեաց զիւր մէկ աչն հանել. զի միուսում զերկուս աչս հանեն. քան զի ոչ կամեցաւ բարի ինչ խնդրել. զի մի ընկերին կրկին պարգև տացէ: գ̃

Յաղագս Ժուժկալութե̃ և արբեցութե̃. Գլխ ԾԷ.

Աշխարհական խաւարիս այսորիկ բազում հնարս ունի վնասել մարդոյ, որոց զմինն ո՛չ 'ի վաղուց հետէ զեղեալն ասացից: Քահանայ ոմն այնչափ էր ժուժկալ. մինչ զի ըզմաշկեղէն զգենոյր. և սոկս բանջարով միայն շատանայր. զգինի միայն 'ի շրթունս մերձուցանէր համբուրել մանաւանդ երև էր. քան Թէ ըմպել. բայց զի բազումք բարեպաշտք բ̃

'ի

'ի մարդկանէ՝ գինի լի՛ բաժակով մատուցանէին նմա. ուստի զյաւէտ մնաս ակարն. այսինքն քան զչափն առաւել ըմպել. և այնչափ ետ զինքն յարբեցութիւն. մինչ զի հանապազ տեսան իւր արբենալ: Յետ այսորիկ յորժամ արբեցութիւն եւս քան զեւս աճէր և յաղթէր. դևն եմուտ 'ի նա, և յոյժ չարչարէր զնա. մինչ զի առեալ դանակ կամ զէն, կամ քար, կամ այլ ինչ սոյնպիսի զհետ մարդկան վազէր. և ան մտաբար ընթանայր առ 'ի սպանանել զնս. ապա հարկ եղև շղթայիւք՝ կապել զնա և 'ի սենեկի հանդերձ պահապանօք ունել. և այսպիսի այսա հարեալ և տանջեալ զերկուս ամս մեռաւ:

Է 'Ի վանս ուրեք աբեղայք և եթ միայն բընակէին. աշխոյժք և պղծագործք, իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ ունէր զհոմանիս իւր ոչ ամօթէր անդ. և ոչ պատկառանս. ոչ երկիւղ ածային. հանապազ 'ի միասին զեխէին արբենային և զաղիր գործս կատարէին: Յաւուր միում իբրև մինչև 'ի խոր գիշեր շուայտութե և արբեցութե անցուցանէին. ոմն 'ի նոցանէ ոչ այն չափ չար ոգի զայլս ասէ շատ կերայք և արբայք. ժամ է գոհանալ զածնէ: Իսկ այլ ընկե՛ր առաւել վաւաշոտ ասէ. ես գոհացայց զսատանայէ. և դարձեալ խրատ տամ զի և դուք զնոյն առնիցէք. քանզի վնն գործեմք: Իսկ նոյնպիսի ծաղու յարուցեալ 'ի սեղանոյ անկան յանկողինս. իւ

րաքան

րաքանչիւր հանդերձ հոմանեաւքն իւրեանց և մինչ դեռ ընկղմեցան. ահա սատանայ 'ի կերպ սևադև և ահարկու տեսիլ մարդոյ, 'ի հանդերձս որսողին եմուտ 'ի տուն. և երկու խոհ արարք ընդ նմա. և գնալով 'ի տուն հայէին յանկողինս նցա։ Ապա ահագին ձայնիւ ասէ, ո՞ւրէ այն որ զինէն գոհանայր. և քարշեալ յանկողնոյ իբրև զմեռեալ՝ ետ ցապաստանորս հրաման տուեալ զի 'ի վ̄ր շամփուրի խորովեսցեն զնա։ Եւ նքա վաղվաղակի արարեալ մեծ կրակ. մեծ փութով զհրամանն կատարեցին. և զթշուառականն խորովեցին. և առժամայն մեռաւ. և տունն լի՛ եղև հոտով մսոյ խորովելոյ։ Յետ այսորիկ որ սողն ասէ ցայլ ընկերսն, որք յերկիւղէ հազիւ կենդանի մնացեալ էին. և դուք արժանի էք զնոյն պատիժ կրել. և յո՛յժ փափաքիմ, այլ զօրութն բարձրելոյն ո՛չ թողու. ակամա ելանեմ աստի խրատ տամ ձեզ զգուշ կացէք. մի՛ գուցէ չարագոյն ինչ պատահի ձեզ. զա՛յս ասացեալ աներևոյթ եղեն. իսկ երկու աբեղայք ո՛չ կարացին յուշաբերել. և ընդ առաւօտս յարուցեալ գտին ընկերսն իւրեանց մեռեալ և խորովեալ. ո՛չ գիտեմ, եթէ իսկ զբանէ աշխարհի այսպիսի ինչ պատահեալ եղև, որ է յոյժ սարսափելի և առ 'ի խրատ մարդկան օրինակս յո՛յժ օգտակար։

Փակաս կայսրն կոստանդինուպօլսի. յաւուր խաղուց 'ի յուտել և յըմպել չափ ան Գ̄ ցուցեալ էր· և 'ի ժողրդենէ ծաղր արարեալ նախատանօք հանդերձ· ասելով ցն՟ա· զգինի 'ի բաժակէ արբեր և զհանճար կորուսեր· վ՟ն բանիցս այսոցիկ զբազումս սպանանել հրամայեաց· իսկ իշխանք և նախարարք և կուսակալք· տեսեալ զայսպիսի իրս զի բազումք էին պէս պէս տանջանօք չարչարեալք յընչից կողոպտեալք· յոլովս գլխատեալք· գիր գրեցին աղաչանաց առ հերակլ կուսակալ· զի հասցէ ն՟ց յօգնութ՟ի, որ հաւանեալ հայցմանց ն՟ց· վաղվաղակի մեծ զօր գումարեալ· եկ ընդ դէմ փուկասու, ունելով ընդ իւր զանձեռագործ պատկերն ք՟ի, և յաղթեաց նմա անուն, զորոյ կինն փոկաս կամեցեալ էր բռնադատել· մտեալ յապարանս և զփոկաս կայսրն 'ի հանդերձ տխրագոյն զգեցուցեա՛լ էած առ հերակլ· ասէ ցնա հերակլ· ո՛վ եղկելի այդպէս զիշխանութ՟ի կառավարեն: Պատասխանի ետ փոկաս և ես քեզ տամ զիշխանութ՟ի դու լաւագոյն վարեա՛ զնա: Ապա՛ զաջոյ ձեռն ն՟ր և զերկու ոտս հատին· տիկ 'ի մարմնոյ հանին· զծածուկանդամս կտրեցին և զգլուխ հատին· զգեղարդէ կախեցին և զգէշ մարմնոյն որ զան ասուն ծախէին այսր և անդր նախատանօք քարշէին և

ապա՛ հրով այրեցին:

Է Զենոն կայսրն այնչափ զեղխէր և արբենայր· մինչ զի իլնելոց անկանէր· և իբրև մեռեալ յերկիր անկեալ անշնչացանայր· վ՟ն որոյ կնոջ իւրում յոյժ ատելի լինէր. յաւուր միում զարբեալ իբրև զմեռեալ հրամայեաց ՚ի գերեզման թագաւորաց ձգել. և քար ՚ի վր̅ թաւալեցուցանել. որ իբրև ՚ի գինոյ թափեաց լալով և կոծով. եղկելի և սոսկալի մահուամբ մեռաւ. քան զի թագուհին հրամայեաց ոչ բանալ զգերեզման և ոչ օգնել նմա։

Աբեղայ ումն եկեալ ՚ի տուն աղք. կնոջ իւրոյ. Ե
խնդրեաց թէ զինչ կերիցէ. ասեն ցնա չէ՛ է ժամ ճաշու. և նա բարկութ̅բ ասէ. աւաղ զա̅մ գիշեր աշխատեցի վր̅ հնազանդութե̅ ՚ի ճանապարհ երթալով. և դուք այժմ հրամայէք ինձ պահել. ա՛րդ տուք ինձ ուտել զոր ինչ ունիք. և նք̅ իբրև ասացին ցնա. թէ ձգունք ունիմք. բարկացեալ այսր և անդր հայելով ետ ես զերամակ հաւուց. և առեալ փայտ իբրև զայսահար զմին եսպան և լրբաբար ասաց այսէ իմ ձուկն այսօր։ Իսկ որք մերձ էին փոքր ինչ զամօթի հարեալ ասեն ցնա հայր. մի՛ թէ պատշաճէ քեզ միս ուտել. Պատասխանի ետ՝ թէ աւոր ոչ է միս. զի թռչունք և ձգունք մի՛ ունին սկիզբն։ Եւ իբրև զխորովեալ հաւ բերին առաջի նր̅ կտրեաց զանդամ եդ ՚ի բերան և սկսաւ ուտել. բայց ոչ կարաց կլանել. և ոչ յետս դարձուցանել. և այնպիսի դառն մահուամբ մեռաւ։

Անապատաւոր ումն խոստակրօն՝ անուն հե Զ
ղեայ. յաւուր միում եղև ՚ի զարմացման.

և զինքն տեսանէր ապարան ինչ յոյժ հրաշալի և գեղեցկառուցեալ. և զժամ մի ընդ ապարանս շրջելով. ոչ կարաց ընդ նմ նայել՝ ի պայծառութե ապարանիցն: Ընդ ետես պայծառագեղ և լուսափայլեալ զերիտասարդս որք զաթոռ արքունական պատրաստէին՝ և մեծարէին զոր դու շուրջանակի զարդարէին: Եւ ահա ոմն իբր յոյժ զարմանալի. և այն չափ վայելչագեղ, մինչ զի մարդ ոչ ինչ ցանկանայր քան թէ միայն ի նա հայել. Հանդերձ բազմութբ մարդկան քան զարեգակն լուսափայլեցելոց եկեալ բազմեցաւ ի վր աթոռոյն, զի դատաստան արասցէ: Յետ այսորիկ տեսանէր զի սևադեմք դիւաց զոգի ուրումն եպիսկոպոսի հրաբորբոք շղթայիւք կապեալ, յորմէ իբրև ի հնոցէ բոց ծըծմբախառն ելանէր առաջի աթոռոյն թագաւորին կացուցին. Որ նախ քան զհարկանելն ահագին ձայնիւ սկսաւ աղաղակել. Թէ արժանի եմ տանջանաց յաւիտենականաց: Եւ ի մէջ այլոց պատճառաց զայս յաւէտ պատճառ պարտաւորութե ասէր զի ի կենդանութեն ի սնոտի մեծութիս հեշտանայր. զխրախճանութիս. զգինարբեցութիս. զզարդս. և զայլ անմտութիս աշխարհականս քան զչափ սիրէր: Յորժամ այս այսպիսի կատարեցաւ, վճիռ ի դատաւորէն հատաւ, զի ի տանջանս դժոխոց մատնեսցի, և միաւորեալ ընդ մարմնոյն կրկին տանջանս յաւիտա ծնկանս կրեսցէ . յայնժամ գունդք չար դեւացն մեծաւ աղաղակաւ առեալ գնացին :

Ա՟ր ոմն մեծատուն որքան կարողութի՟ ունէր զիւր յորովայնն պաշտէր . և միշտ մարմնոյ խնամ տանէր . Իսկ վ՟ս հոգւոյ ոչ ինչ փոյթ ունէր . ախորժական կերակրոց ըմպելեաց . իւղոց անուշից . անկողնոց . զգեստուց . զարդուց , մեծաւ ջանիւ հետևէր : Եւ զի էր 'ի մաստուն և խորհրդական . թագաւորն կացոյց զնա 'ի վ՟ր արքունեաց . այնու հետև ևս առաւել զինքն ետ 'ի հեշտութ՟իս . և վայելչութ՟իս մարմ՟ն աւուրս, մի՛չ զի զճարպն ոչ կարէր մորթի տանել : Յաւուր միում տնտես որ նմա մեծաւ փութով սպասաւորէր , ասէ՛ ցնա , տէ՛ր իմ որպիսի եղիցի վառումն և քորքոքումն . յորժամ այդ ճարպդ ձեր միաւորեսցի ընդ հրոյն դժոխոց : Որ նա լուեալ և մտախորհեալ ասէ 'ի սրտի իւրում արդարև զճշմարիտն ասէ դա . բայց ոչ եղիցի այնպէս : Ապա յանձն առեալ զապաշխարութի՟ . այնչափ զժուժկալութ՟է բուռն եհար . և խստակրօն վարս ստացաւ . մինչ զի զա՟ծ մարմնով իւրով հաշտեցոյց . որոյ սակս յառաջագոյն անարգեալ լինէր և նախատինս կրէր : Է

Ոմն զօրական յաւուր Ճրագալուցի սրբոյ զատկին . զոմն զաղջիկ 'ի դիրկս ընկալաւ սրբոյ աւազանէն . սա՛ զկնի պահոց եկեալ 'ի Ը տուն արբեցաւ. և խնդրէր զաղջիկն այն ընդ նմա ննջեսցէ՝ ընդ որում 'ի նմին գիշերի անկեալ ապականեաց զկուսութին նր̅. Եւ իբրև լուացաւ գիտելով զիւր անօրէնութիւն. գնաց 'ի բաղանիս կարծելով թէ ջրով բաղանեաց կարիցէ մաքրել զաղտ մեղաց իւրոց. Եւ իբրև լուսացաւ ահիւ և դողութ̅բ գնաց 'յեկեղեցին. քան զի երկնչէր 'ի մարդկանէ. և թէ ոչ երթիցէ այսպիսի աւուր. իսկ միւս կողմանէ զարհուրէր 'ի դատաստանացն այ̅. եթէ երթիցէ սակայն ամօթ մրդկային յաղթեաց գնաց յեկեղեցի, բայց դողալով երկնչելով. յանկեան կայր. յա̅մ ժամու երկնչէր. զի մի՛ չար դև մտցէ 'ի նա։ Եւ յորժամ յայսպիսի ահիւ կայր, և ոչ ինչ չար ոչ պատահեցաւ նմա, ուրախութ̅բ եւ, երկրորդում աւուր համարձակ գնաց յեկեղեցի. և այսպիսի զվեց օր ուրախութ̅բ և ան երկիւղ երթայր համարելով թէ ա̅ծ զմեղսն նր̅ ոչ ետես. կամ թէ տեսեալ ողորմութ̅բ անտես արար։ Իսկ եօթ երորդի աւուր յանկարծ մահ մեռաւ։ և յորժամ թաղեցաւ 'ի բազում աւուրս ընդ որ ա̅մ̅ն հայէին. 'ի գերեզմանէ նր̅ բոց ելանէր. և այն չափ ոսկերքն նր̅ այրէին, մինչ զի զա̅մ գերեզմանն նր̅ բոցն կիզեալ և մաշեաց։

Այսու ա̅ծ մեզ օրինակ երկիւղին ետ զի աստուստ քննեսցուք և ճանիցուք թէ զորպիսի չարչարանս հոգին կենդանի գոլով կրէ վ̅ն մեղաց իւրեանց թէ ոսկերքն անզգայ այս

պի

ողխսն հրեղէն պատժեօք այրեցեալք լինէին։

Այր ոմն մտեալ 'ի վանս միաբանակեցաց, ոչ այնչափ ջան ունէր եթէ ա՟յ հաճոյ լիցի․ որպէս թէ մարմնոյ իւրոյ զկամս կատարեսցէ․ քան զի գործակցութե՟ սատանայի որոյ խրատու միշտ հետև էր չուայտութե՟ և մարմնական հեշտութե՟ց յոյժ փոյթ ունէր բազումանգամ զհիւանդութի՟ կեղծաւորեալ պատճառ էր 'ի հիւանդանոցն զաւուրս անցուցանէր․ զմարմին իւր պարարելով․ և որկրամոլութե՟ պաշտօնէից գոլով զհոգւոցն բնաւ փոյթ չունէր, գնալով կաղայր 'ի անտես տուն ստէպ ստէպ հայէր․ Թէ զինչ վ՟ս հիւանդաց պատրաստէին հարցանէր․ Իսկ լուսարարն այր ճգնասէր և առաքինասէր․ տեսանէր զսատանայ զի երթայր հանապազ զհետ կրօնաւորին այնորիկ․ և ու՟ր նա կաղայր, ըստ նմին օրինակի և դ՟և կաղայր յորժամ կրօնաւորն հայէր 'ի ան տեսատուն և նա հայէր․ և զոր ինչ նա առնէր յա՟մի դ՟և նման նմա գործէր։ Ապա յետ այնորիկ կրօնաւորն այն խրատու դիւին որոյ ունկն դիր լինէր ել 'ի վանաց․ դարձաւ 'ի կաթսայս եգիպտացւոց՝ և պաշտեաց զորովայն իւր իբրև զա՟ծ։

Ֆ Քահանայ ոմն անամօթ․ շուայտող․ գինարբու զազրագործ․ և ամենևին իբր մարմնոյ պաշտօնատար․ ել յաշխարհէ աստի յոյժ թշուառական մահուամբ․ և մարմին նորա թաղեցաւ 'ի հասարակ գերեզմանի' քահանայից ։ և այս եղև 'ի վերին խնամոց ։ զի պատիժ նորա ամենայն օրինակ յայտնի լիցի ։ 'ի նմին գիշերի այնչափ եղև սաստիկ որոտումն յեկեղեցւոյ ։ մինչ զի յահագին ձայնէն մերձակայ բնակիչք իբրև զխելագարս յեկեղեցին փութանակի ընթացան ։ ամենքն շուրջ կային զեկեղեցեաւ, որոտմունք սաստիկ ։ զանկակի ձայնս լսէին ։ և ոչ զոք տեսանէին ։ զԱստուած աղաչէին թէ զինչ իցէ յայտնեսցէ նոցա ։ այլ ոչ լսելի եղեն աղօթք նոցա 'ի վաղիւ յորժամ ամենայն ինչ դադարեցաւ յեկեղեցւոյ գտին զամենայն ինչ վեր 'ի վայր կործանեալ ։ և հրով այրեցեալ ։ վասն որոյ եպիսկոպոս քաղաքին այնմիկ քարոզեաց զաղօթս և զպաղատանս ամենայն ժողովրդեան ։ թէ զինչ լինելոց իցէ յառաջի կայ գիշերն ։ պատուէր ետ ամենայն սպասել ։ ❦ երկրորդում գիշերին դարձեալ որ որոտմունք սաստիկ քան զառաջինն ։ ձայնք ահաւորք ։ լի ահիւ և դողութեամբ և տագնապք անհնարինք լսելի եղեն ։ ուստի մարդիկք լցեալք տրտմութեամբ և դառնութեամբ ։ 'ի միտս իւրեանց վարանէին տեսեալք զի ոչ ինչ ընկալան զոր խնդրէին յԱստուծոյ ։ ❦ յորժամ առաւօտ ծագեցաւ, ամենայն ժողովուրդ յեկեղեցի յաղօթս ։ և ահա սուրբ առաքեալն պօղոս եօթնապատիկ քան զարեգակն պայծառագոյն եմուտ յեկեղեցի ։ և եկեալ առաջի սրբոյ սեղանոյն զժամ մի եկաց լռութեամբ ։ և ամենայն ժողովուրդն կայր հիացեալ։ Ապա ծանոյց նմ՟ թէ այս եղև առ 'ի յերկիւղ մեղաւորաց. վս՟ մարմնոյ թշուառական. քահանային այնորիկ. զոր թաղեալ էին 'ի սրբոյ տեղւոջ որում չէր արժանի։ Եւ հրամայեաց զի զայն գարշելի գէշն որ յետ դատաստանին 'ի դժոխս մատնելոյ է հանեալ 'ի գերեզմանէն հրով այրեսցեն. զի այլ ազգօքն ոչ դադարեսցի. և զայս ասացեալ աներևոյթ եղև։ Իսկ ժողովուրդն ուրախութ՟ վաղվաղակի հրամայեալն 'ի սրբոյն կատարեցին, և զնմանէ գոհացան. ապա որոտումն և չար խառնակումն օդոյն դադարեաց։ ժա՟

Ի ր՟ումն դատաւոր յոյժ արբեցող. և աբշիռ և կին ունէր բարեպաշտ. և աղօթասէր։ Սա զցայգ և զյերեկ արբենայր. և նոյնպիսի վարուք աներկիւղ զկեանս անցուցանէր. իսկ կինն վս՟ նր՟ զա՟ծ աղաչէր. ողորմութ՟ն աղքատաց բաժանէր. ջերմեռանդ սրտիւ զաղօթս մատուցանէր. զի դարձուսցէ զնա յարբեցութ՟է. Դէպ եղև 'ի միում գիշերի. զի մինչ դեռ արբեալ դառնայր 'ի տուն. և երթայր մերձ առ գերեզմանաւն՝ զքարի եհար զոտն իւր. և յանհամբերութ՟է սկսաւ հայհոյել զա՟ծ. և զմ՟ր ածածինն՝ երդուելով յանդամս ք՟ի. և գնացեալ փոքր ինչ յառաջ զծունկս իւր առ ծառ վիրաւորեաց. վս՟ որոյ ևս բարձրաձայն հայհոյեաց զտ՟րն մեր և զօրհնեալ մայր նր՟. երդուաւ 'ի խոցուածս փրկչին։ Եւ յորժամ սակաւ ինչ յառաջ գնաց՝ դարձեալ վիրաւորեցաւ առ ծառ· յայնժամ աղտեղի ձայնիւ սկսաւ աղաղակել հայհոյել· անիծանել զա̃ծ· և զս̃բ կոյսն մարիամ և զա̃մ ս̃բս յերկինս։ Եւ ահա՛ երևեցաւ նմա պատկեր մարդոյ մեռելոյ, որ եկաց առաջի նր̃ ահագին և սոսկալի կերպարան ունելով ՚ի մարմնի· զօձս· զգորտս· և զայլ յորդունս։ Տեսեալ զայնպիսի տեսիլ զարհուրեցաւ· և ասէ ո՞վ ես դու· և նա՛ ասէ, որ ինչ ես և դու եղիցիս։ Իսկ արբեալ գոլով ասէ համարձակապէս· ե՛կ զկնի իմ, հրաւիրեմ զքեզ յընթրիս։ Պատասխանի ետ նմա երթ և ես եկից զկնի քո։ Արդ յորժամ եկն ՚ի տունն· ասէ ցկինն և ցծառայս իւր· զոմն մեծարեցի մի՛ թողուք զնա ա՛յսր մտանել· և հրամայեաց զդրունս տան զգուշութ̃բ փակել· և մինչ դեռ նստէր ՚ի սեղան, հրաւիրեալն բախէր զդուռն· բայց ո՛չ կամէին զնա ՚ի ներս մուծանել։ դարձեալ յոյժ բախեաց յա̃մ տունն շարժեաց, և բացեալ զդուռն ՚ի նոյն ահագին կերպարան եմուտ ասելով· հրաւիրեցեր զիս ահաւասիկ եկի· կերայց ընդ քեզ յահէ ա̃մքն փախեան· միայն մնաց դատաւորըն· և հրաւիրեալն ասէ· դու զիս հրաւերեցեր յընթրիսդ քո· և ես զքեզ մեծարեմ յընթրիս իմ, զկնի երից աւուրց այս ինչ ժամու եկեսցես· և զայս ասացեալ անյայտ եղև· ՚ի վաղիւ ահիւ և յուսով ըմբռնեալ զա̃մ մեղս իւր խոստովանեցաւ։ Արդ յորժամ եկն ժամ սահմանեալ յափշտակեցաւ մարմնով հանդերձ հոգւով. և տարեալ եղև ՚ի դժոխս ուր ետես զա՟մ եղանակս տանջանաց. այս ինքն արբեցողաց և շնացողաց: Ապա մեռեալն ասէ դատաւորն. ահա ճաշ և ընթրիս իմ կեր ընդ իս այժմ զօձս. և արբ զծըծումբ. զձիւթ. և զհուրն: Իսկ դատաւորն յերկիւղ է այնպիսի տանջանաց եղև իբրև զմեռեալ: Դարձեալ տարան զնա ՚ի տեղի ուստի առաւ. և երևեցան ալևոր և կծեալ. և իբրև զմեռեալ: Յետ այսորիկ դատաւորն այն ոչ երբեք ծիծաղեցաւ. այլ միշտ լայր. ողբայր կոծէր. և խստակրօն վարս ստացեալ. բարւոք կենցաղավարէր. երանի թէ ա՟մ արբեցողաց ըստ այսմ օրինակի պատահէր. զի զգաստասցին և ապաշխարեսցին:

Յաղագս աղօթասիրութեան աղքատաց գլուխ ծգ:

Այր ոմն մաշկակար բարեպաշտ և աղօթարար. անուն ա՟ծատուր. զնմանէ ուրումն ձգնաւորի յայտնեցաւ յա՟յ. թէ վ՟ն ն՟ր տուն յերկինս շինէին. բայց արուեստ աւուրք յաւուր շաբաթու միայն գործէին: Իսկ ձգնաւորն տեղեկացեալ վ՟ն վարուց մաշկակարին ծանեաւ թէ զոր ինչ զոր հանապազ վաստակէր. և աւելի ինչ մնայր. քան զպիտոյս տան իւրոյ. զայն ա՟մ յաւուր շաբաթու աղքատաց բաշխէր: Աստի յայտնի է թէ ոչ առանց պատճառի շինուած տանն ասէր և զօրանայր յաւուր շաբաթու:

Ոմն եպիսկոպոս յոյժ ծարաւէր. և հրամայեաց իւրեան գինի բերել։ Իսկ մատրուակ զոր ինչ կայր ամանի եպեղ. և եբեր պատասխանի. և ահա ոմն աղքատ եկեալ մեծաւ պաղատանօք հայցէր ասելով. եթէ ո՛չ արբից 'ի սաստիկ ծարաւոյ մեռանիմ։ Իսկ ծառայն ասէր, թէ այլ ո՛չ ինչ մնաց գինի յամանոջ. և յայս տեղիս ամենևիմբ ո՛չ գտանի. յայսպիսի տառապանաց մէջ անկեալ եպիսկոպոսըն. մէկ կողմանէ զի ո՛չ կարէր տանել զտապ ծարաւոյն. իսկ 'ի միւս կողմանէ զընկերն ձգեալ 'ի վտանգ կենաց անիրաւութ՟ի համարէր։ Ապա դարձուցեալ զերեսս յիւրմէ յընկերէն օգնեաց յայսպիսի նեղութ՟ես, և հրամայեաց զայն գինի տալ աղքատին այն միկ յետ այսորիկ իբրև ըմպելոյ յոյս ամենևիմբ հատաւ յայնժամ սաստկագոյն ծարաւ եպիսկոպոսին զօրանայր. հրամամայեաց ծառային զի խոնարհեցուսցէ զամանն թերևս կաթիլ մի գինւոյ կարիցէ գտանել. իսկ նա՛ շատանգամ հրաժարեալ. թէ ամենևիմբ ո՛չ է մնացեալ ապա յուսով սրտապնդեալ՝ այլ 'ի հրամանէ բռնադատեալ արար. և զամէնն որ էր դատարկ թողեալ. լի՛ գինով զարմացեալ եգիտ։

Գ Տանուտէր ոմն աղքատ, միայն մէկ դահեկան ունէր՝ ընդ որ կամէր գնել թէ զինչ կերիցէ. և ահա՛ 'ի նմին ժամու եկն աղքատ և խնդրէր ողորմութ՟ի 'ի նմանէ. իսկ նա խոր հէր 'ի մտի իւրում թէ զինչ արասցէ ասելով. եթէ տա՛ց՝ սոված մնացից. և եթէ ո՛չ տաց, երկնչիմ գուցէ մեղանչիցեմ ընդդէմ ողորմութեն՝ բայց ապա՛ հոգին յաղթեաց մարմնոյ. և հետ և ելովայրոյն զոր աւետարանն յիշատակէ 'ի կերպարան աղքատին բարի փոխառութի այ ետ շահելով զինչս իւր. դարձաւ 'ի տուն իւր՝ և եդին առաջի հաց ցամաք միայն. թէպէտ սեղան աղքատէր սակայն զմիտս իւր բարի յուսով հաստատ ունէր. և մինչ դեռ նստէր ահա այր ոմն անծանօթ՝ յանկարծակի մտեալ 'ի տուն և ըշտապով հանեալ. ն ոսկի. ետ ի ձեռս նր ասելով. զա՛յս քեզ առաքեաց տրն քո, և իբրև ստիպով կամելով առ ինքն դառնալ. իսկոյն ել արտաքս. իսկ տանուտէրն իբրև զարմացեալ կամէր տեղեկանալ 'ի նմանէ. նա՛ անյայտ եղև յաչաց նր։

Է Այր ոմն ազնուական ունէր մին ագարակ մեծագին. և քսան որդիս. խորհէր 'ի սրտի իւրում, թէ յորժամ զմին ժառանգութիս իմ բաժանեցից. այսքան բազում ժառանգս զինչ եղիցի զկնի մահուան իմոյ. զի թէպէտ ես որ զայս ամ ունիմ բարւոք կեամ, սակայն յորժամ այս չափ ժառանգք եղիցի միոյ ստացուածոյս. ո՛րպիսի լինիցի անդ խաղաղութի. կամ որ սէր հաստատեսցի, այլ մանաւանդ այս չափ կռիւ. աղմուկ. խռովութի. և եղբայրական ատելութի զօր ասցի։ Ապա ասէ տ՟ր ա՟ծ ամենակալ. զոր ինչ ունիմ 'ի վ՟ր ստացուածոցս իմոց քեզ տամ, և զքեզ միայն ժառանգ կացուցանեմ. զորդիքս իմ'իքեզ յանձն առնեմ. արա ընդ նց՟ ոպ՟ հաճոյ եղիցի։ Զայս ասացեալ զձեռն ամանն իւրոյ կապեալ'ի նետ. և ուժգնապէս զաղեղն իւր լարեալ յերկինս ձգեաց. և նետն առ ժամայն առանց ձեռն ամանին անդրէն դարձաւ. զի յայտնապէս ցուցցի. թէ պարգև զոր հաւատով մատոյց, շնորհ վերին ա՟ծութեն ընկալաւ. իսկ այրն տեսեալ զիւր մատուցեալ ընծայն ա՟յ ընդունելի գոլ յօժարամիտ և բերկրալից ետ զստացուածն իւր յեկեղեցի ուրումն ձեռագրով և կնքով իւրով։ Զկնի մահուան ն՟ր ոչ յետ բազում ժամանակաց որդիք ն՟ր 'ի խնամոց ա՟յ այնչափ փարթամացին. մինչ զի իւրաքանչիւրոք 'ի նոցանէ աւելի ունէր զերկրաւոր մեծութիւ քան զհայր ն՟ր։ Արդ զոր ձեռն աման 'ի ձեռաց հօրն յերկինս ընկալաւ. նոյն զառատ անձրև օրհնութե՟ իւրոյ յորդիս ն՟ր եհեղ։ Ապա ուրեմն զոր ինչ ոք յա՟յ յերկրի տայ, այն յերկինս ընկալեալ լինի. և անտի պարտէ ակն ունել հատուցման. ո՛ւր ժամանեալ լինի առատապարգև։

Է Թագաւոր ոմն խրատատու եպիսկոպոսին իւրոյ՝ զաղքատս. զտարս. և զկարօտեալս մի՛շտ ընդունէր. պատուէր և սիրով ընդունէր. և առ նա՟ զինքն խոնարհ՝ քաղցր՝

մարդասէր

մարդասէր և բարերար ցուցանէր․ վ՟ որոյ և շնորհիւ ա՟յ զթագաւորու՟ն իւր առաւել քան զնախնեան ն՟ր ընդ արձակեաց․ և զբազում ազգս մեծամեծս հնազանդեցոյց ընդ իշխանութ՟ե իւրով։ Սա՛ երբեմն յաւուր տօնի հրաշալի յարութեն ք՟ի, նստելով սեղան ընդ եպիսկոպոսին․ բերին առաջի ն՟ր կերակուր մեծածախ 'ի վ՟ր արծաթեղէն սկաւառակի․ և յետ օրհնութե՟ կամէին ճաշակել․ և ահա՛ ծառայն ա՟յ որ էր հոգէբարձու կարգեալ 'ի վ՟ր աղքատաց․ ծանոյց թագաւորին թէ մեծ բազմութի՟ աղքատաց 'ի զանազան տեղեաց եկին․ և 'ի հրապարակս նստեալ զողորմութի՟ խնդրեն։ Զա՛յս լուեալ թագաւորն առժամայն առեալ զսկաւառակն կերակրով հանդերձ հրամայեաց տալ աղքատաց․ և զսկաւառակն 'ի մասունս հատեալ ա՟մեցունց բաշխել։ Զոր տեսեալ եպիսկոպոսին յոյժ ուրախ եղև․ զուարճացաւ այսպիսի բարեպաշտութ՟ե․ և առեալ զձեռանէ ասաց․ այդ ձեռն ո՛չ երբէք հնասցի․ որ եղև իսկ․ քան զի սպանեալ 'ի պատերազմի ձեռն հանդերձ մատանեաւ՝ հատեալ եղև 'ի մարմնոյ․ և է մինչև ցայսօր անարատ արծաթով պատեալ․ և յեկեղեցւոջ սրբոյն պետրոսի պահեալ և ա՟մեցունց մեծապէս պատուեալ։

Սին ոմն մեծազգի․ մեծահաւատ և աղքատասէր, սովոր էր զաղքատս և զտնանկս ընդունել 'ի տուն իւր, սպասաւոր էր և ձեռօք Վ՟

իւրովք լուանայր զոտս նց̃ · զոր թէպէտ արգելոյր այրն նր̃ և ոչ թոյլ տայր , սակայն նա՛ ընդ դէմ կամաց առն այսպիսի բարերգործութե̃նց զհետ ընթանայր հանապազ ։ Յաւուր միում մինչ դեռ այրն 'ի տան չէր , ետես առաջի դրան տան իւր զոմն աղքատ յոյժ վշտանկեալ , և 'ի մարմնի կարէ վէր խոցոտեալ · և գթացեալ 'ի նա՛ տարաւ 'ի տուն իւր , և պատրաստեալ բաղանիս լուաց զնա ջերմաջերմ ջրով ։ Ասէ՛ աղքատն ցկինն՝ ոչ կարեմ հանդարտել · եթէ ոչ ընդարձակ անկողնոյ · և նա՛ ննջեցոյց զնա՛ 'ի սենեկի իւրում ։ Եւ ահա յանկարծակի այրն եկն կնոջ եմուտ 'ի սենեակն նր̃ , ետես 'ի վր̃ անկողնոյն կնոջն իւրոյ զայն հիւանդն՝ և կարծելով թէ պոռնիկ ոք իցէ՛ կամէր սպանանել զնա , ապա երևեցաւ նմա ք̃ս 'ի կերպն զոր օրինակ կախեալ կայր 'ի վր̃ խաչին՝ ասելով զի՛ հալածես զիս · որ վս̃ քո զայսպիսի չարչարանս կրեցի · և նա անկեալ յերկիր դողայր · և ապա ի վեր համբարձեալ զաչս ոչ զք̃ ետես · և այնպէս դարձաւ առ տր̃ · և եկն 'ի զղջումն յոյժ ·

Է Իշխան ոմն շինեաց ապարան մեծ և գեղեցիկ · և բազմածախս , ոչ այնչափ վս̃ կարեաց որպէս վս̃ սնափառութե̃ , 'ի վր̃ դրան հրամայեալ գրել զայս ձև բանից · մի՛ ոք արբրէ կամ ննջեսցէ այս ապարան · բայց աքիլևս , և աղատոն · և արտեմիայն · այսու նշանակե լով թէ միոք անդ 'ի գիշերի մնացէ, միայն թէ լինիցի քաղջ, ոչ աքիլ եւս կամ 'իմաստասէր ոչ պղատոն . կամ կոյս գեղեցիկ ոչ արտեմեան : 'ի միում աւուր 'ի տեսլեան տարան զնա 'ի դատաստան . և ասէ ցնա տէր, զի՞ս և զիմս կամիս արտաքս հանել յապարանից քոց և ես յերանի ապարանից իմոց . այս է յերկնից 'ի բաց հանից : Արդ՝ յորժամ դողալով զվճիռ ընդ դէմ իւր լսել սպասէր և տեսեալ թէ ուստեք չունէր օգնութ̄ի եղկելին այն . զաչս իւր դարձոյց առ սր̄ ա̄ծածինն հայցելով զօգնութ̄ի և զողորմութ̄ի . որում չէր արժանի : Իսկ սր̄ կոյսն մարիամ շարժեալ 'ի գութ սովորական . բարեխօս եղև վ̄ն ն̄ր . և զոր խնդրեացն ընկալաւ : Եւ ապա́ ասէ ցիշխանն . եղծ զառաջին գիրն . և լե́ր բարեգործ և աղքասէր . և զա́յս բանս հրամայեա́ գրել . ժողով սրբոց մտցէ անմահ յիմ ապարան, մերկ մարտիննոս . աղքատ ղազար, յակոբ անյարկ : Այսու նշանակեաց թէ զբարեպաշտս պարտէ տանել 'ի տուն, զմերկս և զաղքատս, զոր նշանակէ զմարտինոս . զհիւանդս, և զցաւագնեալս, զորս ղազար օրինակէ, զօտարս, և զնշդէհս, զորս յակոբոս ցուցանէ : Այսպէս իշխանն այն առաջնորդութ̄ե ծովային աստեղ, որ 'ի ծովու այս աշխարհի էր մոլորեալ ուղղեցաւ և 'ի նաւահանգիստ յերանին վերին ան̄ միաս եհաս :

'Ի կողմանս մեծի ծովու կայր քաղաք մի ը̃

մեծ և նշանաւոր, յորում գիճութիւնք արբեցութիւնք · վաշխ · ստախօսութիւնք · և այլ չարիք տիրէին ։ Իսկ անգթութիւնք, և անմարդասիրութիւնք առ օտարս և աղքատս, այսքան 'ի սիրտ ամենեցունց արմատացեալ էր · մինչ զի 'ի սովոյ կամ 'ի հիւանդութենէ անկանէին · կամ արտաքոյ պարսպին ելանէին՝ բնաւ ոչ ումեք ողորմութիւն · տային · և ոչ մարդասիրութիւն ցուցանէին · ընդդէմ օտարաց զդրունս փակէին · զորս խաբեբայից բանային · առ չարիս առատաձեռն · և առ բարիս ժլատք · բայց վասն զի ամենայն մարդոյ յայտնի է, թէ աստուած ոչ ումեք ցուցանէ զիւր մարդասիրութիւն · ո̃վ անզեղջից և անողորմից · զոր օրինակ մարդիկքն թշուառականք քաղաքին այնորիկ օր ըստ օրէ առ բարեպաշտութիւնք էին անխոնարհելիք, և առ մեղս դիւրաշարժք · առ երկիւղ աստուծոյ անզգայք · մինչ ամենազօր և մարդասէրն աստուած · իբր թէ բռնութեամբ 'ի պատուհասել զանազան չարիս նոցա բռնադատեալ եղև ։ Արդ՝ հրեշտակի աստուծոյ եկն 'ի քաղաք ընդերեկս, որ գուշակէր զկորուստ քաղաքի, 'ի կերպարանս աղքատ օտարին, 'ի զգեստ պատառատունս, զերեսս ունելով թառամեալ · վտիտ և չորացեալ · մինչ զի գրեթէ երկաթի սիրտ շարժեալ · 'ի գութ նորին · բայց աւա՜ղ՝ քան զերկաթ կարծրագոյն սիրտ նոցա · ոչ կարաց խոնարհիլ առ 'ի յողորմութիւն · զամենեքումբք շուրջ եկեալ · և յամենեցունց մեծ աւ-

անար

անարգանօք և ցասմամբ 'ի բաց վարեալ եղև: Ապա՛ եկն 'ի դուռն դատաւորին. և խնդրէր 'ի նմանէ ող̅ և յայլոց օթևան. և սակաւ կերակուր յանուն ք̅ի. իսկ դատաւորն ընկալաւ զնա՛ սիրով և մեծարանօք, քան զի նա՛ միայն էր անդ ողորմած մարդասէր. և յոյժ հիւրասէր: Արդ յորժամ երկոքեանն ընդ միմեանս խօսէին. տանուտէրն 'ի բանից նր̅ յոյժ վառեալ էր 'ի սէր ճշմարիտ. ապա հրեշտակն առեալ զնա մեկուսի ուսոյց նմա զմեղս արտասուօք լուանալ. զպատուիրանս պահել. տառապելոց օգնել. յա̅յ երկնչել. և տուեալ զայս խրատ ծանոյց նմա թէ քաղաքըն վաղվաղակի հրով կործանելոց է. և նա՛ զայս լուեալ յոյժ զարհուրաւ. և տրտմէր վ̅ս տանն իւրոյ. ասէ՛ ցնա հրեշտակն մի՛ երկնչիր՝ տուն քո 'ի մէջ հրոյն անվ̅աս մն̅ացէ օթևանին ողորմութե̅, հուր ո՛չ ինչ վ̅ասեսցէ. քան զի չարութ̅ն պատժելի՛ է և ո՛չ սէր: Օ այս ասաց և անյայտ եղև յաչաց ն̅ց: 'ի վաղիւ̅ համբաւ տարածեցաւ 'ի մէջ մարդկան, թէ դատաւորին յայտնեցաւ յա̅յ վ̅ս կործանման քաղաքին. և ն̅ք փոխանակ յապաշխարութ̅ն դառնալոյ, զպատուաւոր այրն ծաղր առնէին, թէ 'ի խաբեբայէ ումեմնէ պարտեալ եղև: Եւ ահա՛ յանկարծակի սաստիկ որոտումն եղև, իբր թէ յերկիր կործանիւր. ապա յետ այնորիկ մեծամեծ փայլատակունս հեղան 'ի վ̅ր քաղաքին. և բոցք հրոյ յերկնից

ան

անկեալ յեկեղեցին յաշտարակս, 'ի պարիսպս, մինչ զի զա͞մ քաղաք 'ի վեր տապալեցին․ և գետնա փորշինուածք ոչ կարացին զերծանել 'ի հրոյ․ մարդիկք բազում հանդերձ քաղաքաւ այրեցան ։ և ոմանք միայն կենդանւոյն փախեան ։ Ո՜վ սիրելի տեսանես․ զի արդ լաւէ զինչ իւր ընդ աղքատս բաժանել․ քան թէ այդպիսի ահիւ և զայրացմամբ զա͞մ ինչս կորուսանել ։

Յաղագս Ողորմութեան և մարդասիրութեան աղքատութեան Գլուխ․ ծդ․

ա͞ ԶՆոյ նահապետ՝ ողորմութի͞ն ա͞յ ջրհեղեղէն ազատեաց ։ ԶՂովտ՝ ո՛վ ապրեցոյց 'ի կործանմանէ սոդոմայեցւոց, եթէ ոչ ողորմութի͞ն ա͞յ ։ Զժողովուրդն իէ͞լի ո՛վ փրկեաց 'ի ծառայութե͞ եգիպտացւոց․ եթէ ոչ բարերարութի͞ն ա͞յ ։ Դաւիթ թագաւորի կրկին պատիժ զառժամանակեայ և զյաւիտենական մարդասիրութի͞ն ա͞յ եթող ։ Զուրացութի͞ն պետրոսի, յորժամ դառնապէս ելաց․ քաղցրութե͞ իւրով տ͞րն մեր ք͞ս քաւեաց․ և առաջին պատիւ միւսանգամ էած ։ Զաւազակն զփայտէ կախեալ․ մեծ ողորմութի͞ն ա͞յ եղև․ զի աւելի՛ քան զոր խնդրեալ էր շնորհեցաւ նմա ։

բ͞ Սուրբն յակոբ առաքելական՝ ոչ միայն առաքինին վարուք իւրովք զբազումս էած յա͞ծ գիտութի͞ն․ այլ և բազում սքանչելագործութե͞ յաշխարհն փայլէր ։ Սա զքա ռասուն ամ յանապատի միայն լոկ բանջարով շատանայր • զգիշեր և զցերեկ անդադար աղօթէր ։ Իսկ սկզբնաչարն բանսարկուն կամելով զնա՛ որսալ յորոգայթ իւր, եմուտ ՚ի դուստր ումեմն մեծատան • և բերանէ աղջկանն յանուանէ կոչէր զս՟բն յակոբ • Արդ ծնօղքն աղջկան ՚ի բազում տեղիս շրջելով • ՚ի սեննեակ նորին ածին զդուստր իւրեանց • և յայտնեցին զվիշտն աղջկան, որ զքսան օր ամենևիմբ ո՛չ ինչ ճաշակեաց • և զգլուխ իւր և զմարմին վիրաւորէր ձեռօք իւրովք • իսկ այրն աղօթիւք հալածեաց զդևն յաղջկանէն • բայց ծնօղքն երկուցեալ մի՛ գուցէ միւս անգամ դարձցի ՚ի դուստր նց՟ • աղաչեցին զայրն այ՟ զի առ նմա մնասցէ զերկուս աւուրս ։ Իսկ նա վստահացեալ յառաքինութ՟ին իւր • և սքանչելագործութ՟ի հաւանեցաւ ։ Այլ ած՟ տեսեալ թէ նա ոչ յիշէր զտկարութ՟ի իւր՝ զզօրութ՟ի շնորհին իւրոյ ՚ի նմանէ եբարձ • և ահա զկնի սուղ ժամանակի ճգնաւորն ո՛չ միայն ՚ի պոռնկութ՟ե անկաւ, այլ և զմարդասպանութ՟ի կատարեաց • քանզի երկուցեալ մի՛ գուցէ աղջիկն զչարութ՟ի նորին երբեմն յայտնեսցէ, եսպան զնա ։ Ապա՛ ՚ի միտ ածելով յակոբն թէ որ չափ մեծամեծ մեղս անկաւ • յայն քան յուսահատութ՟ի եկն • մինչ զի խորհէր զանապատն և զվարս կրօնաւորութ՟ե թողուլ և յաշխարհ երթալ • բայց մարդասէրն ած՟ յիչելով զճգնութիւնն որ վ՟ անուան իւր զայսքին ժամանակ կրեր, զճառագայթ ա՟ծային լուսոյն իւրոյ 'ի ձեռն այլ ծառային առաքինւոյ այնքան ծագեաց 'ի սիրտս նր՟· մինչ զի յուսով թողութե՟ յանցանաց քաջալերեալ և վեր ակն գնեալ, 'ի հին գետնափոր գերեզմանն զինքն ծածկեաց զտասն ամ մինչև 'ի մահ· 'ի տուէ և 'ի գիշերի մեծաւ աշխատութե՟՝ անասելի զղջմամբ անդադար բեկմամբ սրտի· յորդառատ արտասուօք զկորուստն իւր կոծէր և ողբայր· և յամօթոյն իւրմէ զաչս համբառնալ յերկինս ոչ համարձակէր· և ոչ երբէք ընդ ումեք խօսէր· մինչև կտ՟րելապէս 'ի յինքն ոչ վստահինւյն ստացաւ· և ապա ողորմութե ա՟յ եհաս

Գ Աղջիկ ոմն չոր խորհրդով հօր իւրոյ պատրեալ 'ի մեղս պոռնկութե՟ ընդ նմա անկաւ· զոր 'ի մացեալ մայրն նր՟ սաստիկ բանիւք զնա կշտամբեաց· վ՟ն այսքան մեծամեծ յանցանաց ։ Իսկ աղջիկն տեսեալ թէ այնքան մեղքն յայտնի եղեն· յոյժ զայրանալով և հոգալով խորհեցաւ ա՟մ իրօք մահու դեղ մօրն արբուցանել, զոր և արար իսկ· հայրն նր՟ զի այլուրեք յայնժամ գնացեալ էր· իբրև եկն 'ի տուն· և գիտաց զայն չար պատահումն զդուստրն սաստիկ խոշտանգեաց ։ Իսկ նա տեսեալ թէ զինչ փորձութի՟ եկն 'ի վ՟ր նր՟· յայնքան յուսահատութի՟ անկաւ· մինչ զի և զմիտս հաստատեաց և զհայրն յաշխարհէ բառնալ· զոր և գործով իսկ կատարեաց ։

Յետ այսորինկ զայսպիսի չարիս գործեալ, որէ յայտնի աւար սատանայի. սկսաւ զմեղս 'ի վր̄ մեղաց յաւելուլ. և 'ի բաց ձգեալ զամօթ երեսաց. ժողովեալ բազում ինչս 'ի տանէ իւրմէ փախեաւ. և կայր անառակութե̄: Դէպ եղև զի յաւուր միում եմուտ յեկեղեցի 'ի ժամ քարոզի յորում վարդապետն առաւել քան զսովորութ̄ի մարդասիրութ̄ի այ̄ գովաբանէր ասելով. թէ ոչոքէ այնպիսի մեղաւոր որ 'ի ներքոյ երկնից զանազան և ծանր անօրէնութե̄ շաղախեալ, որում չիցէ յոյս հատանելոյ շնորհին այ̄. և գտանելոյ զողորմութ̄ի տն̄: Սերմն բանին այ̄ յերկիր բարի անկաւ. քան զկնի աւարտման քարոզի անյապաղ գնաց առ վարդապետն՝ եհարցցնա եթէ ճշմարիտ իցէ՝ զոր յաղագս մարդասիրութե̄ այ̄ առ մեղաւորս ասացեր: Պատասխանի ետ կարի ստոյգ ճշմարիտ է: Ասէ ցնա կինն. եթէ այդ այդպէս է, ո՞վ համարձակաձայն հաստատես. աղաչեմ զքեզ հայր խոստովանեցո՛ զիս. և 'ի կապանաց իմոց արձակեա՛, և լե՛ր վն̄ իմ միջնորդ առ այն քան մեծագոյն ողորմութ̄ի այ̄. Ո այս լուեալ քարոզատուն զժամանակ առ 'ի խորհել խնդրէր և կինն ասէ զի՞նչ է հայր: Այժմ իսկ այնչափ մեծապէս զողորմութ̄ի այ̄ վերապատուէիր՝ և բարձրացուցանէիր. և ահա՛ այժմ երևիս սակս փրկութե̄ իմոյ երկմտեալ. ասէ քարոզատուն, ո՛չ այդպէս է դուստր՝ այլ զբարիս հոգւոյդ քում խնդրեմ. վս՟ որոյ կամիմ. զի վաղիւ եկեսցես 'ի լսել զքարոզ. և այս եղեցի քեզ ապաշխարութ՟ի փրկութ՟ն քո: Իսկ նա 'ի միտ ածելով մեղս այնքան սկսաւ զղջալ տխրել. և հոգալ. և հոգւոց հանել 'ի խորոց սրտէ, մինչ զի ոչ կարել յեկեղեցւոյ ելանել այլ 'ի նոյն տեղւոջ աւանդեաց զհոգին իւր առ ա՟ծ: Ո որ լուեալ վարդապետն յանձն արար զնա աղօթից քահային. և կրօնաւորաց եկեղեցւոյն այնորիկ. որք յորժամ վս՟ նր՟ աղօթեին. 'ի նմին ժամու յերկնից ձայն եղև առ նա՟. ոչ է պարտ վս՟ նր՟ աղօթք. մանաւանդ նա իսկ աղօթեսցէ վս՟ ձեր:

Դ Ողորմութ՟ի այ՟ բարձրագոյն կերպիւ մեծ է քան զա՟մ մեղս զոր գործեն մարդիկք. վս՟ որոյ եթէ ոք ըմբռնեալ 'ի բազում յանցանաց յուսահատութ՟բ. և ոչ բախէ զդուռն ողորմութ՟ե այ՟. մեծ բարկութ՟ի յինքեան գանձէ յահեղ ատենին. ո՟պ և տ՟րն մեր երբեմն գանգատէր առաջի Ճգնաւորի որումն ասելով. մեղաւորք 'ի կէտ վերջին կենաց իւրեանց յուսահատին 'ի մարդասիրութ՟ե և 'ի քաղցրութ՟ե իմ մէ. առաւել ծանրագոյն զխս բարկացուցանեն. և յաւէտ ոչ հաճիմ ընդ նա՟ սակս այսր մեղաց. քան թէ վս՟ այլ չարութ՟եցն՟, զոր երբեմն գործեալ իցեն. քան զի եթէ ոք վհատի՝ և յայտնապէս արհամարհէ զմարդասիրութ՟ի իմ, և անիրաւաբար համարի զիւր չարութ՟ի մեծ գոլ քան զիմ ողորմութ՟ի.

թ՟ի. և բարերարութ՟ի. վ՟ս զի ծանրացեալ այսպիսի մեղօք այլ եթէ ցա՟ծի սակս զիս բարկացուցանելոյ. այլ միայն վ՟ս անբաժանելի վնասուն իւրոյ, որ թէ ստուգապէս զղջանայր զի զիս բարկացուցեալ էր և արհամարհեալ. և յողորմութ՟ի իմ Ճշմարտապէս յուսացեալ էր. նա իսկապէս զնա գտանէր. քանզի ան եզրապէս և ան սահմանաբար մեծ է ողորմութ՟ի իմ. քան զա՟մ անօրէնութ՟իս բովանդակ աշխարհի.

Յաղագս Աւձոյն դեղ մարգէտմաւ տանել. Գլուխ. ԾԵ.

իւր· զայն իմացեալ աղջիկն բազում անգամ յորդ արտասուօք խոստովանահօր իւրում ծանուցանէ զորոգայթս դիւաց· և նա խրատ տայր նմա զի ամ̃ ջանիւ զգուշասցի, ոչ միայն ՚ի խօսելոյ և ՚ի հայելոյ ՚ի նա· և նա մեծաւ զգուշութբ̃ առնէր այնպէս։ Արդ՝ ՚իբրև սատանիկ փորձութիւնք ընդ նմա մարտնչէին, մինչ զի ոչ հաց կարէր ուտել կամ ննջել· ՚ի միում գիշերի այնքան պատերազմ դիւաց յարեաւ ՚ի վր̃ նր̃, մինչ զի յորժամ առաւօտ ծագեաց, կամէր այլ ուրեք ելանել ՚ի տանէ, եբաց զաչս և ահա երևեցաւ նմա տր̃ ք̃ս իբր թէ նոր ՚ի խաչ ելեալ, վիրաւորեալ· արիւնաթաթախ. և ասէ ցնա հանդարտ ձայնիւ ո՞վ աղջիկդ զիս սիրեա՛, որ եմս գեղեցիկ· բարի՛ քաղցր ամենազօր. և ամենահարուստ. և զայս ասացեալ նոյն ժամայն անյայտ եղև. և զաղջիկն ՚ի մեծի խաղաղութե̃. ուրախութե̃. գոհութե̃. և յամ̃ փորձութեանց ազատեալ եթող։

Յաղագս Սիրոյ ընկերին· Գլուխ· ԽԳ·

ա̃ Մեծ նշան սիրոյ առ ընկեր եցոյց աբրահամ. յորժամ ուժգին պաղատանօք զա̃ծ աղաչէր վ̃ն սոդոմայեցւոց և ղովտ ապրեցոյց։ Այն քան սէր ունէր մովսէս առ ժողովուրդըն իւր· մինչ զի կամէր տարագիր լինել ՚ի դպրութէ̃ կենաց վ̃ն նր̃։ Դաւիթ զյովնաթան սիրէր իբրև զանձն իւր։ Տուբիթ որ

՚քան սէր և գութ ունէր առ ազգն իւր· ա՟ծային գիրք յայտնապէս ասեն։ Պօղոս առաքեալն այնքան սիրով վառեալ էր առ ազգայինսն իւր, մինչ զի կամէր անէծք լինել վ՟ն ն՟ց միայն հաւատասցեն ՚ի ք՟ս։

Լօնքօ պարտացիք զոմն սարկաւագ կալան Է՟
և կապեալ ՚ի բանտի ունէին· կամելով զնա՛ սպանանել· և յորժամ երեկոյ եղև այրն ա՟յ Սանքթիլոս եպիսկոպոս աղաչէր զն՟ս, զի ազատեսցեն զսարկաւագն· և ն՟ք ամենևին ո՛չ կամեցան· տեսեալ եպիսկոպոսն զի ա՟մ իրօք կամէին սպանանել զսարկաւագն· ասէ՛ ցն՟ս, տուք ինձ զնա՛ ՚ի պահեստ։ Պատասխանի ետուն նմա, զա՛յս առնեմք վ՟ն աղաչանաց քոց· բայց այս կերպիւ, զի եթէ դա՛ փախիցէ զգլուխ քո ընդ գլխոյ դորին եղիցին։ Իսկ այրն ա՟յ յօժարութ՟բ յանձն էառ։ Ապա՛ ի մէջ գիշերի եպիսկոպոսն զսարկաւագն փախոյց· թէպէտ նա՛ ո՛չ կամեցաւ· իբրև առաւօտ ծագեաց· և զսարկաւագն ո՛չ գտին· կամեցան զեպիսկոպոսն սպանանել ընդ ուխտադրութ՟ն նորին· և նա՛ յօժարեցաւ· իբրև դահիճն վերացոյց զսուրն զի գլխատեսցէ զնա· յայնժամ աղաղակեաց եպիսկոպոսն ո՛վ Տ՟ր յովհաննէս կալ զձեռանէ ն՟ր· և առժամայն ձեռն դահճին թմրեցաւ, և ո՛չ կարէր խոնարհեցուցանել· զա՛յս տեսեալ ա՟մցունց փառաւորեցին զայրն ա՟յ և մեծաւ երկիւղիւ պատուէին զնա· և աղաչէին զի բժշկեսցէ

ձեռն զօրականին․ և նա՛ ոչ կամէր ասելով․ ես աղօթեցից վ͠ս նր͠․ եթէ ո՛չ նախ երդնուցու, թէ իւր ձեռօք այսու հետև ո՛չ սպանցէ զքրիստոնեայ, և զօրականն յօժար կամօք արար զայս․ յայնժամ բժշկեաց զնա այրն ա͠յ

Զոր տեսեալ զօրականաց ամ͠ցունց զամ͠ արջառս և զայլ անասունս, զորս գողացեալ էին․ իբր ընծայ մատուցանէին առն ա͠յ․ բայց նա ոչ ինչ 'ի նոցանէ կամեցաւ առնուլ ասելով․ եթէ ինչ կամիք ինձ տալ, զամ͠ գերիս զոր ունիք ինձ մատուցէք, զի վ͠ս ձեր աղօթեցից առ ա͠ծ․ և նք͠ զամ͠ գերիս հանդերձ նովաւ ազատեցին։ Ա՛րդ՝ այնպ͠ շնորհօք ա͠յ ա͠ն օրհնեաց․ զի յորժամ մին վ͠ս միուսոյն 'ի մահ զինքն մատնեաց, զբազումս 'ի մահուանէ ազատեաց։

գ͠ Ա՛րք երկու ընդ միմեանս կռուելով մինն միուսոյն զաչս եհան և կուրացոյց զնա․ կոյրն այն տեսեալ զինքն անպիտան աշխարհի եմո՛ւտ 'ի վանս․ յետ այսորիկ միւսն որ կուրացեալ էր զնա՛ անկեալ 'ի հիւանդութ͠ի գնաց և նա 'ի վանս, բայց այն վանս յորում էր կոյրն՝ զոր այնքան անողորմաբար վիրաւորեալ էր ո՛չ պատշաճ համարէր երթալ։ Ա՛րդ՝ յորժամ կրօնաւորք ընդ միմեանս 'ի ծածուկ խօսէին վ͠ս այսր իրաց․ և բանս եհաս յականջս կուրին՝ մեծաւ ջանիւ և ջերմեռանդ պաղատանօք աղաչէր զեղբարս․ զի զնա սիրով 'ի ներս ընկալցին, և հրամայեսցեն ինքեան․ զի յա͠մի ծառայեսցէ նմա․ և իբրև յոյժ պաղատէր և աղերսէր, ապա՛ ընկալաւ զոր ինչ խնդրէր զոր զգալի աչօք ոչ կարէր տեսանել՝ այնմիկ պայծառ սիրոյ ակամբ ծառայեսցէ. յայնժամ մեծաւ հոգաբարձութ͞ ծառայէր հիւանդին. ծածկէ՛ր, զպիտոյսն մատուցանէր, 'ի յուտել քաղցր ձայնիւ յորդորէր. վ͞ս բնական կարեաց 'ի դո՛ւրս տանէր և 'ի ներս բերէր մեծաւ սիրով. և այնպէս որ զերկուաչս զգալիս կորուսեալէր, սիրով և համբերութ͞ իբր երկու հոգւոյ աչքն լուսաւորէր:

Սուրբ առաքեալն յոհաննէս և աւետարանիչն յեփեսոս եկաց մինչև 'ի խորին ծերութ͞ի. մինչ զի աշակերտքն 'ի ձեռս իւրեանց բարձեալ տանէին, զնա յեկեղեցի. և քանիցս անգամ բան ասէր 'ի ժողովս նց͞ ոչ ինչ աւելի խօսէր. միայն զայս յիշեցուցանէր, որ͞դեակք սիրեցէք զմիմեանս. իսկ եղբարքն որք ընդ նմա էին զարմացեալք, թէ համապազ զնոյն բան կրկնէր. ասեն ցնա՛ վարդապետ, էր զնոյն բան համապազ խօսիս. պատասխանի ետ այսր աղագաւ զի պատուիրան տ͞նէ. և եթէ այս միայն կատարեսցի բաւական է: Դ͞

Իշխան ումն որ չափ մեծութ͞ և ընչիւք փարթամ. նոյն գունակ զազիր գործովք և չարութ͞ հարուստ. սակայն զկին ունէր բարեպաշտ և երկիւղած այ͞. որոյ խրատու զեկեղեցական և զկրօնաւորսն պատուէր և մե Ե

ծա

ծարէր։ Յաւուր միում եկին առ նա երկու քահանայք. և մինչ դեռ նստէին 'ի սեղան՝ ասէ ցն՟ա տիկինն. աղաչեմ զձեզ ո՛վ պատուական հարք. տացէք մեզ բան առ 'ի յօգուտ փրկութե՟ մերոյ. եթէ ո՟րդ իմ ախորժեցէ։ և իշխանն ասէ. և ես աւրախ լուայց, միայն կարճառօտ իցէ. քան զի և քարոզ յերկա՛ր ոչ ախորժեմ։ յայնժամ ոմն 'ի քահանայից ասէ. ես ձեզ բան տացից կարճառօտ, բայց այնքան օգտակար. զի պահեսցես զայն, յաւուր դատաստանին զի հոգիս որ 'ի մանկութէ իմմէ ծառայէ ա՟յ ընդ հոգւոյդ քո գրաւական եղից։ Ասէ իշխանն՝ ա՛րդ՝ տացէք և ես երդումամբ հաստատեմ զի կամիմ պահել։ յայնժամ քահայն ասէ. հրամայեաց տ՟ր մեր յ՟ս ք՟ս 'ի ս՟բ աւետարանին. թէ զոր ինչ կամիք զի արասցեն ձեզ մարդիկ. և դուք արարէք ն՟ց. նոյնպէս և տուբիթն հոգւով սրբով ասէ. զոր ինչ ոչ կամիս թէ այլ արասցեն ձեզ, և դու մի՛ արասցես այլում։ Արդ՝ թէ զայս կատարեսցես անկարծ իք փրկութե՟ հասցես։ յայնժամ ասէ իշխանն, հա՛յր երկրորդեա՛ զնոյն բանս. զոր իբրև նա արար՝ իշխանըն 'ի միտս էառ և ուսաւ։ Դարձեալ աղաչեաց զքահայն, զի զայս բանս կարճառօտ բանիւք նմա մեկնութի բանիցս այսոցիկ։ Ո՛ որ օրինակ դու երևելի իշխան գոլով. կամիս զի ա՟մքն քո մարդիկ քեզ պատուեսցեն. և վայել չարաւր ծառայեսցեն. նոյնպէս և տ՟ր ա̃ծ, որովհետև է քո տ̃ր իշխան, լե՛ր առ նա՛ հաւատարիմ, զնա՛ միայն փառաւորեա՛ զանուն ն̃ր պատուեա՛. նմա թերևս յաւուրս տ̃րունական ծառայեա՛: Հետ այսորիկ եթէ լինէիր հայր որդւոց փափաքէիր զի զքեզ որդիք քո պատուեսցես. նոյնպէս և դու զքեզ պատրաստեա՛, այսպիսի գոլ առ տ̃ր ա̃ծ քո: Դարձեալ ո՛չ կամէիր թէ ո՛ք զքեզ սպանցէ, կամ զշնութի̃ն 'ի տան քո գործեսցէ. կամ զինչս քո գողասցի. կամ ընդ քեզ սուտ վկայեսցէ. կամ ստացուածոց քոց և կնոջդ ցանկայցէ. ըստ այդմ օրինակի և դու պարտիս առնել: և եթէ ո՛ք ընդ դէմ քեզ հակառակ ինչ առնէր, կամէիր և դու այդմ իրի փոխարէն հատուցանել: Ասէ իշխանն՝ արդարև այս բանքս կարճառօտ մեծ գիտութի̃ն պարունակեն. սակայն շնորհօք ա̃յ հոգայցայց կատարել զդոսա. սկսաւ զբանս զայսոսիկ մեծաւ խուզմամբ քննել. և եգիտ զինքն զի 'ի բազում իրս 'ի նոցանէ ներհակ օրէն երևէր. քան զի ոմանց ա̃ծս. ջաղա՛ցս. տունըս. ագարակս. մասամբ 'ի վաշխից. և մասամբ բռնութե̃ առեալ էր. և զոմանս խոշտանկեալ: Ապա հրամայեաց աղաղակել թէ զոր մի անգամ զրկեցի՛ կամիմ փոխարէն յետս դարձուցանել: Հետ այսորիկ յորժամ տրտմութի̃ն եկն 'ի վ̃ր ն̃ր, վ̃ս մեծի նուազութե ստացուածոց երկրաւորացս, ասէ ցզօրականըս եկայք երթիցուք յորս, և ահա մեծ ան ձրև եկեալ խափանեաց. և մինչ դեռ դանային ունայնաձեռն՝ ետես ջաղաց աղքատի ուրումն. և ահա ջուր զնա բախէր քակէր, և հիմանց տապալէր՝ և զի այրն այն որոյ էր ջաղացն՝ ո՛չ ինչ կարէր օգնել. ասէ ցծառայս իւր. այդ իսկ է զոր ես խոստացայ՝ պահել. զի թէ լինէի աղքատ իբրև զդա, խնդրէի զի ինձ զօրագոյն իջեալ 'ի ձիոյ, զգերանսդ, և զտախտակս 'ի տեղիս իւրեանց հրամանաւ նորին հաստատեցին և ամրացուցին։ Դարձեալ փոքր ինչ յառաջ գնացեալ գտին զոմն պանտուխտ աղքատ։ Ասէ իշխանն ցծառայս իւր, այդ իսկ է յայն ցանէ զոր ես խոստացայ առնել. քան զի եթէ այդպէս լինէի աղքատ հայցէի յումեքէ օգնութիւն գտանել. և ասէ ցաղքատն՝ եկ զկնի իմ, և հոգացայ վ̅ն քո օթևան և կերակուր, ապա աղքատն ասէ, տէր լուայ 'ի վարդապետաց թէ տ̅րն մեր յ̅ս̅ ք̅ս̅, զայդպիսի գործ ողորմութ̅ե իւրեան արարեալ համարի. որոյ փոխարէն և հատուցանէ։ Ա՛րդ՝ եկեալ ի տուն իշխանին, առեալ զձեռանէ աղքատին, ասէ ցկինն իւր, ահա հիւր առ քեզ ածի, լաւ խնամ տար դմա. և կինն ասէ արդարև օգտակար է այսպիսի հիւր. վ̅ն որոյ յ̅ս̅ ք̅ս̅ զինքն գոլ պարտական խոստացաւ։ Ա՛րդ՝ իբրև զաղքատն առատապէս կերակրեցին և մխիթարեցին, յերեկոյն ո՛չ 'ի բացեա սենեկի իւրեանց աղքատին մեծագին զանկողինս պատրաստեցին, 'ի մէջ գիշերի սկսաւ աղքատն ծարաւել, և ասէր 'ի ծարաւոյ մեռանիմ։ Օ այս լուեալ իշխանն առեալ զուր ասէ․ զինչ է այս տիկին․ և նա ասէ փոքր ինչ մտադիւրութ՟ լուիցուք զինչ է այն․ և ապա իմացան թէ աղքատն կոծէր․ յայնժամ ասէ իշխանն՝ այդ իսկէ զոր խոստացայ պահել․ զի եթէ լինէի աղքատ՝ և ոչ գտանէի 'ի մէջ այս չափ աստիճանաց․ թէ յո՛ երթայցեմ, յո՛յժ ուրախանայի եթէ ոք ինձ տայր ըմպել․ և գնաց 'ի ջրհոր 'ի վ՟ր ջրոյ․ և անկաւ 'ի ներքոյ գլխիվայր․ իսկ ընդ առաւօտ իբրև գնաց աղքատն, տիկինն հարցանէր ցծառայս իւր թէ ուր իցէ տ՟րն․ պատասխանի ետուն ամ՟քն թէ ոչ գիտեմք․ և նա ասէ գնացէք յամ՟ եկեղեցիս և վանորայս հարցուցէք զնմանէ․ քանզի խրատու քահանայիցն այնոցիկ, ո՟պ և դուք իսկ գիտէք իբր որիշ մարդ փոխարկեցաւ։ Եւ իբրև դարձան ծառայքն և ոչ գտին․ ասէ տիկինն 'ի ջուցէք սափոր 'ի ջրհորն՝ մի՛ գուցէ անդր անկեալ իցէ․ քանզի վ՟ն աղքատին ջուր բերել 'ի գիշերի գնացեալ էր, զայս արարեալ հանին զնա մեռեալ․ և յորժամ ամ՟քն լացին տեսին 'ի վիզ ն՟ր օղամանեակ ոսկի հրեշտակաց ձեռօք այնպէս արարեալ․ մինչ զի զայն ոչ կարէին հանել․ և ոչ տեղի կցուածոց ամենևին ոչ երևէր, և գիր 'ի նմա զայս ձև բանից էր նկարեալ․ մեք հրեշտակք յառաջագոյն զհոգի սորա տարաք յերկինս․ քան թէ մարմին պաղեալ և սառուցեալ 'իջրհոր, քան զի 'ի բարեգործութիւս զկեանս վճարեաց։ Զայս լուեալ և տեսեալ կինն. հանդերձ ա՟մ ընտանեօք՝ մեծաւ ուրախութ՟բ լի՛ եղեն. կոչեցին զեպիսկ՟պս. և նա զողմանեակն զայն ձեռօք շօշափելով զարմանայր. և առժամայն զայս ըսքանչելիս գրով ծանոյց հայրապետին և այլոց իշխանաց ընդ ա՟մ տեղիս։ Յայնժամ կինն իշխանին ծունր կրկնեալ ասէ. ո՜վ մարդասէր և ողորմած. տ՟ր ա՟ծ իմ գոհանամ զքէն. զի զիս ընդ այսպիսի առն զուգաւորեցեր՝ որ ստուգիւ 'ի փառս արքայութ՟ե քո զուարճացայ. արդ օգնեա՛ ինձ թագաւոր երկնաւոր. զի և ես հաղորդակից եղէց երանութ՟ե ն՟ր. և ապա վաճառեալ զա՟մ, ծառայէր ա՟յ ջերմեռանդ սրտիւ. և ա՟ծահաճոյ վարուք փոխեցաւ աստի։ Ո՜վ պատուիրան պատուական հակիրճ և օգտակար ո՜վ կրօնք քրիստոնէից փրկական. ո՜վ օրէնք տ՟րունի անբիծ և անարատ. ո՜վ պատուիրան ք՟ի քաղցր. դու զբնական օրէնս 'ի քեզ պարունակես. դու լի՛ սիրով. դու ես պարգև ա՟յ ձրի տուեալ. դու ուղղես և առաջնորդես հոգոց մարդկան և 'ի կեանսն յաւիտենից հանգուցանես։

Յաղագս Ողորմութ՟ե. գլուխ. կե.

Պատմեալ է 'ի գիրս վարս առաքելոյն անդրէի, թէ այր ոմն ծերունի անուն նիկո

ղայոս,

ջայոս, եկն առ սբ՟ առաքեալն և ասէ տ՟ր ահա Հ՟. ամք կենաց իմոց, զորս կրեցի զպղծագործութի՟ւ. ընկալայ զաւետարանն փրկութե՟, և աղաչեցի զա՟ծ զի տացէ ինձ զգաստութի՟ւ։ Այլ զի 'իմեղս սովորեալ եմ և հաստատեալ. 'ի չար ցանկութե՟ շարժեալ. առ ժամայն 'ի հին գործս դառնային. արդ յաւուր միում 'ի չար ցանկութի՟ վառեալ մոռացեալ զաւետարանն որ առ իս ունէի. գնացի 'ի պոռնատուն, և ահա կին ոմն ասէ ցիս. 'ի բա՛ց կաց ծեր դու, 'ի բա՛ց կաց. հրեշտակ ա՟յ ես դու մի՛ մերձենար յիս. և մի՛ շօշափեր զիս. քանզի տեսանեմ զարմանալիս 'ի վ՟ր քո. զայս լուեալ հիացայ. և յիշեցի թէ զաւետարանն ընդ իս ունէի. Արդ՝ այժմ աղաչեմ զքեզ սբ՟դ այդ. լե՛ր բարեխօս քո աղօթիւքդ վ՟ս փրկութե՟ իմոյ։ Զա՛յս իբրև լուաւ սբ՟ առաքեալն Անդրէաս. սկսաւ լալ. և յերրորդ ժամէ մինչև ցիննն երրորդ ժամ յաղօթս եկաց. և յարուցեալ ո՛չ կամէր ուտել. ասելով ո՛չ կերայց մինչև գիտացից թէ ողորմեսցի ա՟ծ ծերոյս այս միկ. և իբրև զհինգ օր անօթի եկաց. եկն ձայն առ սբ՟ առաքեալն որ ասէր ո՛վ անդրէաս՝ ընկալար զոր հայցէիր վ՟ս ծերոյն. բայց ոպ՟ դու պահօք ճգնէիր, նոյնպէս և նա պահօք չարչարեսցէ զանձն իւր, զի փրկեսցի. և այնպէս արար զվ՟եց ամիս հացիւ միայն և ջրով պահեաց. և ապա լի՛ բարեգործովք հանգեաւ խաղաղութե՟. և ձայն եկն առ աբն Անդրէաս ասելով. քո աղօթիւք զՆիկողայոս զոր կորուսեալ էի գտի։

ե Կրօնաւոր ոմն առաքինի հիւանդացաւ՝ վ՟ն որոյ հարկ եղև նմա ժամանակ ինչ մնալ 'ի հիւանդանոց. իբրև մերձ եղև օր դառնալոյ 'ի վանս. տեսեալ զնեղասրտութ՟ն զոր զգայր 'ի հոգի իւր, ասէ ծիծաղելով. այնչափ ինչ դժուար թուի դառնալ 'ի վանս, որչափ յառաջագոյն թողեալ զաշխարհս մտի կրօնաւորութ՟ն, ուրեմն կարի յոյժ հարկաւոր է առաքինի առանց զգուշանալ. այսպիսի որոգայթէ զի առ սակաւ սակաւածէ և զմեծ վնաս ծնանի։

զ Սովորութ՟ն պարտէ առ սակաւ սակաւ արմատախել առնել. ոպ՟ այր մի ազնուատոհմ այն չափ էր 'ի մեղս պղծութ՟ն ընկղմեալ. մինչ զի օր մի ոչ կարէր ժուժել. և յորժամ քահանայ զնա բազումանգամ խրատէր զի հրաժարեսցի յայն գործոյ. պատասխանի ետ թէ ոչ կարեմ ինև։ Ապա յաւուր միում ասէ ցնա քահանայն. եթէ կամիս կատարել ուխտ հաստատել ընդ այ՟. գոնեա՛ վ՟ն որոյ նր՟ զերիս հրաժարեա՛ 'ի մեղաց. և նա յանձն էառ և կատարեաց։ Յետոյ ասէ ցնա քահանայն. դարձեալ զերիս աւուրս հմբերեա՛ վ՟ն փառաց և սիրոյ ամենամաքուր կուսին մարիամու, և նա զայս ևս կատարեաց Երիցս ասէ ցնա քահանայն դարժեալ զերիս աւուրս անարատկաց, վ՟ն փառաց ամ՟ սրբոց, որք իբրև անցին, եկն առ քահանայն ասելով՝ ոչ կարեմ այնպէս ճշդիւ ընդ ա՟յ շարժիլ· այլ մանաւանդ կամիմ ուխտ յաւիտենական ընդ նմա հաստատել։ Ապա դարձեալ առ ա՟ծ 'ի բոլոր սրտէ. զմնացեալ կեանս իւր բարւոք անցոյց խաղաղութ՟բ հանգեաւ 'ի ք՟ս։

Կրօնաւոր ոմն եկեալ առ խոստովանայր, Գ՟
ասէ հայր թողութ՟ի արա, և աղօթեա՛ վ՟ս իմ. քանզի գողանամ և առ անձին ուտեմ, ասէ ցնա ընդէ՞ր զայդ առնես, մի՞ թէ քաղցենաս։ պատասխանի ետ այո՛ այդպէս՝ ո՛չ բաւականամ հասարակաց կերակրովք, և ո՛չ համարձակիմ զայս ինչ խնդրել· ասէ ցնա՛ խոստովանահայրն. վ՟ս է՞ր ո՛չ երթաս առ հայրն վանաց. և ո՛չ պատմես նմա զպիտոյսդ. և նա՛ ասէ ամօթ արգելու զիս. ետ պատասխանի խոստովանահայրն. կամիս զի ես ասացի հօրն վ՟ս կարեացդ քոց. և կրօնաւորն ասէ արա՛ ո՟պ հաճոյ թուի քեզ։ Յայնժամ խոստովանահայրն գնաց առ առաջնորդն վանաց և պատմեաց նմա. և նա՛ ասէ՝ արա՛ ո՟պ բարւոք թուի քեզ. և խնամ տար նմա. յայնժամ խոստովանահայրն առեալ զեղբայրն զայն գնաց առ մառանապետ ասէ՝ ցնա. քանիցս անգամ եղբայրս այս եկեսցէ՛ տուր դմա ուտել, որ չափ և կամի. և մի՛ ինչ արգելուր 'ի դմանէ. և նա առնէր ո՟պ հրամայեցաւ նմա։ Դարձեալ զկնի աւուրց ինչ եկն

կրօնաւորն այն առ խոստովանահայրն, թողութ̃ի արա ինձ հայր· դարձեալ գողանամ և ուտեմ առ անձնակի· պատասխանի ետ նմա խոստովանայրն· վն̃ էր զայդ առնես· մի թէ անտեսն արգելու 'ի քէն զոր ինչ խնդրես· և նա՛ ասէ ոչ· այլ մանաւանդ զոր ինչ կամիմ յօժարութ̃բ տայ· բայց ես ամաչեմ յայն ժամ ասէ խոստովանայրն, թէ ես քեզ տայի ամաչէիր· պատասխանի ետ ոչ· և նա ասէ ուրեմն եկ առ իս՝ և ա՛ռ զոր ինչ կամիս՝ և մի՛ ևս գողասցիս· և նա գայր առ նա՛ և զոր ինչ կամէր առ նոյր· դարձեալ յետ սակաւ աւուրց սկսաւ գողանալ· և եկեալ առ խոստովանահայրն բոլորովին տրտում և վշտանգին· ասէ հա՛յր՝ ահա դարձեալ գողանամ· և նա՛ ասէ ընդէր սիրելի· մի թէ ինչ արգելի՛ 'ի քէն զոր խնդրէիր· և նա՛ ասէ ոչ ինչ· ասէ խոստովանայրն· ապա՛ վն̃ էր գողանաս· և նա՛ ասէ թողութ̃ի արա ինձ հայր՝ ոչ գիտեմ վն̃ էր զայն առնեմ· իսկ նա ասէ, ասա՛ ինձ զինչ առնես զայն զոր գողանաս, պատասխանի ետ եղբայրն՝ իշոյն տամ։ Եւ այնպէս յայտնի եղև քան զի գողանայր բակլայ· սիսեռ· սոխ· թուզ· չամիչ, և այլ սոցին նմանս որ ինչ մի անգամ գտանէր՝ և զայս ամ̃ մասամբ ընդ մահճօք իւրովք ծածկէր· և մասամբք յայլ տեղիս թաքուցանէր։ Եւ յոր ժամ ոչ գիտէր թէ զինչ արասցէ զայն· առաջի իշոյ և այլոց դնէր· Տեսեալ եղբայրք թէ որպիսի թշուառութի՟ն է զախտ ինչ սովորեալ ունել. զի թէ ոք զկնի ախտի ինչ իսկիզբն երթիցէ, հուպ ընդ հուպ գերի մեղաց լինի:

Յաղագս վաշխից. Գլուխ. ԻԸ.

Ոմն վաշխառու ննջէր յանկողնի ընդ կընոջ իւրում, և ահա յանկարծակի զարթուցեալ 'ի քնոյ յարեաւ յանկողնոյն. կինն հարցանէր, թէ ուր այս քան ճեպով փութաս: Պատասխանի ետ թէ այժմ յափշտակեալ եղէ 'ի դատաստան այ՟. և անդ այն չափ ամբաստանութ՟իս բարդեցին 'ի վ՟ր իմ, մինչ զի ամենեւին ոչ կարացի խօսել, և ոչ բան մի: Զայս ասացեալ և առեալ զհանդերձ պատառատուն ել 'ի տանէ և փախեաւ 'ի վանս ուր ամենեւին ոչ կարացին ածել. զնա 'ի զղջումն ապաշխարութ՟ն. յետոյ ազգականք ն՟ր առեալ զնա 'ի վանացն 'ի տուն տարան. և յորժամ ընդ գետ անցանէին, ահա տեսին զի նաւ մի արագ ընթաց առ նա մերձենայր, զոր տեսեալ վաշխառուն՝ ետես զի նաւն լի՛ էր դևօք. և վ՟ն այնորիկ գայր, զի զնա՛ ընդ իւր տարցէ 'ի տանջանս յաւիտենականս: Եւ իբրև մերձեցաւ նաւն առ ն՟ս, առ ժամայն դևք բռնութ՟բ խլեցին զնա 'ի ձեռաց ն՟ց. և տարեալ 'ի նաւն իւրեանց վաղվաղակի հանդերձ նովաւ՝ և նաւովն յաչաց ն՟ց աներևոյթ եղեն: Արդ՝ զոր օրինակ սա վաշխից առնույր 'ի կեանս յայսոսիկ • նոյնպէս և պատիժ 'ի հնդերձելումն առնելոցէ

ը̅ Ոմն մարդ զարծաթ իւր 'ի վարձու տայր • և ունէր եկուս որդիս • դէպ եղև զի հիւանդացաւ մերձ 'ի մահ • խոստովանահայր եկն առ նա առաջի, որոյ թէպէտ ոչ թագոյց զմեղս իւր • սակայն ինքն քահանայն իմացաւ, ոչ դարձուցանէր զա͠մ զոր ինչ վաշխիւք ստացեալ ունէր՝ վ͠ս որոյ ոչ կարաց ըզթողութի͠ն մեղաց և զփրկութի͠ն հոգւոյ ընդունել ։ Եւ յորժամ որդիքն իւր խրատտային նմա, զի դարձուսցէ յետս զոր ինչ առեալ էր ։ Պատասխանի ետ թշուառականն՝ ես զայս ոչ կարեմ առնել • զի եթէ կենդանի մնայցեմք, և ոչ ինչ ունիմք, հարկ ինձ եղիցի մուրանալ • և եթէ մեռանիցիմ, ձեզ հարկ եղիցի երթալ յաղքատանոց, զի ոչ ինչ ձեզ մնայցէ քան զի ա͠մ ինչ ք 'ի վաշխից են • և նոքա ասեն • հայր մի խնայեր 'ի վ͠ր մեր յառաջ հոգտար փրկութե քում • իսկ նա ասէ լուռ կացէք, թոյլ տուք ինձ, ես առաւել ապաւէնիմ յողորմութի͠՝ ա͠յ քան թէ 'ի շնորհս մարդկան • զի մարդիկ քեն անգութ, և անողորմ, այլ ողորմութի͠ն ա͠յ է անբաւ • և այնպէս անզեղջ մնալով մեռաւ ։ Զայս տեսեալ ոմն որդւոյն, ասէ ցեղբայր իւր՝ դարձուսցուք 'ի վաշխս իւրաքանչիւր մարդոյ, մի գուցէ ընբռնեսցուք 'ի տանջանս հօր մերոյ • և նա ասէ եթէ հայր իմ վաշխս առնոյր, ես ոչ առի •

ես կամիմ վայելել զբաժին իմ. քանի կենդանի եմ զինչ առ յապա լինելոցէ ես ոչ գիտեմ. և այնպէս մնաց հիւանդութե̄ն իւրոյ խորհրդոց: Իսկ միւս եղբայրն դարձոյց իւրաքանչիւր ումեք զոր ինչ իւր էր. և զմնացեալսն 'ի ծածուկ բաշխեաց աղքատաց: Արդ՝ առաջինն եղբայր անցուցանելով զաւուրս կենաց 'ի բարութիւն զոր հայրըն ժողովեալ էր 'ի կէտ ժամու էջ 'ի դժոխըս. իսկ երկրորդն յետ դարձուցեալ վաշխըն, եմուտ 'ի վանս կրօնաւորաց: Դէպ եղև 'ի միումաւուր զի կայր յաղօթս. և ահա́ բացաւ երկիր առաջի նր̄, և ետես 'ի յանդունդըս մեծ հուր, յորմէ ահագին բոց ելանէր և 'ի մէջ այլոց ետես զհայր իւր և զեղբայր որք զմիմեանս անիծանէին. հայրն ասէր ցորդին անիծեալ լիջիր ընդ իս, զի ես վ͞ն զքեզ մեծացուցանելոյ աղագաւ եկի այսր. և որդին ասէր մանաւանդ դու լիջիր անիծեալ. զի ես քո պատճառաւ այսր անկայ. զի թէ դու ոչ էիր թողեալ զինչս չարաչար ժողովեալս, ես դիւրեաւ ազատ լինէի այլոց մեղաց: Եւ այնպէս անդադար զմիմեանս անիծանէին և կշտամբէին: Զայն տեսեալ կրօնաւորն՝ գոհանայր զա͞յ զի հատոյց զիւրն իւրաքանչիւր ումեք: Ուստի և մեք զգաստացուք այնպիսի աղտէ, զի մի կերի-
ցուք նման նոցին:

Ուրումն մարդոյ որ վաշխս առնոյր զգան Փ

ձըն

ծըն 'ի պահեստի 'ի վանս ուրեք պահէին ․ 'ի միում աւուր ոմն կրօնաւոր մեծ և առաքինի մերձ այն սապատի ուր գանձն եդեալ էր յաղօթս կայր ․ և ահա ետես զսատանայ նստեալ 'ի վ̃ր սապաթին, զառաջին փոքր ինչ երկեաւ ․ ապա արարեալ զնշան սրբոյ խաչին յերեսս հարցանէր թէ վ̃ն էր աստ նստիս ո՛վ պեղծ ․ զինչ խնդրես սատանօր՝ ո՞վ թշնամի փրկութե̃ն մարդկան ․ և նա՛ ասէ բարուոք և յերաւի նստիմ աստ ․ զայն որ ինչ իմէ պահելով։ Կրօնաւորն այն գնացեալ առ հայրն վանաց պատմեաց նմա ․ և նա՛ առ ժամայն հրամայեաց զգանձն 'ի վանաց հանել։

Դ̃ Դարձեալ պատմեմ ձեզ ․ ոմն մեծատուն վաշխառու ունէր երկու որդիս ․ մինն 'ի նոցանէ երբեմն լուեալ զբանն ա̃յ զղջացաւ, և ասէ ցհայր իւր ․ հա՛յր եթէ այսպիսի կեցցուք, հոգւով և մարմնով մեռանելոց եմք վ̃ն որոյ աղաչեմ զգաստացիր, և հատ՛ զոր ինչ ուրուք իցէ, ընդ որ հայր և միւս եղբայր բարկացեալ ասեն՝ մի թէ դու լինիս մեր խոստովանահայր ․ ե՛րթ՝ եթէ ո՛չ կամիս այսպիսի մեռանիս մեք պահեսցուք զինչս մեր։ Իսկ նա լռեաց և գնաց յանապատ ծառայելով ա̃յ ․ եհաս ժամ մահուան հօր և որդւոյ ․ և մեռան 'ի վաղիւ և անիրաւ ստացեալ մեծութիս ։ Որդ՝ անապատաւոր այն առաքինի ․ լուեալ զմահուան հօր և եղբօր իւրոյ՝ 'ի գութ շարժեալ հայցէր յա̃յ ․ զի յայտնեսցէ նմա զօրպիսութիւն նոցին։ Իսկ ողորմածն ա՟ծ ո՛չ անտես արար զփափաք սրտի նորին. 'ի միում աւուր յորժամ կայր յաղօթս. եկն առ նա հրեշտակ և ասէ. եղիցի քեզ ո՟պ և կամիս. և առեալ զձեռանէ ն՟ր տարեալ զնա առ լեառն մի և ասէ. կամիս տեսանել և լսել զհայր.քո և զեղբայր. և նա ասէ կամիմ. և եցո՛յց նմա անդունդս ուստի ծուխ ելանէր. և լսէր ողբս ողորմելիս. յառ՟ջ ետես զհայր իւր այրեցեալ 'ի հուր իբրև զմի հատ սխսռան 'ի մէջ ղաղանի, որ աղաղակէր և կոծէր. վա՛յ ինձ վա՛յ ինձ անիծեա՛լ է ժամ յորում յղացեալ եմ, և որովայն որ զիս կրեաց. զա՛յս լուեալ կրօնաւորն սոսկացաւ և ասէ, ո՞վ հայր իմ դու իցես արդեօք. պատասխանի ետ ես եմ որդեակ իմ. օրհնեալ լիցիս որ երկեար յա՟յ, և ազատեցար յայսոցիկ անդնդոց և տանջանաց յաւիտենից. ա՛րդ զգուշ լեր և ծառայեա ա՟յ։ Եւ յորժամ այսպիսի խօսէին, ահա՛ եկն եղբայրն ն՟ր ո՟պ և հայրն հրով տոչորեալ. և սկսաւ զհայրն 'ի տանջանս անիծանել ասելով. անիծեալ դու հայր 'ի յաւիտեան. զի զինչ անիրաւութե՟ ստացեալս ետուր ինձ 'ի ժառանգութի. և այնպէս զի դատապարտեցեր. և հայրն ասէր ցորդին. անիծեալ լիջիր դու որդի, զի ես վ՟ն քո զինչս անիրաւութե՟ ժողովէի և ունէի և այնր աղագաւ այսքան տանջանք ունին զիս։ Ասէ ցնա՛ կրօնաւորն. և գո՞յ ինչ աշխար հի որ ձեզ կարէ օգնել. պատասխանի ետուն թէ ո՛չ. քանզի 'ի դժոխս չի՛ք փրկութ՟ի և ազատութ՟ի։ Եւ այսպիսի մեծ ողբով և կածելով գնացին 'ի առաջանս դժոխոց։ Իսկ կրօնաւորն եկեալ 'ի միտս իւր. ևս առաւել մեծագոյն ապաշխարութ՟ի սկսաւ կատարել քան զառաջին, որ քան զոր 'ի ճգնութ՟ե յաւելոյր։ Եւ այնպիսի բարւոք վարուք կեցեալ եհաս փրկութ՟ե և երկնից արքայութ՟ե ժառանգորդ եղև։

Յաղագս հաղորդութ՟ե · Գլուխ · ԿԷ ·

ա՟ Իշխան ոմն ունէր յապարանս իւր քահանայն առաքինասէր. որ յորժամ յամ՟ աւուր զած՟ային խորհուրդն ջերմեռանդն սրտիւ կատարէր. հրեշտակ ած՟յ ընդ սովորութ՟ե գայր՝ ընդ որ իշխանն հայէր զփրկական հաղորդութ՟ին 'ի ձեռաց քահանային առնոյր. բայց զի կեանքս մեր դիւրակործանէ և ան հաստատս վ՟ա որոյ և որպիսութ՟ե դիւրա փոփոխ. քանզի նա ուրուք հրեշտակ տ՟ն սպասաւոր էր. աղտեղի գործ պոռնկութ՟ե անկաւ. յետ այսորիկ հարկէր ստիպէր զած՟ային պատարագ մատուցանել. քահանայն հարկաւորեալ. թէպէտ զինքն խիղճ՟ մտաց մեծապէս տանջէր. զգեստ քահանայական զգեցաւ, և մատուցեալ 'ի ս՟բ սեղան. դողա՛յր զարհուրէ՛ր նուաղէ՛ր. սակայն զած՟ային խորհուրդն կատարէր. Եւ ահա՛ հրեշտակ ծո՟յ սովորէր եկն· ընդ որ և իշխանն հայէր, զսպունկ լի՛ ջրով 'ի վ՟ր գլխոյ քահանային քամեց· և զա՟մ մարմինն սրբելով մաքրեաց։ Զկնի սրբոյ պատարագի դարձեալ զնոյն սպունկն քամեց· և զա՟մ աղտեղութիս և զգարշութ՟իս յորոց էր զնա լուացեալ· 'ի նոյն սպունկն ժողովեաց· և յա՟մ ադամանն՟ր եհեղ։ Զայս տեսեալ իշխանն զարմացաւ և զահի հարաւ· զքահանայն մեկուսի հարցանէր· մի՛ թէ 'ի մեղս ինչ նոր անկեալ էցէ· և նմա զառաջին զարհուրեալ գոլով ուրանայր· բայց զի խիղճ մտաց զինքն չարչարէր, խոստովանեցաւ թէ անցեալ գիշեր 'ի մեղս պղծութ՟ն գործեցի։

Կնոյջ ուրումն բարեպաշտի էր աղջիկ լեզուանի· զազրագործ· երթալ զհետ ցանկութ՟ե կամաց իւրոց· 'ի միում գիշերի յանուրջս տարեալ եղև առաջի ատենին ք՟ի· և շուրջ զնովաւ տեսանէ՛ր զհրեշտակս· զառաքեալս· զմարտիրոսս· և զայլ ս՟բս անհամար· և բերին առաջի ն՟ր զոգիս մարդկան· զոմանս 'ի փառս· և զոմանս 'ի տանջանս դատապարտեալս։ Արդ՝ իբրև զայն տեսանէր աղջիկն, և դողայր 'ի խողճէն մտաց գանգատեալ· զձեռս կցեալ զողորմութ՟ի դատաւորին հայցէր· և նմա՛ գթացեալ յաղջին ասէ, վ՟ն էր զիս աղաչես, տո՛ւր ինձ զմատնքո· և ես տաց քեզ զաջիմ· իբր թէ ասէ, տուր ինձ սակաւ հաւատ՝ թէ 'ի մեղաց քոց հրաժարեցի· է՟

ըեսցի. և ես տաց քեզ զշնորհն իմ. և այնպէս զարթեաւ 'ի քնոյ: Արդ՝ յորժամ զայս պատմեաց ուրումն կնոջ առաքինոյ. ասէ ցնա. ով եղկելի զգաստացի՛ր՝ չա՛ր է քեզ խրատն. իսկ նա զառաջին ահիւ ըմբռնեալն էր՝ բայց վաղվաղակի 'ի միտացն այն անկաւ: Եւ յորժամ դարձեալ ոմն յառաջագոյն 'ի զազիր գործս զանձն մատնեաց. 'ի խրատն պատիժ յաւելաւ՝ քան զի յորժամ զկնի երկար և ծանր հիւանդութեն մեռաւ և արտաքոյ որահին մերկ միայն կտաւով ծածկեալ դնիւր. յամ գեղջէ շուրջ ժողովեցան և զմիմեանս խածատելով 'ի տուն մտին՝ և զկտաւն քարշեալ 'ի մասունս պատառեցին. հազիւ մարդիկք քարիւ և փայտիւ զնս 'ի բաց փախուցին. և յորժամ զմարմինն թաղեցին. դարձեալ ամ շունք այնոքիկ 'ի վր գերեզմանին ընդ միմեանս մարտեդին. զայն տեսեալ որ անդ կային յոյժ զարմացան:

Գ Երբեմն երկու ճգնաւորք մբք և առաքինիք կրակ վառեցին. և ոմն եղբայր ասէ ցնս, եթէ ոք 'ի ձէնջ ունի հաւատ՝ կացեալ 'ի վր կայծականց այսոցիկ հանդորտ ասասցէ զհայր մեր. ոմն 'ի նոցանէ ետես յաղթեալ 'ի մեծամտութէ՝ յանդիմանէր զնա ասելով. եղբայր 'ի բաց թող զանմտութիդ. և միևս ասասցես զայդ. իսկ նա ոչ միայն 'ի յանդիմանութէ նորին ոչ զգաստացաւ, այլ յաւէտ հպարտացեալ համարձակ եկաց 'ի վր հրոյ.

զոր ոչ ոք նմա հրամայեալ էր. բայց սատանայ նմա օգնեաց. և ա՟ծ թոյլ ետ զի մի՛ վնասեսցի 'ի հրոյն։ Արդ՝ իբրև այս այսպիսի եղև. 'ի վաղիւ նոյն կրօնաւորն յորժամ ելանէր, իբր մեծաբանելով նց՟ վերայ. և արհամարհելով ասաց ո՞ւր է հաւատ ձեր։ Յետ այսորիկ զկնի սուղ ինչ ժամանակի տեսեալ զնա սատանայ յա՟մի ինքեան հնազանդեալ. զգեցաւ զկերպ գեղեցիկ կնոջ՝ և բախէր ուժգին զդուռն սենեկին նր՟. և իբրև եբաց, դևն 'ի կերպարանի կնոջ. ասէ ցնա՛ աղաչեմ զքեզ ընկալ 'ի սենեակդ. քանզի պարտատէր կամի զիս 'ի բանտ մատնել. և ես ո՛չ ունիմ զինչ հատուցից. այր ա՟ծ զիս առաքեաց առ քեզ. զի մի՛ բարձի թողի արասցես զիս։ Իսկ նա կուրութ՟բ սրտի ամենևին իմբ խաւարեալ ո՛չ իմանալով թէ ո՛վ է. կամ թէ զինչ խօսի ընդ նմա. զսատանայ 'ի բնակութի՟ իւր ընկալաւ։ Իսկ թշնամին տեսեալ զնա, առ ա՟մ չարիս դիւրասաց. ձգեաց 'ի սիրտ նր՟ զցանկութի՟ պոռնկական. և նա իբրև զանասուն հաւանեցաւ։ Ապա մտեալ 'ի նա այսն պիղծ, զարկոյց զնա 'ի գետնի. և այսպիսի իբրև զմեռեալ զբազում ժամու անկեալ կայր։ Ո կնի աւուրց ինչ յուշաբերեալ զանմտութի՟ իւր յո՛յժ յետոյ՝ կոծելով եկն առ այրն ա՟յ. և զդիպուածն իւր մեծաւ հառաչանօք խոստովանեցաւ ասել. գիտեմ հայր գիտեմ. զի ես եմ պատճառ իմո՛յ կորստեան. և իսկո՛յն

յափշտա

յափշտակեալ 'ի դիւէն արտաքս 'ի նմանէ։ և յանապատի շրջելով եկն 'ի քաղաք ուրեք· և անդ զինքն 'ի հնոց հրոյ ձգեաց և մեռաւ։

Դ̅ Ոմն երիտասարդ 'ի ծածուկ եկն առ ս̅բն Անդրէաս· և ասէ մայր իմ տեսեալ զիս գեղեցիկ տեսլեամբ՝ անպատշաճ գործ զիս բռնադատէ, և զի բնաւ ոչ անսացի նմա· գնաց առ դատաւորն կամելով զայսպիսի գարշելի մեղս 'ի վ̅ր իմ դնել. ա՛րդ աղօթեա՛ վ̅ս իմ, զի մի՛ մեռայց անիրաւաբար· քանզի յորժամ եկից առ դատաւորն, ամենևիմբ լռակեցից· լաւ համարեմ զմահ ընտրել· քան թէ զմայր չարաչար համբաւել։ Արդ՝ յորժամ կացուցին զնա առաջի դատաւորին, եկն ընդ նմա և ս̅բն Անդրէաս· և իբրև երիտասարդն քանիցս անգամ հարցեալ եղև· եթէ այդ պէսիցէ, ո՛չ ինչ ետ պատասխանի յայնժամ ս̅բն Անդրէաս ասէ ցմայրն· Ո՛վ ամենաչար և ամբարիշտ. քան զա̅մ կանայս՝ որ վ̅ս քո վաւաշոտութե̅ կամիս զորդի քո միածին կորուսանել· և կինն ասէ ցդատաւորն, տ̅ր առ այս մարդս որդի իմ յարեցաւ· յայնժամ զայն չարութի̅ կամէր գործել· և դատաւորն բարկացեալ հրամայեաց զերիտասարդն 'ի քուրձ ձիւթով և սոսինձով օծեալ կարել· բայց ընդ աղօթել սրբոյն Անդրէի· որոտումն զարհուրեցոյց զամենեսին·՝ և շարժումն երկրի զա̅մ շինուածս կործանեաց· և զկինն զայն չար, կայծա̅կն եսպան, և բոցա կիղեաց. և յորժամ այլք առաքելոյն Ք՟ի յաղօթս ապաւինեցան զի մի կորիցեն. աղօթեաց վ՟ն Ն՟ց. յայնժամ դատաւորն հաւատաց և ա՟մ տունն Ն՟ր։

Ե Ս՟բն Ամբրոսիոս ասէ մարդիկք 'ի չարս գործս սովորեալք, բազում անգամ զայն խնդրեն որ է մարմնոյ և առողջութե՟ն. նա և կենաց վնաս։ Այլ ո՟մն աչաց տկարութ՟ի անկեալ. և պատուէր տուեալ 'ի բժշկաց 'ի բաց կալ յամուսնութ՟է. ոչ կարացեալ զիւր ցանկութ՟ի՝ սանձահարեալ. կամաւ և գիտութ՟բ կուրացաւ՝ ասելով բարեաւ մնաս լոյս. և իսկոյն կատարեալ զարգելեալ ցանկութ՟ին զերկուս աչս կորոյս։

Զ Մեծ կայսրն հռոմայեցւոց կորոլոս՝ բարեպաշտ և ա՟ծահաճոյ. երբեմն յաւուր մեծի տօնախմբութե 'ի ժամ սրբոյ պատարագի յաղօթս կայր. սարկաւագն յորում հարկ էր զաւետարանն ընթեռնուլ՝ յանցեալ գիշերի 'ի մեղս պոռնկութե անկեալ էր. արդ այսպիսի մեծ զազիր գործով վիրաւորեալ զխիղճ մտաց իւրոց. սակայն զաւետարանն ս՟բ յայտնապէս ընթեռնուլ իշխեաց. և այնպէս ըստ պահանջելոյ. կարգին ան մաքուր ձեռօք կամէր քահանային 'ի ս՟բ խորհուրդն գործակից լինել. եթէ ա՟ծային պատիւ ոչ նա խափանէր. քան զի յորժամ զա՟ծային բանս աղտեղի շրթամբք արտաբերէր սարդ 'ի վէրուստ յառաստաղէ տաճարի ընդ ոս եայն խուրում երկիցս և երիցս 'ի գլուխ ան մաքուր ընթերցողին իջանելով. ապայերորդում անգամ ընդ որ հայեր թագաւորն 'ի գլուխ եհար և եսպան։

Յաղագս Ս. հաղորդութե՟. գլուխ. կբ.

Այր ոմն յոյժ հեշտասէր և զազրագործ ա՟ա հիւանդացաւ մերձ եղև 'ի մեռանել. զոմն անապատական կոչեցին զի զնա խոստովանեցուսցէ։ Իսկ հիւանդն տեսեալ զճգնաւորն ասէ. 'ի բա՛ց գնա՛ մեծեն չարիք իմ քան զողորմութին՟ այ՟. ասէ ա՛յրն այ՟՝ մի՛ ասեր զայդ քան զի այն քանէ զօրութին՟ խոստովանութե՟ և ապաշխարութե՟. մինչ զի եթէ զղջասցիս վ՟ս ա՟մ յանցանաց քոց՝ թողցէ զնա տ՟ր ա՟ծ. յայնժամ նա՛ ասէ մեծ է այդ զոր դուդ ասես։ անապատականն ասէ արա՛ զոր ինչ ասացից քեզ. ես ա՟մ բարեգործութե՟ց և վաստակոցս զիս մերկացուցանեմ և զն՟ս քեզ շնորհեմ. և դու զքեզ մերկացոյ յա՟մ մեղաց քոց, և ինձ զն՟ս տուր. ապա ո՛չ եղեցի քեզ պարտ երկմտել. կամ յուսահատել. զոր իբրև յանձն էառ մեղաւորն այն. և երկոքին միմեանց փոխանակեցին։ ասէ՛ Ճգնաւորն ցնա. ա՛րդ այժմ ասեմ զոր ինչ չար արարեալ է քո. զի գիտացից որոյ փոխարէն ապաշխարեցից. ա՛րդ յօրժամ զանթիւ մեղս ասաց՝ և ո՛չ ինչ թագոյց։ ասէ՛ Ճգնաւորն զղջանաս վ՟ս այդմ ա՟մի. և կամիս զի զխոստովանութիդ

եղեցի

Եղիցի 'ի խորհրդածոր ըստ կանոնի եկեղեցւոյ. ասէ կամիմ. և ճգնաւորն ասէ. և ես զքեզ արձակեմ յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ: Արդ՝ յորժամ մեռաւ զկնի ամաց միոյ երևեցաւ ճգնաւորին, և ասաց նմա թէ 'ի ճանապարհի փրկութե եմ. եհարց ցնա այրն այ. զինչ եղև ըստ վարձուց իմոց յորոց մերկացեալ եմ. ասէ մեռեալն տր ած պահեալ է զքեզ բազմապատկեալ. վն զի զիս 'ի յուսահատութե ազատեցեր. և մեծ նշան սիրոյ առ իս ցուցեր:

Իշխան ոմն հանճարեղ և գիտնական. այն չափ էր ողորմելի խաբեալ. մինչ զի ասէր եթէ զիս ած 'ի դաս փրկելոցն նախասահմանեաց ոչ ոք մեզ երկնից արքայութենն կարէ 'ի ձեռաց իմոց յափշտակել. իսկ եթէ իմ նախակարգեալ 'ի թիւ դատապարտելոցն, ոչ ոք բարեգործութե կարէ ինձ ժառանգեցուցանել զփրկութի. վն այսորիկ յամ անառակութե և 'ի զանազան չարիս մատնեաց զանձն իւր: Արդ՝ յորժամ 'ի ծանր հիւանդութե անկաւ կոչեցին զբժիշկ նորին այր բարեպաշտ՝ յոգնահանճար. ոչ միայն բժշկական հանճարոյ հմուտ. այլ և ածային դրոց քաջ գիտուն. ասէ ցնա իշխանն. ահա ոպ և տեսանես կարի հիւանդացեալ եմ, հոգտար զի առողջացայց. իսկ բժիշկն յիշեալ զմոլորութի նորին. ասէ տր՝ եթէ հաստեալ է որ մահուան քո, ոչ ինչ հոգաբարձութի իմ Ժ կարէ զքեզ 'ի մահուանէ ազատել. իսկ եթէ ոչ մեռանիցիս յայդմ հիւանդութ՟նդ, 'ի զուրէ իմ աշխատութ՟ի։ ասէ իշխանն՝ զի ա՛րդ այդպէս պատասխանես, եթէ չիցէ հոգաբարձութ՟ի ինչ տարեալ վ՟ն առողջութ՟ե իմոյ. կամ դեղբժշկական արարեալ. զի ա՛րդ կարիցեմ ինքն ինքեամբ. կամ յանդիմանոց ան փոյթ թողեալ առողջանալ. հրկէր ինձ տարաժամ մեռանել։ Ո՛ ա՛յսպիսի բանալուեալ բժիշկն յոյժ ուրախացաւ. ապա ասէ ցիշխանն տ՟ր՝ եթէ հաւատաս թէ զօրութ՟բ դեղոց կարես յերկարկեալ, վ՟նէ՛ր ոչ կամիս զնոյն հաւատալ զապաշխարութ՟է և ըզ՝ բարեգործութ՟նց, որք են հոգևոր բժշկութ՟իք. առանց որոց հոգի մեռանի. և առանց որոց ոչ ոք 'ի հանդերձելումն կարէ փրկութ՟ե հասանել. իշխանն զմտաւ ածելով զգօրութ՟ի բանիցն զի բարուք և պատշաճի խօսեցեալ է. և նմ՛ ասէ այսուհետ լեր բժիշկ հոգւոյս իմոյ։ քան զի քո բժշկական լեզուա՛դ ա՟ծ փրկեաց զիս 'ի մեծ մոլորութ՟է։

Յաղագս գիտութ՟ե իմացողականին. գլուխ. ԿԲ.

ա՟ Ոմն ճգնաւոր ս՟բ և առաքինի. երբեմն 'ի մէջ գիշերի մինչ դեռ աղօթէր ծունկս եդեալ յերկիր. զձեռս տարածեալ. զաչս յերկինս համբարձեալ. բոլորով սրտիւ ըզմիտս և զխորհուրդս իւր ընդ ա՟ծ բևեռեալ. ահա՛ ճաճանչ լուսոյ զարմանալի պայծառ և գեղեց կատե՛ս 'ի բարձանց իջեալ. մինչ 'ի գլուխ ճգնաւորին եհաս. և 'ի լուսոյն ձայն եղեալ խօսէր ընդ նմա. և զերիս ընծայս զի մատուցանէր ա՟յ 'ի նմանէ պահանջէր. պատասխանի ետ ճգնաւորն, և ասէ. տ՟ր իմ, ես բոլորովիմբ քոյ եմ. և ո՛չ ինչ ունիմ, բայց միայն զայս հանդերձս զոր զգեցեալ եմ. և սա՛ ևս քո՛յ է. ա՛րդ՝ զինչ կամիս քեզ մատուցանել. քան զի երկինք. երկի՛ր. հուր. ջո՛ւրն և ամ՟ որ 'ի նն՟ քոյեն այլ ինչ ունի մարդ որ չիցէ քո. և զոր ինչ մի անգամ քեզ ընծայեմք 'ի քոյոց գանձուցդ մատուցանեմք։ Ա՛րդ՝ զինչ ունիմ տալ քոյդ մեծութե՟. ա՟ծ իմ. թագաւոր երկնի և երկրի և ամ՟ արարածոց։ Յայնժամ ասէ՛ ցնա ա՟ծ. ձգեա՛ զձեռն քո 'ի ծոց քո. և զոր ինչ գտանիցե՛ս մատո՛ ինձ յայնժամ զայն արար ճգնաւորն. եգիտ զսկաւառակ մի մեծ ոսկի. պայծառ և գեղեցիկ՝ զորպիսի ոչ ոք երբէք ետես 'ի մարդկանէ. և մատոյց զայն ա՟յ։ Դարձեալ ասէ՛ ցնա ա՟ծ. մատո՛ ինձ ո՟պ զառաջինն։ ասէ՛ ցնա նր՟ն՝ տէ՛ր իմ, ես ոչ ինչ ունիմ, և ոչ սիրեմ. և ոչ փափաքիմ. բայց միայն զքեզ. և վս՟ սիրոյդ զամ՟ ինչ արհամարհեցի զոսկի. զարծաթ. և զամ՟ ինչ. և եթէ ինչ գտանիցեմ 'ի ծոցիմ, զայն դու եդեր. և քեզ որ ես տ՟ր ամ՟ի մատուցանեմ. և երիցս ձեգեալ զձեռն իւր ծոց՝ զերիս սկաւառակս եգիտ. և զա՛յն մատոյց ա՟յ. և գոհացաւ զա՟յ. զի ետ նմա զայնպիսի զերիս ընծայս մատուցանել։ Եւ առ ժամայն ազդեցաւ նմա մեկնութ՟ի․ թէ ինչ նշան անկելին այն երեք ընծայքն․ այսինքն զոսկեղէն հնազանդութ՟ի․ զբարձրագոյն աղքատութ՟ի․ և զպայծառ մաքրութ՟ի կուսութ՟ե․ զորս այնպէս շնորհօք այ՟ պահեալ էր, կատարելապէս ճգնաւորն այն․ մինչ զի ամենևին և ոչ մի 'ի գոյանէ խիղճ մնաց․ զինքն ոչ կարէր յանդիմանել։ Եւ այնքան զօրացեալ էր յայ՟ մինչ զի հանապազ բերանով և սրտիւ օրհնէր և գոհանայր զայ՟․ յաղագս պարգևացն զորպարգեալ էր նմա ած՟։

Յաղագս Քահանայագործութեան. գլուխ. Հ.

Աշխարհական ոմն ականատեսեալ ուրումն քահանայի որ 'ի շնութ՟ե ըմբռնեալ էր, սակայն յորժամ 'ի վաղիւ քահանայն այն պատարագ մատուցանէր․ յուսով առանց երկբայութ՟ե գնաց առ նա․ և 'ի ձեռաց նորին հաղորդեցաւ․ Եւ յետ հաղորդելոյն աղաչէր զքահանայն․ զի զճակատն իւր բորոտութ՟ե հարեալ խաչակնքեսցէ զոր իբրև արար բորոտութիւն իբրև զկեղև 'ի բաց անկաւ․ և ճակատն առողջացեալ երևեցաւ։ Արդ արև բանս հիանալի, և զի դատաստանս այ՟ մեղուցեալ էր, սակայն ոչ մնաց առանց շնորհի քահանայագործութ՟ե․ զի գիտասցուք թէ յորժամ առ քահանայս մերձենամք․ ոչ այլ մարդիկք մերձենամք՝ այլ առ ած՟․ որ 'ի ձեռաց նչ մեզ պարգևէ շնորհս. և սրբէ զմեզ. և այն որ առ նմա հաւատով մերձենայ, զոր ինչ խնդրէ ընդունի։ Իսկ զի մեզ քրիստոնէի ոչ վնաս են այլոց հաւատոց. և ոչ վարք քահանայի օգնեն ինչ հաւատոց մերոց. քան զի քահանայ ըստ որում մարդ է. և տկարութեամբ զգածեալ, ոչ կարէ օգնել, որպէս և դու նմա հաւասարես անկարութեամբ։

բ Ազնաւոր ոմն սարկաւագ լեալ. սկսաւ մեծաւ յուզմամբ մտախորհ լինել. և խորագոյն քննութեամբ զինքն զննել. եթէ արժանաւորութիւն ինչ կամ կարօտութիւն առ ՚ի կարգ քահանայութեան ՚ի նմա գտանիցի։ Իսկ իբրև զինքն ան արժան գոլ ետես. դիմեաց յաղօթըս. և աղաչէր զԱստուած զի վասն մարդասիրութեան իւրոյ ազդեսցէ նմա, թէ զինչ առաւելից է ՚ի փառս նորա, և յառելիթ փրկութեան անձին իւրոյ։ Յորժամ այսպիսի աղօթէր՝ ահա եկաց ոմն առաջի նորա պայծառ ազգեստ. ունելով ՚ի ձեռին իւրում զգաւազան խաչաձև. և ասէ ցնա՛ եղբայր սիրելի, ընդէր ես երկմիտ. ահա՛ զայս գաւազան քեզ տամ ՚ի նշան քահանայութեան զոր ընդ ունելոցես. և զայս ստուգիւ գիտեա՛ թէ զոր ինչ կապեսցես ՚ի վերայ երկրի. եղիցի կապեալ յերկինս։ Զա՛յս ասացեալ անյայտ եղև. և այրն այն յանձն էառ զկարգ քահանայութեան։

գ Դարձեալ ոմն կրօնաւոր. յորժամ էառ զկարգ սարկաւագութեան, մինչ երկբայ էր 'ի միտս իւր • եթէ իցէ արժանի մերձենալ 'ի կատար գործել զա՟ծային խորհուրդըն • և յորժամ բազումք ստիպէին զնա, և ոչ կարէ զերծանիլ • դիմեցաւ առ ա՟ծ և աղօթիւք հայցէր 'ի նմանէ, զի ուսուսցէ զնա։ և ահա առաքեցաւ առ նա հրեշտակ որ ունէր 'ի ձեռին զսկաւառակ պայծառ լի՛ յոյժ յստակ ըմպելեաւ • և ասէ ցնա՛ տես եղբայր որ մի անգամ քահայ լինել • և բաշխել զա՟ծային խորհուրդն • այսպէս պարտի մաքուր լինել 'ի հոգի իւր, ո՟ր այս ըմպելիս ։ Ապա այնմ հետէ ո՛չ կամեցաւ քահանայ լինել կրօնաւորն ։

Յաղագս վ՟րդ Է Մ՟նատոն. Գլուխ. ՃՌ.

Օրական ո՟մն մեծ ազգի հրաւիրեաց երբեմն զոմանս 'ի ճաշ • իբրև եկն ժամն և ա՟մ ինչ պատրաստէր հրաւիրելոցն հրաժարեցան • յայնժամ բարկացեալ զօրականն ասաց • որով հետև ո՛չ ոք կարէ ընդ իս լինել թող ա՟մ դևք եկեսցեն • և զայս ասացեալ ել 'ի տանէ և գնաց յեկեղեցի • և յայնժամ քահանայն քարոզ ասէր ժողովրդեանն • և զի հանդարտեսցի 'ի բարկութենէն • ժամանակ ինչ քարոզ ունկն դիր լինէր ։ Եւ մինչ դեռ էր յեկեղեցւոջ • ահա եկին հեծեալք 'ի տուն նորին մեծահասակք սև դևք • և ասեն ցծառայն • երթ կոչեա՛ զտ՟րդ • և պատմեա՛ նմա թէ հրաւիրեալքն եկեալ են • ծառայն զահի հարեալ փութանակի գնաց յեկեղեցի, և պատմեաց զայն տ՟ն իւրում, ոչ գիտելով թէ զինչ արասցէ. եհարց ցքահանայն. և նա՛ աւարտեալ զքարոզն. զա՛յս խրատ ետ նմա. զի ա՟մքն ելցեն ՚ի տանէն. և յորժամ ծառայք և աղախնեայք շտապով ելանէին. զստնդիայ ՚ի քուն մտեալ մոռացան յօրրոցն. իսկ դեւք սկսան ճաշակել. խրախանա՛լ. աղաղակել. ՚ի պատուհանից ՚ի վայր հայել. ՚ի կերպարանս արջո՛ց. գայլո՛ց. կատուի. և մարդկան ցուցանելով զբաժակս լի՛ գինով. ոմանք զմիս խորովեալ. ոմանք զձկունս. ոմանք այլ խորտիկս։ Զա՛յս տեսեալ դրացիքն և քահանայն և զօրականն զարմանային. ապա՛ հայրն ասէ. ո՞ւր է իմ տղայն. մինչ դեռ նա՛ զայն ասաց. ահա ոմ՟ն ՚ի դիւաց. առեալ զտղայն ՚ի ձեռն ՚ի պատուհանէն եցոյց զնա։ իսկ զօրականն յահէ և ՚ի տրտմութե՟ ոչ գիտէր թէ ո՞րպ՟ օգնեսցէ տղային. եհարց ցծառայն իւր հաւատարիմ թէ զինչ արասցէ. պատասխանի ետ նմա ծառայն. տ՟ր յանձն արարեալ զիս յա՟յ իմում յանուն յի՟քի ես մ՟տից, և ջանայց առնուլ զտղայն շնորհօք և օգնականութե՟ն ա՟յ. ասէ ցնա զօրականն՝ բարւոքէ՛ տ՟ր ա՟ծ եղիցի ընդ քեզ. և զօրացուսցէ զքեզ. յայնժամ առեալ զօրհնութի՟ ՚ի քահանայէ՛ և յայլոց գնաց. և առաջի սենեկի յորում ժողովեալ էին դեւքն, անկեալ ՚ի վ՟ր ծնրաց յանձն արար զինքն ա՟յ. և այսպիսի քաջասիրտ եբաց զդուռն և ետես զդևս ահագնակերպս • զի ոմանք նստէին • ոմանք յոտս կային • ոմանք շրջէին, և այլք յափտե Թերս երԹային • զոր իբրև տեսին՝, ա՟մքն առ նա դիմեցին • աղաղակելով • հէ՜յ • հէ՜յ • ուր եկեր այսր • և նա՛ քրտնոյր • սակայն զօրացեալ ՚ի վերուստ • ասէ՛ ցդևն՝ որ զտղայն ունէր • տո՛ւր ինձ զտղայդ • պատասխանի ետ դևն՝ ո՛չ այդպէս ՚ի մէջ տղայս • ասա ա՟նդ քում, ինքն եկեալ առցէ զտղայն ասէ՛ ծառային ես զգործ կոչման իմոյ կատարեմ, յոր զիս տ՟ր ա՟ծ կոչեաց • և գիտեմ զոր ինչ այժմ ասեմ հաճոյ է ա՟յ • վա՟որոյ օգնականուԹ՟բ և զօրուԹ՟բ, անուն յի՟ ք՟ի առնում զտղայն ՚ի քէն • և տարայց զնա առ հայր։ Իբ՟ւ այնպէս էառ զմանուկն, և ձեռօք ՚ի գիրկս ընկալաւ։ իսկ դևքն ո՛չ ինչ ետուն պատասխանի • միայն աղաղակէին, ո՛վ խաբեբայ ՚ի բա՛ց Թող զտղայն ՚ի բա՛ց Թող • զի զքեզ պատառեսցուք • բայց նա՛ անտես արարեալ զսպառնալիս դիւացն՝ ողջ անդամ ել • և զտղայն ետ ցհայրն։ Ապա դևքն զկնի քանի աւուրց անյայտ եղեն և զօրականն դարձաւ ՚ի տուն իւր հանդերձ ա՟մ ծառայիւք իւրովք • ընդ որս և զմեզ փրկեսցէ ք՟ս ա՟ծ մեր ա՟մ որոգայԹից սատանայի • և արժանի արասցէ ողորմուԹեան իւրում։ որով հասեալ ՚ի մասն ժառանգուԹեան սրբոցն ՚ի լոյս • փառաւորեսցուք զհայր և

զորդի և զսուրբ Հոգին ան զրաւ յաւի
տեանս Ամէն։

Ա Ն Ր Դ։

Ընթեռնումք ընվարս հարանց սրբոց. թէ անապատական ոմն ճգնութ՟բ մեծաւ աղաչէր զա՟ծ ժամանակս բազումս սակս հիւանդութեն ուրուք զորունէր յինքեան. և ոչ կարէր բուժիլ'ի նմանէ. սկսաւ տրտնջել զա՟յ. երևեցաւ նմա հրեշտակն և ասաց՝ եկ ընդ իս և ես ցուցից քեզ զդատաստանս գաղտնիս ա՟յ։ Եւ էած զնա 'ի տուն իմն, որում գոյր բազմութի ոսկւոյ և արծաթոյ. և արկեղ'ի մէջ, և բարձեալ տարաւ զա՟մն յայլ տուն և եթող զնա՛ առ դուռն։ Եւ ասաց եկ ընդ իս և ցուցից քեզ զայլ իմն արդարութի, և էած զնա՛ յայլ տուն յորում գոյր երեխայ յօրօցի, և հարեալ եսպան զնա։ Եւ տեսեալ անապատականին զա՟մ սկսաւ հեռանալ. կարծելով զնա սատանայ. և ասէ ցնա հրեշտակն համբերեա սակաւիկ մի, զի մեկն իցեմ քեզ պատճառ իմոց առից. վ՟ս այնորիկ բարձցի զարկղն ոսկւոյ և արծաթոյ 'ի տանէն յայնմանէ. զի տէր տանն այնորիկ ծախեալ էր զբընաւս ստացուածոց՝ զոր ունէր աշխարհի. և ժողովեալ էր զգանձն զայն. և կամէր'ի վաղիւն տայր ումեմն արիւն արբոյ առ'ի խնդ րել զվրէժ արեան հօր իւրոյ. և թէ լեալ էր այսպիսի, ա՟մ բնակիչք տեղւոյն խռովեալ էին և աղմկէին՝ ուստի ես առ 'ի խափանել զայնպիսի վնաս՝ բարձի 'ի նմանէ զարկեղն գանձիւքն. զի 'ի վաղուց տեսեալ զինքն 'ի մէջ աղքատութ՟ե. զրկեցեալ յուսոյն զղջասցի՝ 'ի դիտաւորութ՟է չարէն. զկնի աւուրց մտցէ 'ի վանս կրօնաւորաց առ 'ի ծառայել ա՟յ. Եւ վ՟ն այնորիկ թողի զգանձն առ դրան տանն այնորիկ. զի այրն որ բնակի անդ, կորուսեալ էր զինչս իւր 'ի ծովու և կայր յուսահատեալ. և կամէր զինքն խեղդել առանձնակի 'ի տան իւրում, սակս մեծ տրտմութ՟ե. ուստի 'ի վաղիւն մինչ գտցէ զարկղն սփոփեսցի և մխիթարեսցի, և ոչ սպանցէ զինքն: Եւ վ՟ն այնորիկ սպանի զերեխայն յօրորոցի. քանզի յառաջ քան զծնանիլն ն՟ր հայրն նորին առնէր զբարեգործութ՟իս բազումս. բայց՝ յետ որոյ ծընաւ երեխայն այն զոր ինչ գործէ, բայց 'ի ստութենէ և 'ի խաբեբայութենէ. ուստի ես սպանի զերեխայն. զի հայրն նորին դարձցի յառաջին բարեգործութ՟ին իւր: Արդ ուրեմն մի զարմանայր և դու թէ ընդէր իցէ 'ի քեզ այդ հիւանդութ՟ի. քանզի եթէ ոչ ունէիր զնոյնն ոչ կայիր հաստատապէս 'ի ծառայութենն ա՟յ. զի ա՟ծ ոչ ինչ առնէ առանց նախախնամութ՟ե, բայց մարդկային անկարութ՟ի ոչ իմանայ՝ թէ ընդէր արդարութ՟ին ա՟յ ներիցէ այնպիսեաց: Եւ զայս ասա ցեալ հրեշտակն անյայտ եղև· և անապատականն ընդ այն դարձաւ 'ի խուցն իւր, և սկսաւ ապաւշել զկարճամտութին իւր· և զփոքր ահոգութին։

Ընթեռնում 'ի պատմութիս հռոմայեցւոց, թէ փառազնեայ դուստր անաստասի կայսեր գոլով սիրահարեցեալ 'ի դեղուրումն պատանոյ ամոն կոչեցելոյ, կամէր ունել զնա ըստ ըղձից իւրոց և յոչ հաւանիլն նր վն ահին կայսեր, խորհեցաւ փառազնեայ զայր ացաբար մատնել զնա 'ի մահ։ և յաւուր միում մինչ անցանէր ամոն զդրամբ սենեկի նր· աղաղակեաց ասելով, օգնեցէ՛ք ինձ· զի կամի ամոն բռնադատել զիս։ Եւ իսկոյն հասեալք պաշտօնեիցն կալան զնա և ածին առ կայսրն· և կայսրն եհարց զնա և ասէ, իրաւ՞ է զոր ասեն զքէն· և ամոն ասաց· ոչ տէր իմ։ յայնժամ կայսրն առաքեալ կոչեաց զփառազնեայ և ասաց· զի արդ էանց՝ իրն պատմեա՛ ինչ։ Եւ նա ոչ ետ զպատասխանին։ Եւ կրկնեալ կայսերն ասաց։ ընդ քեզ խօսիմ ես, և դու ոչ տաս զպատասխանի· Եւ նա տակաւին լռեր։ Եւ տեսեալ մի ոմն 'ի նախարարացն զի զո՛չ ինչ խօսէր, հեգնելով զնա ասաց· դուցէ կորուսեալ իցէ զլեզու իւր։ Եւ հայեցեալ 'ի բերանն· գտին իրաւի զլեզու նր չորացեալ, 'ի վրէժ խնդրութն զրպարտութենն։ Եւ տեսեալ կայսերն զսքանչելիսն զարմացաւ յոյժ· և արձակեաց զամոն· և իս ճոյն արձակեցաւ լեզուն փառաւորնեայ · և սկսաւ խոստովանիլ զճշմարիտն ։ Եւ զղջացեալ 'ի յախտից իւրոց, եմուտ 'ի վանս կուսանաց · և վճարեաց զբոլոր կեանն իւր անդ 'ի

ծառայութեան այ՟ ։

Պատմեա՛ց մեզ ո՟ն աթանասաղէկսանդրու Հայրապետն · թէ 'ի բիւրիտոն քաղաք մերձ յեէմ 'ի սահմանս տիւրոսի և սիդոնի · բազում Հրէայք բնակեալ էին խառն ընդ քրիստոնեայս · և մի ոմն 'ի Հրէիցն խնդրէր տուն 'ի վարձու · և առեալ ընդ իւր այլ սիրելիս Հրէայս և գնացին գտին տուն մի դատարկ · յորմէ քրիստոնեայք ելեալքէին · և մոռացեալ էին յորմն յարևելից կուսէ կախեալ զքրոնական պատկերն · և յորժամ մտին 'ի տունն Հրէայքն տեսին՝ զպատկերն, և ասէին ցմիմեանս՝ թէ այս պատկերս գալիլիացւոյնէ՝ և ո՟պ արարին Հարքն մեր ընդ նմա, արասցուք և մեք ընդ պատկերսնդ · և առեալ եղէգն Հարկանէին զգլուխն եղեգամբ և ծեծէին զծնօտսն · և թքանէին յերեսն և ծակեցին սրով զձեռսն և զոտսն · և յորժամ խոցեցին զկողն պատկերին · առժամայն ել արիւն և ջուր · և զայն տեսեալ զահի Հարան և ընթացեալ պատմեցին քահանայապետիցն իւրեանց և այլ Հրէիցն · և նք՟ փութանակի գնացին 'ի տունն' և տեսին զպատկերն որ խոցուածոյն բղխէր ջուր և արիւն ։ Եւ ասեն քահանայապետքն փորձեսցուք եթէ ճշմարիտ է զոր ասեն քրիստոնեայքն. և հրամայեաց բերել աման և ժողովեաց արիւնախառն ջուրն. և երթեալ օծեցին զհիւանդս իւրեանց. զկոյրս. զխեղս. զկաղս. և զանդամալոյծս. և առժամայն բժշկէին. և միահամուռ ժողովեցան՝ և գնացին առ եպիսկոպոս քաղաքին՝ և պատմեցին զա̅մ եղեալ զքանչելիս և յարուցեալ գնացին զհետ ն̅ց 'ի տունն. և տեսին զպատկերի երեսն ո̅չ զարեգակն պայծառացեալ. և դադարեալ բղխումն 'ի կողից. և առժամայն ա̅մ հրէայքն հաւատացին 'ի ք̅ս և մկրտեցան. և ուրախութ̅ի մեծ եղև քաղաքին յայնմիկ. և նուիրեցին զտունն զայն ժողովրդեանն. զոր և շինեցին եկեղեցի. յորում կայր պատկերն զքանչելի. և եդին զանունն ամենա փրկիչ, որում բազում բժշկութ̅ի լինէին 'ի փառս ք̅ի ա̅յ. Եւ յետ բազում ժամանակաց թագաւորն չմշկիկ գնաց 'ի համս և էառ զք̅ի պատկերն. և հողաթափն պատուական և եկեալ 'ի բիւրիտոն էառ զպատուական պատկերն զայն և տարեալ 'ի Կոստանդնուպօլիս. և եդին ընդ սրբութիւն 'ի փառս ք̅ի ա̅յ մերոյ՝ որ է օրհնեալ յաւիտեանս:

ԱՄԷՆ:

335